

ԱԼԵՔՍԱՆՏՐ ՏԻՒՄԱ

•••••

ԲԺՇԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

ԺՕՉԷՑ ՊԱԼՄԱՄՈ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Կ . ԵԱԶՄԱՃԵԱՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ԵԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐԱՐԴ



Զմիշտնիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ


1875

ԺՕՁԷՑ ՊԱԼՍԱՄՕ



ՉԵ

ԻՆՉՊԷՍ ՈՄԸՆՑ ՈՒՐԵԽՈՒԹԻՒՆԸ ԱՅԼԱՑ ՅՈՒՍԱՀԱՏՈՒ ԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱԹԻ



ԲԱՐԻ լոյս, օրիորդ. ես եմ, յ ըսաւ Նիգօլ՝
զուարթութեամբ խոնարհութիւն մ'ընելով,
սակայն իւր տիրուհւոյն բնաւորութեանը քա-
ջածանօթ ըլլալով՝ մտատանջութեան մէջ էր :

— Դո՛ւ ես, ինչ դիպուածով եկար, պա-
տասխանեց Անտրէ գրիչը մէկդի դնելով, բացուած խօսակցութիւնը
շարունակելու համար :

— Օրիորդը զիս մոռցեր էր, ես ալ ելայ եկայ :

— Առանց պատճառի չէ որ քեզ մոռցեր էի, օրիորդ : Քեզի
ո՞վ ըսաւ որ դաս :

— Հարկաւ պարոն սեպուհը ըսաւ, օրիորդ, պատասխանեց Նի-
գօլ բաւական դժգոհ դէմքով մը իրարու մօտեցրնելով այն գե-
ղանի թուխ յօները՝ որոնք Պ. Ռաֆիգէի ձեռակերտն էին :

— Հայրս ՚ի Բարիզ քեզի պէտք ունի, իսկ ես հոս բնաւ պէտք
չունիմ քեզի . . . : Ուստի կրնաս վերադառնալ, սիրելիս :

— Ո՛հ, ըսաւ Նիգօլ, օրիորդը գրեթէ մէկու մը հետ չկապուիք
. . . ես կը կարծէի թէ օրիորդին աւելի հաճելի եղած էի . . . :

Եկու սիրէ , յարեց Նիգօլ փիլիսոփայօրէն , որպէս զի փոխարէն այսպէս վարուին :

Եւ իւր գեղանի աչերը ամեն ջան 'ի գործ դրին իրենց արտեանունքէն շիթ մ'արտասուք կորզելու համար :

Անտրէին սիրտը շարժելու չափ զգացում և դիւրագգածութիւն կար այն մեղադրանաց մէջ :

— Սիրելիս , ըսաւ Անտրէ , հոս ինչ ծառայող կայ , և չեմ համարձակիր տիկին արքայորդւոյն տունը բերան մը ևս աւելցնել :

— Է՛հ , կարծես թէ շատ մեծ է այն բերանը , ըսաւ Նիգօլ հրապուրիչ ժպիտով մը :

— Մեծ ըլլայ կամ ոչ , քու ներկայութիւնդ հոս անկարելի է :

— Այն նմանութեան պատճառաւ , ըսաւ գեռատի աղջիկը : Երես չնայեցա՞ք ուրեմն , օրիորդ :

— Արդարեւ , փոխուած կ'երևիս :

— Ես ալ այնպէս կը կարծեմ , գեղեցկադէմ ամիրայ (seigneur) մը , նա որ Պ. Փիլիպի աստիճան մը տալ տուաւ , երէկ մեր տունը եկաւ , և տեսնելով որ Պ. սեպուհը տխրութեան մէջ է հոս առանց սպասուհիի մնալնուդ համար , զինքն համոզեց թէ զիս ճերմակէ սևի փոխելէն դիւրին բան չկար : Չիս առաւ տարաւ , այսպէս գլուխս շտկել տուաւ , և ահա եկայ :

Անտրէ ժպտեցաւ :

— Չիս այնչափ շատ կը սիրես , ըսաւ , որ ինչ որ ալ ըլլայ կ'ուզես գալ Դրիանօնի մէջ փակուիլ՝ ուր գրեթէ կալանուհւոյ մը պէս կ'ապրիմ :

Նիգօլ արագ բայց մտացի ակնարկ մը արձակեց իւր շուրջը :

— Այս սենեակը հաճելի տեսք մը չունի . բայց դուք միշտ հոս չէք մնար , այնպէս չէ :

— Ես , անշուշտ ոչ , պատասխանեց Անտրէ . սակայն դու :

— Է՛հ , ես :

— Դու սրահակը չպիտի երթաս տիկին արքայորդւոյն քով . դու խաղ չխաղալով , շրջագայութեան չերթալով , ընկերութիւններու մէջ չմտնելով տաղաուկէդ պիտի մեռնիս :

— Ո՛հ , ըսաւ Նիգօլ , անշուշտ փոքրիկ պատուհան մը կայ , ան-

շուշտ դրան մը մէջէն մարդու երես կը տեսնուի : Մարդ տեսած ատեն կը տեսնուի ալ . . . : Իմ ալ ուզածս միայն այս է . զիս բնաւ մի հոգար :

— Դարձեալ կ'ըսեմ, Նիգօլ, առանց մասնաւոր հրամանի մը չեմ կրնար քեզ վար դնել :

— Որով կողմէն :

— Հօրս կողմէն :

— Անպատճառ :

— Այո՛, անպատճառ :

Նիգօլ փողկապին մէջէն տը՛րտալէրնէյ սեպուհին նամակը հանեց՝

— Ուրեմն, ըսաւ, քանի որ իմ աղաչանքս և անձնուիրութիւնս օզդեցութիւն չեն ըներ, տեսնեմ սա պատուէրը աւելի ոյժ պիտի տանենայ :

Անորէ նամակը կարգաց, որ այսպէս գրուած էր .

« Սիրելի Անտրէս ,

« Ես գիտեմ, և ուրիշներն ալ գիտած են թէ Գրիանծոնի մէջ քու աստիճանիդ վայելուչ վիճակ չունիս . քեզի երկու սպասուհի և մէկ պայիկ պէտք էր, ինչպէս որ ինծի ալ աղւորիկ քսան հազար ֆրանք եկամուտ, սակայն ինչպէս որ ես հազար ֆրանք եկամուտով կը բաւականանամ, իմ օրինակիս հետեւ և Նիգօլը քովդ առ, որ առանձին ինք՝ քեզի պէտք եղած բոլոր ծառաներուն տեղը կը բռնէ :

« Նիգօլ գործունեայ, մտացի և անձնուէր աղջիկ մը ըլլալով տեղւոյդ կերպերն ու ձևերը շուտ պիտի սովորի . դու ալ հոգ կը տանիս չէ՛ թէ անոր յօժարութիւնը դրդելու՝ այլ գրաւելու : Ուրեմն քովդ պահէ զան, և մի կարծեր որ զոհողութիւն մը կ'ընեմ :

Եթէ այնպէս կարծես՝ միաքի բեր թէ Նորին Վեհափառութիւնը որ քեզ տեսնելու ատեն մեր վրայ խօսելու բարեօրութիւնն ունեցաւ, դիտողութիւն ըրեր է, և այս ալ ազնիւ բարեկամներէս մին գաղտնի իմացուց ինձ, թէ աստիճանիդ վայելուչ զարգարանք չունիս : Մտածէ ասոր վրայ, խիստ կարեւոր կէտ մ'է :

« Խանթակաթ հայրդ : »

Generated on 2016-09-07 12:29 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այս նամակը ցաւալի տատամութեան մը մէջ ձգեց Անտրէն :

Այսպէս մինչև իւր նոր երջանկութեան մէջ պիտի հալածուէր աղքատութենէ մը՝ զոր միայն ինք պահասութիւն մը չէր կարծեր, մինչդեռ ամեն բան իրրև յանցաւք զայն իրեն երեսին կը զարնէր :

Քիչ մնաց որ բարկութենէն գրիչը պիտի ջախջախէր և սկսած նամակը պիտի պատուէր, փիլիսոփայական անշահախնդրութեամբ պատասխան մը տալու համար սեպուհին, զոր Փիլիպ երկու ձեռքովը պիտի ստորագրէր :

Բայց սեպուհին հեզնական ժպտը միտքն ինկաւ՝ երբ այն նշանաւոր դործը կարդար, և իսկոյն իւր առաջադրութենէն ետ կեցաւ : Բաւական համարեց սեպուհին այն նամակին պատասխանել՝ Գրիանօնէն տուած լրերուն վրայ հատուած մ'ալ աւելցընելով :

« Հայր իմ, յարեց, Նիզօլ հիմա եկաւ, և ձեր փափաքին համեմատ վար կը դնեմ զան. սակայն անոր մասին գրածնուդ համար համամիտ չեմ : Միթէ այս գեղջուկ աղջիկը սպասուհի ունենալով նուազ ծիծաղելի պիտի ըլլամ, քան թէ արքունի ճոխութեանց մէջ առանձին եղած ատենս : Նիզօլ իմ նուաստանալս տեսնելով թշուառ պիտի ըլլայ, գոհ պիտի չըլլայ ինէ. ինչու որ ծառաները իրենց տեարջը պերճութեանը կամ պարզութեանը համեմատ կը փքանան կամ կը նուաստանան : Իսկ Նորին Աւհափառութեան գիտողութեանը գալով, հայր իմ, ներեցէք որ ըսեմ թէ թագաւորը այնքան խելացի է՝ որ չկրնար ինծի սրդողիլ՝ նշանաւոր տիկնոջ մը ձեւերը չկարենալ կատարելուս համար, և ասկէ զատ Նորին Աւհափառութիւնը կարի բարեսիրտ ըլլալով՝ չկրնար գիտողութեան ենթարկել կամ քննադատել : Իմ չքաւորութիւնս, փոխանակ զայն դիւրակեցութեան մը փոխելու՝ որ ամենուն ալ օրինաւոր պիտի երևէր՝ ձեր անուանը և մատուցած ծառայութեանցը համար » :

Նորատի աղջիկը այս պատասխանը տուաւ, և անուրանալի է թէ այն անբիծ անմեղութիւնը, այն վեհ մեծամտութիւնը դիւրաւ իրաւունք կ'ըստանային ընդդէմ խորամանկութեանց և ասպականահէր վարուց իւր փորձիչներուն :

Generated on 2016-09-07 12:30 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անտրէ այլ ևս Նիգօլի վրայ խօսք չըրաւ : Քովը պահեց զան , այնպէս որ Նիգօլ ուրախութենէն այլայլմէ եղած՝ առանց ժամանակ անցնելու անկողին մը դրաւ նախասենեկին վրայ բացուող աջ կողմի խուցը , և պզտիկցաւ , հով դարձաւ՝ որպէս զի այն փոքրիկ բնակարանին մէջ իւր տիրուհւոյն բնաւ նեղութիւն չպատճառէ . կարծես թէ կ'ուզէր նմանիլ այն վարդի թերթին՝ զոր Պարսկաստանի գիտնականները ջրով լեցուն ամանի մը վրայ ձգեցին՝ ցոյց տալու համար թէ կարելի էր հոն բան մը աւելցնել՝ առանց մէջի ջուրը թափելու :

Անտրէ ժամը մէկին ատենները Գրիանօն երթալու համար դուրս ելաւ : Երբէք այնքան շուտ և այնքան վայելուչ կերպով զարդարուած չէր : Նիգօլ իւր կարողութիւնը գերազանցեր էր . կամակատարութիւն , ուշադրութիւն , հաճելի ըլլալու իղձ , ոչինչ չէր պակսեր ծառայութիւնը կատարելու ատեն :

Երբ օրիորդ տը Գավէրնէյ մեկնեցաւ՝ Նիգօլ տեղւոյն տիրուհին եղաւ և ամեն բան աչքէ անցուց :

Ամեն ինչ սնոր քննութեանը ենթարկեցաւ , նամակներէն սկսելով մինչև չնչին զարդերը , կրակարանէն սկսելով մինչև խուցերուն ծածուկ անկիւնները :

Յետոյ պատուհանը ելաւ՝ դուրսի օդը շնչելու համար :

Վարը ընդարձակ բակ մը կար՝ ուր ձիապանները տիկին արքայ-որդւոյն իբրև պերճանք գործածած ձիերը կը դարմանէին և խողանակաւ կը մաքրէին , ինչ զզուելի բան , Նիգօլ երեսն անգին դարձուց :

Աջ կողմը , Անտրէի պատուհանին վրայ կարգաւ պատուհաններ կային : Հոն քանի մը գլուխներ երևցան , սպասուհիներու և շփողներու գլուխներ : Նիգօլ արհամարհանօք ուրիշ քննութեան մը անցաւ :

Գիմացը , ընդարձակ սենեկի մը մէջ երաժշտութեան դասատուներ , Սէն-Լուիի տօնախմբութեան պատարագին համար , երգեցիկներու և նուագածուներու վարժութիւններ ընել կու տային :

Նիգօլ փոշիները վրայէն վար տալու ատեն , ուզած եղանակաւ երգելով ժամանակ անցուց , այնպէս որ երաժշտութեան դասա-

Generated on 2016-09-07 12:30 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տուհերուն շփոթութիւն պատճառեց, և երգեցիկները շատ սխալ-
ներ ըզին՝ առանց հասկըցուելու :

Բայց այս դրօսանքը չէր կրնար երկայն առեն գոհ ընել օրիորդ-
Նիգօլի իղձերը . երբ դասատուները և աշակերտները բաւական վի-
ճեցին և սխալեցան՝ նորատի աղջիկը վերի յարկը աչքէ անցուց :
Բոլոր պատուհանները գոց էին, մանաւանդ որ վերնայարկ էին անոնք :

Նիգօլ դարձեալ սկսաւ փոշինները վար տալու . բայց պահ մը
ետք, այն վերնայարկներէն մէկուն պատուհանը բացուեր էր՝ ա-
ռանց ինչ միջոցաւ ըլլալը տեսնուելու, ինչու որ մարդ չկար :

Անշուշտ մէկը բացեր էր այն պատուհանը . այն մէկը Նիգօլը
տեսած ըլլալու էր՝ սակայն չէր կեցեր անոր նայելու համար . ան-
շուշտ լիրբ մէկն ըլլալու էր :

Ահա գրեթէ այսպէս մտածեց Նիգօլ : Ուստի քանի որ ինք ա-
մեն բան խղճի մտօք կը քննէր, լիրբ մը ճանաչելէ ալ ետ մնալ
չուզելով, Անտրէի սենեկին մէջ անգամ մը դառնալուն պէս՝ պա-
տուհանին քով կու գար և վերնայարկին անգամ մը կը նայէր,
այսինքն այն բաց աչքին՝ որ պէտք եղած յարգանքը չէր մատու-
ցաներ՝ իրեն չնայելով : Անգամ մը այնպէս կարծեց թէ իր մօ-
տենալու ատեն փախան . . . : Այս անհաւատալի բան մը ըլլա-
լուն համար չհաւատաց :

Ուրիշ անգամ՝ մ'աւելի շուտ պատուհանին քով երթալով փախ-
չողին թիկունքը տեսաւ և գրեթէ ապահով եղաւ :

Այն ատեն Նիգօլ խորամանկութիւն բանեցուց, վարագոյրին ե-
տեը պահուեցաւ պատուհանը բոլորովին բաց թողլով՝ որպէս զի
բնաւ կասկած չտայ :

Երկայն ատեն սպասեց . բայց վերջապէս սև մազեր երեցան,¹⁾
յետոյ երկչոտ ձեռներ՝ որոնք զգուշութեամբ ծուած մարմնոյ մը նե-
ցուկ կ'ըլլային . միով բանիւ դէմքը որոշակի տեսնուեցաւ .

Նիգօլ քիչ մնաց որ թիկանցը վրայ պիտի իյնար՝ վարագոյրը
բռնեց :

Պ. Ժիլպէրն էր որ այն վերնայարկին վերէն կը նայէր :

Ժիլպէր վարագոյրին երեքիլը տեսնելով՝ խաղը հասկըցաւ և ալ
բնաւ չերեցաւ :

Generated on 2016-09-07 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մինչև անգամ վերնայարկին պատուհանը գոցուեցաւ :

Ա՛լ տարակոյտ չէր մնար , ժիլպէր Նիգօլը տեսեր և ավշեր մնացեր էր : Այն թշնամի աղջկան ներկայութիւնը ստուգել ուզելու ատեն՝ ինքն ալ յայտնուելով շփոթէն և զայրոյթէն խոյս տուեր էր :

Ահա եղելութիւնը գէթ այսպէս ըմբռնեց Նիգօլ , և իրաւունք ալ ունէր . ուրիշ կերպ չէր ըմբռնուեր :

Արդարև ժիլպէր աւելի լաւ ունէր սատանան տեսնել քան թէ Նիգօլը . այն հսկողուհւոյն գալուստը հազարաւոր սոսկումներ ծնոյց անոր մտքին մէջ : Նախանձի հին մնացորդ մը ունէր ներս համար . անոր Գօք-Հէռօն փողոցի պարտիզին գաղտնիքը գիտէր :

Ժիլպէր շփոթելով խոյս տուեր էր , և ոչ միայն շփոթելով , այլ նաև զայրանալով և կատաղութենէն մատները խածնելով :

— Ի՛նչ օգուտ ունի հիմա սա ըրած անմիտ գիւտս՝ որու վրայ այնքան կը վիքանայի . . . կ'ըսէր : Նիգօլ անդին սիրահար մ'ունի եղեր , այն անցած գացած բան է , և անոր համար չեն ճամբեր զինքը հոսկէ , մինչդեռ եթէ Նիգօլ , Գօք-Հէռօն փողոցն իմ ըրածս անոնց իմացընէ՝ կրնայ Գրիանօնէն վունտել տալ զիս . . . չէ թէ ես Նիգօլը բռնեցի՝ այլ Նիգօլը զիս բռնեց . . . : Ո՛վ կատաղութեանս :

Եւ ժիլպէրին բոլոր անձնասիրութիւնը իւր ատելութիւնը գրգռեց , և արիւնը անլուր սաստկութեամբ մը սկսաւ եռալ :

Անոր այնպէս թռեցաւ թէ այն սենեակը մտնելու ատեն , Նիգօլ սատանայական ծիծաղով մը հոնկէ յափշտակեր էր այն երջանիկ երազները՝ զորո ժիլպէր իւր վերնայարկէն հոն կ'ուղարկէր ամեն օր իւր իղձերովը , իւր եռանդուն սիրովը և իւր ծաղիկներովը : Ժիլպէրին միաքը շատ զբաղած ըլլալով՝ մինչև այն ատեն միտքը չէր ինկեր Նիգօլ , կամ արդեօք իւր մտքէն վանել ուզեր էր այն խորհրդածութիւնը՝ ազդելիք սոսկումին համար : Ահա այս կէտը չենք կրնար ստուգիլ գիտնալ : Սակայն ստուգութեամբ կրնանք հաստատել թէ Նիգօլը տեսնելով իրօք սաստիկ տհաճութիւն զգաց :

Ար հասկընար որ ազան կամ անազան կռիւ պիտի բացուէր իւր և Նիգօլին մէջ . սակայն որովհետև ժիլպէր խոհեմ և քաղաքա՛ն :

Generated on 2016-09-07 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գէտ մէկն էր՝ չուղեց որ այն պատերազմը քացուի՝ մինչև որ կարե-
նայ սաստիկ և բարեյաջող պատերազմ մը բանալ :

Միտքը դրաւ մեռած ձեանալ և սպասել՝ մինչև որ յարութիւն
առնելու համար նպաստաւոր առիթ մը ձեռք անցընէ զիպուածաւ ,
կամ Նիզօլ տկարութենէն կամ առ հարկի անոր զիմէ և իւր բոլոր
ոյժը կորընցընէ :

Ուստի Անտրէին համար բոլորովին աչք և ականջ կտրելով բայց
միշտ զգուշութեամբ և անդուլ փութաշանութեամբ , նրբանցքին ա-
ռաջին սենեկին մէջ անցածը դարձածը կը դիտէր շարունակ , այն
միջոցին պարտէզներուն մէջ բնաւ Նիզօլին չպատահելով :

Գծբաղդաբար Նիզօլ անըստգիւտ վարք մը չունէր , և եթէ այն
միջոցին անըստգիւտ ալ ըլլար՝ իր անցելոյն մէջ գայթակղութեան
քար մը կար՝ որուն վրայ մէկը կրնար երեւցընել զինքը :

Այս բանը ութ օրէն ետք պատահեցաւ : Ժիլպէր իրիկունը լըր-
տեսելով , գիշերը լրտեսելով վերջապէս վանդակապատներուն մէ-
ջէն իրեն անծանօթ չեղող գարգմանակ մը տեսաւ : Այն գարգ-
մանակը շարունակ Նիզօլի միտքը կը ցրուէր , ինչու որ այն գարգ-
մանակը Պ. Պօզիրինն էր՝ որ արքունեաց հետեւելով Բարիզէն Գրիա-
նօն գաղթեր էր :

Բաւական ատեն Նիզօլ անգթութեամբ վարուեցաւ , բաւական
ատեն Պ. Պօզիրը ցրտին մէջ սառ դարձուց կամ արեւին մէջ այ-
րեց մրկեց , և այս առաքինութիւնը Ժիլպէրին համբերութիւնը
կը հասցընէր . բայց իրիկուն մը , Պ. Պօզիր անշուշտ միմոսական
պերճախօսութեան չափն անցընելով և համոզելով , Նիզօլ՝ Անտրէին
տիկին տը Նօայլի հետ հովանոցը ճաշած միջոցէն օգուտ քաղե-
լով գնաց Պ. Պօզիրը գտաւ՝ որ ախոռներու վերատեսչին , իւր
բարեկամին կ'օգնէր Իւլանտական փոքրիկ ձի մը մարզելու համար :

Բակէն պարտէզն անցան , պարտէզէն ալ այն ստուերամած ծա-
ռուղին՝ որ վէրսայլ կը տանի :

Ժիլպէր սիրահար ամուլին ետեւէն գնաց՝ հետք մը գտնող վագ-
րի մը վայրագ ուրախութեամբ : Անոնց քայլափոխները , անոնց
հառաչները թուեց , անոնց խօսքէն լսածը զոց ըրաւ , և անշուշտ
արդիւնքէն գոհ եղաւ , ինչու որ հետեւեալ օրը , ամեն նեղութե-

Generated on 2016-09-07 12:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նէ ազատած , իւր վերնայարկէն ինքզինքը ցուցուց երգելով և համարձակ , առանց վախնալու որ Նիդօլէն կը տեսնուի , այլ ընդհակառակը անոր նայուածքը բանի տեղ չդնելու ցոյցով :

Նիդօլ տիրուհւոյն նկարակիտեալ մետաքսէ մէկ թաթպանը կը կարէր . երգին ձայնն առնելով գլուխը վեր առաւ և ժիլպէրը տեսաւ :

Առաջին անգամ այնպիսի արհամարհոտ և խոժոռ կերպով մը նայեցաւ՝ որ իրիստ կծու էր և թշնամանիկ ըլլալը փարսախ մը հետուէն կը հոտէր . . . : Բայց ժիլպէր այն արհամարհոտ և խոժոռ նայուածքին այնպիսի տարօրինակ ժպիտով մը դէմ դրաւ , իւր կեցուածքին և երգելու կերպին մէջ այնպիսի գրգռիչ ձևեր դրաւ՝ որ Նիդօլ գլուխը վար առաւ և կարմրեցաւ :

— Ըրածս հասկըցաւ , ըսաւ ժիլպէր ինքնիրեն , իմ ալ ուզածս միայն այս էր :

Այն ատենէն սկսելով , միւսնոյն կերպերը կրկնեց , և Նիդօլ սկսաւ վախնալ . մինչև անգամ ժիլպէրի հետ անսակցութիւն մը ընելու փափաք ունեցաւ՝ սրտին վրայէն վերցընելու համար այն ծանրութիւնը՝ զոր դեռատի պարտիզպանին հեգնական նայուածքը հոն բերած էր :

Ժիլպէր դիտեց որ Նիդօլ զինքը տեսնել կ'ուզէ : Չէր կրնար խաբուիլ այն չոր հազերը իմանալով որ պատուհանին քով կը լսուէին , երբ Նիդօլ դիտէր որ ժիլպէր վերնայարկն է , և նոյնպէս նրբանցքին մէջ զացած եկած ատենը՝ երբ կը յուսար որ ժիլպէր վեր պիտի ելնէ կամ վար պիտի իջնէ :

Ժիլպէր պահ մը երջանիկ եղաւ այս յաղթանակը վայելելով՝ զոր բոլորովին իւր բնաւորութեան զօրութեանը և վարուց միտմանը կուտար : Նիդօլ այնչափ ուշադրութեամբ լրտեսեց ժիլպէրը՝ որ անգամ մը սանդուխէն վեր ելնելը տեսաւ , կանչեց զան և ժիլպէր պատասխան չտուաւ :

Նորատի աղջիկը հետաքրքրութիւնը կամ վախը աւելցուց . իրիկուն մը Անտրէի տուած կրնկաւոր (à talon) դեղեցիկ շղուականները ոտքէն հանեց , և դողդոջելով ու արագաբայլ այն յարկը ձևաւ՝ որուն խորը ժիլպէրի դուռը կը տեսնուէր :

Տակաւին շատ մութ չըլլալով, ժիւլպէր նորատի աղջկան գալը իմանալու ատեն, կրցաւ Նիգօլը որոշակի տեսնել՝ տախտակներուն կցուածոց, կամ լաւ ևս ճեղքերուն մէջէն :

Նիգօլ գնաց դուռը զարկաւ՝ լաւ գիտնալով որ ժիւլպէր արդէն տեսնակը կը գտնուի :

Ժիւլպէր պատասխան չտուաւ :

Սակայն վտանգալի փորձ մ'էր ըրածը : Ուզածին պէս կրնար նուաստացընել այն աղջիկը որ թողութիւն խնդրելու կու գար : Ինքն առանձին էր, կ'եռար և կը դողար Դավէրնէյը միտքն իյնալով, աչքը դրանը կպցուցած, այն չքնադադէմ աղջկան թովիչ գեղեցկութիւնը լափելով. իւր անձնասիրութեան զգայնութենէն գրգռելով արդէն ձեռքը կը վերցընէր՝ նիգը քաշելու համար՝ զոր իւր սովորական նախատեսութեամբը և զգուշաւորութեամբը գոցեր էր՝ յանկարծ մէկը վրայ չգալու համար :

— Ո՛չ, ըսաւ, ո՛չ. նէ միայն հաշիւ մ'ունի. պէտք և շահ ունենալուն համար ինձ խնդիր մը ընելու կու գայ : Ուրեմն նէ բան մը պիտի շահի. ո՛վ գիտէ ես ինչ պիտի կորսընցընեմ :

Եւ այս տրամախոհութենէն ետք՝ ձեռքը վար ինկաւ : Նիգօլ երկու երեք անգամ դրանը զարնէնէն ետք՝ յօնքը պուստելով հեռացաւ :

Ասով ժիւլպէր իւր բոլոր ոյժը պահեց. այն ատեն Նիգօլ խորամանկութիւնը աւելցուց՝ բոլորովին ոյժը չկորսընցընելու համար : Վերջապէս այնքան առաջադրութիւններ և որոգայթներ սա խօսքերուն յանգեցան՝ զորս երկու պատերազմողք իրիկուն մը մատուռին դուռը իրարու հետ փոխանակեցին՝ ուր դիպուածաւ իրարու հանդիպեցան :

- Հէ՛, բարի իրիկուն, պարոն ժիւլպէր, հո՞ս ես :
- Բարի իրիկուն, օրիորդ Նիգօլ. Դրիանօն եկեր ես :
- Օրիորդին քով սպասուհիի պաշտօնով :
- Ես ալ օգնական պարտիզպանի պաշտօնով :

Ասոր վրայ Նիգօլ վայելուչ խոնարհութիւն մ'ըրաւ ժիւլպէրի, սա ալ իրրև արքունի մարդ մը բարեւց և իրարմէ զատուեցան : Ժիւլպէր վերնայարկը կ'ենէր, ճամբան շարունակել կեղծեց :

Generated on 2016-09-07 12:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նիգօլ իրենց բնակարանէն դուրս ելած ըլլալուն համար ճամբան շարունակեց . սակայն ժիլպէր գայլի մը քայլափոխներով սանդուխէն վերստին իջաւ և Նիգօլին ետևէն գնաց՝ յուսալով որ Նիգօլ Պ. Պօզիրը տեսնելու կ'երթար :

Արդարև ծառուղիին ստուերին ներքև սպասող մէկը կար . Նիգօլ անոր մօտեցաւ . արդէն մութը կոխած ըլլալով ժիլպէր չէր կրնար Պ. Պօզիրը ճանչնալ , և մարդուն գլուխը դարգամանակ չտեսնելով այնքան կատղեցաւ՝ որ Նիգօլ բնակարանը վերադառնալէն ետք՝ այն մարդուն հետևեցաւ մինչև ժամադրութեան վայրը , Գրիանօնի վանդակասպատը :

Այն մարդը Պ. Պօզիրը չէր , այլ չափահաս , կամ լաւ ևս ծեր մարդ մ'էր՝ մեծ մարդու մը կերպարանքով , և հակառակ իւր ծերութեանը՝ կայտառ քալուածքով . ժիլպէր անխոհեմ յանդգնութեամբ մը քիթը մտնելու չափ մօտեցաւ այն մարդուն և տեսաւ որ Պ. տը Ռիչլիէօ դուքսն է :

— Ա՛ր՛յ , ըսաւ , վարոցաւորէն ետք Գաղղիոյ մարաջխատը . օրիորդ Նիգօլի աստիճանը աւելնալու վրայ է :

ԶԶ

ԺԱՂՈՎՆԵՐԸ

Մինչդեռ բոլոր այս երկրորդական դաւերը Գրիանօնի Թմբիներուն ներքև և ծաղկանց մէջ նիւթուելով և երևան ելնելով , այն փոքր աշխարհին մանր որդերուն մէջ կենդանութեան շարժում մը ցոյց կու տային , քաղաքին մեծ դաւերը՝ շարագուշակ մրրիկներ՝ իրենց լայնատարած թևերը Թէմիսի պալատին վրայ կը պարզէին , ինչպէս որ Պ. Ժան Տիւպարի դիցարանական ոճով իւր քրոջը կը գրէր :

Ժողովները՝ Գաղղիական Հին ընդդիմութեան այլասեռեալ մնացորդներ՝ Լուի Ժե.ի քմահաճ ձեռաց ներքև շունչ առեր էին . բայց Պ. տը Շուազէօլի , իրենց պաշտպանին անկումէն 'ի վեր՝ վտանգն իրենց մօտենալը կ'ըզգային , և պարագային ներածին չափ խիստ միջոցներով անոր դէմ դնելու կը պատրաստուէին :

Ընդհանուր մեծ ցունց մը անձնական խնդրէ մը կը ծագի , ինչպէս որ սպառազէն բանակներուն մեծ ճակատամարտները մեկուսի կեցող զինուորներուն կռիւներէն կ'սկսին :

Պ. տը լա Շալոզէ Պ. տ'էկիւլօնը ձեռք անցրնելով , ընդդէմ աւատականութեան երրորդին* մէջին կերպարանք մը տալէն 'ի վեր . հասարակութիւնը համամիտ կը գտնուէր այս մասին և չէր հանդուրժիր որ խնդիրը փոխուի :

Արդ թագաւորը Բրիտանիոյ և Գաղղիոյ ժողովներուն աւելի կամ նուազ խոնարհ ներկայացումներէն յափրացած՝ տիկին Տիւպարիի ազդեցութեամբ , ընդդէմ երրորդին՝ աւատականութեան իրաւունք տուաւ , Պ. տ'էկիւլօնը իւր թեթևակի զօրաց հրամանատար անուանելով :

Պ. Ժան Տիւպարի ճշդութեամբ գործը կարգին դրեր էր . ժողովին սիրելի և մտերիմ խորհրդականներուն երեսին սաստիկ զարնուած ապտակ մ'էր սյս :

Այս ապտակը ինչպէս պիտի ուտէին : Բոլոր արքունեաց և քաղաքին մէջ այս հարցումը կ'ընէին աւաւօտէն մինչև իրիկուն :

Ժողովին մարդիկը հանձարեղ մարդիկ են , և այն պարագաներու մէջ որ ուրիշները բոլորովին կը շփոթին՝ իրենք ինչ ընելիքնին գիտեն :

'Նախ՝ ապտակն ուտելուն և անոր ըրած ազդեցութեանը վրայ համամիտ եղան . անկէ ետք , երբ հաստատուեցաւ թէ ապտակը զարնուած է և իրենք ալ կերած են , հետևեալ որոշումն ըրին .

Խորհրդարանը Բրիտանիոյ նախորդ կոստակին վարչը պիտի քննէ և էւր կարծիքը յայտնէ :

Բայց թագաւորը այս հարուածէն խոյս տուաւ՝ ատենակալաց և

* Ժողովրդեան երրորդ դասին :

Generated on 2016-09-07 12:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իշխանաց խստիւ արդիւելով որ Պ. տ'էկիւլօնի մասին ըլլալիք խորհրդածութեան մը բնաւ ներկայ չգտնուին խորհրդարանին մէջ. անոնք ալ հրամայուածին պէս հնազանդեցան :

Այն ատեն խորհրդարանը միտքը դնելով որ իւր գործը ինքը կատարէ՝ վճիռ մը տուաւ, որուն մէջ յայտնելով թէ Պ. տ'էկիւլօնի վրայ կասկածներ և ծանր ամբաստանութիւններ կային, նոյն իսկ անոր պատուոյն արատ բերող անցքեր, այն ատենակալը կախակայեալ էր հայրենեաց պաշտօններէն, մինչև որ, ատենակալաց ժողովին մէջ, օրինաց և տէրութեան հրամանաց տրամադրութեանն համեմատ, սովորական ձևերովը ու պայմաններովը, զորս «չնչ կրնայ փոփոխել, կատարուելիք դատաստանով մը, իւր պատուոյն արատ բերող ամբաստանութիւնները և կասկածները իսպառ մաքրուին իւր վրայէն :

Բայց խորհրդարանին մէջ, գործէն շահ ունեցողներուն առջև գրուած և արձանագրուած վճիռը բան մը չէր. պէտք էր յառաջ բերել այն գայթակղութիւնը որ անպատիժ կը գոյանայ ՚ի Գաղղիա երդով, և ասով երդը վեհագոյն տիրող մը կ'ըլլայ մարդկան և իրաց վրայ : Պէտք էր մինչև երդի զօրութիւն տալ խորհրդարանին այս վճռոյն :

Բարիզի ուզածն ալ միայն գայթակղութեան մասնակցիլ էր, ոչ արքունեաց համար և ոչ ալ խորհրդարանին համար համակրութիւն մ'ունենալով, այն շարունակ եւ ու եփի մէջ եղող Բարիզը խնդալու առարկայի մը կ'ըստպասէր որպէս զի հարիւր տարիէ ՚ի վեր տեսած արտասուաց առարկաները փոխուին :

Վճիռը պէտք եղածին պէս տրուած էր. խորհրդարանը յանձնաժողովմը կազմեց՝ որպէս զի անոնց աչքին առջև տպուի այն վճիռը : Տասն հազար օրինակ տպուեցաւ անկէ, և մէկ վայրկենի մէջ բաժնուեցաւ :

Անկէ ետք, որովհետև պէտք էր որ զլիաւոր շահ ունեցողը արքունեաց ըրածը իմանար՝ նոյն յանձնաժողովին անդամները Պ. տ'էկիւլօն դքսին ապարանքը գացին, սակայն սա Բարիզ գացեր էր անհրաժեշտ եղող ժամադրութեան մը գտնուելու համար :

Այս ժամադրութիւնը ուրիշ բանի համար չէր՝ այլ դքսին և իւր

Generated on 2016-09-07 12:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մարաջախտ մօրեղբորը մէջ պէտք եղած բացատրութեան համար էր :

Ռաֆղէի շնորհիւ , Բոլոր Աւերսայլ ժամուան մը մէջ լսեր էր դքսին ազնուարար թագաւորին հրամանաց ընդդիմանալը՝ Պ. աք Շուազէօլի պաշտօնը ընդունելու մասին : Աւերսայլի շնորհիւ , համայն Բարիզ և համայն Գաղղիա այս լուրն առեր էին . այնպէս որ ատենէ մ'ի վեր Պ. աք Ռիշլիէօ ժողովրդայնութեան ասպարիս վրայ ելեր էր , և հոնկէ քաղաքագիտական խոժոռ կերպարանքով կը նայեր տիկին Տիւպարիի և իւր սիրելի քեռորդուոյն :

Պ. տ'Էկիւլօն արդէն ժողովրդայնութիւնը կորսնցուցած ըլլալով լաւ վիճակի մէջ չէր : Ժողովուրդը մարաջախտը կ'ատեր՝ սակայն կը վախնար անկէ , ինչու որ ազնուականութեան բերանը կը համարուէր , և Նուի Ժ.Բ.ի ատենն ալ ազնուականութիւնը կը յարգուէր և յարպելի էր . մարաջախտը այնքան դիւրափոփոխ էր որ կողմ մ'ընտրելէն ետք՝ անխնայ կը հարուածէր՝ եթէ պարագան ներէր , կամ ծիծաղաշարժ խօսք մը ծագէր անկէ . Ռիշլիէօ , կ'ըսենք , անճարակ թշնամի մ'էր՝ որուն բարեկամ մնալ պէտք էր . մանաւանդ որ իւր թշնամութեան գէշ կողմը սա էր ու մարդը յանկարծակիի կը բերէր՝ ինչպէս որ ինք կ'ըսէր :

Տ'Էկիւլօն դուքսը տիկին Տիւպարիի հետ տեսնուելէն 'ի վեր երկու թերութիւն ունեցեր էր զրահին վրայ : Գուշակելով որ Ռիշլիէօ իւր երևութական նոյնութեանը ներքև անյագ վրէժխնդրութիւն մը կը պահէր իրեն համար՝ մրրկի մ'ատեն ըրածնին ըրաւ . այսինքն թնդանօթի հարուածներով թաթառը պայթեցուց , քաջ ստոյգ ըլլալով որ վտանգը աւելի քիչ պիտի ըլլար՝ եթէ արիաքար մէջը նետուէր :

Ուստի սկսաւ ամենուրեք մօրեղբայրը փնտուել՝ անոր հետ լուրջ խօսակցութիւն մը ընելու համար . բայց ասկէ ալ դժուարին բան չկար՝ մարաջախտը չուզելէն 'ի վեր :

Տ'Էկիւլօն դուքսն սկսաւ յաճախակի մարաջախտին տունը երթալ , սակայն մարաջախտը իւր քեռորդին հեռուէն տեսնելուն պէս անոր ժպիտ մը կ'ուղղէր և անմիջապէս շուրջը այնպիսի մարդիկ կը ժողովէր՝ որ անկարելի կ'ըլլար իրեն հետ տեսնուիլը . այսպէս իբրև անստիկ բերդի մը մէջ՝ բնաւ վախ չունէր թշնամիէն :

Տ'էկիւլօն դուքսը թաթառը պատուեց :
 Ելաւ պարզապէս մօրեղբօրը Աւերսայլի ապարանքը դնաց :
 Բայց Ռաֆդէ ապարանքին բակին վրայ նայող փոքրիկ պատու-
 հանը պահպանութիւն ընելով դքսին ծառաները ճանչցաւ և տի-
 րոջը իմաց տուաւ :

Դուքսը մարաշախտին մինչև ննջաբանը մտաւ և Ռաֆդէն գտաւ
 հոն . սա՛ իբր թէ դազանիք մը հազորդելու պէս կոշտ ժպիտով
 մը , դքսին անխորհրդաբար իմացուց թէ իւր մօրեղբայրը գիշե-
 րը ապարանք չէր եկեր և դուրսը անցուցեր էր :

Պ. տ'էկիւլօն շրթերը կրծեց և քաշուեցաւ :

Տուն երթալուն պէս մարաշախտին նամակ գրեց ունկնդրութիւն
 խնդրելու համար :

Մարաշախտը չէր կրնար անպատասխանի թողուլ դուքսը : Եթէ
 պատասխան տար՝ ունկնդրութիւնը չէր կրնար մերժել , և եթէ
 ունկնդրութիւն չնորհէր՝ ինչպէս անոր ուզած բացատրութիւնը մեր-
 ժէր : Պ. տ'էկիւլօն շատ կը նմանէր այն սիրուն և քաղաքավար
 սուսերամարտներուն՝ որոնք իրենց գէշ դիտաւորութիւնը պաշտելի
 շնորհի մը ներքև կը ծածկեն , իրենց ախոյեանը յարգանօք ասպա-
 րէզ կը բերեն , և հոն անգթաբար կը մորթեն զան :

Մարաշախտը իւր վրայ չափազանց համարում ունենալու չափ
 անձնասիրութիւն չունէր . իւր քեռորդուոյն զօրութիւնը քաջ դի-
 տէր : Անգամ մ'որ այն հակառակորդին դէմն ելնէր՝ պիտի տաի-
 պուէր անոր ներելու կամ շնորհ մ'ընելու : Արդ՝ Ռիշլիէօ երբէք
 չէր ներեր , և թշնամի մը շնորհ ընելն ալ աններելի սխալ մ'է
 քաղաքագիտութեան մէջ :

Ուտտի , Պ. տ'էկիւլօնի նամակն առածին պէս՝ կեղծեց թէ ին-
 քը Բարիզէն մեկնած է խել մը օրեր ուրիշ տեղ անցընելու հա-
 մար :

Ռաֆդէ՛ որուն խորհուրդ հարցուց այս կէտին վրայ , հետևեալ
 կարծիքն յայտնեց .

— Պ. տ'էկիւլօնը փլցընելու վրայ ենք : Խորհրդարանի մէջէն
 մեր բարեկամները գործը կը կատարեն : Եթէ Պ. տ'էկիւլօն , որ կաս-
 կած ունի , գործը յայտնուելէն առաջ ձեզ ձեռք անցընէ՛ ձեր բեր-

Generated on 2016-09-07 12:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
 Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նէն խօսք պիտի առնէ որ ձախորդութեանը մէջ իրեն օգնէք, ինչու որ դուք ձեր ատելութեանը ընտանեկան շահ մը չէք զոհեր բացէ 'ի բաց. եթէ դքսին խնդիրը մերժէք ձեզ իւր թշնամին պիտի կոչէ, չարիքը ձենէ է պիտի ըսէ և պիտի մոտիթարուի, ինչպէս որ ամեն անգամ չարիքի մը պատճառը գտնուած ատեն կը պատահի՝ թէպէտ չարիքը վերցած չէ:

— Ըսածդ շատ ճիշդ է, պատասխանեց Ռիշլիէօ. բայց յաւիտեան կրնամ երեսս պահել: Գործը մինչև յայտնուիլը քանի՞ օր պէտք է:

— Վեց օր, տէր իմ:

— Վստահ ես:

Ռաֆդէ խորհրդարանի անդամներէն մէկուն նամակը հանեց գրպանէն. այն նամակին մէջ միայն սա երկու տողը կար,

«Որոշուեցաւ որ վճիռը տրուի: Հինգշաբթի պիտի տրուի, վերջնական պայմանաժամը այն օրն է:»

— Ուրեմն ասկէ դիւրին բան չկայ, պատասխանեց մարաշխատը: Դքսին ետ դրկէ նամակը, հետը քու՝ կողմէդ նամակ մը գրելով:

«Պարոն դուքս,

«Անշուշտ Պ. մարաշխատին * * * երթալը լսած էք: Պ. մարաշխատին բժիշկը անհրաժեշտ համարեց այս օգափոխութիւնը՝ հանդոտի պէտք ունենալուն համար: Եթէ, ինչպէս որ անցեալ օր պատիւ ըրիք ինձ ըսելու, Պ. մարաշխատին հետ տեսնուիլ կ'ուզէք՝ կրնամ վստահացնել զձեզ որ Պ. մարաշխատը հինգշաբթի գիշեր * * * էն վերադառնալով իւր Բարիզի ապարանքը պիտի պառկի, հոն անպատճառ կը գտնէք զինքը:»

— Իսկ հիմա, յարեց մարաշխատը, դիտե՛ղ մը պահէ մինչև հինգշաբթի օրը:

Ռաֆդէ մարաշխատին ըսածները կէտ առ կէտ կատարեց: Նամակը դրուեցաւ զրկուեցաւ, թագստոցն ալ գտնուեցաւ: Միայն թէ, Պ. տը Ռիշլիէօ դուքսը որ սաստիկ կը ձանձրանար, իրիկուն մը դուրս ելաւ Գրիանօն երթալու և Նիդօլին հետ խօսելու համար: Ասով

Generated on 2016-09-07 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վտանգաւոր դան մը չէր ընէր , կամ այնպէս կը կարծէր՝ գիտնալով որ Պ. տ'Էկիւլյօն դուքսը Լիւսիէն կը գտնուի :

Այս խաղէն սա հետեւեցաւ որ , եթէ Պ. տ'Էկիւլյօն դուքսը կատկածի ալ դնաց՝ գէթ չկրցաւ իրեն սպառնացող հարուածին առաջը առնել , հակառակորդին սրոյն չպատահելուն համար :

Հինգշաբթի օրուան պայմանաժամով դո՛հ եղաւ , այն օրը Աէրսայլէն ելաւ՝ վերջապէս այն անշոշափելի հակառակորդը գտնելու և անոր հետ մարտնչելու յուսով :

Ինչպէս որ ըսինք , խորհրդարանին վճիռ սուած օրն էր այն օրը :

Պ. տ'Էկիւլյօնի կառքն անցած փողոցներուն մէջ կը տիրէր յուզմունք մը՝ որ տակաւին թէև դաղտնի՝ սակայն չիւլին յայտնի էր Բարիզցւոյն՝ որ քաջ կը ճանչէ իւր ալիքները :

Բնաւ ուշադրութիւն չըրին Պ. տ'Էկիւլյօնի , ինչու որ զդուշմութեամբ , զինանիշ չունեցող կառքով մը կ'ուղևորէր , երկու սպասաւորով , այնպէս որ կարծես թէ սիրային տեսակցութեան մը կ'երթար :

Ասդին անդին , բանի վրայ ելած դատարկասուններ տեսաւ , որոնք իրարու թուղթ մը կը ցուցընէին , խել մը շարժումներով զայն կը կարդային և խումբ խումբ կը վժային՝ գետինը ինկած շաքարի մը շուրջը վժացող մըջուններուն պէս . քայքայն ատեն յուզմունքներն անմնաս էին . ժողովուրդը խումբ խումբ կը խոնէր ցորենին վրայ դրուած գնոյն , Կաշէրդ որ Հօլանտի մէկ յօդուածին , Աօլրէրի մէկ չորեքտողեանին , տիկին Տիւպարիի կամ Պ. տը Մօքրուի գէմ ելած մէկ երգին համար :

Պ. տ'Էկիւլյօն ուղղակի Պ. տը Ռիշլիէօի ապարանքը գնաց : Հոն Ռաֆդէն գտաւ միայն :

— Պ. մարաշախտը վայրկեան առ վայրկեան կ'ըսպասուի , պատասխանեց սա , անշուշտ քաղաքադուռն ըլլալու էր՝ կայարանն աւելի սպասած ըլլալուն համար :

Պ. տ'Էկիւլյօն առաջարկեց որ սպասէ , քիչ մը զայրոյթ ցոյց տալով Ռաֆդէի , ինչու որ անոր ցոյց տուած պատճառը իրեն համար նոր պարտութիւն մը կը համարէր :

Սակայն գործն աւելի գէշցաւ՝ երբ Ռաֆդէ պատասխանեց թէ

Generated on 2016-09-07 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մարաջախտը պիտի վշտանայ եկած ատենը՝ տեսնելով որ Պ. տէ-
կիւյլօնը սպասեցրնել տուեր են . ասկէ զատ , ինչպէս որ առաջուց
ըսեր էր՝ Բարիզ չպիտի պառկէր այն գիշերը . անշուշտ գիւղէն ալ
առանձին չպիտի վերադառնար , և Բարիզէն պիտի անցնէր միայն
իւր ապարանքէն լուր առնելու համար , և հետեւաբար Պ. տէ-
կիւյլօն աղէկ կ'ընէր եթէ իւր տունը վերադառնար՝ ուր մարա-
ջախտը կը հանդիպէր անցնելու ատեն :

— Զիս մտիկ ըրէ , Ռաֆդէ , ըսաւ տէկիւյլօն որ այն մութ
պատասխանն առած ատեն խիստ տխուր կերպարանք մ'առեր էր .
դու իմ մօրեղբօրս սիրտը գիտես , իբրև պատուաւոր մարդ ինձ պա-
տասխան տուր : Ինձ խաղ կը խաղան , այնպէս չէ , Պ. մարա-
ջախտը զիս տեսնել չուզեր : Խօսքս մի ընդմիջեր , Ռաֆդէ , շատ
անդամ դու ինձ լաւ խորհրդատու մ'եղած ես , ինչպէս որ ես ալ
քեզի լաւ բարեկամ մը եղած եմ և եմ տակաւին . Վէրսայլ
դառնամ :

— Պ. դուքս , պատիւս վկայ ըլլայ որ ժամ մը չեղած՝ Պ. մա-
րաջախտին այցելութիւնը պիտի ընդունիք ձեր տունը :

— Բայց այն ատեն ինչու հոս չսպասեմ , քանի որ հոս պիտի
դայ :

— Պատիւ ունեցայ ըսելու թէ թերևս առանձին չգար :

— Հասկըցայ . . . և քենէ խօսք առի , Ռաֆդէ :

Այս խօսքին վրայ , դուքսը մտախոհ դուրս ելաւ մեհ և շնոր-
հալի դէմքով մը , մինչդեռ մարաջախտը քեռորդւոյն երթալէն ետք ,
սպակեւոր խուցէ մը դուրս ելաւ՝ անոր դէմքին բնաւ չնմանող դէմ-
քով մը :

Մարաջախտը կը ժպտէր այն ազեղ սատանաներուն պէս՝ զոր
Գալօ իւր փորձութեանց մէջ ուրեք ուրեք ցոյց կու տայ :

- Բանէ մը չկասկածիր , Ռաֆդէ , ըսաւ :
- Եւ ոչ բանէ մը , տէր իմ :
- Ժամը քանին է :
- Ժամը գործին վրայ ազդեցութիւն չունի , տէր իմ . սպասե-
լու է որ Շաղլէի գործակալը դայ իմաց տայ : Յանձնաժողովին
անդամները տակաւին տարանն են :

Generated on 2016-09-07 12:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

Ռաֆղէ տակաւին խօսքը չէր աւարտեր՝ երբ պայիկ մը գաղտնի դռնէ մը ներս մտցուց աղտոտ, տգեղ, սեւերես մարդ մը, այն կենդանի գրիչներէն մին՝ որոց դէմ սաստիկ հակակրօթիւն մը կը տածէր Պ. Տիւպարի :

Ռաֆղէ մարաջախտը խուցը մղեց և զուարթ դէմքով մ'այն մարդուն դէմը ելաւ :

— Ա՛հ, դուք էք, պարոն Ֆլածօ, ըսաւ. շատ ուրախ եմ ձեր ըրած այցելութեանն համար :

— Ծառայ եմ, պարոն տը Ռաֆղէ. է՛հ, դործն ալ կատարուեցաւ :

— Տպուեցաւ :

— Հինգ հազար օրինակ : Առաջ տպուածները արդէն բոլոր քաղաքին մէջ ցրուեցան, միւսներն ալ չորնալու վրայ են :

— Ի՛նչ աղէտ և ի՛նչ ցաւ Պ. մարաջախտին ընտանեաց համար, տիրելիդ իմ պարոն Ֆլածօ :

Պ. Ֆլածօ պատասխանէ խոյս տալու, այսինքն շատելու համար, արծաթէ խոշոր տուփ մը հանեց և երկայն բարակ պտեղ մը Սպանիական քթախոտ առաւ մէջէն :

— Հիմա ի՛նչ կ'ընեն, շարայարեց Ռաֆղէ :

— Տառերը կը ցրուեն, տիրելիդ իմ Պ. տը Ռաֆղէ : Յանձնաժողովին արգոյ անդամները վճռադրին տպուելուն և բաժնուելուն վրայ վստահ ըլլալէն ետք՝ տպարանին դուռն սպասող կառքը պիտի մտնեն անմիջապէս, և պիտի երթան վճիռը ծանուցանեն Պ. տ'էկիւլօն դքսին՝ որ բարեբաղդաբար, այսինքն դժբաղդաբար պարոն Ռաֆղէ, ճիշդ իւր Բարիզի տպարանքը կը գտնուի, ուր իրեն հետ անձամբ պիտի խօսին :

Ռաֆղէ կոշտ շարժմամբ կարասիի մը երկննալով դատաստանանական գրութիւններով լեցուն ահագին պարկ մ'առաւ և Պ. Ֆլածօին տնուաւ ըսելով,

— Պարոն, ահա ձեզի խօսած դատային թղթերս. Պ. մարաջախտը մեծ վստահութիւն ունենալով ձեր հմտութեանը վրայ՝ այս գործը ձեզի կը թողու, որ անշուշտ ձեզի շահաւէտ է : Պ. տ'էկիւլօնի Բարիզի ամենակարող խորհրդարանին հետ ռնկեցած վէ-

Ճին մէջ ձեր մատուցած անկեղծ ծառայութեանցը և տուած օգուտակար խորհուրդներուն համար շնորհակալ եմ :

Եւ մեղմովին բայց անսակ մը շտապաւ դէպ 'ի նախասենեկին գուռը մղեց Պ. Ֆլաժօն՝ որ իրեն յանձնուած դատային թղթերուն ծանրութիւնը տեսնելով խելքը գլխէն դացեր էր :

Իսկոյն մարաջախտը իւր բանտէն հանելով ,

— Օ՛ն , տէր իմ , ըսաւ , կառք մտէք , կորսընցընելու ժամանակ չունիք՝ եթէ ներկայացման հանդիսատես ըլլալ կ'ուզէք : Զանացէք որ ձեր ձիերը յանձնաժողովոյ անդամոց ձիերէն աւելի շուտաբայլեն :

ՂԷ

ՊԱՅՏՈՆԷԻՑ ԺԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ ՎԱՐԻՆԵՐ ՍՓՈՒՆԸԺ ՉԵՆ

Պ. տը Ռիշլիէօի ձիերը յանձնաժողովոյ անդամոց ձիերէն աւելի արագ կը քայլէին , ինչու որ առաջ մարաջախտը մտաւ Պ. տ'էլիւլօնի ապարանքին բակը :

Դուքսն ալ չէր սպասեր իւր մօրեղբօրը և Լիւսիէն երթալու կը պատրաստուէր , որպէս զի տիկին Տիւպարիի իմացընէ թէ թշնամին դիմալը վար առեր էր . բայց բարապանը մարաջախտը ծանուցանելուն պէս՝ այն վհատեալ միտքը իւր թմրութենէն սթափեցաւ :

Դուքսը մարաջախտին դէմը վազեց , և անոր ձեռները սեղմեց՝ կրած վախին չափ դորով կեղծելով :

Մարաջախտն ալ դքսին պէս սաստիկ դորով ցոյց տուաւ . տեսարանը խիստ սրտաշարժ եղաւ : Սակայն կը տեսնուէր որ Պ. տ'էլիւլօն կը փութար ժամ մ'առաջ բացատրութիւն խնդրելու , մինչեւ մարաջախտը միշտ վրան խօսք կը բերէր՝ մերթ պատկերի մը ,

մերթ քանդակի մը , մերթ գորգի մը նայելով և տրտնջալով որ սաստիկ յոգնած է :

Գուքսը փախստեան տեղ չթողուց մօրեղբօրը , զան թիկնաթուռի մէջ փակեց՝ ինչպէս որ Պ. տը Վիլար ՚ի Մարշիէն փակեր էր Էօսէն իշխանը , և իբրև յարձակում ,

— Մօրեղբայր իմ , ըսաւ անոր , արդեօք ստոյգ է որ դուք , Գաղղիոյ ամենէն աւելի իմաստուն անձը , իմ վրայ ծուռ դատողութիւն ընելով կը կարծէք թէ , եթէ անձնասիրութիւն ՚ի գործ դնեմ՝ երկուքնուս համար չէ :

Նահանջել չէր ըլլար : Ռիշլիէօ որոշումն ըրաւ :

— Ի՞նչ խօսք է այդ , սիրելիդ իմ , պատասխանեց , և ի՞նչ բանի մէջ կը տեսնես որ քու վրայ ուղիղ կամ ծուռ դատողութիւն մը ըրած ըլլամ :

— Մօրեղբայր իմ , ծուռ աչքով կը նայիք ինձի :

— Ե՛ս , ի՞նչ պարագայի մէջ :

— Ո՛հ , փախուտ մի տաք , պարոն մարաջատ . ինէ երեսնիդ կը ծածկէք՝ երբ ձեզի պէտք ունիմ , ամենն ասոր մէջն է :

— Պատիւս վկայ , ըսածդ բնաւ չեմ հասկընար :

— Ուրեմն բացատրեմ : Թագաւորը չուզեց զձեզ պաշտօնեայ անուանել , և ես , թեթեաձի զօրաց հրամանատարութիւնն ընդունելուս համար՝ կը կարծէք որ ես զձեզ թողուցի , մատնեցի : Այն ազնիւ կոմսուհին որ ձեզ սրտին մէջ կը կրէ . . .

Հոս Ռիշլիէօ քեռորդւոյն խօսքէն զատ ուրիշ բանի մ'ալ ուշ գրաւ :

— Ա՛րսես թէ այն ազնիւ կոմսուհին զիս սրտին մէջ կը կրէ , յարեց :

— Ըսածս կ'ապացուցանեմ ալ :

— Բայց , սիրելիս , ես ալ հակառակը չեմ պնդեր . . . : Քեզ բերել տուի որ միասին աշխատինք : Գու երիտասարդ ես , հետեւաբար աւելի զօրաւոր . դու կը յաջողիս՝ ես չեմ կրնար . այս բնական բան մ'է , և ճշմարիտ՝ չեմ գուշակեր թէ ի՞նչ կը նշանակեն այդ խղճի խայթերդ . եթէ իմ շահիս աշխատեցար՝ քենէ աւելի գովելի մէկը չկրնար ըլլալ . եթէ իմ փեսայիս աշխատեցար՝

Հարուածդ քեզի կը դարձնեմ, կ'ըլլայ կ'երթայ . . . : Ասոր
Համար բացատրութիւնն ինչ պիտի ըլլայ :

— Մօրեղբայր իմ, ճշմարիտ . . .

— Գու տղայ ես, դու քս : Աղւոր դիրք մ'ունիս . Գաղղիոյ ա-
տենակալ, դու քս, թեթեւաձի զօրաց հրամանատար, վեց շաբաթէն
պաշտօնեայ, պէտքէ որ ունայն կծծութիւններէ շատ վեր գանուիս .
յաջողութեամբ մարդ ներողութիւն կը գանէ ըրածներուն, սիրելի
զաւակս : Ենթադրէ որ . . . — ես առականը կը սիրեմ . . .
— ենթադրէ որ առական երկու ջորիներն ըլլանք մենք . . . :
Բայց ինչ ձայն է հոն :

— Բան մը չկայ, մօրեղբայր իմ, շարունակեցէք :

— Ինչպէս չէ, բակին մէջ կառքի մը ձայն կը լսեմ :

— Մօրեղբայր իմ, կ'աղաչեմ, խօսքերնիդ մի ընդմիջէք . ձեր
խօսակցութիւնն ամեն բանէ աւելի ինձ պիտանի է . ես ալ առակ-
ները կը սիրեմ :

— Լաւ ուրեմն, սիրելիս, պիտի ըսէի թէ յաջողութեան մէջ
երբէք մարդուն երեսին չեն մեղադրեր և նախանձտաներուն թին
ալ բնաւ մնաս մը չբերեր . սակայն եթէ քայլելու ատենդ կաղաս,
եթէ ոտքդ քարին զարնես . . . անհ, զգոյշ եղիր, անհ այն
ատեն է որ գայլը կը յարձակի . բայց ըսածս ելաւ, նախասենե-
կին մէջ աղմուկ կայ, անշուշտ պաշտօնէութեան հրովարտակդ կը
բերեն . . . : Անտարակոյս, սիրուն կոմսուհին քեզի համար աշ-
խատած ըլլալու է ննջարանը :

Բարապանը ներս մտաւ :

— ՊՊ. պատգամաւորք խորհրդարանին, ըսաւ մտատանջութեամբ :

— Տես, ըսաւ Ռիշլիէօ :

— Խորհրդարանին պատգամաւորներն հո՞ս գան . . . : Ինչ
կ'ուզէք ինէ, ըսաւ դուքսը մօրեղբօրը ժպիտէն սիրտը չհանդար-
տելով :

— Յանուն թագաւորին, արտասանեց հնչական ձայն մը նախա-
օտենկին ծայրէն :

— Օ՛, օ՛, գոչեց Ռիշլիէօ :

Պ. տ'եկիւլօն սաստիկ դեղնած ոտք ելաւ, և սրահակին շեմ

Generated on 2016-09-07 12:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

եկաւ ինքը ներս մտնելու համար երկու պատգամաւորները՝ որոց ետեւը երկու անտարբեր բարապաններ, և քիչ մ'ալ հեռուն ահաւ գողի մէջ խել մը ծառաներ կը տեսնուէին :

— Ինչ կ'ուզէք ինէ , հարցուց դուքսը յուզեալ ձայնով մը :

— Պարոն տ'եկիւյլօն դքսի՞ն է որ պատիւ ունինք խօսելու , ըսաւ պատգամաւորներէն մին :

— Ես տ'եկիւյլօն դուքսն եմ , այո՛ , պարոններ :

Իսկոյն պատգամաւորը մեծարանօք ողջունելով՝ օրինաւոր գրութիւն մը հանեց ժապաւէնին ներքեւէն և բարձր ու հասկանալի ձայնով կարդալ տուաւ :

Ամբողջ մանրամասն պարագաներով վճռագիրն էր այն , որ Պ. տ'եկիւյլօն դքսին կասկածներով և մինչև անգամ պատուոյն արատ բերող եղելութիւններով ամբաստանեալ ըլլալը կ'իմացնէր և զինքը կը կախակայէր ատենակալութենէ և այլ պաշտօններէ :

Դուքսը կարդացուածը մտիկ ըրաւ՝ նման շանթահար մարդու մը որ որոտաման ձայնը կը լսէ : Արձանի մը պէս՝ որ պատուանդանին վրայ անշարժ կը մնայ , բնաւ չերերաց , և ձեռքն անգամ չերկրնցուց առնելու համար վճռագրին օրինակը զոր պատգամաւորն իրեն կու տար :

Մարաջախտը , որ անոր պէս ոտքի վրայ էր , սակայն առոյգ և թեթեւաշարժ՝ թուղթն առաւ , կարդաց և պատգամաւորները ողջունեց :

Ասոնց երթալը բաւական ատեն եղեր էր՝ սակայն Պ. տ'եկիւյլօն դուքսը նոյն ապշութեան մէջ կը մնար :

— Դժնդակ հարուած , ըսաւ Ռիշլիէօ , ալ Գաղղիոյ ատենախալ չես , ինչ նաւաստութիւն :

Դուքսը մօրեղբօրը դարցաւ , այնպէս որ կարծես թէ այն ատեն ժողնցաւ և խելքը գլուխը եկաւ :

— Մտքէդ կ'անցնէր այս , ըսաւ Ռիշլիէօ միևնոյն եղանակաւ :

— Իսկ ձեր մտքէ՞ն , մօրեղբայր իմ , ըմբերանեց տ'եկիւյլօն :

— Ինչպէս կարելի է որ մտքէս անցնի թէ խորհրդարանը այսպիսի ուժգին հարուած մը կրնայ տալ անոր գլխուն որ թէ թագաւորին և թէ անոր սիրելւոյն սիրականն է . . . : Այս մարդիկը փոշի պիտի դառնան :

Generated on 2016-09-07 12:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դուքսը նստաւ , հրատապ այտը ձեռքին յեցած :

— Եթէ , շարայարեց ծեր մարաջախտը դաշոյնը վէրքին մէջ
Պոնելով , խորհրդարանը ատենակալի աստիճանդ կ'առնէ քենէ՝ թե-
թեւաճի զօրաց հրամանատար անուանուելուդ համար , քեզ այրելու
պիտի դատապարտէ՝ պաշտօնեայ եղած օրդ : Այս մարդիկը քեզ
կ'անարգեն , տ'էկիւլլօն , զգուշացիր անոնցմէ :

Դուքսը գիւցազնական քաջութեամբ այս սոսկալի ծաղրին դէմ
դրաւ . թշուառութիւնը զինքը կը բարձրացրնէր և հոգին կը զտէր :

Ռիշլիէօ կարծեց թէ այն քաջութիւնը անզգայութիւն , ապշու-
թիւն էր , և բաւական խայթած չէր :

— Այլ ևս ատենակալ չըլլալով , ըսաւ , այն դատարանի մար-
դոց ատելութեան քիչ պիտի ենթարկուիս . . . : Անձանօթ կեանք
մ'անցուր քանի մը տարի : Նաև անձանօթ ասլիլը որ քու փրկու-
թիւնդ է , ուզես չուզես ինքը պիտի գայ քեզ գտնէ . ատենակա-
լութեան պաշտօնէ ինկած ըլլալով աւելի դժուարաւ պիտի կարենաս
հասնիլ պաշտօնէութեան . հետեւարար պիտի ստիպուիս այնպիսի
կեանք մ'անցընել . մինչդեռ , եթէ մաքառիլ ուզես , բարեկամս ,
քու կողմէդ տիկին Տիւպարին ունիս՝ որ զքեզ սրտին մէջ կը կրէ ,
և հաստատուն նեցուկ մ'է :

Պ. տ'էկիւլլօն ոտք ելաւ : Մարաջախտին զայրալիւր ակնարկ մը
անդամ չարձակեց իրեն կրել տուած վիշտերուն փոխարէն :

— Իրաւունք ունիք , մօրեղբայր իմ , պատասխանեց հանգարտու-
թեամբ , և այս վերջին կարծեաց մէջ ձեր իմաստութիւնը յայտնի
կ'երևի : Տիւպարի կօմսօհին , որուն զիս ներկայացուցիք բարեսի-
րաբար , և որուն զիս այնչափ գովեցիք՝ որ Լիւսիէնի մէջ բոլոր
մարդիկ վկայ կ'ըլլան այս մասին , տիկին Տիւպարի զիս պիտի պաշտ-
պանէ : Փառք Աստուծոյ , նէ զիս կը սիրէ , արիասիրտ է , և Նո-
քին վեհափառութեան մաքին վրայ մեծ ազդեցութիւն ունի : Ձեր
տուած խրատին համար շնորհակալ եմ , մօրեղբայր իմ , իբրև
փրկութեան նաւահանգիստ հոն պիտի ապաստանիմ : Ձիերս , Պուր-
կինեօն , 'ի Լիւսիէն :

Թեթև ժպիտ մը մարաջախտին շրթանցը վրայ մնաց :

Պ. տ'էկիւլլօն յարդանօք ողջունեց իւր մօրեղբայրը և սրահա-

Generated on 2016-09-07 12:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կէն մեկնեցաւ, որով մարաջախտը թունդ ելաւ, մանաւանդ ամօ-
թահար մնայ՝ այնքան արիւնախանձ թշնամութիւն մը ըրած ըլլա-
լուն համար :

Սակայն մարաջախտը կերպ մը սփոփանք գտաւ Բարիզցւոց այն
խօշական ուրախութիւնը տեսնելով, երբ իրիկունը վճռագրին տասն
հազար օրինակը կարդացին՝ փողոցներուն մէջ իրարու ձեռքէ խլե-
լով : Բայց, երբ Ռաֆղէ հարցուց թէ ինչ գործ կատարեր էր այն
օրը, չկրցաւ ինքզինքը զսպել, և հառաչեց :

Բայց և այնպէս առանց բան մը ծածկելու ամեն բան պատմեց
անոր :

— Ուրեմն հարուածն 'ի դերեւ ելաւ, հարցուց քարտուղարը :

— Այո՛ և ոչ, Ռաֆղէ. սակայն վերքը մահաբեր չէ, և 'ի
Դրիանօն լաւագոյն բան մ'ունինք՝ որուն մի միայն հոգ շտանելու
համար ինքզինքս կը մեղադրեմ : Երկու նապաստակ միանգամայն որ-
տալու ելանք, Ռաֆղէ . . . : Մեծ անմտութիւն է . . .

— Ինչո՞ւ. եթէ լաւագոյնը բռնուի, պատասխանեց Ռաֆղէ :

— Է՛հ, սիրելիս, քաջ միտքդ պահէ ըսածս, լաւագոյնը
չբռնուածն է միշտ, և փախածին համար մարդ միշտ միւսը կու
տայ, այսինքն բռնածը :

Ռաֆղէ ուսերը վեր ըրաւ, սակայն Պ. տը Ռիշլիէօ իրաւունք
ունէր :

— Կը կարծէք որ, ըսաւ Պ. տ'էկիւլյօն այս գործին մէջէն պի-
տի կարենայ ելնել :

— Չե՛ս կարծեր որ թագաւորը այս գործին մէջէն կարենայ ել-
նել, անմիտ :

— Ո՛հ, թագաւորը ազած տեղէն ծակ մը կը բանայ, բայց
խնդիրը թագաւորին վրայ չէ, կարծեմ :

— Թագաւորին անցած տեղէն տիկին Տիւպարին ալ կ'անցնի՝ որ
այնքան թագաւորին մօտն է . . . և տիկին Տիւպարիի անցած տե-
ղէն ալ ա'էկիւլյօն կ'անցնի, նա որ . . . : Դու քաղաքականու-
թենէ բան մը չես հասկընար, Ռաֆղէ :

— Տէր իմ, Պ. Ֆլաժօի կարծիքն այսպէս չէ :

— Լա՛ւ, ինչ կ'ըսէ այն պարոն Ֆլաժօն, և նախ ըսէ նայիմ,
ո՞վ է այն մարդը :

- Գործակալ է, տէր իմ :
- Ետքը :
- Այն պարոն Ֆլածօն կը պնդէ թէ նոյն իսկ թաղաւորը չափ-
տի կրնայ ելնել այս գործին մէջէն :
- Օ՛, օ՛, ո՞վ պիտի արդիլէ առիւծը :
- Ճշմարիտը, տէր իմ, մուկը . . .
- Պարոն Ֆլածօն ուրեմն :
- Ինքը այնպէս կ'ըսէ :
- Կը հաւատաս ըսածին :
- Ես միշտ կը հաւատամ այն դործակալին որ չարիք մը կա-
տարել կը խոստանայ :
- Պ. Ֆլածօի 'ի գործ դնելու միջոցները կը տեսնենք, Ռաֆղէ :
- Ես ալ ինքնիրենս այնպէս կ'ըսեմ, տէր իմ :
- Եկուր ընթրէ որ ես ալ պառկիմ . . . : Տեսնելով որ քեռ-
որդիս այլ ևս առենակալ չէ և պաշտօնեայ ալ չպիտի ըլլայ՝ շատ
վշտացայ : Մօրեզբայր մը ինչ է գիտե՞ս, Ռաֆղէ :
- Պ. տը Ռիշլիէօ սկսաւ հառաչել, ետքն ալ խնդալ :
- Պաշտօնեայ ըլլալու համար դուք պէտք եղածն ունիք, պա-
տասխանեց Ռաֆղէ :



ՂԸ

Պ. ՏԻԿԻԻՅԸԼՕՆ ՎՐԷԹԸ ԳՆՈՒՆԷ

Խորհրդարանի սոսկալի վճռադրոյն Բարիդի և Վէրսայլի մէջ
մեծ շռուկ հանած օրուան յաջորդ օրը, երբ ամենքն ալ անհամբեր
կ'ըսպասէին գիտնալու համար թէ ինչ պիտի ըլլար վճռադրոյն հե-
տևանքը, Պ. տը Ռիշլիէօ որ Վէրսայլ գարձեր և իւր սովորական
կենցաղն սկսեր էր, տեսաւ որ Ռաֆղէ իւր սենեակը մտաւ ձեռքը

Ֆամակ մը բռնած : Քարտուղարը այն նամակը կը հոտոտէր և կը կշռէր մտատանջութեամբ մը՝ որ իսկոյն իւր տիրոջը հաղորդուեցաւ :

— Ինչ կայ դարձեալ, Ռաֆդէ, հարցուց մարաշախտը :

— Կ'երևակայեմ որ անհաճոյ բան մը կայ, տէր իմ, և այն ալ ասոր մէջ :

— Ինչու այդպէս կ'երևակայես :

— Ինչու որ նամակը Պ. տ'Էկիւլօն դ. քսէն է :

— Ա', ա', ըրաւ դուքսը, քեռորդիէս :

— Այո, պարոն մարաշախտ : Թագաւորին գումարած ժողովը ցրուելու ատեն, բարապան մ'եկաւ և այս ծալած թուղթը ինձ տուաւ որ ձեզի յանձնեմ, տասն վայրկենէ 'ի վեր զայն ասդին կը դարձնեմ անդին կը դարձնեմ և անպատճառ կը կարծեմ որ մէջը գէշ լուր մը պիտի ըլլայ :

Գուքսը ձեռքը երկընցուց :

— Տուր, ըսաւ, ես քաջասիրտ եմ :

— Կանխաւ կ'իմացընեմ, ընդմիջեց Ռաֆդէ, թէ բարասրանն այս թուղթը տալու ատենը կոկորդը պատուելու չափ խնդաց :

— Նզովից արմատ, մտատանջութիւն կը պատճառէ այդ, բայց տուր նայիմ, պատասխանեց մարաշախտը :

— Եւ յարեց. « Պ. տ'Էկիւլօն դուքսը պատուիրեց որ այս նամակը իսկոյն Պ. մարաշախտին տրուի : »

— Ցաւ, բնաւ չպիտի ըսեմ որ դու չարիք մ'ես, գոչեց ծեր մարաշախտը հաստատուն ձեռքով մը կնիքը լուծելով :

Եւ կարդաց :

— Հէ, կը խոժոռիք, ըսաւ Ռաֆդէ իբրև դիտող ձեռները ետևը կապած :

— Միթէ այսպէս բան մը կրնայ ըլլալ, մրմուաց Ռիշլիէօ կարգալը շարունակելով :

— Լուրջ բան մը ըլլալու է :

— Եւ դու կ'ուրախանաս, այնպէս չէ՞ :

— Անշուշտ, կը տեսնեմ որ չեմ սխալիր :

Մարաշախտը վերստին կարդալու սկսաւ :

— Թագաւորը բարեսիրտ է, ըսաւ քիչ մ'ետքը :

Generated on 2016-09-07 12:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Պ. տ'էկիւլօնը պաշտօնեայ անուաներ է :

— Ատկէ աղէկ :

— Օ', օ', ինչ ըրեր է :

— Ահաւասիկ կարգա և մեկնէ :

Ռաֆղէ ևս ըստ կարգի նոյն տոմսակը կարգաց . նոյն իսկ տ'էկիւլօն գուքսը գրած էր զայն և հետեւեալը կը պարունակէր .

«Սիրելի մօրեղբայր իմ ,

«Ձեր բարի խրատը իւր պտուղը տուաւ . վշտերս յայտնեցի մեր ջնտանեաց ընտիր բարեկամուհւոյն , տիկին Տիւպարիի , որ հաճեցաւ Նորին Աւհափառութեան ծոցը ներկայացընել յայտնածս : Թաղաւորը սաստիկ զայրացաւ ժողովականաց ինձ դէմ ըրած զրկանաց համար , ինձ՝ որ այնքան հաւատարմութեամբ ծառայած եմ թաղաւորին . և նոյն իսկ այսօրուան ժողովին , Նորին Աւհափառութիւնը խորհրդարանին վճիռը ջնջեց և ինձ հրամայեց որ ատենակալութեան պաշտօնս վարեմ :

«Գիտնալով որ այս լուրը մեծ ուրախութիւն պիտի պատճառէ ձեզ , սիրելի մօրեղբայր իմ , ահա ձեզի կ'ուղարկեմ այսօրուան ժողովին մէջ Նորին Աւհափառութեան տուած որոշման բովանդակութիւնը : Քարտուղարի մը օրինակել տուի զայն , և ամենէն առաջ ձեզի կը հաղորդուի :

«Հաճեցէք ընդունիլ գորովալիր յարգանքս , սիրելի մօրեղբայր իմ , և շարունակել ձեր պաշտպանութիւնն ու բարի խրատները :

«Սարգիսէլ , ԴՈՒՔՍ Տ'ԷԿԻՒՅԼՕՆ»

— Յայտնապէս զիս կը ծաղրէ , դոչեց Ռիշլիէօ :

— Ես ալ այնպէս կը կարծեմ , տէր իմ :

— Բայց թաղաւորը , թաղաւորը որ թակարդը կ'իյնայ :

— Երէկ չէիք հաւատար :

— Ես քեզի չըսի որ թակարդը չիյնար , պարոն Ռաֆղէ , այլ ըսի որ այս գործին մէջէն կ'ելնէ . . . : Ինչպէս որ կը տեսնես՝ ելաւ ալ :

— Հիմա սա կայ որ խորհրդարանը հարուած կրեց :

- Նոյնպէս և ես :
- Առ այժմ, այս :
- Ընդ միշտ . երէկ նախազգացում մ'ունէի այս մասին , և դու զիս այնքան միտիժարեցիր որ անպատճառ նեղութիւն մը պիտի կրէի :
- Տէր իմ , կարծեմ թէ շատ շուտ կը վճատիք :
- Պարոն Ռաֆղէ , դու պարզամիտ մէկն ես : Ես հարուած կրեցի , ուստի պէտք եղած տուգանքը պիտի հատուցանեմ : Թերևս դու չես հասկընար թէ որքան տհաճութիւն կը պատճառէ ինձ Լիւսիէնի առջև խայտառակուիլս . այս ժամուս , դու քսը տիկին Տիւպարիի բազկացը մէջն ինկած զիս կը ծաղրէ : Օրիորդ Շօն և Պ. Ժան Տիւպարի ինձմով կը զուարճանան . խորշիկը շաքարեղէն-ներով բերանը կը լեցընէ զիս ծաղրելով : Շիտակը , դառնաբարոյ մէկը չեմ , բայց այս եղածները զիս կը կատղեցընեն :
- Կը կատղեցընեն , տէր իմ :
- Այո , կը կատղեցընեն :
- Այն ատեն պէտք չէր որ ընէիք , ինչ որ ըրիք , պատասխանեց Ռաֆղէ փիլիսոփայաբար :
- Դու զիս դրդեցիր , պարոն քարտուղար :
- Ե՛ս :
- Այո , դու :
- Է՛հ , պարոն տ'Էկիւլլօն ատենակալ ըլլայ կամ ոչ , ինծի ի՞նչ : Ձեր քեռորդին կարծեմ ինծի վնաս մը չունի , տէր իմ :
- Պարոն Ռաֆղէ , դու լիրբ մէկն ես :
- Քառասուն և ինն տարի է որ այդպէս կ'ըսէք , տէր իմ :
- Եւ դարձեալ պիտի ըսեմ :
- Բայց ոչ այնչափ մ'ալ :
- Ռաֆղէ , ուրեմն այսպէս հոգ կը՝ տանիս իմ շահերուս . . . :
- Ձեր սնտաի կրից շահերը , ոչ , պարոն դուքս , երբէք . . . :
- Դուք սրբան որ խելացի մէկն էք , երբեմն այնպիսի անմիտ զործեր կը կատարէք՝ որ ինծի պէս տխմար մը անգամ չընեք :
- Ըսածդ բացատրէ , պարոն Ռաֆղէ , և եթէ յանցանքը իմս է՝ կ'ըսեմ :

— Երէկ դուք վրէժ առնել ուզեցիք, այնպէս չէ՛: Ձեր քեռորդուոյն նուաստանալը տեսնել ուզեցիք, կերպով մը խորհրդարանի վճռագիրը բերել, և, Պ. տը Գրեպիյօնի տղուն ըսածին պէս, ձեր զոհին սարսուռները և երեքուձեռները թուել ուզեցիք: Է՛՛՛հ, պարոն մարաշախտ, այսպիսի տեսարաններուն մեծ գումարներ կը վճարեն, այսպիսի գոհունակութիւնները սուղի կը նստին . . . : Հարուստ էք, վճարեցէք, պարոն մարաշախտ, վճարեցէք:

— Եթէ դու իմ տեղս ըլլայիր, ինչ պիտի ընէիր, ըսէ նա յիմ, խելացի պարոնս:

— Ոչինչ. . . այլ կ'ըսպասէի առանց բան մ'ընելու. բայց դուք կ'ուզէիք խորհրդարանը տիկին Տիւպարիի դէմ հանել այն վայրկենէն որ՝ տիկին Տիւպարի Պ. տ'Էկիւլօնը ձենէ աւելի դեռահաս կը տեսնէր:

Իբրև պատասխան մարաշախտը խանչիւն մը հանեց:

— Է՛՛՛հ, շարայարեց Ռաֆգէ, խորհրդարանը ձենէ գրգռուած էր ընելու ինչ որ ըրաւ. վճիռն ելնելէն ետք, ձեր քեռորդուոյն բարեկամութիւննիդ կը նուիրէիք՝ որպէս զի բանէ մը չկասկածի:

— Այս շատ աղէկ, և կ'ընդունիմ որ սխալած եմ. բայց պէտք էր որ դու ինձ ազդարարէիր:

— Ես արգիլեմ որ չարիք մը չգործուի. . . : Ձիս ուրիշ մէկը կը կարծէք, պարոն մարաշախտ. ամեն եկողին գացողին կ'ըսէք թէ ես ձեր ձեռնասունն եմ, թէ դուք զիս մարդ ըրած էք, ես ալ հարկաւ ուրախ կ'ըլլամ երբ անմիտ գործ մը կը տեսնեմ, կամ աղէտ մը կը պատահի . . . : Չարմանալի՛ բան է այս:

— Ուրեմն աղէտ մը պիտի պատահի, պարոն կախարդ:

— Ստուգիւ:

— Ինչ աղէտ:

— Այն է որ դուք պիտի յամառիք, և Պ. տ'Էկիւլօն խորհրդարանին և տիկին Տիւպարիի մէջ կապ մը պիտի ըլլայ. այն օրը նա պաշտօնեայ պիտի ըլլայ, դուք ալ պիտի աքսորուիք . . . կամ Պաստիլը դրուիք:

Մարաշախտին զայրոյթէն քթախոտին աուփը գորգին վրայ թափեցաւ:

— Պատգիյլ , ըսաւ ուսերը վեր ընելով , միթէ Լուի ԺԵ՛ ,
Լուի ԺԴ՞.ն է :

— Ոչ , բայց տիկին Տիւպարի Պ. տ'Էլիւյլօնը իրեն ձեռնտու
ունենալով տիկին սը Մէնգնօնի չափ դործ պիտի կարենայ կատա-
րել , զոյոյշ կեցեք , ներկայ ժամանակին մէջ չեմ ճանչնար այնպիսի
արքայազն իշխանուհի մը որ Պատգիյլ ձեզ տեսնելու գալով շա-
քարեղէններ բերէ :

— Իսել մը դուշակութիւններ , պատասխանեց մարաջախտը , բա-
ւական ատեն լուռ մնալէ ետք . . . : Գու ապադան կը կարդաս .
արդեօք ներկային համար ըսելիք մ'ունիս :

— Պ. մարաջախտը իմաստուն անձ մը ըլլալով խրատ առնելու
պէտք չունի :

— Արդեօք դ՞ու ալ զիս կը ծաղրես , պարոն անզգամ . . . :

— Պարոն մարաջախտ , թուականները կը շփոթէք՝ քառասուն
տարուն անցած մէկու մը անզգամ չեն ըսեր . ես վաթսուն և եօթն
տարեկան եմ :

— Փոյթ չէ . . . վրայէդ նետէ այդ խօսքը , և . . . շուտ
. . . շուտ . . . :

— Խրատ մը տալով :

— Ինչ որ կ'ուզես՝ անով :

— Տակաւին ժամանակը չէ :

— Ստուգիւ զուարճալի մէկը կ'ըլլաս հետզհետէ :

— Աստուած տար որ այնպէս ըլլայի . . . : Եթէ ես զուար-
ճալի ըլլայի՝ պարագան ալ զուարճալի պիտի ըլլար . . . սակայն ,
դժբաղդաբար , այնպէս չէ :

— Ժամանակը չէ ըսելով , պատասխանէ փախուստ տալը ի՞նչ
կը նշանակէ :

— Ոչ , տէր իմ , ժամանակը չէ : Եթէ թագաւորին վճռադրին
լուրը Բարիզ հասած է՝ ըսելիք չունիմ . . . : Պ. տ'Ալիկը նա-
խադահին սուրհանգակ մը յղէնք :

— Որպէս զի աւելի՞ շուտ ծաղրեն մեզ . . . :

— Ի՛նչ ծիծաղելի անձնասիրութիւն , պարոն մարաջախտ . . . :
Ուրեմն թոյլ տուէր որ ես՝ Անզգիւս ոտք կոխելու յատակապիծս

Generated on 2016-09-07 12:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-goo

աւարտեմ, և դուք ալ պաշտօնէական խարդաւանաց մէջ սուզեցէք, քանի որ դործը կիսովին լրացած է :

Մարաշախտը Պ. Ռաֆիգէի սեւամաղձ ատենները լաւ գիտէր . գիտէր նաև որ քարտուղարին մելամաղձոտութիւնը երևան ելնելուն պէս՝ անոր դպչիլ շէր ըլլար :

— Է՛հ, դէմքդ մի խոժոռեր, ըսաւ, և եթէ ըսածդ չեմ հասկընար՝ հասկըցուր ինձ :

— Ուրեմն, տէր իմ, կ'ուզէք որ ձեր բռնելիք ընթացքը ձեր աչքին առջև՝ դնեմ :

— Իրօք այնպէս, քանի որ կը նշնդես թէ ես բռնած ընթացքս չեմ գիտեր :

— Շատ աղէկ, մտիկ ըրէք :

— Ականջս քեզի է :

— Պ. տ'Ալիկրի կը զրկէք, ըսաւ Ռաֆիգէ խոժոռ դէմքով մը . Պ. տ'Ալիկրի յանակը, անոր կը միացընէք ժողովին մէջ թաղաւորին տուած վճիռը : Ա՛րսպասէք որ խորհրդարանը գումարուի և մտածէ այս նիւթին վրայ, և այս ալ անմիջապէս տեղի կ'ունենայ . այնուհետև, կառք կը մտնէք և կ'երթաք փոքր այցելութիւն մը կ'ընէք ձեր գործակալ Պ. Ֆլաժօին :

— Ի՛նչ հրամայեիր, դոչեց Ռիշլիէօ, առջի օրուան նման այս անունը առնելու ատեն տեղէն ցատկելով : Դարձեալ Պ. Ֆլաժօ, բոլոր այս եղածներուն մէջ ինչ բան ունի Պ. Ֆլաժօն, և ես Պ. Ֆլաժօի պէս մարդու մը տունը երթալով ինչ պիտի ընեմ :

— Տէր իմ, սլատու ունեցայ ձեզի ըսելու թէ Պ. Ֆլաժօ ձեր գործակալն է :

— Լաւ, ետքը՞ :

— Եթէ ձեր գործակալն է՝ թղթեր ունիք քովը . . . զանազան դատեր յանձնած էք իրեն . . . կ'երթաք ձեր դատերէն լուր խնդրելու :

— Վաճճ :

— Այո, պարոն մարաշախտ, վաղը :

— Բայց այդ քու գործդ է, պարոն Ռաֆիգէ :

— Ոչ, ոչ . . . Իրօք այդպէս էր՝ երբ Պ. Ֆլաժօ պարզ միտ-

Generated on 2016-09-07 12:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տիչ մ'էր. այն աստի իրեն հետ կրնայի տեսնուիլ՝ իբրև ինձ հաս-
ւասար մէկու մը հետ, բայց, որովհետև վաղուանէ սկսելով, Պ.
Ֆլաժօ Աղղիլա մ'է, թագաւորներու պատուհաս մը, ոչ աւելի
ոչ սրկաս՝ դուքս և ատենակալ մը, Գաղղիոյ մարաջախտ մը այն
ամենակարողին հետ տեսնուիլը շատ չէ :

— Բոլոր այս ըսածներդ լնւրջ խօսք են թէ կատակերգութիւն
մը կը ներկայացընենք :

— Լուրջ են թէ ոչ վաղը կը տեսնէք, տէր իմ :

— Բայց ըսէ ինձ թէ Պ. Ֆլաժօի տունը երթալովս ինչ պիտի
ըլլայ :

— Սաստիկ պիտի ցաւէի . . . վաղը պիտի ուզէիք ինձ հաս-
տատել թէ կանխաւ դուշակած էիք . . . : Գիշեր բարի, պարոն
մարաջախտ : Չմունաք ըսածներս . . . Պ. տ'Ալիկրի սուրհանդակ մը
անմիջապէս, Պ. Ֆլաժօի այցելութիւն մը վաղը : Ա՛հ, տանը փո-
ղոցը . . . կաւաւարը դիտէ, ութ օրէն 'ի վեր քիչ անգամ շտա-
րաւ դիս հոն :

ՉԹ

**ԸՆԹԵՐԵՅՈՂԸ ՎԵՐՍՏԻՆ ՊԻՏԻ ԳՏՆԷ ԻՒՐ ՎԱՂԵՄԻ ՖԱՆՏՈՒՆԷ-
ՐԷՆ ՄԻՆ՝ ԶՈՐ ԿՈՐՍՈՒՆԺ ԿԸ ԿԱՐԺԷՐ, ԵՒ ԹԵՐԵՒՍ ԱՆՈՐ
ՎՐԱՅ ԶԷՐ ՅԸՆԵՐ**

Ընթերցողն անշուշտ մեզի պիտի հարցընէ թէ ինչու Պ. Ֆլա-
ժօ, որ այնքան նշանաւոր դեր մը պիտի կատարէ, փոխանակ փաս-
տաբան անուանուելու՝ դորձակալ կ'անուանուէր. ընթերցողն իրա-
ւունք ունենալով այս հարցումն ընելու՝ զինքը պիտի ընենք
այս մասին :

Խորհրդարանին դադարները ատենէ մ'ի վեր կը կրկնուէին, և

փաստարանները այնքան քիչ դատ կը վարէին՝ որ անոնց վրայ խօսիլն անգամ չէր արժեր :

Պարոն Ֆլածօ կանխաւ գուշակելով այն ատենը՝ յորում բնաւ դատ չսլիտի վարէին , Պ. Ախլտու գործակալին հետ սլայմանի մտաւ , որ իրեն թողուց իւր դրասենեակը և յաճախողները , մէկ անդամի համար քսան և հինգ հազար Ֆրանք առնելով անորմէ : Ահա Պ. Ֆլածօ այսպէս գործակալ եղաւ : Եթէ հիմա ալ հարցընեն թէ քսան և հինգ հազար Ֆրանքը ինչպէս վճարեց , սիտի պատասխանենք թէ օրիորդ Մարկրիդին հետ ամուսնանալով , որուն այս գումարը ժառանգութենէ մ'եկաւ 1770 տարուան վերջերը , Պ. տը Շուպղէօլի աքսորէն երեք ամիս առաջ :

Պ. Ֆլածօ ընդգլխադիր մասին կողմը բռնելու յարատեութեամբը շատուց 'ի վեր համբաւ հաներ էր : Գործակալ ըլլալուն սէտ ջանքը կրկնապատկեց , և այն կերպով բաւական անուն մը հանեց : Այս հանած անունը մէկ կողմէն , միւս կողմէն ալ Պ. ա' Էկիլյօնի Պ. տը լա Շալօդէի հետ ունեցած վաճին վրայ հրատարակած կրակութոց յիշատակադիրը Պ. Ռաֆդէի ուշր գրաւեցին , որ սէտք ունէր խորհրդարանին մէջ անցածը դարձածը իմանալու :

Բայց իւր նոր պատույն և օր օրի բարձացող վիճակին չնայելով Պ. Ֆլածօ Բրդի-Լիօն-Սէն-Սօվէօս փողոցէն չելաւ : Շատ ծանր սլիտի թուէր օրիորդ Մարկրիդի՝ դրացուհիներէն տիկին Ֆլածօ չկոչուիլը , և Պ. Ախլտուի դպիրներէն չյարգուիլը , որոնք նոր գործակալին քով մտած էին :

Յայտնի է թէ Պ. տը Ռիշլիէօ ո՞րքան կը նեղուէր Բարիդէն անցած առեն , Բարիդի այն նողկալի մասէն , այն ժահահոտ ծակն երթալու համար՝ որուն փողոց անունը կու տար Բարիդի քաղաքապետութիւնը :

Պ. Ֆլածօի դրանն առջև , Պ. տը Ռիշլիէօի կառքին դէմ կառք մ'եղնելով երկուքն ալ կասեցան :

Մարաջխտը կնոջ մը թիկունքը տեսաւ որ կառքէն կ'իջնէր , և որովհետև հակառակ եօթանասուն և հինգ տարեկան հասակին քծնելէ ետ չէր մնար՝ աճադարանօք ազտոտ տեղ մը կոխելով անցաւ՝ որպէս զի կառքէն առանձին իջնող կնոջ իւր թևը տայ :

Generated on 2016-09-07 12:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց այն օրը ամեն բան ձախող կ'երթար մարաջախտին , քայլուտ-
Ֆին վրայ երկնյօղ չոր և ոսկրուտ սրունքէ մը յայտնուեցաւ թէ
կինը պառաւ էր : Խորշումեալ , կարմրած նեարդերով դէմք մը տես-
նելով , մարաջախտը համողութեցաւ թէ այն կինը ոչ միայն պառաւ
այլ և զառամեալ էր :

Ետ գառնալ չէր ըլլար , մարաջախտին ըրած շարժումը կինը
տեսեր էր . ասկէ զատ Պ. տը Ռիշլիէօ ալ երիտասարդ մէկը չէր :
Սակայն դատասխազ կինը անշուշտ այն կինը դատ մ'ունենալու էր ,
ինչու որ սր կինը սլիտի ելնէր կառքով այն փողոցը զար , սակայն ,
զախք , դատասխազ կինը դքսին պէս բնաւ վարանում չյայտնեց .
քստմնելի ժպիտով մը Ռիշլիէօի ձեռին մէջ դրաւ իւր թաթը :

— Այս դէմքը տեղ մը տեսած եմ , ըսաւ մարաջախտը մտովի :
Եւ ձայնը բարձրացրնելով ,

— Արդեօք տիկինն ալ Պ. Ֆլաժօն տեսնելու կ'երթայ , հար-
ցուց :

— Այո , պարոն դուքօ , պատասխանեց պառաւը :

— Ա՛հ , ձենէ ճանչուելու պատիւ ունիմ , տիկին , գոչեց դուքսը
ներքին դժգոհութեամբ մը , մութ անցքին շեմը կենալով :

— Ո՞վ չձանչեր Պ. տը Ռիշլիէօ մարաջախտ դուքսը , պատաս-
խանեց պառաւը : Չձանչելու համար պէտք է որ մէկը կին չըլլայ :

— Այս կապիկն ալ ինքզինքը կին կը կարծէ , մըմուաց Մահօ-
նի յաղթականը :

Եւ կարի շնորհալի կերպով բարեկց :

— Եթէ համարձակէի ըստ կարգի հարցնելու , յարեց , թէ ո-
րո՞ւ խօսելու պատիւ ունիմ :

— Տը Պէարն կոմսուհին , ձեր աղախինն եմ , պատասխանեց
պառաւը , անցքին ցեխոտ տախտակամածին վրայ արքունի ձեով
խոնարհութիւն մը ընելով , բաց նկուղի մը քերնէն երեք մատ ան-
դին՝ որուն մէջ , մարաջախտը շարութեամբ կը յուսար որ պառա-
ւը երբորդ անդամ խոնարհելոյն լինալով անհետ կ'ըլլայ :

— Տարապայման ուրախ եմ , տիկին , ըսաւ , և դիպուածէն չեմ
զիտեր օրքան շնորհակալ ըլլամ : Դուք ալ դասեր տնիք , տիկին
կոմսուհի :

— Է՛Տ , պարոն գուքս , միայն մէկ դատ ունիմ , բայց ի՛նչ դատ ։
Անշուշտ անոր խօսքը լսած էք ։

— Այո՛ , այո՛ , այն մեծ դատը . . . ճշմարիտ է , ներեցէք ։
Ինչպէս ալ մտքէս ելեր էր ։

— Սալիւսեանց դէմ ։

— Սալիւսեանց դէմ , այո՛ , տիկին կոմսուհի , այն դատը որուն
վրայ երգ մը շինած են . . . ։

— Ե՛րգ մը . . . ըսաւ պառաւը խոցուելով , ի՛նչ երգ ։

— Զգուշացէք , տիկին , փոս մը կայ հոն , ըսաւ գուքսը տես-
նելով որ վերջապէս այն ծակը չախտի իյնար պառաւը . բաղրիքը ,
այսինքն պարանը բռնեցէք ։

Պառաւն սկսաւ աստիճաններէն ելնել ։ Գուքսն անոր ետեէն
կ'ելնէր ։

— Այո՛ , բաւական չարանիւթ երգ մը , ըսաւ ։

— Գատիս վրայ չարանիւթ ե՛րգ մը . . . ։

— Է՛Տ , գուք դատեցէք . . . ։ Բայց թերևս գիտէք զայն . . . ։

— Բնաւ ։

— Պարպօնն ինչին եղանակին վրայ շինուած է , հետեւալ խօսքով ։

Տիկին կոմսուհի ,
Շնորհ մ'ըրէք ինձ ,
Շուարած եմ կարի ։

— Խօսողը տիկին Տիւպարին է , կը հասկընա՞ք ։

— Անոր կը դպչի այդ խօսքը . . .

— Չեն ղիտեր երգագիրները . . . բանի մը աչտութիւն չեն
ըներ ։ Տէր Աստուած , ո՛րքան աղաոտ է այս սլարանը ։ Յետոյ
գուք կը պատասխանէք ,

Պառաւ մ'եմ պինդ գլուխ ,
Էւ մեծ դատ մ'ունիմ ,
Կ'ուզեմ որ շահիմ ։

— Է՛Տ , պարոն , սոսկալի բան է այդ , դոչեց կոմսուհին , ազ-
նուական կին մը այսպէս կը թշնամանեն ։

Generated on 2016-09-07 12:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Տիկին , կը ներէք եթէ սխալ երգեցի . այս սանդուխը զիս կը յողնեցնէ . . . : Ա՛Տ , ահա հասանք . ներեցէք որ զանգակը քաշեմ :

Պառաւը մրմուռով կեցաւ որ դուքսը սոռաջ անցնի :

Մարաջախտը զանգակը զարկաւ , և տիկին Ֆլաժօ որ գործակալի կին ըլլալովը դձնապանուհի և խոհակերուհի ըլլալէ դադրած չէր՝ թկաւ դուռը բացաւ :

Երկու դատախազները Պ. Ֆլաժօի խուցը մտնելով՝ կատաղի մարդ մը տեսան՝ որ գրիչը ակռաներովը խածած՝ դատի մը վրայ սարսափելի յիշատակութիւն մը գրի առնել կու տար իւր առաջին դպրին :

— Տէր Աստուած , ի՞նչ կայ , պարոն Ֆլաժօ , գոչեց կոմսուհին՝ որուն ձայնն առնելով գլուխը դարձուց գործակալը :

— Ա՛Տ , տիկին , ձեր անկեղծ ծառան եմ : Տիկին տը Պէտրն կոմսուհւոյն նստարան մը : Պարոնը ձեզի հետ է , տիկին . . . : Է՛Տ , բայց չեմ սխալիր . Պ. տը Ռիչլիէօ դուքսը իմ տունս գայ . . . : Ուրիշ նստարան մ՛ալ , Պէրնարտէ , ուրիշ նստարան մի ալ :

— Պարոն Ֆլաժօ , ըսաւ կոմսուհին , կ'աղաչեմ ըսէք , դատս ո՞ւր հասած է :

— Ա՛Տ , տիկին , այս միջոցին ես ալ ճիշդ ձեր գործովը կ'ըզբաղէի :

— Շատ աղէկ , պարոն Ֆլաժօ , շատ աղէկ :

— Եւ այնպիսի եղանակաւ մը որ բաւական անուն պիտի հանէ , կը յուսամ :

— Ի՞նչ , զդուշացէք :

— Ո՛Տ , տիկին , ալ խնայելու բան մը չկայ . . . :

— Եթէ իմ գործովս կ'ըզբաղիք՝ կ'ընաք Պ. դուքսին հետ տեսնուիլ :

— Պարոն դուքս , կը ներէք , ըսաւ Պ. Ֆլաժօ . բայց ձեր անգուգահան մարգավորութեամբը կ'ընաք հասկընալ . . . :

— Կը հասկընամ , պարոն Ֆլաժօ , կը հասկընամ :

— Հիմա , բոլորովին ձեզի եմ :

— Հող մի ընէք, ձեզ շատ չպիտի յոյնեցընեմ. ինչու համար
գալթ դիտէք :

— Պ. Ռաֆղէի անցած օր տուած պարկերը :

— Սա . . . դատիս, նա . . . դատիս վերաբերերեալ քանի
մը թղթեր . . . : Լեզուիս ծայրն է, անշուշտ գիտէք որ դա-
տին վրայ է խօսքս, պարոն ֆլաժօ :

— Շաքնայի հողերնուդ դատին :

— Այն ըլլալու է. պիտի շահեցընէք ինձ այն դատը . . . :
Ըսէք նայինք : Մեծ բան մ'ըրած կ'ըլլայ :

— Պարոն դուքս, այն գործը տնօրոշ կերպով ետ թողուած է :

— Տէս, ինչո՞ւ :

— Գէթ տարիէ մ'սուաջ ատենան չսխալի ելնէ այն դատը :

— Պատճառը կրնա՞ք ըսո՞ւլ :

— Պարագաները, պարոն դուքս, պարտակաները . . . : Նորին
Վեհափառութեան վճուագիրը գիտէք . . . :

— Կարծեմ դիտեմ . . . : Ո՞րն է : Նորին Վեհափառութիւնը
շատ վճուագիրներ կը հանէ :

— Այն որ մերը կը ջնջէ :

— Շատ աղէկ : Ետքը՞ :

— Է՛հ, մենք ալ հուր և ծծումք տեղալով պիտի պատասխա-
նենք, պարոն դուքս :

— Հուր և ծծումք տեղալով պիտի պատասխանէք : Շիտակը այդ
կէտը լուսաւոր չէ, սիրելիս, և ես չէի դիտեր որ ժողովը հուր և
ծծումք կը տեղայ :

— Առաջին սենեակը արդեօք չո՞ղեր արձանագրել, հարցուց տի-
կին ար Պէարն՝ որ Պ. ար Ռիշլիէօի գատը մախկ ըրած ատեն՝
բնաւ իւրը չէր մոռնար :

— Աղկէ աւելի :

— Երկրորդ սենեակն ալ :

— Աղկէ ինչ կ'ըլլայ . . . : Երկու սենեակները որոշեցին բնաւ
դատի չնայիլ մինչև որ թաղաւորը Պ. տ'Էկիլյոյժօնի համար ըրածը
ետ առնէ :

— Բան, զոչեց մարտջախոր ձեռներն իրոր գարներով :

Generated on 2016-09-07 12:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

- Չպիտի նային . . . : Ինչի՞, հարցուց պառաւը յուզուած :
 - Բայց . . . : Գատերուն , տիկին :
 - Գատս չպիտի նային , իմ գատս չպիտի նային , դուչեց տիկին տը Պէարն այնպիսի սարսափով մը զոր ծածկելու ջանք չէր ըներ :
 - Ոչ ձեր գատը , տիկին , և ոչ Պ. դուքսին գատը :
 - Բայց այս անիրաւութիւն է , Նորին Վեհափառութեան հրահանայը գէ՛մ ապստամբիլ է :
 - Տիկին , պատասխանեց գործակալը վեհութեամբ , թագաւորը ինքզինքը մուցեր է . . . մենք ալ ինքզինքնիս կը մոռնանք :
 - Պարոն Ֆլաժօ , դուք Պասդիլլ պիտի երթաք , ըսողը ես եմ :
 - Երկուով պիտի երթամ հոն , տիկին , և եթէ երթամ՝ բուշոր պաշտօնակիցներս ալ հոն պիտի դան ինծի հետ՝ արմաւենոյ տստերով :
 - Կատողէր է , ըսաւ կոմսուհին Ռիշլիէօի :
 - Ամենքս ալ այսպէս ենք , պատասխանեց գործակալը :
 - Օ՛ , օ՛ , ըսաւ մարաշախտը , այդ հետաքրքրութիւն կը շարժէ :
 - Բայց , պարոն , քիչ մ'առաջ ըսիք որ իմ գործովս կ'ըղբազիք , կրկնեց տիկին աը Պէարն :
 - Այնպէս ըսի , և ճշմարիտ է . . . : Ճառիս մէջ յառաջ քերուած առաջին օրինակը դուք էք , տիկին . ահա ձեզի վերաբերիտալ մասը :
- Եւ սկսուած յիշատակութիւնը գպրին ձեռքէն խլելով՝ ակնոցը քիթը գրաւ և սկսաւ կարգալ ,

« Իրենց աստիճանը անհետ եղած , ինչքերնին վտանդի մէջ , պարտաւորութիւննին առաթուր . . . : Նորին Վեհափառութիւնը պիտի հասկընայ թէ ո՞րքան վիշտ կրած են . . . : Արդ՝ աղերսարկուն մեծ գործ մ'ունէր ձեռքը , որմէ կախում ունէր տէրութեան ամենէն առաջին դերդաստաններէն միոյն բաղդը . իւր ջանքով , ճարտարամտութեամբը , և , կը համարձակի իսկ ըսել՝ իւր տաղանգավը սոյն գործը յաջող վիճակի մէջ յառաջ կ'երթար , և վնեմազարմ ու մեծազօր տիկնոջ՝ Անժելիք-Շարլօդ-Վերոնիք , տը Պէարն կոմսուհոյն իրաւունքը երեան եղնելու , հուշակուելու վրայ »

Generated on 2016-09-07 12:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

էր, և ահա անմիաբանութեան բռնաշունչ հովը . . . վերթ թա-
թառ ոլորուելով . . . :»

— Մինչև հոս հասած եմ, տիկին, ըսաւ գործակալը կոկոզա-
վիղ, և կարծեմ թէ փոխաբերութիւնը աղւոր պիտի ըլլայ :

— Պարոն Ֆլաժօ, ըսաւ տը Պէարն կոմսուհին, քառասուն տա-
րի կայ որ առաջին անգամն ըլլալով սպայ ըրի ձեր պարոն հայ-
րը, պատուարժան անձ մը . շարունակ իմ գործերս ձեզի յանձնե-
ցի . տասն, տասներկու հազար Ֆրանք շահեցաք իմ գործերէս՝
թերևս աւելի կրնայիք շահիլ :

— Գրէ՛, բոլոր այս ըսածները գրէ՛, աշխուժիւ Ֆլաժօ ըսաւ
Ֆլաժօ իւր դպրին, վկայութիւն մ'է, ապացոյց մ'է . ցուցումնե-
րուն մէջ կը դնենք անոնք :

— Արդ, ընդմիջեց կոմսուհին, դատիս թղթերը ետ կ'առնեմ
ձենէ . այս վայրկենէս վստահութիւնս կորուսիք :

Պ. Ֆլաժօ աչքէ իյնալուն համար դողցես շանթահար՝ պահ մը
յապուշ կրթած մնաց . բայց իւր Աստուածը խոստովանող մար-
տիրոսի մը պէս՝ հարուածն ընդունելէն ետք կանդնելով

— Այնպէս թող ըլլայ, ըսաւ . Պէրնարսէ, տիկնոջ դասին
թղթերը իրեն վերդարձուր, և պէտք է նշանակես նաև թէ աղերս-
արկուն իւր խիղճը ինչքէն աւելի նախապատիւ համարեց :

— Ներեցէք, տիկին, մեղմովին ըսաւ մարաջախտը տը Պէարն
կոմսուհւոյն ականջն 'ի վար, կարծեմ թէ չէք մտածեր :

— Ի՞նչ բանի վրայ, պարոն դուքս :

— Ինչո՞ւ համար ձեր դատին թղթերը ետ կ'առնէք այս բա-
րեմիտ բողոքիչէն :

— Բւրիշ գործակալի մը, ուրիշ փաստաբանի մը տանելու
համար, դոչեց կոմսուհին :

Պ. Ֆլաժօ աչերը երկինք վերցուց՝ անձնուրացութեան, Ստոյիկ
համակերպութեան թախծալի ժպիտով :

— Բայց, շարայարեց մարաջախտը միշտ կոմսուհւոյն ականջն 'ի
վեր խօսելով, քանի որ որոշուած է թէ դատերուն չպիտի նային՝
ուրիշ գործակալ Պ. Ֆլաժօէն աւելի բան մը չպիտի կրնայ ընել
ձեր գործին . . . :

— Ուրեմն ամենքն ալ մէկ խօսք ըրեր են :

— Այդ ալ խօսք է , Պ . Ֆլածօն . այնքան ապուշ կը կարծէք որ ելնէ առանձին բողոքէ և առանձին իւր ասյրուտոր կորսընցընէ , եթէ իւր պաշտօնակիցներն ալ իրեն պէս չպիտի ընեն , և հետևաբար իրեն օգնեն :

— Իսկ դուք , պարոն , ինչ պիտի ընէք :

— Ես կը խոստովանիմ թէ Պ . Ֆլածօ շատ պատուաւոր դործակալ մ'է , և դատիս թղթերն իմ քովս ըլլալը անոր քով ըլլալը միեւնոյն բանն է . . . : Հետևաբար , իր քովը կը թողում զանոնք , անշուշտ վճարելով , ճիշդ այնպէս ինչպէս որ եթէ դատս վարէր :

— Իրաւամբ ձեր վեհանձնութիւնը և առատաձեռնութիւնը կը գովեն , պարոն մարաջախա , գոչեց Պ . Ֆլածօ . այս համբաւը ամեն կողմ պիտի տարածեմ , պարոն դուքս :

— Չափազանց կը պատուէք զիս , սիրելի գործակալս , պատասխանեց Ռիշլիէօ խոնարհելով :

— Պէրնարտէ , գոչեց ինքնիրմէն ելած գործակալը իւր դպրին , վերջաբանին մէջ Պ . տը Ռիշլիէօի դրուատիքը պիտի զնես :

— Ոչ , բնաւ , պարոն Ֆլածօ , կ'աղերսեմ ձեզ . . . պատասխանեց մարաջատն աշխուժիլ : Է՛հ , տէր Ատողած , ինչեր կ'ընէք : Իսկ կ'ուզեմ որ բարեգործութիւն ըսուածը զաղտնի Ճայ . . . : Ինձ անհաճոյ բան մը մի ընէք , պարոն Ֆլածօ . կ'ուրանամ . կ'իմանա՞ք , ձեզ սուտ կը հանեմ . խօսքիս ամեն մարդ կը հուսատայ . . . : Դուք ինչ կ'ընէք , կոմսուհի :

— Ես կ'ըսեմ թէ դատս պէտք է նայուի . . . դատաստան մը կ'ուզեմ , և պիտի ձեռք ձգեմ զայն :

— Ես ալ կ'ըսեմ թէ , եթէ ձեր դատը նայուի , տիկին , պէտք է որ թագաւորը Ձուկցերացի զօրքերը , թեթևածի հեծելազօրոները և քսան հատ ալ թնդանօթ յուզարկէ մեծ սրահ , պատասխանեց Պ . Ֆլածօ մարդասէր կեբպարանքով մը , որով դատախազ կ'ինը բողոքովին վհատեցաւ :

— Ուրեմն կը կարծես որ Նորին Աւհափառութիւնը չպիտի կարենայ ելնել հիմա այս գործին մէջէն , ցած ձայնով ըսաւ Ռիշլիէօ առ Ֆլածօ :

Generated on 2016-09-07 12:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Անկարելի է , պարոն մարաջախտ . լսուած բան չէ : Գաղ-
ղիոյ մէջ արդարութիւն չմնայ , այնպէս որ կարծես թէ հաց չմնայ :

— Ձեր կարծիքն այսպէս է :

— Կը տեսնէք :

— Բայց թաղաւորը պիտի սրբողի :

— Ամեն բան աչքերնիս առած ենք :

— Նոյն իսկ արսո՞րը :

— Նոյն իսկ մահճը , պարոն մարաջախտ . մեր արհեստին վերա-
քերեալ անձինքն ալ սիրտ կը կրեն :

Եւ Պ. Ֆլածօ ուժով բաղխեց իւր կուրծը :

— Շիտակը , տիկին , ըսաւ Ռիշլիէօ իւր ընկերուհւոյն , կարծեմ
թէ պաշտօնէից համար վտանգ մ'է այս :

— Ո՛հ , այո՛ , պատասխանեց պառաւ կոմսուհին սյոհ մը լուռ
կենալէ ետք , և ինձ մեծ վիշտ կը պատճառէ այս կռուոյն մէջ
իյնալս , ինձ՝ որ բնաւ չեմ խառնուիր անցած դարձածներուն :

— Կարծեմ թէ , տիկին , ըսաւ մարաջախտը , աշխարհիս մէջ
կայ մէկը որ կրնայ այս գործին մէջ ձեզ օգնել , շատ զօրաւոր մէկն
է . . . : Բայց արդեօք պիտի հաւանի :

— Միթէ չափազանց հետաքրքրութիւն մ'ըրած կ'ըլլամ , պարոն
դուքս , այդ զօրաւոր անձին անունը ձեզի հարցնենլով :

— Ձեր սանուհին , ըսաւ դուքսը :

— Օ՛ , օ՛ , տիկին Տիւպարի՛ :

— Նոյն ինքը :

— Արդարեւ , ճշմարիտ է . . . միտքս բացիք :

Դուքսը շրթերը խածաւ :

— Լիւսիէն պիտի երթաք , ըսաւ :

— Առանց վարանելու :

— Բայց Տիւպարի կոմսուհին ժողովին ընդդիմութիւնը չկրնար
ջնջել :

— Իրեն պիտի ըսեմ թէ կ'ուզեմ որ դատս նայուի , և որովհե-
տե իրեն ըրած ծառայութենէս ետք բան մը չկրնար մերժել ինձ՝
թաղաւորին պիտի ըսէ որ ինքը այնպէս կ'ուզէ : Նորին Վեհա-
փառութիւնը դիւանապետին պիտի խօսի , և դիւանապետն ալ ազ-

դեցութիւն ունեցող մէկն է , պարոն դուքս . . . : Պարոն Ֆլա-
ժօ , կ'աղաչեմ , իմ պործս ուշի ուշով քննեցէք . ձեր կարծածէն
շատ առաջ ցուցակը պիտի անցնի . ես եմ ըսողը :

Պարոն Ֆլաժօ գլուխն անդին դարձուց լսածին հաւատք չընձա-
յելով , սակայն կոմսուհին իւր կարծիքը չփոխեց :

Այս միջոցին դուքսը խորհեր էր :

— Ուրեմն , քանի որ Լիւսիէն կ'երթաք , տիկին , արդեօք կը հա-
ճիք իմ ամենախոնարհ յարգանքս մատուցանել :

— Ամենայն յօժարութեամբ , պարոն դուքս :

— Երկուքս իրարու վշտակից ենք :

— Ձեր դասը կախ վիճակի մէջ է , նոյնպէս իմն . ձեզի հա-
մար տղաչած ատեննիդ ինծի համար ալ տղաչած կ'ըլլաք . . . :
Նաև , անոնց կրնաք վկայել թէ սրբան ինձ դժգոհութիւն կը
սպառձառեն ժողովոյ այն քառակուսի գլուխները՝ կրնաք ևս յաւե-
լուլ թէ ես ձեզի խրատեցի Լիւսիէնի գիյուհւոյն դիմել :

— Այնպէս կ'ընեմ , պարոն դուքս : Մնաք բարեալ , պարոնայք :

— Ձեզ կառքը տանելու համար թէ և ընդունելու պատիւը կ'ը-
նէք ինձ : Գարձեալ կ'ըսեմ , մնաս բարեալ , պարոն Ֆլաժօ , զոր-
ծերնուդ նայեցէք . . . :

Մարաջախտը կառքն առաջնորդեց կոմսուհին :

— Ռաֆդէ իրաւունք ունէր , ըսաւ , Ֆլաժօեան յեղսփոխութիւն
մը պիտի ընեն : Փառք Աստուծոյ , երկու կողմէ ալ նծցուկ ունիմ :
— Թէ արքունեաց կողմակից եմ և թէ ժողովոյն : Տիկին Տիւպարի
քաղաքականութեան պիտի խառնուի և առանձին պիտի իյնայ . եթէ
դիմանայ՝ Գրիանօնի քնքուշ դէմքն ունիմ : Ատուզիւ այն սատանայ
Ռաֆդէն իմ աղանդէս է , և առաջին պաշտօնեաց եղած ատենս
զան սենեկապետս պիտի ընեմ :



Generated on 2016-09-07 13:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԹԻ ՈՒՐ ԿԸ ԽԸԹՆԸԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ ՀԵՏՉՀԵՏԻ

Տիկին սը Պէարն Ռիշլիէօի տուած խրատը կէտ առ կէտ
կասարեց, դքսէն բաժնուելէն երկու ժամ ու կէս ետքը Լիսիէնի
մէկ նախասենեակը կ'ըլտպասէր Ջամօր քովը :

Բաւական ասենէ 'ի վեր տիկին Տիւպարիի դացած չըլլալով, իւր
ներկայութիւնը հետաքրքրութիւն պատճառեց կոմսուհոյն ներքնա-
սենեակը՝ ուր իւր անունը ծանուցուեցաւ :

Պ. տ'էկիւլլօն ալ իւր ժամանակը ընդունայն չէր անցուցեր, և
սիրականին հետ կը դուաճանէր՝ երբ Շօն զալով տիկին սը Պէար-
նի համար ունկնդրութիւն խնդրեց :

Դուքսն ուզեց մեկնիլ՝ բայց տիկին Տիւպարի չթողուց :

— Չեր հոս գտնուիլն աւելի աղէկ է, ըսաւ կոմսուհին . եթէ
պառաւը փոխառութեան համար եկած է՝ ձեր առջև քիչ պիտի
ուզէ :

Դուքսը կեցաւ :

Տիկին սը Պէարն սարազային համեմատ դէմքը կազմելով, կոմ-
սուհոյն ցոյց տուած թիկնաթուն առնելով դէմը նստաւ, և սո-
փորական բարենները լմիննալէն ետք,

— Միթէ կրնամ դիտնալ թէ ինչ բաղդ ձեզ հոս բերաւ, տի-
կին, հաճցուց տիկին Տիւպարի :

— Ա՛հ, տիկին, ըսաւ պառաւ դատախաղը, մեծ աղէտ մը :

— Ի՞նչ աղէտ, տիկին :

— Գոյժ մը որ սաստիկ պիտի վշտացունէ Նորին Աւհափառու-
թիւնը . . . :

— Շուտ ըսէք, տիկին :

— Ժողովները . . . :

— Ա՛, ա՛, միմուաց տ'էկիւլլօն դուքսը :

— Պ. տ'էկիւլլօն դուքսը, փութաց ըսել կոմսուհին տիկին

տը Պէտրնի ներկայացնելով իւր հիւրը , որպէս զի սխալ խօսք մը
չընէ :

Բայց հոն գտնուող բոլոր պալատականաց չափ նրբամիտ էր պա-
ռաւ կոմսուհին , և միայն պէտք եղած տեղը ու իրեն օգտակար
թուած ատեն սխալ խօսք մը կ'ընէր :

— Գիտեմ այն դձուձ անձանց խայտառակ ընթացքը , որոնք
նոյն իսկ արժանիք և սոհճմ չեն յարկեր , ըսաւ պառաւը :

Ճիշդ իրեն ուղղեալ այս շողոքորթ խօսքին վրայ , դուքսը շնոր-
հալի ձևով խոնարհութիւն մ'ըրաւ պառաւին՝ որ ոտք ելնելով
նոյնը կրկնեց դքսին :

— Բայց , շարայարեց պառաւը , այժմ Պ. դքսին վրայ չէ խնդի-
րը՝ այլ համայն ժողովրդեան վրայ . ժողովները գործել չին ուզեր :

— Իրաւ , դոչեց տիկին Տիւպարի բազմոցին մէջ իննալով թի-
կանցը վրայ , այլ ևս դատաւոր չպիտի գտնուի Գաղղիոյ մէջ . . . :
Է՛ , ետքը . . . ի՛նչ փոփոխութիւն յառաջ կու գայ աղկէ :

Դուքսը ժպտեցաւ : — Տիկին տը Պէտրն խօսքը փոխանակ կա-
տակ համարելու՝ աւելի տիրեցուց իւր կախած դէմքը :

- Մեծ չարիք մ'է , տիկին , ըսաւ :
- Բա՛ , իրաւ , պատասխանեց սիրականը :
- Է՛՛հ , տիկին կոմսուհի , դուք բարեբաղդօրէն դատ չունենա-
լով չէք կրնար դիտնալ :

— Հը՛մ , ըրաւ Պ. տ'Էկիւլօն տիկին Տիւպարիի ուշադրութիւնը
գրաւելու համար , որ վերջապէս հասկըցաւ պառաւին ականարկու-
թիւնը :

— Աւա՛ղ , տիկին , ըսաւ կոմսուհին իսկոյն , ճշմարիտ է . ինձ
կը յիշեցընէք որ եթէ ես դատ չունիմ , դուք շատ կարևոր դատ
մ'ունիք :

- Ո՛հ , այո՛ , տիկին . . . և անոր ետ մնալը կործանմանս
պատճառ պիտի ըլլայ :
- Խեղճ տիկին :
- Պէտք է որ , տիկին կոմսուհի , թագաւորը հաստատ որոշում
մ'ընէ :
- Է՛՛հ , տիկին , նորին Վեհափառութիւնը կարի տրամադիր է

Generated on 2016-09-07 13:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այդ մասին . խորհրդականները կ'աքսորէ և ամեն բան կը վերջանայ :

— Բայց , տիկին , այդ ալ անորոշ յապաղում մ'է :

— Եթէ դարման մը դիտէք , տիկին , հաճեցէք ցոյց տալ :

Պառաւ դատախազը իւր գլխադրին մէջ պահեց երեսը՝ ինչպէս
Վեսար իւր ամուսինն ընդքե շունչ առած սուած ատենը :

— Թէպէտ միջոց մը կայ , ըսաւ տ'էկիւյլօն այն ատեն , բայց
թերևս Նորին Վեհափառութիւնը չուզէ 'ի դործ գնել :

— Ո՞րն է այն միջոցը , ըսաւ դատախազ կինը անձկութեամբ :

— Տէրութեան սովորական միջոցը՝ երբ չափէն աւելի նեղութիւն
կը կրէ Գաղղիոյ մէջ՝ թաղաւորը Արդարութեան դահլ՝ բազմիչ և
ըսելն է՝ «Վ'ուզեմ» երբ ընդգիմազիր մասը մտքէն կ'ըսէ՝ «Չեմ
ուզեր» :

— Ի՞նչ սքանչելի դաղափար , գոչեց տիկին տը Պէարն այլ յայլ
մէ եղած :

— Բայց պէտք է որ ուրիշները չիմանան , պատասխանեց տ'է-
կիւյլօն խորագիտութեամբ և այնպիսի շարժումով մը՝ զոր տիկին
տը Պէարն հասկըցաւ :

— Ո՛հ , տիկին , ըսաւ այն ատեն դատախազ կինը , տիկին , դուք
որ այնքան ազդեցութիւն ունիք Նորին Վեհափառութեան վրայ՝
ըսել տուէք իրեն , «Վ'ուզեմ որ տիկին տը Պէարնի դատը նայուի» :
Նաև , զիտէք որ խօսք տրուած է ինձ այս մասին , և շատ ատենէ
'ի վեր :

Պ. տ'էկիւյլօն շուրթը խածաւ , տիկին Տիւպարին բարեկեց և
ներքնասենեկէն մեկնեցաւ : Բակին մէջ թաղաւորին կառքին գալը
լսեր էր :

— Թագաւորը եկաւ , ըսաւ տիկին Տիւպարի ոտք ելնելով , որ-
պէս զի պառտը ճամբէ :

— Ո՛հ , տիկին , ինչո՞ւ թոյլ չէք տար որ Նորին Վեհափառու-
թեան ոտքն իյնամ :

* Արդարութեան գահը այն ամբողջ էր՝ ուր կը բազմէր Ժա-
մանակաւ Գաղղիոյ թագաւորը՝ խորհրդարանի հանդիսատէսը
նիստերուն առէն : Ծ. Թ.

Generated on 2016-09-08 07:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Որպէս զի Արդարութեան գահը բազմի՝ Շատ աղէկ, պատասխանեց կոմսուհին աշխուժիւ : Հոս կեցէք, տիկին, քանի որ այս է ձեր բաղձանքը :

Տիկին տը Պէարն հազիւ թէ գլխադիրերը շտկեր էր որ թափափորը ներս մտաւ :

— Ա՛հ, այցելունք ունիք, կոմսուհի . . . ըսաւ :

— Տիկին տը Պէարն, Աբհափառ տէր :

— Աբհափառ տէր, արդարութիւն, գոչեց պառաւը խորին մեծարանօք :

— Ո՛հ, գոչեց Լուի Ժե. այնպիսի հեզնութեամբ մը որ անիմանալի էր զինքը չճանչցողին համար. միթէ մէկը ձեզի վնաս հասցուց, տիկին :

— Աբհափառ տէր, արդարութիւն կը խնդրեմ :

— Որո՞ւ դէմ :

— Ժողովին դէմ :

— Ա՛հ, լա՛ւ, ըսաւ թագաւորը՝ ձեռներն իրար զարնելով. Ժողովներէս կը տրտնջա՞ք : Շնորհ ըրէք՝ ուրեմն զանոնք զգաստացընելու : Ես ալ անոնցմէ տրտնջալու պատճառ ունիմ, և ես ալ նոյնպէս արդարութիւն կը խնդրեմ ձեռնէ, յարեց պառաւ կոմսուհոյն իրեն մատուցած մեծարանքը նմանցնելով :

— Աբհափառ տէր, դուք թագաւոր էք, Կուք տէր էք միով քանիւ :

— Թագաւոր՝ այո. տէր՝ ոչ միշտ :

— Աբհափառ տէր, ձեր կամքը յայտնեցէք :

— Այդ բանը ամեն իրիկուն կ'ընեմ, տիկին. անոնք ալ ամեն առտու իրենց կամքը կը յայտնեն : Արդ, որովհետեւ այս երկու կամքերը բոլորովին ներհակ են իրարու՝ մեզի ալ նոյնը կը պատահի՞ ինչ որ կը պատահի երկրին և լուսնին՝ որ յաւիտեան իրարու ետեւէ կը վազէին առանց երբէք իրարու հանդիպելու :

— Աբհափառ տէր, ձեր ձայնը բաւական զօրաւոր ըլլալով այն մարդոց գոռ ու գոչիւնները կրնաք մարել :

— Այս մասին կը սխալիք : Ես փաստաբան չեմ, բայց անոնք փաստաբան են : Եթէ ես այո՞ ըսեմ՝ անոնք ոչ կ'ըսեն. համա-

ձայնի ընդանկարելի է . . . : Ա՛՛՛՛՛՛ , եթէ դուք միշտ մը կրնաք
գտնել որ իմ այո՛ ըսած ատենս անոնք ոչ չըսեն՝ այն ատեն խօսք
չունիմ :

— Վեհափառ տէր , ունիմ այն միջոցը :

— Շուտ ըսէք :

— Պիտի ըսեմ , վեհափառ տէր : Արդարութեան գահը բազմեցէք
և կամքեբնիդ յայտնեցէք :

— Այդ ալ ուրիշ շփոթութիւն մ'է , ըսաւ թաղաւորը . Ար-
դարութեան գահը : Կը մտածէք ասոր վրայ , տիկին : Գրեթէ յե-
ղափոխութիւն մ'է :

— Այն միջոցաւ այն բմբոստ մարդոց երեսին կ'ըսէք որ դուք
տէր էք : Գիտէք , վեհափառ տէր , որ թաղաւորը իւր կամքը յայտ-
նած ատեն , ինքն միայն իրաւունք ունի խօսելու , ոչ ոք կը պա-
տասխանէ : Ա՛՛՛՛՛՛ , կ'ըսէք իրենց՝ և անոնք գլուխնին կը ծռեն . . . :

— Շիտակը աղւոր գաղափար է , ըսաւ Տիւպարի կոմսուհին :

— Աղւոր է՝ սակայն լաւ չէ , պատասխանեց Լուի Ժե :

— Բայց և այնպէս՝ աղւոր է , շարայարեց տիկին Տիւպարի ե-
ռանդուն , ուղեկիցները , ազնուականները , ատենակալները , թա-
ղաւորին պահպանութեանը յատկացուած բոլոր զինուորականները ,
յետոյ ժողովրդեան անթիւ բազմութիւն մը , ապա ոսկեթելով նկա-
րակիտեալ շուշանազարդ բարձրով արդարութեան գահը . . . :
Գեղեցիկ հանգէս մը կրնայ ըլլալ :

— Այնպէս կը կարծէք , ըսաւ թաղաւորը քիչ մը միտքը փո-
խելով :

— Իսկ թաղաւորին շքեղ զգեստը , կնգմենին , թաղին ադա-
մանդները , ոսկեղէն գաւազանը , օգոստափառ և գեղեցիկ երեսի
մը վայլող բոլոր այն ականատիղ շուքը : Ո՛՛՛՛ , արդեօք որքան մե-
ծաշուք պիտի երևիք այն գիրքին մէջ , վեհափառ տէր :

— Շատ ատենէ ՚ի վեր է որ արդարութեան գահ տեսած չեն ,
ըսաւ Լուի Ժե . կեղծ անհողութեամբ մը :

— Ձեր տղայութենէն ՚ի վեր , վեհափառ տէր , ըսաւ տիկին տը
Պէարն . ձեր ականատիղ գեղեցկութեան յիշատակը բոլոր սրտե-
րուն մէջ անեղծ մնացած է :

— Կաւ , յարեց տիկին Տիւպարի , լաւ առիթ մը կրնայ ըլլալ Պ. դիւանապետին՝ բոլոր այն մարդիկը ճշմարտութեան , արժանեաց և իրաւանց ներքեւ ճզմելու համար :

— Պէտք է որ ժողովին մէկ պահսութիւնը բռնեմ , ըսաւ Լուի ԺԵ. այն ատեն կը նայինք :

— Ըրած անհետեւի պահսութենէն աւելի ինչի՞ կ'ըսպասէք , վեհափառ տէր :

— Ինչ ըրաւ , ըսէք տեսնենք :

— Չէք գիտեր :

— Քիչ մը Պ. տ'էկիւլօնի դպաւ , սակայն ասոր համար կախելու է դանոնք . . . թէպէտ , ըսաւ թագաւորը տիկին Տիւպարիի նայելով , թէպէտ այն սիրուն դուքսը բարեկամն է : Արդ՝ եթէ ժողովը դքսին դպաւ՝ ես ալ անոնց կատարած չարութեան դարման ըրի երէկուան թէ առջի օրուան վճռագրովս , միտքս չէ : Ուստի ասով զուղահաւասար եղանք :

— Սակայն , վեհափառ տէր , ըսաւ տիկին Տիւպարի աշխուժիւ , տիկին կոմսուհին եկած էր մեզի իմաց տալու թէ այս առտու այն սեւադէմ պարոնները յարժար առիթը գտան :

— Ինչպէս , ըսաւ թագաւորը յօնքը պոստելով :

— Խօսեցէք , տիկին , թագաւորը հրաման կու տայ , ըսաւ Լուի ԺԵ.ի սիրականը :

— Վեհափառ տէր , ՊՊ. խորհրդականները որոշած են խորհրդարանը չբանալ՝ մինչև որ Չեր Վեհափառութիւնը այնպէս վարուի՝ որ իրենք շահաւոր ելնեն գործին մէջ :

— Ինչ հրամայեիք , ըսաւ թագաւորը : Ար սխալիք , տիկին , այդ ապստամբութիւն մը կը համարուի , և ես չեմ կարծեր որ իմ խորհրդարանս ապստամբի :

— Վեհափառ տէր , կը հաւաստեմ զձեզ . . . :

— Ո՛հ , տիկին , դրոյց են անոնք :

— Չեր Վեհափառութիւնը կը հաճի՞ մտիկ ընել :

— Խօսեցէք , կոմսուհի :

— Գործակալս դատիս թղթերն ինձ ետ տուաւ այս առտու . . . :

Կա ևս դատ չվարէր , ինչու որ դատի նայող չկայ :

— Զրոյց են ; ըսի . ըրածնին փորձ է , վախ տալու համար է *
Եւ թագաւորն այս խօսքն ըրած ատեն ներքնասենեկին մէջ կը
շրջէր կարի յուզուած :

— Վեհափառ տէր , Ձեր Վեհափառութիւնը ինէ աւելի Պ.
տը Ռիշլիէօի կը հաւատայ : Լաւ ուրեմն , ինչպէս ինձ՝ նոյնպէս
ալ Պ. տը Ռիշլիէօի ետ տուին իւր դատին թղթերը իմ ներկա-
յութեանս , և Պ. դուքսը սաստիկ զայրացած մեկնեցաւ :

— Դուռը կը զարնեն , ըսաւ թագաւորը . խօսակցութիւնը փոխե-
լու համար :

— Զամօրն է , վեհափառ տէր :

Զամօր ներս մտաւ :

— Տիրուհի , նամակ մը , ըսաւ :

— Կը ներէք , վեհափառ տէր , հարցուց կոմսուհին : Ա՛հ ,
տէր Աստուած , գոչեց յանկարծ :

— Ի՞նչ կայ :

— Պ. դիւանապետէն է նամակը , վեհափառ տէր : Պ. տը Մօ-
բրու գիտնալով որ Ձեր Վեհափառութիւնը ինձ այցելութեան գա-
լու բարեհաճած է՝ իմ միջամտութիւնս կը խնդրէ որ վայրկեան մը
ունկնդրութիւն շնորհէք իրեն :

— Ի՞նչ կայ դարձեալ :

— Պարոն դիւանապետը ներս առէք , ըսաւ տիկին Տիւպարի :

Տը Պէարն կոմսուհին ոտք ելաւ և մեկնիլ ուզեց :

— Հարկ չկայ , կեցէք , տիկին , ըսաւ թագաւորը . բարի լոյս ,
Պ. տը Մօբրու : Ի՞նչ կայ նոր :

— Վեհափառ տէր , ըսաւ դիւանապետը խոնարհելով , խորհրդա-
րանը ձեզ կը նեղէր , այլ ևս խորհրդարան չունիք :

— Ի՞նչպէս կ'ըլլայ այդ : Ամենքն ալ մեռան , զառիկ կերան :

— Ատուած տար որ այնպէս ըլլար . . . : Ո՛չ , վեհափառ
տէր , ողջ են . բայց պաշտօնին վարել չեն ուզեր և հրաժարա-
կաննին տուին : Քիչ մ'առաջ ամենքն ալ ինձ եկան :

— Խորհրդականները :

— Ոչ , վեհափառ տէր , հրաժարականները :

— Վեհափառ տէր , չէի՞ ըսեր որ լսուածները լուրջ են , ըսաւ
կոմսուհին կէս ձայնով :

ՃԱ

ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ԳԱՀԸ

Այն երևելի Արդարութեան գահը տեղի ունեցաւ բոլոր այն արարողութիւններով զոր կը պահանջէր մէկ կողմէն Թագաւորի մը մեծամտութիւնը, և միւս կողմէն այն խարդաւանանքը՝ որով պետական հարուժ մը 'ի գործ դնել կու տային ինքնակալին :

Թագաւորին պահպանութեանը յատկացեալ բոլոր սպաները զինուեցան . խել մը կարճազգեստ աղեղնաւորներ, դարանեալ զինուորներ և ոստիկանութեան գործակալներ սահմանուած էին Պ. դիւանապետը պաշտպանելու, որ իբր որոշիչ օրուան մէջ զօրապետ մը՝ ձեռնարկութեան համար իւր նուիրական անձը պիտի վտանգէր :

Պ. դիւանապետը ամենուն ատելի էր, ինքն ալ գիտէր, և իւր ունայնամտութեամբը կեանքն ալ կրնար վրայ տալ, սակայն անոր նկատմամբ հասարակութեան տածած զգացմանցը լաւ հմուտ եզոողները առանց չափազանցութեան կրնային գուշակել՝ թէ կծու նախատինք մը կ'ընեն կամ գէթ յայ կարգալով (huer) զինքը կը խայտառակեն :

Նոյնէն մաս կրնար ելնել Պ. տ'էկիւլօնի ալ, որուն համար հակակրութիւն կ'ըզգար ժողովրդեան բնազդը՝ խորհրդարանի վէճերէն ալ զրգուելով : Թագաւորը հանդարտութիւն կը կեղծէր՝ սակայն հանգիստ չէր : Թագաւորական շքեղ հանդերձը հագնելով իւր վրայ զմայլեցաւ, և անմիջապէս մտքէն անցաւ թէ ձեռնահատութենէ աւելի պահպանիչ բան չկայ :

Արնար նաև յաւելուլ՝ «Եւ ժողովրդեան սէրէն :» Բայց իւր հիւանդութեանն աստն 'ի Մէց այնքան կրկներ էին իրեն այս պարբերութիւնը՝ որ կարծեց թէ առանց բանագող ըլլալու չափտի կրնար վերստին կրկնել :

Առաւօտուն տիկին արքայորդին՝ որուն համար նոր էր այս տեսարանը, և թերևս 'ի ներքուստ կը ցանկար տեսնել, ցաւազին

— Շատ լուրջ, պատասխանեց Լուի Ժե. սրտնեղութեամբ : Ուրեմն ի՞նչ ըրիք, պարոն դիւանապետ :

— Վեհափառ տէր, Ձեր Վեհափառութեան հրամաններն առնելու եկայ :

— Աքսորենք այն մարդիկը, Մօբրու :

— Վեհափառ տէր, արքայը ալ երթան՝ դարձեալ չպիտի նային դատի :

— Հրաման ընենք իրենց որ դատի նային . . . : Բան, հրամաններն ալ մաշեցան . . . նոյնպէս հրովարտակները . . . :

— Ա՛հ, վեհափառ տէր, այս անգամ կամք ցոյց տալ պէտք է :

— Այո՛, իրաւունք ունիք :

— Սի՛րտ առէք, ցած ձայնով ըսաւ տիկին տը Պէարն առ տիկին Տիւպարի :

— Եւ չափէն շատ աւելի հայրը ցոյց տալէն ետք տէրը ցոյց տալու է, գոչեց կոմսուհին :

— Դիւանապետ, ըսաւ թագաւորը ծանրօրէն, միայն միջոց մը գիտեմ, ծանր՝ բայց ազդու միջոց մ՛է : Արդարութեան գահը բազմիլ կ'ուզեմ, պէտք է որ այն մարդիկը անգամ մը գողան :

— Ա՛հ, վեհափառ տէր, գոչեց դիւանապետը, ի՞նչ սքանչելի խօսք. թող ծռին կամ կոտորին :

— Տիկին, ըսաւ թագաւորը դատախազ կնոջն ուղղելով խօսքը, եթէ ձեր դատը նայուած չէ՝ կը տեսնէք որ յանցանքը իմն չէ :

— Վեհափառ տէր, դուք աշխարհիս ամենէն մեծ թագաւորն էք :

— Ա՛հ, այո՛ . . . ըսին կոմսուհին, Շօն և դիւանապետը իբր արձագանք :

— Սակայն աշխարհ այնպէս չըսեր, մրմուռաց թագաւորը :



կերպարանք մ'առաւ և նոյնպէս շարունակեց ճամբան մինչև հանդիսավայրը երթալը , որով նպաստաւոր կարծիք մ'ունեցան իւր վրայ :

Տիկին Տիւպարի անվեհեր էր : Երիտասարդութեան և գեղեցկութեան տուած վստահութիւնը կը կրէր սրտին մէջ : Նաև ամեն բան ըսած չէին իւր վրայ . ամենուն վրայ ինչ կրնային աւելցնել : Խիստ զուարթ կ'երևէր , այնպէս որ կարծես թէ իւր տարփածուն օգոստափառ սլայծառութենէն նշոյլ մը մինչև իրեն կը ժայթքէր :

Պ. տ'Էկիւլլօն դուքսը՝ թագաւորին առջևէն գացող ատենակալաց մէջ համարձակ կը քայլէր : Ազնուականութիւն և քաջասրտութիւն արտայայտող դիմացը վրայ վշտի կամ դժգոհութեան հետք բնաւ չէր երևեր : Յայթականի մը պէս բռնած չէր գլուխը : Անոր այնպէս քայլելը տեսնելով՝ ոչ ոք կրնար գուշակել այն ճակատամարտը զոր թագաւորը և խորհրդարանը միմեանց դէմ մղած էին անոր անձին ասպարիզին վրայ :

Բազմութեան մէջ մատով իրարու ցոյց տուին զան . խորհրդականներուն շարքերէն սոսկալի ակնարկներ արձակեցին անոր , և ամեն բան վերջացաւ :

Խորհրդարանի մեծ սրահը խուռն բազմութիւն մը կար , գործէն շահ մը ունեցողները և անոնք որոցմէ շահ մը կ'ըսպասուէր՝ երեք հազարէն աւելի թիւ մը կը կազմէին :

Գուրսը բազմութիւնը բարապաններուն ցուպերէն , աղեղնաւորներուն գաւազաններէն և մահականներէն զսպուած՝ իւր ներկայութիւնը կը յայտնէր այն անբացատրելի բզզիւնով որ ձայն չէ , որ բան մը չարտասաներ , սակայն կը լսուի , և բաւական ճիշդ անուն մը տրուած կ'ըլլայ անոր՝ ժողովրդային հոսանուտներուն ձայնը կոչելով զայն :

Նոյն լուծիւնը տիրեց մեծ սրահին մէջ՝ երբ քայլափոխներուն դոփիւնք դադրեցաւ , երբ ամեն մարդ իւր տեղն անցաւ , և թագաւորը վեհ և ծանր կերպարանքով մը հրաման ըրաւ իւր դիւանապետին որ սկսի խօսիլ :

Խորհրդականները կանխաւ գիտէին թէ արդարութեան գահը իրենց ինչ պիտի ընէր : Ինչ պատճառաւ հրաւիրուած ըլլալին քաջ կը հասկնային : Իրենց խիստ հրամաններ տրուելու համար էր ան-

շուշտ . բայց գիտէին թագաւորին երկայնատու թիւեր , չրսենք երկ-
չտու թիւեր , և եթէ վախ ունէին՝ աւելի Արդարութեան գահին
հետեանքէն՝ քան թէ նոյն իսկ այն նիստէն էր :

Գիւանապետը սկսաւ խօսիլ : Լսողը կը հաւնէր խօսքին : Ճար-
տասան յառաջաբան մ'ըրաւ , և կացրդական ոճ սիրողն՝ ըր իրենց
ուշադրութեանն արժանի շատ կէտեր գտան :

Սակայն ատենախօսութիւնը այնպիսի կծու յանդիմանութեան մը
փոխուեցաւ՝ որ ազնուականք սկսան ուրախանալ և խորհրդականք
նեղուիլ :

Թագաւորը գիւանապետին բերնովը կը հրամայէր այլ ևս վերջ
տալ Բրիտանիոյ գործոց . խորհրդարանին կը հրամայէր որ հաշ-
տուի Պ. տ'Էկիւյլօն դքսին հետ՝ որուն ծառայութիւնն իրեն հա-
ճելի էր . կը հրամայէր նաև չընդմիջել խորհրդարանի գործողու-
թիւնները , որոց միջոցաւ՝ ամեն բան ոսկեգարին երանելի ժամա-
նակին պէս պիտի կատարուէր , յորում գետերը կը հօսէին հնգա-
մասնեան ատենախօսութիւններ խոխոջելով՝ բաղխողական կամ ա-
տենական տեսակէն , յորում ծառերը դատերու պտուղներով ծան-
րաբեռնեալ էին ՊՊ. փաստաբաններուն կամ գործակալներուն ձե-
ռացը մօտ՝ որոնք իրաւունք ունէին զանոնք քաղելու իբրև իրենց
սեպհական պտուղներ :

Այս համեղ խորտիկները կարող չեղան ոչ Պ. տը Մօքրուի և
ոչ Պ. տ'Էկիւյլօն դքսին հետ խորհրդարանը հաշտեցընել : Բայց
ատենախօսութիւնը աւարտեր էր , պատասխան մը տալ անհնարին
էր :

Խորհրդականները սաստիկ զայրացած , այն հիանալի միութեամբ
որ օրինօք հաստատեալ մարմիններուն մեծ զօրութիւն կու տայ՝ ա-
մենքն ալ այնպիսի հանդարտ և անտարբեր դիրք մ'առին՝ որ կարի
անախորժ թուեցաւ Նորին Աւհափառութեան և ներկայ զանուող
ազնուականաց :

Տիկին արքայորդին բարկութենէն գունատեցաւ : Ժողովրդական
դիմադրութիւնը առաջին անգամն ըլլալով կը տեսնէր . անոր զօ-
րութիւնը անտարբերութեամբ կը հաշուէր :

Արդարութեան գահին ներկայ գտնուելու գաջած էր՝ ըլլալիք

Generated on 2016-09-08 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կամ ծանուցուելիք որոշման գէթ երևութապէս անհամաձայնութիւն ցոյց տալու դիտաւորութեամբ, սակայն հետզհետէ իւր ցեղին ու կարգին մարդոց կողմն սկսաւ հակիլ, և անոնց շահն իբրև իւրը նկատել. այնչափ որ մինչդեռ դիւանապետը սաստիկ կը խածնէր խորհրդականներուն միսը՝ այն նորածիլ հպարտութիւնը կը զայրանար կարծելով թէ անոր ակուաները այնքան սուր չեն. իրեն այնպէս կը թուէր, որ եթէ ինքն անոր տեղ ըլլար՝ այնպիսի խօսքեր կը գտնէր՝ որ բոլոր այն ակումբը՝ խայթահարուող եզներուն ման կ'ոստուցանէր: Միով բանիւ դիւանապետը խիստ տկար և խորհրդականները խիստ զօրաւոր գտաւ:

Լուի Ժե. դիմագէտ էր. բոլոր անձնասէրները դիմագէտ կրնան ըլլալ՝ եթէ անձնասիրութեան հետ ծուլութիւն ալ չունենան: Աչքը չորս կողմը դարձուց դիտելու համար իւր կամաց ազդեցութիւնը՝ որ բաւական պերճախօսութեամբ բացատրուած կը կարծէր:

Տիկին արքայորդւոյն կարկամեալ շրթանցը գունատութիւնը տեսնելով իսկոյն հասկըցաւ անոր ներսէն անցածը:

Իբր հակակշիռ՝ տիկին Տիւպարիի դէմքը դիտեց. հոն յաղթական ժպիտ մը տեսնելու տեղ՝ նշմարեց որ կոմսուհին սաստիկ կը բաղձայ թագաւորին նայուածքն իրեն դրաւելու՝ զոպցես մտածածը անոր հասկըցրնելու համար:

Տկար մտքերը կ'երկնչին՝ երբ կը տեսնեն որ ուրիշները իրենցմէ առաջ նոյն գաղափարը և նոյն կամքը ունեցած են: Եթէ իրենց արդէն ըրած մէկ որոշման վրայ դիտողութիւն ընող ըլլայ՝ կը հետեցրնեն թէ իրենք պէտք եղածը ըրած չեն, ծիծաղելի եղած են կամ պիտի ըլլան, և թէ իրենցմէ ըրածնուն աւելի պահանջելը իրաւացի է:

Այն ատեն միւս ծայրը կ'անցնին, երկչոտը կ'սկսի մռնչել, և վախին աւելի նուազ վախի մը վրայ յառաջ բերած այն հակազդեցութեան արդիւնքը յանկարծ երևան կ'եւնէ:

Թագաւորը իւր դիւանապետին խօսքին վրայ բառ մ'աւելցրնելու պէտք չունէր. ըստ որում այսպիսի բան մը սովորութիւն չըլլալէ զատ հարկաւոր ալ չէ: Բայց այս պարագային մէջ շատախօս սատանան փորը մտնելով թագաւորը ձեռքովը նշան ըրաւ որ պիտի խօսի:

Generated on 2016-09-08 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այս անգամ՝ ուշադրութիւնը ապշութեան փոխուեցաւ :
Կիրթ զօրաց շարքի մը ճիշդ շարժումով բոլոր խորհրդականաց
գլուխները արդարութեան գահին կողմը դարձան :

Իշխանները , ատենակալները , զինուորականները սկսան յուզուիլ :
Անհնարին բան մը չէր որ եղած այնքան աղւոր խօսքերէ ետք Նո-
րին Ամենաքրիստոնեայ Աեհափառութիւնը անտոնի զրաբանութիւն
մը չընէր : Առ ակնածութեան չէին կրնար ուրիշ կերպ ցոյց տալ
թագաւորին բերնէն ելածը :

Պ. տը Ռիշլիէօ որ իւր քեռորդիէն հեռու կենալ կը կեղծէր՝
սկսաւ մտտենալ մանաւանդ նայուածքովը :

Բայց իւր աչքը , որ կ'ըսկսէր ըմբոստ ձև մ'առնել , տիկին Տիւ-
պարիի փայլուն աչացը հանդիպեցաւ : Կերպարանքն յանկարծ փո-
խելու անցին արհեստը Ռիշլիէօի չափ գիտցող չկար . հեզնական
կերպարանքը հիացականի փոխեց , և անկիւնապիծերուն և այն եր-
կու ծայրերուն մէջ հատանող կէտ ընտրեց գեղանի կոմսուհին :

Անցնելու ատեն , շնորհաւորական և քծնի ժպիտ մ'ուղղեց տի-
կին Տիւպարիի . բայց սա չխաբուեցաւ , երբ մանաւանդ ծեր մա-
րաջատր , որ սկսեր էր յարաբերութիւն հաստատել խորհրդակա-
նաց և ընդդիմադիր իշխաններուն հետ , ստիպուեցաւ նոյնը շարու-
նակել՝ իրօք ինչ ըլլալը չյայտնուելու համար :

Ո՛րքան զննելու առարկաներ կան կաթիլ մը ջրին մէջ՝ որ դի-
տողին համար ովկիան մ'է . ո՛րքան դարեր կան ըոպէի մը մէջ՝ որ
աննկարագրելի յաւիտենութիւն մ'է : Մեր բոլոր այս ըսածները
պատահեցան այն միջոցին՝ որ վեհափառ Լուի ԺԵ. պատրաստուե-
ցաւ խօսելու և բերանը բանալու :

— Դիւանապետէս իմացաք , ըսաւ հաստատուն ձայնով մը , թէ
ինչ են իմ կամքս : Նայեցէք որ կատարէք զանոնք , ինչու որ այս-
պէս միտքս դրած եմ և երբէք փոխելու չեմ :

Լուի ԺԵ. այս վերջին խօսքը կայծակի մը շաչիւնով և զօրու-
թեամբ հանեց բերնէն :

Եւ բոլոր ակումբը շանթէ մը զարնուածի պէս մնաց :

Սարսուռ մ'անցաւ բոլոր խորհրդականներուն վրայէն , զարհու-
րանաց սարսուռ՝ որ իսկոյն ամբոխին անցաւ , նման ելեքտրական կայ-

Ժին՝ որ թելին ծայրը կը վազէ : Միենոյն սարսուռը թագաւորին կողմնակիցներն ալ քիչ մը ունեցան : Ամենուն ճակտին վրայ , ամենուն սրտին մէջ զարմանք և հիացում կար :

Տիկին արքայորդին իւր դեղանի աչերէն խուսող փայլակով մը ականայ շնորհակալ եղաւ թագաւորին :

Տիկին Տիւպարի ելեքտրուած՝ չկարենալով ինքզինքը զսպել՝ ոտք ելաւ , և ծափահարութիւն ալ կ'ընէր՝ եթէ չվախնար որ դուրս ելնելու ատեն զինքը կը քարկոծեն , կամ՝ երկրորդ օրը մին քան զմիւսն յուր հարիւրաւոր ոտանաւորներ կ'ուղարկեն իրեն :

Լուի ԺԵ այն վայրկենէն կրցաւ վայելել իւր յաղթանակը :

Խորհրդականք զլուսնին ծռեցին միշտ միենոյն միութեամբ :

Թագաւորը շուշանազարդ բարձերուն վրայէն ելաւ :

Իսկոյն պահապան զօրաց հարիւրապետը , թագաւորին պահպանութեանը յատկացեալ զինուորաց հրամանատարը և բոլոր ազնուականները ոտք ելան :

Թմբուկը զարնուեցաւ , դուրսը փողերը հնչեցին , ժողովրդեան առջի բերան ունեցած այն գրեթէ լուին սարսուռը մոնչիւնի մը փոխուեցաւ՝ որ երթալով հեռուն մարեցաւ՝ զինուորներէն և աղեղնաւորներէն առաթուր ըլլալով :

Թագաւորը բարձրագլուխ սրահէն անցաւ , և անցած ճամբուն վրայ խոնարհած ճակատներէն ուրիշ բան չտեսաւ :

Պ. տ'Էկիլյուն դարձեալ թագաւորին առջևէն գնաց՝ տարած յաղթանակին համար բնաւ գոռոզութիւն ցոյց չտալով :

Դիւանապետը , սրահին դուռն հասնելով , հեռուէն տեսաւ բոլոր այն ժողովուրդը , զարհուրեցաւ բոլոր այն փայլակներէն՝ որ հեռաւորութեան չնայելով մինչև իրեն կը հասնէիր , և աղեղնաւորներուն ըսաւ ,

— Մօտէս քայլեցէք :

Պ. տը Ռիշլիէօ՝ զոր յարգանք կը բարեկէր տ'Էկիլյուն դուքսը , իւր քեռորդւոյն ըսաւ .

— Շատ խոնարհած են այս ճակատները , դուքս . կ'երևի թէ օրին մէկը շատ վեր պիտի բարձրանան , զգուշացէք :

Տիկին Տիւպարի եղբորը , տիկին տը Միրբուայի և խել մը տիկ-

Generated on 2016-09-08 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նանց հետ նրբանցքէն կ'անցնէր նոյն միջոցին : Մարաջախտին խօսքը լսեց , և որովհետև ոխակալ ըլլալէ աւելի պատրաստարան էր :

— Ո՛հ , ըսաւ , վախնալու բան չկայ , մարաջախտ . հորին Վեհափառութեան խօսքը չլսեցիք : Կարծեմ թագաւորը ըսաւ թէ երբէք փոխելու չէ :

— Արդարև սոսկալի խօսք , տիկին , պատասխանեց ծեր մարաջախտը ժպիտով մը . բայց այն ողորմելի խորհրդականները բարեբաղդօրէն չտեսան որ թագաւորը երբէք փոխելու չեմ ըսած ատենը ձեզի կը նայէր :

Եւ այս հանճարաբանութիւնն աւարտեց այնպիսի աննմանելի յարգանքով մը՝ զոր այսօր թատերական բեմին վրայ անդամ չեն կրնար ընել :

Տիկին Տիւպարի կին էր , իսկ քաղաքագէտ՝ բնաւ : Միայն շողմութիւն տեսաւ այն խօսքին մէջ՝ որուն երգիծանք և սպառնալիք ըլլալը Պ. տ'Էկիւլսն լիովին զգաց :

Հետևաբար տիկին Տիւպարի ժպիտով մը պատասխանեց , մինչդեռ իւր դաշնակիցը շրթերը խածաւ և մարաջախտին դէմ շարունակելը տեսնելով գունատեցաւ :

Արդարութեան գահին արդիւնքը անմիջապէս նպաստաւոր եղաւ տէրութեան շահուն : Սակայն շատ անգամ սաստիկ հարուած մը կ'ընդարմացընէ միայն , և պէտք է դիտել որ ընդարմացումներէ ետք՝ արիւնը աւելի զօրութեամբ և մաքրութեամբ շրջան կ'ընէ :

Թագաւորը իւր մեծաշուք ուղեկիցներովը անցած ատեն , գրեթէ սոյն խորհրդածութիւնը ըրին՝ Ծաղկազարդ քարափին և Պարիյլըրի փողոցին անկիւնը դիտելու կեցած և պարզ հագուած քանի մ'անձինք :

Այս մարդիկը երեք հոգի էին . . . : Դիպուածաւ այն անկիւնը հաւաքուեր էին , և հօնկէ մեծ հոգ կը տանէին բազմութեան տպաւորութիւնները դիտելու . և , առանց իրար ճանչնալու , քանի մը խօսքով իրարու հետ յարաբերութիւն հաստատելէ ետք՝ տակաւին նիստը չաւարտած՝ տեղի ունեցածը հասկըցեր էին :

— Ահաւասիկ կիրքերը բաւական հասունցած են , ըսաւ անոնցմէ

Generated on 2016-09-08 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մին՝ որ փայլուն աչերով, քաղցր ու համեստ դէմքով ծերունի մ'էր :
Արդարութեան գահ մը մեծ գործ մ'է :

— Այո՛, պատասխանեց երիտասարդ մը դառնութեամբ ժպտելով, այո՛, եթէ գործը ճշդիւ իրացնէր բառերը :

— Պարոն, ըսաւ ծերունին դառնալով, կարծեմ թէ ձեզ կը ճանչեմ . . . : Ինչ կը թուի թէ ձեզ արդէն տեսած եմ :

— Մայիսի 31ին դիշերը : Չէք սխալիր, պարոն Ռուսօ :

— Ա՛հ, դուք այն երիտասարդ վիրաբոյժն էք, իմ հայրենակիցս, Պ. Մարա :

— Այո՛, պարոն, ձեզի ծառայելու պատրաստ :

Երկուքն ալ իրարու հետ յարգանք մը փոխանակեցին :

Երրորդը տակաւին խօսած չէր . սա ևս երիտասարդ էր և ազնուատիպ դէմք մ'ունէր . բոլոր հանդիսին ատեն ժողովրդեան շարժումները միայն դիտեր էր :

Երիտասարդ վիրաբոյժը առաջ մեկնեցաւ, ժողովրդեան մէջ մտնելով, որ Ռուսօէն նուազ երախտագէտ՝ արդէն մոռցեր էր զինքը, սակայն երիտասարդը մեծ յոյս ունէր որ օր մը անոր միտքը կ'իյնայ :

Ատոր մեկնելուն սպասեց միւս երիտասարդը, և Ռուսօի դառնալով,

— Չէք մեկնիր, պարոն, ըսաւ :

— Ա՛հ, ես շատ ծեր ըլլալով ինքզինքս այս խաժամուժ ամբոխին մէջ չեմ կրնար ձգել :

— Ուրեմն, ըսաւ անձանօթը ձայնը ցածցրնելով, այս իրիկուն Բլադրիէր փողոցը, պարոն Ռուսօ . . . : Զանցառութիւն չընէք :

Փիլիսոփան սարսուեցաւ այնպէս որ կարծես թէ ուրուական մը տնկուեցաւ դէմը : Իւր դէմքը որ սովորաբար գունատ էր՝ կապտաագոյնի փոխուեցաւ : Այն մարդուն պատասխան տալ ուղեց՝ բայց նա արդէն աներևոյթ եղեր էր :



ԱՆԻՍՏՈՒԹՅԱՆ ԽՕՍԷՐՈՒՆ Ժ. Ժ. ԲՈՒՍՈՒ ՎՐԱՅ ԸՐԱԾ ԱԶԳԵ-
ՑՈՒԹՅԱՆԸ

Իւր չճանչած մէկ մարդուն ըրած այս զարմանալի խօսքը լսե-
լէն ետք՝ Ռուսօ դողդոջուն և ողորմելի կերպարանքով մը ժողովուր-
դը ճեղքեց, և առանց միտքը բերելու թէ ծեր ըլլալովը բազմու-
թենէն կը վախնար՝ ճամբայ բացաւ իրեն. քիչ մ'ետք Նօդր-Տա-
մի կամուրջն հասաւ. յետոյ մտախոհութեան մէջ թաղուած և
խնքիրենը հարցումներ ընելով Կրէվի թաղէն անցաւ՝ որ ուղղակի
իւր թաղը կը հանէր :

— Ուրեմն, ըսաւ, այն գաղտնիքը որ իւրաքանչիւր ներածեալ իւր
կեանքը վտանգի մէջ դնելով կը պահէ, ուզողը կրնայ գիտնալ :
Տես ինչ կը շահին գաղտնի ընկերութիւնները ժողովրդեան մաղէն
անցնելով . . . : Մարդ մը զիս կը ճանչէ և դիտէ թէ ես իւր
ընկերը, և թերևս իւր դաւակնիցը պիտի ըլլամ հոն : — Իրաց այս-
պիսի վիճակ մը անդէպ և աններելի է :

Եւ այս խօսքն ընելու ասոն Ռուսօ խիստ արագ կը քայլէր, նա որ
սովորաբար կարի զգուշաւոր էր՝ մանաւանդ Մէնիլմօնդանի փողոցին
պատահարէն ՚ի վեր :

— Ուրեմն, կը շարունակէր փիլիսոփան, երազատես անսւամբ
զարդարուած քանի մը հանճարներու առաջադրած մարդկային վե-
րանորոգութեան յատակագիծերուն հիմը գիտնալ ուզելով, անմտօ-
րէն հաւատք ընծայած պիտի ըլլամ թէ Ալմանիայէն՝ այն գարե-
ջրոյ և մառախուղներու երկրէն լաւ դաղափարներ կրնան գալ . իմ
անունս քանի մը տխմարներու կամ դաւաճաններու անուան հետ
փոխած պիտի ըլլամ, որոց իբրև ծածկոց պիտի ծառայէ իրենց ան-
մտութիւնները պահելու համար . ո՛հ, ոչ, այսպէս չպիտի ըլլայ .
ոչ, փայլակ մը ցոյց տուաւ ինձ անդունդը, ինքզինքս մէջը չպիտի
շետնամ ուրախ զուարթ :

Generated on 2016-09-08 07:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ Ռուսօ շունչ կ'առնէր գաւազանին վրայ յեցած , կանգուն և փողոցին մէջտեղը պահ մ'անշարժ կեցած :

— Սակայն , շարայարեց փիլիսոփան , ինչ աղւոր եղջերուաքաղ , այն է՝ ազատութիւնը գերութեան մէջ , ապագայն անցունց և անշուկ աիրուած , ցանցը գաղտնի կերպով հիւսուած՝ աշխարիս բռնակալներուն քունի մէջ եղած ատեննին . . . : Ինչ աղւոր բաներ էին , ես ալ ապուշ էի որ հաւտացի . . . : Ես չեմ ուզեր ունենալ ոչ երկիւղ , ոչ կասկած , ոչ երկուանք՝ որ ազատ մտքի մը և անկախ մարմնոյ մը անվայել են :

Խօսքին այս կէտին հասեր և ճամբան շարունակելու սկսեր էր , և ահա աչերնին չորս կողմերնին յածելով շրջող Պ. տը Սարգիինի քանի մը գործակալներուն տեսքը ազատ միտքը վախցուց և անկախ մարմնոյն այնպիսի մղում մը տուաւ՝ որ դնաց անյայտ եղաւ կամարներուն ամենէն թանձր ստուերին մէջ՝ որոց ներքեէն կը քայլէր :

Վամարներէն Բլադրիէր փողոցը հեռու չէ . Ռուսօ նոյն ճամբան արագութեամբ քայլեց , հալածուող այծեամի մը պէս շունչ առնելով տալով իւր դստիկոնն ելաւ , և վնաց իւր սենեակը աթոռի մը վրայ ինկաւ՝ չկարենալով բառ մ'անգամ պատասխանել Թէրէզի ըրած բոլոր հարցմանց :

Սակայն վերջապէս իւր յուզման պատճառը յայտնեց , այսինքն՝ արշաւանքը , տաքը , Արդարութեան գահին ատեն թագաւորին զայրացման լուրը , ժողովրդեան կրած երկիւղին մէկ ցունցը , կատարուած եղելութեան մէկ արդիւնքը :

Թէրէզ մըմուտով պատասխան տուաւ թէ ասոնց համար պէտք չէր որ կերակուրը պաղէր , և ասկէ զատ , մարդ մը , թըջած հաւի մը պէս պէտք չէր որ ամենաչնչին ձայնէ մը վախնար :

Ռուսօ բնաւ պատասխան չկրցաւ տալ այս վերջին պարբերութեան՝ զոր ինքը շատ անգամ կրկնած էր տարբեր բառերով :

Թէրէզ յարեց թէ այն փիլիսոփաները , այն ցնորախօս մարդիկը բոլորն ալ իրարու կը նմանին . . . իրենց զրուածոց մէջ անդադար քաջութիւն կը ծախեն , բանէ մը չենք վախնար կ'ըսեն , Աստուած ու մարդիկ բանի մըտեղ չեն դներ , և շնիկ մը մեղմովին անգամ հաջելուն պէս՝ «Օղնութիւն» կը գոչեն , ամենափոքր տենդ մը զիրենք նեղած ատեն՝ «Տէր Աստուած , մեռայ» կ'աղաղակեն :

Թէրէզի սիրած խօսակցութեան նիւթերէն մին էր այս՝ որուն մէջ իւր պերճախօսութիւնը սաստիկ կը փայլէր, մինչդեռ Ռուսօ 'ի բնէ երկչոտ ըլլալով անձարակ պատասխաններ կու տար: — Ուստի Ռուսօ, այն կծու երաժշտութեան ձայնովը իւր միտքը կը քնացընէր՝ որ Թէրէզի մտքին չափ արժէք ունէր՝ այն կնոջ շուայլած կշտամբանաց հակառակ:

— Երջանկութիւնը անուշահոտութիւններէ և բզզիւններէ կը բաղկանայ, կ'ըսէր Ռուսօ. արդ, ձայնը և հոտը որոշելու համար համամիտ անձինք պէտք են . . . : Ո՛վ կրնայ հաստատել թէ սոխը վարդին չափ աղէկ չհոտի, և սիրամարդը սոխակին չափ աղէկ չերգէր:

Այս առածին վրայ՝ որ ընդհանուր կարծեաց բոլորովին ներհակ գաղափար մը կրնար համարուիլ՝ սեղան նստան և ճաշեցին:

Ռուսօ ճաշէն ետք իւր սովորականին համեմատ դաշնակին առջև չնստաւ: Քսան անգամ դարձաւ սենեկին մէջ և պատուհանէն հարիւր անգամ նայեցաւ՝ Բլադրիէր փողոցին տեսքը քննելու համար:

Թէրէզ նախանձու կրակէն սկսաւ բռնկիլ նման խեռ մարդոց՝ որոնք աշխարհիս ամենէն քիչ նախանձոտ անձինքն են:

Ինչու որ բարեմասնութիւն ծախելէ աւելի անախորժ բան մ'է մոլորութիւն ծախելը:

Թէրէզ որ Ռուսօի կատարեալ հասակը, բնաւորութիւնը, բարքը և ունակութիւնները խիստ կ'անարգէր, Թէրէզ որ իւր ամուսինը ծեր, հիւանդոտ և տղեղ կը տեսնէր՝ վախ չունէր որ զան իջ ձեռքէն կը յափշտակեն. չէր կարծեր որ կանայք իւր տեսածէն տարբեր կերպով կը տեսնեն զան:

Սակայն որովհետեւ կնոջ մը համար նախանձով չարչարուիլը կարի ախորժելի տանջանք մ'է՝ Թէրէզ երբեմն անոր համը կը նայէր:

Տեսնելով որ Ռուսօ ստէպ պատուհանին կը մօտենայ, կը մտախոհէ և տեղ մը չկենար:

— Լա՛ւ, ըսաւ, բոլոր յուզմունքդ կը հասկընամ. . . : Քիչ մ'առաջ մէկէ մը զատուեցար:

Generated on 2016-09-08 07:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ռուսօ կնոջը նայեցաւ սարսափով մը՝ զոր երկրորդ ասացոյց մը համարեց իւր կիներ :

— Մէկէ մը՝ զոր կը ջանաս վերստին տեսնել, շարայարեց Թէրէզ :

— Ի՞նչ, ըսաւ Ռուսօ :

— Կ'երեւի թէ ժամադրութիւն կայ :

— Ա՛հ, ըրաւ Ռուսօ հասկընալով որ խնդիրը նախանձու վրայ էր, ժամադրութիւն, գու խենդ ես, Թէրէզ :

— Գիտեմ որ խենդութիւն մ'է, ըսաւ. բայց ամեն տեսակ խենդութիւն քու ձեռքէդ կու գայ. գնա, գնա, այդ ծամած թղթի գոյնովդ, սրտի բարբախումովդ, չոր հազովդ, գնա յաղթանակներ տար. այս միջոցաւ աղէկ յառաջ կ'երթաս :

— Բայց, Թէրէզ, գիտես որ բնաւ այսպիսի բան մը չկայ, ըսաւ Ռուսօ սրանեղութեամբ. թող ուրեմն որ հանգիստ մտածեմ :

— Դու անառակ մէկն ես, ըսաւ Թէրէզ ամենալուրջ կերպով մը :

Ռուսօ կարմրեցաւ այնպէս որ կարծես թէ ճշմարտութիւն մ'ըսին իրեն կամ շնորհաւորեցին զինքը :

Այն ատեն Թէրէզ կարծեց թէ իւր իրաւունքն է դէմքը խոժոռել, կահ կարասին տակնուվրայ ընել, դռները զարնելով գոցել և Ռուսօի հանդարտութիւնն իրեն խաղալիք մ'ընել, ինչպէս տղայք մետաղեայ մանեակները սուփի մը մէջ դնելով կը շարժեն և մեծ աղմուկ կը հանեն :

Ռուսօ իւր սենեակը քաշուեցաւ : Այն աղմուկը քիչ մ'իւր դադարաւորները թուլցուցեր էր :

Մտածեց թէ անշուշտ վտանգ մը կար ներկայ չգտնուելով այն գազտնի արարողութեան՝ որուն վրայ օտարականն իրեն խօսեր էր քարափին անկիւնը :

— Եթէ դադարնիք յայտնողներուն համար պատիժ կայ՝ անշուշտ երկչոտներուն կամ սլարտազանդներուն համար ալ ըլլալու է, ըսաւ մտովի : Արդ, ես միշտ գիտած եմ թէ մեծ վտանգները, նոյնպէս մեծ սպառնալիքները բան մը չեն. այսպիսի պարագայի մը մէջ պատժ ընին կամ սպաննելնին խիստ քիչ անդամ կը պա-

Generated on 2016-09-08 07:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տահի , սակայն մանր վրէժխնդրութիւններէ զգուշանալու է , այն է ծածկամիտ հարուածներէ , նշաւակութենէ և այլովքն հանդերձ : Զիրենք մերժելու համար Մասօն եղբարք օր մը կ'ենեն պարան մը կը լարեն սանդուխիս վրայ , ոտքս մէջը կը մանէ և կը կոտորի , նոյնպէս բերնիս մէջ մնացած ութ կամ տասն ակուաներս . . . կամ քար մը կը պատրաստեն և շէնքի մը քովէն անցնելու ատենս գլխուս կը ձգեն . . . : Ասոնցմէ աղէկը կայ . իրենց մասօնական ընկերութեան մէջ անշուշտ պարսաւագիր մ'ըլլալու է՝ որ մօտս կը բնակի , թերևս իմ դրանդիս վրայ , և իւր պատուհանէն սենեկիս մէջ կը թափանցէ իւր նայուածքը : Անկարելի բան մը չէ այս , քանի որ նոյն իսկ Բլադրիէր փողոցը կը հաւաքուին . . . : Է՛հ , այն անպիտանը կ'ենէն է այնպիսի անհամ բաներ կը գրէ վրաս որ բոլոր Բարիզի մէջ ծաղր ու ծանակ կ'ընէ զիս . . . : Միթէ ամենուրեք թշնամիներ չունիմ :

Պահ մ'ետք Ռուսօ միտքը կը փոխէր :

— Հապա արիւթիւնը , պատիւը ձեռք կը մնայ : Միթէ ինքնիրմէս վախնալու եմ : Իմ հայելոյս մէջ երկչոտի մը կամ անպիտանի մը երեւոր տեսնելու եմ : Ո՛չ , այսպէս չպիտի ըլլայ . . . : Աշխարհ մէկ ըլլայ ինձ դէմ , այն փողոցին նկուղը վրաս ալ փչի՝ պիտի երթամ . . . : Ի՛նչ ունայն խորհրդածութիւններ ալ կ'ազդէ վախը : Տուն գալէս 'ի վեր , այն մարդուն պատահելուս պատճառաւ , կը տեսնեմ որ անհետեւի մտածմանց մէջ ինկած կը դառնամ ու կը դառնամ : Սա նայէ որ ամենէն կը կասկածիմ , ինքզինքէս անգամ կը կասկածիմ , այս խելք չէ . . . : Ես ինքզինքս զիտեմ , շլացեալ չեմ . եթէ այն մտադրուած ընկերութեան մէջ հրաշք տեսնել կարծեցի՝ պատճառն այն է որ իրօք հրաշք կայ հոն : Ո՞վ կ'ըսէ թէ ես մարդկային ազգին վերանորոգիչը չպիտի ըլլամ , ես որ փնտռուեցայ , և անսահման զօրութեան մը գաղտնի գործակալները եկան ինձ խորհուրդ հարցուցին իմ գրածներուս ստուգութեանը վրայ . միթէ ընկրկելու եմ երբ պէտք է որ գործիս հետեւիմ , տեսականին տեղ գործնականը դնեմ :

Ռուսօի եռանդը հետզհետէ կ'աւելնար :

— Միթէ աւելի գեղեցիկ բան մը կայ : Դարերը կը քայլեն .

ժողովուրդները իրենց վայրենի վիճակէն կ'ելնեն, մութին մէջ ոտքը ոտքին կը հետևի, ձեռքը ստուերին մէջ, ահագին բուրգը կը բարձրանայ՝ որուն վերևը իբրև պսակ ապառնի դարերը Ռուսոի կիսանդրին պիտի դնեն, ժընէվի քաղաքացւոյն՝ որ ըսածին պէս գործելու համար իւր ազատութիւնը, կեանքը վտանգի դրաւ, այն է հաւասարիմ մնաց իւր *Vitam impendere vero** նշանաբանին:

Ասոր վրայ Ռուսոի աւիւնը սաստկանալով՝ դաշնակին առջևը նստաւ և վերջապէս երեակայութիւնը լարեց այն աղմկալի, մեծ և պատերազմական երգերով զոր մեծագուռ նուագարանին կողերէն կրցաւ խլել:

Գիշերն հասաւ: Թէրէզ իւր կալանաւորն ընդունայն չարչարելէ խոնջած՝ ակթուին վրայ կը ննջէր. Ռուսո, որուն սիրտը սաստիկ կը տրոփէր, իւր նոր զգեստն հագաւ սիրային ժամադրութեան մը երթալու պէս. քիչ մը հայելոյն մէջ իւր սև աչերուն շարժմունքը գիտեց, և զանոնք պայծառ ու ազդու գտնելով շատ ուրախ եղաւ:

Առանց Թէրէզն արթնցընելու, եղիգէ գաւազանին վրայ յեցած՝ սենեկէն սպրդեցաւ:

Բայց սանդուխին ստորոտն հասած ատեն, փողոցին վրայ բացուող դրան զսպանակը մղելէն ետք՝ Ռուսո սկսաւ դուրսը նայել, շրջակայից վիճակը քննելու համար:

Բնաւ կառք չէր անցներ. փողոցն ըստ սովորականին լի էր թափառիկներով՝ որոցմէ ոմանք իրարու կը նայէին՝ ինչպէս որ մինչև հիմա այս սովորութիւնը կայ, մինչդեռ շատերը կրպակներուն ապակիին առջև կը կասէին՝ գրասենեկաց զեղանի աղջիկները գիտելու համար:

Այն յորձանքին մէջ մարդ մ'ալ աւելնալով՝ բնաւ աչքի չէր զարներ: Ռուսո մէջը նետուեցաւ. երթալու ճամբան երկայն չէր:

Ռուսոի ցոյց տրուած դրանն առջև երգիչ մը նստած էր ջութակով մը որ սուր ձայն մը կը հանէր: Այս նուագարանը, որմէ սաստիկ կ'ըզգածուին բոլոր ճշմարիտ Բարիպցւոց ականջները՝ փողոցը կը ընուք

* Ճշմարտութեան համար մեռնիլ:

արձագանքներով՝ որ հեռուն կը կորսուէին ջութակէն կամ նոյն իսկ երգչէն երգուած նազարաթիւն վերջին շափերը կրկնելով :

Ունկնդիրներուն հոն խոնուելէն անցուդարձը խիստ դժուարին եղեր էր : Անպատճառ ամեն անցնող ստիպուած էր ամբոխին աջ կամ ձախ կողմը դառնալու . ձախ կողմը դարձողները փողոցը կը մտնէին , աջ կողմը դարձողները նշանակուած տանն առջև կ'երկնանային , և փոխադարձաբար :

Ռուսօ դիտեց որ անցնողներէն շատերը նկուղի մը մէջ ինկած ի պէս ճամբուն մէջ կորսուեցան :

Մտածեց որ անոնք աչ իւր ունեցած նպասակով հոն եկեր էին , և որոշեց անոնց ըրածն 'ի դորձ գնել' որ դիւրին բան մ'էր :

Այնպէս ունկնդրաց խումբին ետեւէն անցնելով , իբր թէ ինքն ալ կատելու համար , սպասեց որ մէկը այն բաց անցքը մտնէ : Անշուշտ իրեն համար աւելի մեծ վտանգ մը կար որ միւսներէն աւելի երկչոտ գտնուեցաւ , և սպասեց որ տանն անգամ պատեհ առիթ ունենայ :

Հաա չսպասեց : Փողոցին ծայրէն սրացող երկանիւ մը շրջանակը երկու քի ձեղքեց և տուներուն առջև բազմութիւնը երկու կիսաշրջանակի բաժնեց : Ռուսօ նոյն իսկ անցքին շեմին վրայ գտնուեցաւ . միայն շարունակելու էր . . . : Մեր փիլիսոփան դիտեց որ երկանիւին ուշադիր բոլոր հետաքրքիրները կռնակնին ստանը դարձուցած էին . իւր առանձին մնալէն օգուտ քաղելով մութ անցքին մէջ անցայտ եղաւ :

Քանի մը ըստէ ետք լոյս մը տեսաւ , որուն ներքև՝ օրն առուտուրով իրիկուն ըրած վաճառականի պէս մարդ մը խաղաղ նստած ըրագիր մը կը կարդար կամ կարդալ կը կեղծէր :

Ռուսօի ոտքի ձայնն առնելով , այն մարդը գլուխը վեր առաւ և յայտնի կերպով մատը կուրծքին վրայ դրաւ՝ որ բողբոլիւն լուսաւորուած էր կանթեղէն :

Ռուսօ այս խորհրդաւոր շարժման փոխարէն մէկ մատը շրթանցը վրայ դրաւ :

Իսկոյն մարդն ոտք ելաւ , և , իւր աջ կողմն եզող դուռ մը հրելով՝ որ իւր կրթնած պատին վրայ խիստ վարպետութեամբ յար-

Մարտուած ըլլալով չէր երևեր, Ռուսօի ցոյց տուաւ ցից՝ սանդուխ մը որ գեանին ներքե կ'իջնէր :

Ռուսօ ներս մտաւ. դուռը վրայէն գոցուեցաւ անձայն բայց փութով :

Ռուսօ իւր գաւազանին օդնութեամբ աստիճաններէն իջաւ . կը մտածէր թէ ընկերութեան անդամները լաւ բան մ'ըրած չէին ըլլար՝ եթէ իբրև առաջին փորձ՝ գլուխը կամ ոտքը կոտրելու վտանգին մէջ դնէին զինքը :

Սանդուխը թէպէտ ցից էր՝ բայց երկայն չէր : Ռուսօ տասնև-ժօթը աստիճան թուեց, և իսկոյն սաստիկ ջերմութիւն մը աչքին և երեսին զարկաւ :

Այն շտեմարանին մէջ հասարուած քեչ մը մարդոց շունչն էր այն խոնաւ ջերմութիւնը :

Ռուսօ գիտեց որ պատերը կարմիր և ճերմակ կտառներով ծածկուած էին, վրաները աշխատութեան զանազան գործիքներ նկարուած՝ տրոնք անշուշտ աւելի խորհրդաւոր էին քան իրական : Ամսրէն միայն մէկ կանթեզ մը կախուած՝ ազէտալի ցոլացում մը կ'արձակէր այն բաւական համեստ դէմքերուն վրայ՝ որ ցած ձայնով իրարու հետ կը խօսէին փայտէ նստարաններու վրայ :

Գետինը ոչ տախտակամած կար և ոչ գորգ, այլ թաւ փսիւթ մը՝ որ ոտքի ձայները կը մեղմացնէր :

Արդ Ռուսօ ներս մտնելով քնաւ ապաւորութիւն մը չըրաւ :

Կարծես թէ ոչ ոք գիտեց անոր ներս մտնելը :

Հինգ վայրկեան առաջ Ռուսօի ուղածը միայն այս էր, և սա-վայն ներս մտնելէն ետք սիրտը կոտրեցաւ այնքան լաւ յաջողուն համար :

Յետին նստարաններուն վրայ պարտաւ տեղ մը տեսաւ . կըրցածին չափ համեստութեամբ բոլոր միւսներուն ետեւ նստաւ :

Ժողովին մէջ երեսուն երեք հոգի թուեց : Աստիճանաւոր պա-տուանդանի վրայ դրուած գրասեղան մը նախադահի մը կ'ըստատէր :



Generated on 2016-09-08 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԲԼԱԳՐԻՆԻ ՓՈՂՈՑԻՆ ՕԹԵԱԿԸ

Ռուսո գիտեց որ նստողները իրարու մօտեցած ծածուկ կը խօսակցէին : Շատերը շրթերնին չէին շարժեր : Հազիւ երկու երեք ամօլներ իրարու հետ խօսք կը փոխանակէին :

Չխօսողները երեսնին անգամ պահելու կը ջանային , և այս աչ դժուարին բան մը չէր՝ մինչդեռ լայնասփիւռ ստուեր մը կը տարածէր նախագահին աթոռը որուն կ'սպասէին :

Անոնք որ երկչոտ կ'երևէին՝ այն աթոռին ետևը իրենց ապաստանարան ընտրած էին :

Սակայն միւս կողմէն , ընկերութեան քանի մ'անդամները շատ շարժումներ կ'ընէին իրարու իրենց ընկերները ճանչնալու համար : Ա՛րթային , կուզային , իրարու հետ կը խօսակցէին և կարգ ըստ կարգէ աներևոյթ կ'ըլլային դռնէ մը՝ որ եզերքը կարմիր ծոպերով սև վարագուրով մը զոցուած էր :

Քիչ մ'ետք հնչակի մը ձայնը լսուեցաւ : Մարդ մը պարզապէս կեցած նստարանին ծայրէն ելնելով , ուր քիչ մ'առաջ միւս մասօններուն հետ խառնուած էր , դնաց աթոռին առջև :

Չեռքով և մատներով քանի մը նշաններ ըրաւ զոր բոլոր ներկայ եղողները կրկնեցին , և այն նշաններուն վրայ աւելի յայտնի նշան մ'ալ աւելցընելով ըսաւ թէ ատեանը բացուեցաւ :

Ռուսօ ընաւ չէր ճանչնար այն մարդը , արտաքուստ բաւական հարուստ արուեստաւոր մը կ'երևէր , և սաստիկ սրամտութեանց հետ այն անընդատ պերճախօսութիւնը ունէր՝ որ ատենախօսի մը վրայ կը փնտռուի :

Բացայայտ և համառօտ ատենախօսութիւն մ'ըրաւ : Իմացուց որ նոր եզրօք մը ներածումը կատարելու համար օթեակը դուրմարուեր էր :

— Անշուշտ չէք զարմանար, ըսաւ, որ ձեզ այն վայրն հաւաքեցինք՝ ուր սովորական փորձերը տեղի չեն կրնար ունենալ. մեծերն աւելորդ համարեցին փորձերը: Ներածութիւնք եղբայրը ժամանակակից փիլիսոփայութեան ջահերէն մին է. խորագէտ մէկն ըլլալով համոզմամբ և ոչ թէ վախէն մեզ անձնուէր պիտի ըլլայ:

Քնութեան և մարդկային սրտին բոլոր դազնիքները շօշափուլ մէկը միևնոյն կերպով չզրգածիր՝ ինչպէս որ կ'զգածի սովորական անհատ մը՝ որուն բազկաց, կամաց և հարստութեան օգնութիւնը կը խընգրենք: Այս նշանաւոր հանձարը, այս համեստ և հաստատամիտ անձը մեզի գործակից ընելու համար բաւական է որ ինքը մեզի խօսք տայ, հաւանութիւն յայտնէ:

Ատենախօսը այսպէս աւարտեց իւր առաջարկութիւնը և շուրջը նայեցաւ՝ խօսածին ըրած տպաւորութիւնը դիտելու համար:

Ռուսօի վրայ թովիչ տպաւորութիւն մ'ըրեր էր. ժընէվացին մասօնութեան պատրաստիչ գազտնիքները դիտէր. լուսաւոր մտքերու բնական եղող դժկամակութեամբ մը նկատած էր զանոնք. այն անպատէհ պահանջումները որ աւելորդ են և զոր մեծերը կը պահանջեն նորընծաներէն անոնց վախ ազդելու համար, մինչդեռ մարդ գիտէ թէ բնաւ վախճալու բան մը չկայ, յետին աստիճան ազալութիւն և անպաշտութիւն կը թուէին իրեն:

Ասիկէ զատ, երկշտ փիլիսոփան անձնական ցոյցերու թշնամի ըլլալով սաստիկ պիտի նեղուէր ինքզինքը տեսարան ընելով այնպիսի մարդոց՝ զոր չէր ճանչնար, և որոնք անշուշտ քիչ կամ շատ անկեղծութեամբ քթին պիտի խնդային:

Ուստի փորձերն իրեն համար զանց ըլլալը մեծ գոհունակութիւն պատճառեց իրեն: Գիտէր որ մասօնական սկզբանց մէջ խստիւ հաւասարութիւն կը սրահուէր. արդ, իրեն համար եղած՝ բացառութիւն մը յաղթանակ մ'էր:

Նախագահին սիրուն ճարտարախօսութեան քանի մը խօսքով պատասխանելու կը պատրաստուէր, և ահա ունկնդիրներէն ձայն մ'ելաւ:

— Գէթ, ըսաւ այն ձայնը որ սուր և հնչուն էր, քանի որ կը կարծէք թէ մեզի նմանող մարդու մը հետ իբրև իշխան վա-

Generated on 2016-09-08 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բուենլու ստիպուած էք, քանի որ Ֆիզիքական նեղութիւնները զանց կ'ընէք անոր համար, այնպէս որ կարծես թէ մեր խորհուրդներէն մին չըլլար մարմնաւոր վշտերուն մէջէն անցնելով ազատութիւնը փնտուելը, դէթ կը յուսանք որ մեծազին տիտղոս մը չպիտի տաք անծանօթի մը առանց զինքն հարձակործելու ըստ ծիսի և իւր հաւատոյ դաւանութիւնն իմանալու :

Ռուսօ ետերը դարձաւ նախայարձակ անձին երեսը տեսնելու համար՝ որ այնքան ուժգին կը զարնէր յաղթականին կառքին :

Սաստիկ զարմանօք տեսաւ որ այն երիտասարդ վիրաբոյժն էր՝ որուն դեռ ևս առաւօտուն պատահեր էր Ծագկազարդ քարափը :

Իւր անկեղծութենէն, թերևս մեծագին արիւղափին համար չգացած մէկ արհամարհանքէն պատասխան չտուաւ :

— Լսեցիք, ըսաւ նախագահը խօսքը Ռուսօի ուղեւում :

— Լիովին, պատասխանեց փիլիսոփան՝ որ թեթեւ սարսուռ մը տնեցաւ երբ իւր ձայնը այն միջին շտեմարանին կամարիններքև հնչեց : Արդ, հարցափորձն ինձ աւելի զարմանք կը պատճառէ՝ երբ կը նայիմ թէ ո՞վ է ընողը : Ինչ, մարդ մը, որուն պաշտօնն է մաքառիլ Ֆիզիքական ցաւերու դէմ և այն կերպով օգնութեան հասնիլ իւր եղբարցը՝ որոց մէջ սովորական մարդիկ ալ կան մասօններ ալ կան. ինչ, այն մարդը հոս կ'օգտայ Ֆիզիքական ցաւերուն կարևորութիւնը քարոզելու . . . : Տարօրինակ միջոց մը կ'ընտրէ արարածը երջանկութեան, հիւանդը առողջութեան առաջնորդելու :

— Ինդիրն այս ինչ կամ այն ինչ մարդուն վրայ չէ, պատասխանեց երիտասարդն աշխուժիւ, ես անծանօթ եմ նորընծային ինչպէս որ նա ալ ինձ անծանօթ է : Ես տրամաբանութեամբ կը խօսիմ, և կը պնդեմ թէ մեծարոն սխալեցաւ անձերու բացառութիւն ընելով : Ես այս անձին — և Ռուսօն ցոյց տուաւ, — փիլիսոփայ ըլլալը չեմ գիտեր, թող նա ալ հաճի իմ վիրաբոյժ ըլլալս չլիանալ : Արդ, թերևս բոլոր մեր կենաց մէջ քովէ քով պիտի երթանք և նայուածք մը, շարժում մը չպիտի յայտնէ մեր մտերմութիւնը՝ որ շտրհիւ ընկերութեան կապին՝ բոլոր գուեհիկ բարեկամութիւններէ շատ սերտ է : Ուստի, կ'երկրորդեմ որ եթէ հարկ համարեցին փորձերը զանց ընել նորընծային համար, դէթ պէտք է հարցումներն ընել իրեն :

Generated on 2016-09-08 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ռուսօ պատասխան չտուաւ : Նախագահը անոր դէմքէն հասկցաւ որ վիճաբանութենէ չախորժիր և այսպիսի ձեռնարկութեան մը մէջ մտած ըլլալուն վրայ կը ցաւի :

— Եղբայր , ըսաւ երիտասարդին իշխօրէն , շնորհ ըրէ լուելու՝ երբ մեծը կը խօսի և զգուշացիր թեթևօրէն պարսառելէ իւր գործերը որ գերագոյն են :

— Հարցնելու իրաւունք ունիմ , պատասխանեց երիտասարդը աւելի մեղմով :

— Հարցնելու՝ այո , սակայն պարսառելու՝ ոչ : Ընկերութեան մէջ մտնելիք եղբայրը բաւական ճանչցուած ըլլալով՝ ծաղրելի և անօգուտ գաղտնիք մը պահած պիտի ըլլանք մեր մասօնական յարաբերութեանց մէջ : Բոլոր ներկայ եղբայրները իւր անունը դիտեն , և իւր անունը երաշխաւորութիւն մ'է : Բայց , որովհետև ինքն ալ ասպահով եմ որ հաւասարութիւնը կը սիրէ՝ կ'աղաչեմ զինքը որ պատասխան տայ ընելիք հարցմանս՝ որ միայն սովորութիւնը տեղը տանելու համար է :

— Ինչ կը փնտռէք մեր ընկերութեան մէջ :

Ռուսօ երկու քայլ առաւ և ամբօխէն զատուելով՝ մտախոհ և մեկամաղձոտ ակնարկ մ'ածեց ժողովին վրայ :

— Հոն չգտածս կը փնտռեմ , ըսաւ : — Ճշմարտութիւն , ոչ թէ իմաստակութիւն : — Ինչու համար իմ շուրջս առնէք սրբրով որ չեն վիրաւորեր , թոյներով որ պարզ ջուր են , և կափուլներ՝ որոց ներքև անկողիններ դրուած են : Գիտեմ թէ մարդկային ոյժը ինչեր կրնայ ընել : Իմ Ֆիզիքական զօրութեանս ուժգնութիւնն ալ գիտեմ : Եթէ զայն խորտակել ուզէք՝ զիս ձեզի եղբայր ընտրելու ինչ հարկ կայ , երբ մեռած եմ՝ ձեզի չեմ կրնար ծառայել , ուրեմն զիս մեռչնել չէք ուզէր և ոչ ալ վիրաւորել . և աշխարհիս բոլոր վիրաբոյժներն ալ մէկ ըլլան՝ չեն կրնար օգտակար նկատել տալ ինձ ներածում մը՝ յորում իմ մէկ անդամս ջախջախեն :

« Ես ձեր ամենէն աւելի ցաւոց աշակերտութիւնս ըրի . մարմինը զննեցի և մինչև հոգին շոշափեցի : — Եթէ ձեր մէջ մտնելու հաւանեցայ երբ ինէ խնդրեցին , — և այս խօսքը շեշտելով ըսաւ , — կը կարծէի թէ ձեզի օգտակար կրնամ ըլլալ : Ես կուստամ չեմ առնիր :

«Աւանդ», դուք զիս պաշտպանելու համար բան մը չկրցած, եթէ
 օգիտ բանտարկեն՝ ձեր յատուկ միջոցներովը ինձ ազատութիւն չտուած,
 եթէ զիս անօթեցնեն՝ ինձ հաց չտուած, եթէ զիս վշտացնեն՝
 զիս չմտիթարած, միով բանիւ դուք բան մը չըրած, կ'ըսեմ, այն
 եղբայրը զոր այսօր կ'ընդունիք, եթէ պարօնը կը ներէ, յարեց
 Մարաի կողմը դառնալով, այն եղբայրը իւր հարկը բնութեան
 վճարած պիտի ըլլայ, ինչու որ յառաջագիտութիւնը կաղ է, ինչ-
 չու որ լոյսը ծանրաքայլ է, և այն եղբայրը ինկած տեղէն ձենէ
 ոչ ոք պիտի վերցնէ զինքը . . . »

— Ար սխալիք, մեծանուն եղբայր, ըսաւ անուշ և յանկուցիչ
 ձայն մը որ Ռուսօի ուշը գրաւեց, ձեր մտածածէն շատ աւելին
 կայ այն ընկերութեան մէջ ուր կը հաւանիք մտնել, աշխարհին
 բոլոր ապագան կայ. դիտէք որ ապագան յոյս է, գիտութիւն է.
 ապագան Աստուած է՝ որ իւր լոյսը աշխարհի պիտի տայ, ինչու
 որ խոստացած է տալ: Արդ, Աստուած չկրնար սուտ խօսիլ:

Ռուսօ այս բարձր լեզուին վրայ զարմանալով նայեցաւ և ճանչ-
 ցաւ այն երիտասարդը որ իրեն հետ ժամադիր եղեր էր արդարու-
 թեան դահլէ:

Այս մարդը սևեր հագած, մասնաւոր խնամքով մը և մանա-
 ւանդ մեծ վայելչութեամբ մը, աթոռին քովի մէկ երեսին կրթնած
 կը կենար, և երեսը թեթև լուսով մը լուսաւորուած՝ բոլոր իւր
 գեղեցկութեամբը, շնորհիւր և իւր բնական արտայայտութեամբը
 կը փայլէր:

— Ա՛հ, ըսաւ Ռուսօ, գիտութիւն, անյատակ անդունդ: Գուք
 ինձ գիտութեան, մտիթարութեան, ապագայի, խոստման վրայ
 կը խօսիք. ուրիշ մը ինձ նիւթի, խստութեան, բռնութեան վրայ
 կը խօսի. որո՞ն հաւատալու է: Ուրեմն եզբարց ժողովին մէջն
 ալ այնպէս պիտի ըլլայ ինչպէս կ'ըլլայ մեր վերելը շարժող աշ-
 խարհին լափող գայլերուն մէջ: Գայլեր և ոչխարներ. ընցէք իմ
 հաւատոյ դաւանութիւնս, քանի որ գրեանցս մէջ կարդացած չէք:

— Ձեր գրքերը վսեմ են, գոչեց Մարա, անոր խօսք չունինք,
 սակայն երազ են անոնք. դուք օգտակար էք նոյն տեսակետով՝ ինչ-
 պէս որ էր Պիլթադոր, Սողոն և սոփեստն Աիկերոն. բարին ցոյց
 կու տաք, սակայն արուեստական, անշօշափելի, անմատչելի բա-

րի մ'է այն . գուք կը նմանիք այն մարդուն որ ելնէ սովալլուկ
ամբոխ մը կշտացնել ուզէ՝ արեւէն քիչ շատ ծիածանի դոյն առած
օդի պղպջակներով :

— Միթէ , ըսաւ Ռուսօ յօնքը պուտելով , բնութեան մեծ շար-
ժուաները առանց պատրաստութեան տեղի ունենալին տեսած էք .
մարդուն ծնանիլը տեսած էք , այս խիստ սովորական սակայն այն-
չափ վսեմ եղելութիւնը . առանց ինն ամիս մօրն արգանդին մէջ
նիւթ և կեանք հաւաքելու ծնանիլը տեսած էք : Ա՛հ , կ'ուզէք որ
գործերով զաշխարհ վերանորոգեմ . . . : Այդ վերանորոգել չէ ,
պարոն , յեղափոխել է :

— Ուրեմն , ըմբերանեց երիտասարդ վիրաբոյժը խստիւ , ուրեմն
անկախութիւն չէք ուզեր , ազատութիւն չէք ուզեր :

— Ընդհակառակը , պատասխանեց Ռուսօ , ըստ որում անկա-
խութիւնն իմ կուռքս է , ազատութիւնն իմ գիցուհիս է : Միայն
թէ իմ ուղածս անուշ և լուսասփիւռ ազատութիւն մ'է՝ որ կը
ջերուցանէ և կը կենդանործէ : Իմ ուղածս այն հաւասարութիւնն է
որ զմարդիկ իրարու կը մօտեցնէ բարեկամութեամբ և ոչ վախով :
Ա՛նուզեմ որ ընկերական մարմնոյն բոլոր տարրերը դաստիարակուին ,
ուսանին ինչպէս մեքենագործը ներդաշնակութիւն կ'ուզէ , ինչպէս
եքենագործը համախմբութիւն կ'ուզէ , այսինքն կատարեալ զուգըն-
թացութիւն , իւր աշխատած իւրաքանչիւր կտորին բացարձակ մեր-
ձաւորութիւնը : Ըսածս կը կրկնեմ , ինչ որ դրած եմ այն կ'ուզեմ .
այսինքն՝ յառաջագիմութիւն , միարանութիւն , անձնուիրութիւն :

Մարտի շրթանցը վրայէն արհամարհական ժպիտ մ'անցաւ :

— Այո՛ , կաթ և մեղր բղխող գետերը , ըսաւ , Ախրդիլիոսի
Եղիւսեան-գաշտերը , բանաստեղծի մը երազները՝ զորս փիլիսոփա-
յութիւնը իրականութեան վերածել ուզէ :

Ռուսօ պատասխան չտուաւ , իւր չափաւորութիւնը պաշտպանելը
շատ ծանր կը թուէր իրեն , ինչու որ համայն Եւրոպայի մէջ բուն
նորոգիչ մը կը կոչէին զինքը :

Իւր պարզ և երկչոտ հողին գոհ ընելու համար , քիչ մ'առաջ
զինքը պաշտպանող անձին երեսը նայելով անոր լռելեայն հաւա-
նութիւնն առաւ և անշուկ նստաւ :

Generated on 2016-09-08 08:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նախագահը ոտք ելաւ :

— Լսեցիք , ըսաւ ամենուն :

— Այո , պատասխանեց ժողովը :

— Նորընծայ եղբայրը մեր ընկերութեան մէջ մտնելու արժանի կը թուի ձեզ , անոր պարտաւորութիւնները կը հասկնայ :

— Այո , ըսաւ ժողովը , բայց այնպիսի զգուշաւորութեամբ մը որ համամտութիւն չունենալին կը յայտնէր :

— Երգումն ըրէք , ըսաւ Նախագահը Ռուսօի :

— Չեմ ուզեր , ըսաւ փիլիսոփան կերպ մը հպարտութեամբ , սոյն ընկերութեան մէկ քանի անդամներուն անհամայն ըլլալ , և կը պարտաւորիմ քիչ մ'առաջ ըրած խօսքս կրկնել , իմ համոզմանս արտայայտութիւնն է այն : Եթէ հռետոր ըլլայի՝ խօսքս աւելի դիւրիմաց կերպով կ'ընդարձակէի . բայց լեզուս ըմբոստ է և մտքէս անցածը կը մատնէ՝ երբ անմիջապէս խօսիլ կ'ուզեմ :

« Ըսել կ'ուզեմ թէ այս ժողովէն հեռի , ձեր սովորութիւններն անխոնջ 'ի գործ դնելէս աւելի օգտակար կ'ըլլամ աշխարհի և ձեզի . ուստի թողէք զիս իմ աշխատութեանցս , տկարութեանս , առանձնութեանս : Արդէն ըսի՝ դէպ 'ի դերեզման կը խոնարհիմ . վիշտ , խօթութիւն , թշուաւութիւն անդադար զիս հոն կը մղեն , բնութեան այս մեծ դործը դուք չէք կրնար ուշացնել . լքէք զիս , ես մարդոց հետ քայլելու համար ծնած չեմ , ես կ'ատեմ զանոնք և կը փախչիմ անոնցմէ . սակայն անոնց կը ծառայեմ՝ ինչու որ ես ալ մարդ եմ , և անոնց ծառայելով՝ իրենց եղածէն աւելի լաւագոյն կ'երևակայեմ զանոնք : Այժմ դուք իմ միտքս հասկցաք . ալ քան մ'ըսելիք չունիմ :

— Կը մերժէք երդնուլ , ըսաւ Մարա տեսակ մը յուզմամբ :

— Դրապէս կը մերժեմ . չեմ ուզեր սոյն ընկերութեան մասնակցիլ , շատ ապացոյցներով կը տեսնեմ որ անօգուտ պիտի ըլլամ հոն :

— Եղբայր , ըսաւ անձանօթր հաշարար ձայնով մը , ներեցէք որ այսպէս անուանեմ զձեզ , ըստ որում իրօք եղբայր ենք մարդոց մտածածէն ուրիշ կերպով : Եղբայր , մի անսաք ձեր պահ մը տնեցած զայլովիւն որ խիստ բնական էր . ձեր օրինաւոր անձնա-

• Թիրութիւնը քիչ մը զոհեցէք . ձեր շուզածը մեզի համար ըրէք :
Ձեր խրատները , ձեր գաղափարները , ձեր ներկայութիւնը լոյս
են : Ձեր բացակայութեամբը և մերժմամբը զմեզ խառարի մէջ մի
թողուք :

— Ար սխալիք , ըսաւ Ռուսօ , ձենէ բան մը ետ չեմ առներ ,
ինչու որ բնաւ աւելի բան մը չեմ տաք . բոլոր աշխարհի , որ և է
ընթերցողիս , ամենուն ալ տուածս մէկ է . եթէ Ռուսօի անունը և
գոյութիւնը կ'ուզէք . . . :

— Ա՛ռ զե՛նք , ըսին քաղաքավարութեամբ բաղմամբիւ ձայներ :

— Աւրեմն ձեռք մ'իմ գործերէս առէք , ձեր նախագահին սե-
ղանին վրայ դրէք հատորները , և երբ կարծիք հաւաքուած ատեն
ի՞մ կարգս դո՞յ՛ գիրքս բացէք , հոն կը գտնէք իմ կարծիքս , իմ
մտածածս :

Ռուսօ քայլ մ'առաւ դուրս ելնելու համար :

— Աեցէք , ըսաւ վիրաբոյժը , կամքերն ազատ են , և մեծանուն
փիլիսոփային կամքն ալ ազատ է այլոցը պէս . սակայն անկանոն
բան մ'ըրած կ'ըլլանք մեր սրբավայրը մտցնելով օտար մը՝ որ նոյն
խակ ընելեայն պայմանով մ'ալ մեզի հետ կապուած չըլլալով՝
կրնայ մեր գաղտնիքները երևան հանել՝ թէ և դէշ մարդ մ'ալ
չըլլայ :

Ռուսօ կարեկից ժպիտ մ'ուղղեց անոր :

— Գաղտնապահ մնալու համար երդմամ կը պահանջէք , ըսաւ :

— Դո՛ւք ըսիք :

— Պատրաստ եմ :

— Երդման օրինակը կարդալու շնորհ ըրէք , եղբայր մեծարոյ ,
ըսաւ Մարա :

Արդարեւ եղբայր մեծարոյ հետեւեալ օրինակը կարդաց .

« Կ'երդնում առաջի յաւիտենական մեծին Աստուծոյ՝ ճարտա-
րապետին տիեզերաց , մեծաւորացս և զիս շրջապատող պատկառե-
լի ժողովոյն , բնաւ բան մը չյայտնել , չիմացընել , չդրել աչքիս
առջև կատարուածին վրայ , ես զինքս դատապարտելով , եթէ ան-
խոհեմ վարուիմ՝ մեծ հիմնադրին , մեծաւորացս օրինաց համեմատ
և հարցս բարկութեան ենթարկուելով պատժուելու : »

Generated on 2016-09-08 08:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ռուսօ արդէն ձեռքը կ'երկնցնէր, երբ անծանօթը՝ որ մինչև ետքը մտիկ ըրեր էր վիճաբանութիւնը տեսակ մ'իշխանութեամբ որուն դէմ կեցող շէր գտնուեր, թէև բազմութեան մէջ կորսուեր էր. անծանօթը, ըսինք, Նախագահին մօտեցաւ և ականջն 'ի վար բան մ'ըսաւ :

— Ճշմարիտ է, պատասխանեց մեծարոն :

Եւ յարեց :

— Դուք պարզ անհատ մ'էք և ոչ եղբայր մը . դուք պատուաւոր մարդ մ'էք մեր առջև՝ միայն նմանի մը դիրքով : Ուտոի մեք մեր դիրքը մէկդի դնելով՝ ձենէ պարզապէս պատուաւոր խոստում մը կը խնդրենք՝ մեր մէջն անցածը բոլորովին մոռնալու համար :

— Իբրև առաւօտեան երազ մը մոռնալու համար՝ պատուոյս վրայ կ'երդնում, պատասխանեց Ռուսօ յուզմամբ :

Այս խօսքին վրայ դուրս ելաւ, և շատ անդամներ ալ անոր ետեէն :

ԺԴ

ՀԱՄԱՐԱՑՈՒԹԻՒՆ

Երկրորդ և երրորդ կարգի անդամակիցները մեկնելէն ետք՝ Եօթն ընկեր մնացին օթեակին մէջ : Ասոնք Եօթը գլխաւորներն էին :

Զիրար ճանչցան այնպիսի նշաններու միջոցաւ՝ որոցմէ կ'իմացուէր բարձրագոյն աստիճան մ'ունենալին :

Ամեն բանէ առաջ դռները փակեցին . յետոյ, դռները փակելէն ետք, իրենց նախագահը ինքզինքը յայտնեց ցոյց տալով մատանի մը՝ որուն վրայ L. P. D.* խորհրդաւոր տառերը քանդակուած էին :

* *Lilia pedibus destrue* .— Շուշանները ոտքով խորտակեցէք :

Այս նախադասին վրայ էր ուխտին բարձրագոյն կարգի թղթակցութիւնը : Միւս վեց գլխաւորներուն հետ յարաբերութիւն ունէր՝ որոնք Զուլցերիա , Ռուսիա , Ամերիկա , Շուէտ , Սպանիա և Իտալիա կը բնակէին :

Իւր ընկերակիցներէն ընդունած կարևորագոյն գրութիւններէն մէկ քանին բերեր էր՝ որպէս զի բարձրագոյն կարգի անդամակցաց ակումբին հաղորդէ՝ որոնք միւսներէն բարձր և իրմէ վար կը գտնուէին աստիճանաւ :

Այս գլխաւորը ճանչցանք , Պալսամօն էր :

Այն գրութիւններէն ամենէն կարևորը սպառնալի ազդարարութիւն մը կը պարունակէր . Շուէտէն եկած էր , Սվէտէնպօրկի գրած էր :

« Եղբարք , հսկեցէք հարաւի կողմը , կ'ըսէր . անոր հրատապ ազդեցութեան ներքև դաւաճան մը զօրացած է : Այն դաւաճանը ձեզ 'ի կորուստ պիտի մատնէ :

« Եղբարք , հսկեցէք 'ի Բարիզ , դաւաճանն հոն կը բնակի . ուխտին գաղտնիքներն անոր ձեռքն են , ատելութեան զգացում մը զինքը կը մղէ :

« Մասնութիւնը գաղտնի գողութենէ և մրմնջող ձայնէն կը լսեմ : Քստմենլի վրէժ մը կը տեսնեմ՝ սակայն թերևս ուշ պիտի հասնի : Մինչև այն ատեն հսկեցէք , եղբարք , հսկեցէք : Մերթ մատնիչ լեզու մը՝ թէպէտ անհմուտ՝ կրնայ հիմն 'ի վեր տապալել մեր այնքան ճարտարութեամբ պատրաստած յատակադիժերը : »

Եղբարք անձայն զարմանքով մ'իրարու նայեցան . բուն երազատեսին լեզուն , անոր կանխադիտութիւնը՝ որ բազում սքանչելի օրինակներով հաստատուած էր՝ Պալսամօի նախադասած մասնակումբին քիչ տխրութիւն չպատճառեցին :

Նոյն իսկ Պալսամօ որ Սվէտէնպօրկի յստակատեսութեանը կը հաւատար՝ չկրցաւ դէմ դնել այն տաղնապալից և վշտալի տպաւորութեան՝ զոր այն գիրը կարգալէն ետք ունեցաւ :

— Եղբարք , ըսաւ , ներշնչեալ մարգարէն գրեթէ շտապով : Հսկեցէք ուրեմն ինչպէս որ կը պատուիրէ : Ինծի պէս դուք ալ դիտէք հիմա որ կռիւը բացուելու վրայ է : Զյաղթուինք այն

Ճաղրելի թշնամիներէն՝ որոց իշխանութիւնը ամենայն ապահովութեամբ կը կործանենք մեք : Մի մոռնաք որ անոնք իրենց արամագրութեան ներքե վարձկան անձնուէրներ ունին : Այս աշխարհիս մէջ զօրաւոր զէնք մ'է այն՝ այն հողիներուն համար՝ որոնք աշխարհային կենաց սահմանին անդին չեն տեսներ : Եղբարք , վարձկան դաւաճաններէն զգուշանանք :

Այս կասկածները աւելորդ կը թուին ինձ , ըսաւ ձայն մը . ամեն օր զօրութիւննիս աճելու վրայ է , և լուսաւոր հանճարներու կորովի ձեռներ մեզ կ'առաջնորդեն :

Պաշտամօ իրեն գովեստ շուայլողին շնորհակալ ըլլալու համար խոնարհութիւն մ'ըրսաւ :

— Այո՛ , սակայն , ինչպէս որ մեր մեծանուն Նախագահը ըսաւ , գաւաճանութիւնն ամենուրեք կը սողոսկի , պատասխանեց եղբայր մը՝ որ Մարա վիրաբոյժն էր . սա հակառակ իւր երիտասարդութեանը բարձրագոյն աստիճան մ'առած ըլլալով առաջին անգամն էր որ խորհրդակցութեան մասնակումբին մէջ կը գտնուէր : Մտածեցէք , եղբարք , որ խանձը կրկնապատկելով աւարն աւելի քաւատ կ'ըլլայ : Եթէ Պ. տը Սարդին պարկ մը սկուտով մեր աննշան եղբայրներէն մէկը կրնայ ճանչնալ , պաշտօնեայն միլիոնով մը կամ մեծ պաշտօն մը խոստանալով կրնայ մեր մեծերէն մին շահիլ : Արդ , մեր մէջ աննշան եղբայր մը բան մը չգիտէր :

«Առ առաւելն իւր մէկ քանի ընկերակիցներուն անունները զիտէ , և այն անուններէն ալ բան մը չեմէր : Շատ հիանալի կարգ մը ունի մեր սահմանադրութիւնը , սակայն շատ ազնուապետական կազմութիւն մ'ալ ունի . ստորինները բան չեն գիտեր , բան մը չեն կրնար ընել . իրենց չիչին բաներ ըսելու կամ ըսել տալու համար կը հաւաքեն զիրենք . սակայն անոնք ալ իրենց ժամանակովը , իրենց գրամովը միասին կ'աշխատին մեր շէնքին ամբողջութեանը համար : Մտածեցէք ըսած իս վրայ , գործաւորը միայն քարն ու շաղախը կը բերէ . սակայն առանց քարի և շաղախի կրնա՞ք տունը շինել : Արդ , այն դործաւորը դոյզն թոշակ մը կ'ստանայ , սակայն ես հաւասար կը նկատեմ զինքը ճարտարապետին՝ որ յատկազօծը կ'ստեղծէ և մարմին կաւ տայ անոր . և ես հաւասար կը նկատեմ զինքը՝ ինչու որ

մարդ է, և փիլիսոփային առջև որ և է մարդ մը ուրիշ մարդու մը չափ արժէք ունի, քանի որ ուրիշի մը պէս ինքն ալ թշուառութեան մը կամ ձախողութեան մը իրեն ինկած մասը կ'առնէ, և ուրիշէ մ'ալ աւելի գլխուն քար մը կրնայ իյնալ կամ գերանի մը ներքև ճգմուիլ:

— Խօսքդ կ'ընդմիջեմ, եղբայր, ըսաւ Պալսամօ, դու մէկդի կը թողուս այն խնդիրը որով միայն զբաղելու ենք: Եղբայր, քու պակասութիւնդ չափազանց եռանդդ և վիճաբանութիւնները ընդհանուրի վերածելդ է: Այսօր խնդիրն այն չէ թէ մեր սահմանադրութիւնը լաւ թէ գէշ է, այլ այն սահմանադրութիւնը հաստատուն և անսասան պահելուն վրայ է խնդիրը: Եթէ քեզի հետ վիճաբանել ուզէի՝ կ'ըսէի, Ոչ, շարժումն ստացող գործարանը ստեղծողին հանձարին հաւասարը չէ, ոչ, գործաւորը ճարտարապետին հաւասարը չէ. ոչ, ուզեղը թեին հաւասարը չէ:

— Թող Պ. աը Սարգին մեր յետին աստիճանի եղբայրներէն մին ձեռք անցրնէ, գոչեց Մարա եռանդուն, կը կարծէք որ ձենէ ինէ պակաս պիտի փտեցրնէ Պասդիլլի մէջ:

— Ճիշտ է. սակայն հող անհատին միայն մնաս կայ և ոչ ուխտին՝ որ մեր մէջ ամեն բանէ առաջ պէտք է համարուի, մինչդեռ երբ գլխաւորը բանտարկուի՝ դաւաճանութիւնը կը կասի, երբ զօրավարը պակսի՝ բանակը կը յաղթուի: Եղբայր, հպիեցէք գլխաւորներուն փրկութեանը վրայ:

— Այո, բայց անոնք ալ իրենց կողմէն մեր փրկութեանը վրայ հսկեն:

— Այդ իրենց պարտաւորութիւնն է:
— Եւ թող իրենց յանձանքը կրկնակի պստովուի:
— Գարձեալ կ'ըսեմ, եղբայր իմ, ուխտիս սահմանադրութենէն կը հեռանաս: Միթէ չե՞ս գիտէր որ մեր ընկերութեան բոլոր անդամակիցներն իրար կապող երդումը մէկ է, և ամենուն միևնոյն պատիժները կը սնօրինէ:

— Մեծերը միշտ կ'ազատին:
— Մեծերուն կարծիքը բնաւ այդպէս չէ, եղբայր մտիկ ըրէք մեր Սվէտէնպօրի մարգարէին ըսածը՝ որ մեր մէջ մեծերէն մին է. ահաւասիկ ինչ կը յարէ:

Generated on 2016-09-08 08:04 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473 Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Չարիքը ուխտիս մեծերուն մէկէն, շատ մեծին մէկէն պիտի գայ կամ, եթէ ուղղակի անորմէ ալ չգայ՝ յանցանքը դարձեալ անոր պիտի ըլլայ. յիշեցէք որ հուրն ու ջուրը կրնան դաւակից ըլլալ. մին լոյս կուտայ, միւսը երևան կը հանէ :

«Հսկեցէք, եղբարք, հսկեցէք ամեն բանի և ամենուն վրայ :»

— Ուրեմն, ըսաւ Մարա Պալսամօի խօսքին և Սվէտէնպօրկի նամակին ուզած կողմն առնելով, մեզ կապող երդումը կրկնենք, և խոստանանք ամենայն խտուրթեամբ պահել զայն՝ ո՛վ որ ալ ըլլայ մատնողը կամ մատնութեան պատճառը :

Պալսամօ պահ մ'իկեզդինքը ժողովեց, և աթոռէն ելնելով նուիրական խօսքերը ծանր, հանդիսաւոր և սոսկալի ձայնով մը արտասանեց՝ զոր մեր ընթերցողներն անգամ մը տեսան արդէն :

«Յանուն Որդւոյն խաչելոյ, կ'երդնում շախջախել այն մարմնային կապերը որոցմով կապուած եմ հօր, մօր, եղբարց, քերց, կողակցի, ազգականաց, բարեկամաց, տարփուհւոյ, թագաւորաց, գըլխաւորաց, բարերարաց, և որ և է մէկու մը՝ որուն հաւատարմութիւն, հնազանդութիւն, երախտագիտութիւն կամ ծառայութիւն մը խոստացած եմ :

«Ա'երդնում ուխտիս կանոնաց համեմատ ճանչցած գլխաւորիս յայտնել տեսածս, ըրածս, առածս, կարգացածս կամ լսածս, գիտցածս կամ գուշակածս, և մինչև անգամ խուզարկել և լրտեսել շտեսածս :

«Պիտի պատուեմ թոյնը, երկաթը և հուրը իբրև միջոց մահուամբ կամ ապշութեամբ երկրագնաիս վրայէն մաքրելու ճշմարտութեան և ազատութեան թշնամիները :

«Ար հպատակիմ լռութեան օրինաց. կը հաւանիմ իբր շանթահար մեռնիլ այն օրը յորում պատժոյ մը արժանանամ, և անտրտուն չկ'ըստ պատեմ այն դանակի հարուածին՝ որ ինձ պիտի հասնի աշխարհին որ կողմն ալ որ ըլլամ :»

Այն ատեն այն տխուր ակումբը կազմող եօթն անձինք բառ առ բառ կրկնեցին այս երդումը կանգուն և գլուխնին բաց :

Յետոյ երբ նուիրական խօսքերը վերջացան :

Generated on 2016-09-08 08:05 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ա՛լ տպահոյութեան մէջ ենք , ըստ Պալսամօ . ա՛լ մեր միջա-
բանութեանը մէջ գժուարութիւններ չհանենք : Տարուան գլխաւոր
անցիցը վրայ համար մ'ունիմ տալու մասնակումբին :

« Գաղղիոյ գործոյ մասին ըրածներս շահ մը պիտի ցոյց տայ
ձեզի նման լուսաւոր և փութաջան անձանց :

« Կ'սկսիմ :

« Գաղղիա Եւրոպիոյ կեդրոնը կը գտնուի , ինչպէս սիրտը մար-
մնոյն կեդրոնը . կ'ապրի , կ'ապրեցնէ : Իւր յուզմանց մէջ որոնելու է
ընդհանուր գործարանաց անհանգստութեան պատճառը :

« Ասոր համար Գաղղիա եկայ , և Բարիզի մօտեցայ՝ ինչպէս
բժիշկը սրտին կը մօտենայ . ականջ դրի , շօշափեցի , փորձառու-
թեամբ փորձեցի : Երբ անոր մօտեցայ , ասկէ սարի մ'առաջ , միա-
պետութիւնը կը յոյնէր . այսօր ախտերը զայն կ'սպաննեն : Ատի-
պուեցայ այն մահաբեր զեղխութեանց արդիւնքը փութացնել , և
ասոր համար դիւրութիւն մատակարարեցի անոնց :

« Արդեւք մը կար ճամբուս վրայ , այս արդեւքը մարդ մ'էր , այս
մարդը թագաւորէն ետք՝ պետութեան ոչ թէ առաջին՝ այլ ամենէն
զօրաւոր անձն էր :

« Այն քանի մը յատկութիւններէն ունէր՝ որ այլոց հաճելի կը
թուին : Արդարեւ շատ հպարտ էր՝ սակայն իւր հպարտութիւնը իւր
գործոցը կը յարմարցնէր . գիտէր թէ ինչպէս քաղցրացնելու է
ժողովրդեան լուծը անոր կարծել տալով , մինչև իսկ երբեմն ցոյց
տալով թէ Պետութեան մէկ մասը կը կազմէ . և մերթ ժողովրդեան
թշուառութեանց դարման մ'ընելու համար նոյն իսկ ժողովրդեան
խորհուրդ հարցնելով դրօշակ մը կը պարզէր՝ որուն շուրջը կը շա-
րուի ժողովուրդը , ազգային ոգին :

« Կ'ատէր Անգղիացիները , Գաղղիոյ բնական թշնամիները . կ'ա-
տէր թագաւորին սիրուհին , աշխատասէր դասերուն բնական թշնա-
մին : Արդ , այս մարդը եթէ յափշտակիչ մ'ըլլար , եթէ մեր մէ-
ջէն ըլլար , եթէ մեր ճամբէն քայլէր , մեր նպատակաւ գործէր ,
կը խնայէի անոր իւր իշխանութեանը մէջ կը պահէի զինքը ,
կ'օգնէի անոր այն ամեն միջոցներով՝ զոր ես կրնամ ստեղծել իմ
պաշտպանած անձանցս համար . ինչու որ փոխանակ փտած թագա-

ւորութիւն մը վերստին շարեւու՝ մեզի հետ կը կործանէր զայն որոշուած օրը : Սակայն ազնուապետական ցեղէն էր , սակայն արքայավայել պատիւներու մէջ ծնած էր՝ որոց հետամուտ ըլլալ չէր ուզէր , միապետութեան մէջ ծնած էր՝ որուն դէմ դաւաճանել չէր համարձակեր , թեև թագաւորը կ'ատէր՝ սակայն թագաւորութեան կը խնայէր . աւելին կ'ընէր . իբրև վահան կը ծառայէր այն թագաւորութեան՝ որուն կուղղէին մեր հարուածները : Ժողովներն ու ժողովուրդը սաստիկ յարգելով այն կենդանի թումբը որ արքայական իրաւանց յափշտակողներուն դէմ կանգնած էր , չափաւոր ընդդիմութեան մը մէջ կը կենային՝ վստահ ըլլալով որ ժամանակն եկած ատեն զօրաւոր օգնութիւն մը պիտի հասնի իրենց :

« Գիրքն հասկցայ : Պ. տը Շուազէօլի անկմանը ձեռնարկեցի :

« Այս դժուարին գործը՝ որուն այնքան ատելութիւններ և շահեր կապուած էին տասն տարիէ 'ի վեր՝ երեք ամսուան մէջ սկսայ և կատարեցի այնպիսի միջոցներով՝ զոր աւելորդ կը համարիմ ձեզի ըսել : Գաղանխքով մը որ իմ զօրութիւններէս մին է , այնպիսի մեծ զօրութիւն մը որ յաւիտեան ամենուն աչքէն ծածկուած պիտի մնայ և իւր արդիւնքը միայն պիտի երևի , Պ. տը Շուազէօլը պաշտօնէն ձգեցի , արտաքսեցի զինքը , և այնպէս կարգադրեցի որ ետեւէն շատեր յաւեցան , վշտացան , լացին , զայրացան :

« Ահա հիմա է որ աշխատութիւնը իւր պտուղները կու տայ . ահա բոլոր Գաղղիան Շուազէօլը կ'ուզէ և 'գլուխ կը վերցնէ զան վերստին բերելու համար , նման որք տղոց որ Երկնից կը բողոքեն երբ Աստուած իրենց հայրը կ'առնէ իրենցմէ :

« Ժողովներն իրենց ունեցած միակ իրաւունքէ 'ի գործ կը դնեն , այն է անշարժութիւնը . գործելէ դադրած են : Բարեկազմ մարմնոց մը վրայ՝ ինչպէս որ պէտք է ըլլայ առաջին կարգի Պետութիւն մը՝ կարեւոր գործարանի մը անդամալուծութիւնը մահաբեր է . արդ , ժողովներն այն են ընկերական մարմնոց 'նկատմամբ՝ ինչ որ է ստամոքսը մարդկային մարմնոց 'նկատմամբ . երբ ժողովները չեն գործեր՝ ժողովուրդը՝ Պետութեան այս աղիքը՝ չպիտի աշխատի , և հետևաբար չպիտի վճարէ . և ոսկին՝ այսինքն արիւնը՝ պիտի պակսի իրենց : »

« Անշուշտ պիտի ուզեն մաքառիլ . բայց ո՞վ է որ ժողովրդեան

գէժ մաքառի : Բանակը բնաւ , ժողովրդեան այս զաւակը՝ որ մշարկին հացը կ'ուտէ և այգեգործին զինին կը խմէ : Ար մնան թագաւորին պահպանութեանն յատկացեալ զինուորները , մենաշնորհեալ անձինք , պահպան զօրքը , Ջուիցերացիք , հրացանակիրները , հագիւ հինգ վեց հազար մարդ : Ինչ պիտի ընեն այն քանի մը թզուկները երբ ժողովուրդը հակայի մը պէս ելնէ կանգնի :

— Թող կանգնի ուրեմն , թող կանգնի ուրեմն , գոչեցին բազմաթիւ ձայներ :

— Այո՛ , այո՛ , գործի սկսելու է , գոչեց Մարա :

— Երիտասարդ , տակաւին քեզի խորհուրդ չհարցուցի , ըսաւ Պալաւոս պաղութեամբ :

« Ժողովրդեան այս խռովութիւնը , շարայարեց , իրենց թուովը զօրացած տկարներուն ընդդէմ մենաւոր զօրաւորին ապստամբութիւնը փափաքով պիտի խնդրէին նուազ հաստատուն , նուազ հասուն , նուազ փորձառու մտքեր , և ձեռք պիտի ձգէին այնպիսի դիւրութեամբ մը որ ինձ սոսկում կը պատճառէ . բայց ես մտածեցի . ես քննեցի : — Ես ժողովրդեան մէջ իջայ , և անոր զգեստներն հագած , անոր յարատեւութեամբը և թանձրամտութեամբը զոր փոխ կ'առնէի՝ զինքն այնչափ մօտէն տեսայ որ ես ալ ժողովուրդ եղայ : Ուստի այսօր կը ճանչնամ զինքը : Ալ անոր մասին չեմ սխալիր : Ջօրաւոր է նա՛ սակայն տգէտ է . դիւրագրգիռ է՝ սակայն անվրէժ-խնդիր է , միով բանիւ տակաւին հասունցած չէ իմ գիտցած և իմ ուզած խռովութեանս համար : Չունի այն հմտութիւնը որ օրինակի և օգտակարութեան կրկին լուսոյն ներքև ցոյց կու տայ դէպքերը . նոյն իսկ իւր ըրած փորձառութիւնը չյիշէր :

« Կը նմանի այն յանդուգն երիտասարդներուն զոր Ալմանիա տեսած եմ հասարակաց տօներու մէջ , և որոնք եռանդուն կ'եղնեն նաւի մը կայմին ծայրը՝ ուր խողի ապուխտ մը և արծաթէ բաժակ մը զնեւ տուեր էր դատաւորը , սրտեռանդն փափաքով կը խոյանային և հիանալի արագութեամբ մը ճամբայ կ'առնէին . բայց նպատակին հասած ատեննին , երբ թևերնին միայն պիտի երկնցնէին մրցանակը առնելու համար՝ ուժերնին կը կտրէր և կայմը գրկած մինչև վար կ'իյնային , մինչդեռ բազմութիւնը յայ կը կարդար :

Generated on 2016-09-08 08:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Առաջին անգամ ձեզի ըսածիս պէս կը պատահէր . երկրորդ անգամ ուժերնուն և շունչերնուն կը խնայէին . բայց աւելի ժամանակ անցընելով ջանքերնին ՚ի դերև կեղնէր ծանր պործելնուն համար՝ ինչպէս որ աճապարած ատեննին ալ նոյնը պատահած էր . վերջապէս երրորդ անգամ ոչ տաստիկ կ'աճապարէին և ոչ խիստ ծանր կը գործէին , այլ միջին միջոց մ'ընտրելով այս անպամ կը յաջողէին : Ահա իմ խորհած յատակագիծս : Փորձեր , միշտ փորձեր՝ որ անդուլ նպատակին կը մօտեցնեն , մինչև այն օրն յորում անվրէպ յաջողութեամբ մ'անոր պիտի հասնինք : »

Պալսամօ դադրեցաւ խօսելէ և ունկնդիրներուն նայեցաւ՝ որոց մէջ երիտասարդութեան և անփորձութեան բոլոր կիրքերը կ'եռային :

— Խօսէ , եզրայր ըսաւ Մարտի՝ որ գլուխն ամենէն վեր բարձրացուցած շարժումներ կ'ընէր :

— Ըսելիքս համառօտ է , ըսաւ Մարտ . փորձերը ժողովուրդները կը քնացնեն՝ եթէ չեն վհատեցներ : Փորձեր . ահա ժընէվի քաղաքացւոյն , Պ. Ռուսօի տեսական վարդապետութիւնը , որ թէպէտ մեծ քերթող է՝ սակայն ծանր գործող և երկչոտ հանձար մ'է , անօգուտ քաղաքացի մը . զոր Պղատօն իւր հասարակապետութենէն պիտի վանէր : Սպասել , միշտ սպասել : Հասարակուրդներուն ազատութենէն . կոփիչաւորներուն* ապստամբութենէն՝ ի վեր եօթը դար է որ կ'սպասէք : Թուեցէք այն սերունդները որոնք սպասելով մեռած են , և տակաւին համարձակեցէք ապաղային նշանաբանն համարիչ այս Սպասել աղէտալի բառը : Պ. Ռուսօ՝ ժամանակիս գաղափարներուն հակառակը կը խօսի՝ ինչպէս որ Լուի ԺԴ-ի ատեն մարքիզուհիներուն քով և թաղաւորին ոտիցը տակ կ'ընէին՝ Մօլիէր իւր կատակերգութիւններով , Պուալօ իւր երգիծաբանութիւններով , և Փօնդէն իւր առակներով :

* Բարիզի ժողովրդեան այն մասը , որ , Շարլ Գ. ձերբազատ չեղած , Գաղղիոյ խնամակալ տ'Անժու դքսին հրամայած նոր հարկերը չընդունելու համար , զինանոցը դիմեցին 1381 մարտ 1ին եւ հոն կոփիչի ձեռով տեսակ մը գէնքով զինուելով՝ հարկաժողովներն սպաննեցին եւ բանտարկեալ-ձերը թող տուին :

Ծ. Թ.

«Խեղճ և անզօր ընդդիմախօսութիւն մ'որ ոտք մ'անգամ յառաջ տարած չէ մարդկութեան դատը : Փոքր սողայք այս քողածածուկ վարդապետութիւնները . կը պատմեն առանց անոնցմէ բան մը հաս- վնալու և պատմելով կը քննանան : Չեզի նայելով Ռապլէ ալ քա- ղաքականութեան վրայ խօսեցաւ . սակայն անոր քաղաքականութիւնը կը ծաղրեն և ոչ ոք իւր սխալը կ'ուղղէ :

«Արդ, երեք հարիւր տարիէ 'ի վեր զեղծում մը վերցաւ : Ա՛լ կը բաւեն բանաստեղծութիւնները , ա՛լ կը բաւեն վարդապետութիւն- ները . դճրժ , գործողութիւն պէտք է : Երեք դարէ 'ի վեր Գաղղիան բժիշկներուն յանձներ ենք , ա՛լ ժամանակն է որ վիրաբոյժներն ալ ըստ կարգի զան կտրոցն ու սղոցք ձեռքերնին : Մարդկային ընկերու- թիւնը 'խլրդենի ունի , երկաթով կեցնենք անոր ընթացքը : Նա միայն կրնայ սպասել՝ որ սեզանէն ելած կ'երթայ կակուղ օթոցի մը վրայ կը փռուի և իւր գերիներուն փշել տալով անոր վարդի տերեւները վեր կը հանէ , որովհետեւ գոհունակ ստամոքսը ուղեղին խտրոցուցիչ շոգիներ կ'ազգէ՝ որոնք զայն կը զուարճացնեն և եր- ջանիկ կ'ընեն . սակայն քաղցը , թշուառութիւնը , յուսահատութիւնը ոտանաւորներով , կարծիքներով , առասպելներով չեն կշտանար բնու : Իրենց անտանելի տառապանաց մէջ աղիոզորմ աղաղակներ կ'արձա- կեն . խնու է նա որ չլսեր անոնց ողբն ու կոծը . անիծեալ է նա որ չպատասխաներ ասոնց : Ապատամբութիւն մը , թէև խեղդուի ալ , հազար տարուան ուսումէ , երեք դարերու օրինակէ աւելի լոյս պիտի տայ մտքերուն . թագաւորները պիտի լուսաւորէ՝ եթէ զանոնք շտապալէ . այս ալ շատ բան է , բաւական է :

Նպաստաւոր մրմունջ մ'ելաւ քանի մը շրթերէ :

— Ո՛ւր են մեր թշնամիները , շարայարեց Մարա . մեր վերեր պալատներուն դուռը կը պահպանեն , գահին աստիճաններուն շուրջն առած են . այն գահին վրայ է Պալլասայ արձանը՝ զոր Տրոյացուցմէ աւելի հողածուծեամբ և երկիւղիւ կը պահպանեն : Պալլասայ այս արձանը որ զանոնք ամենակարող , հարուստ , ամբարտաւան կ'ընէ՝ թագաւորութիւնն է : Այն թագաւորութեան հասնելու համար՝ զայն պահպանողներուն մարմիններուն վրայէն անցնելու է , ինչպէս որ զօրավարի մը հասնելու համար՝ զինքը պաշտպանող գումարտակ-

Generated on 2016-09-08 08:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ները տապալելու է : Լաւ ուրեմն , պատմութեան ըսածին նայելով շատ գումարտակներ տապալած են , շատ զօրավարներ բռնուած են Գարեհէն սկսելով մինչև Յովհաննէս թագաւորը , Ռէկուլոսէն մինչև Տուկէսզլէն :

« Պահպանողները տապալենք , մինչև կուռքը կը հասնինք . նախ պահպանները զարնենք , ետքը գլխաւորը կը զարնենք : Առաջին յարձակումը պալատականներուն , ազնուականներուն , ազնուապետներուն , վերջինը թագաւորներուն : Մենաշնորհ ունեցող գլուխները համրեցէք . հազիւ երկու հարիւր հազար կ'եննին . հատու գաւազան մ'ի ձեռին պտտեցէք Գաղղիա ըստած այն զեղեցիկ պարտեզը , և գետինը ձգեցէք այն երկու հարիւր հազար գլուխները , ինչպէս որ Գարեհէն Լազիսումի մեկոններուն կ'ընէր , և ամեն բան կը վերջանայ . այն ատեն միայն երկու իշխանութիւն պիտի գանուին . դէմ առ դէմ , ժողովուրդ և թագաւորութիւն : Ա՛լ թող թագաւորութիւնը՝ որ խորհրդանիշ մ'է՝ ճգնի կուռիլ ժողովրդեան հետ՝ որ հսկայ մ'է , և կը տեսնէք : Երբ գաճաճները արձան մը կործանել կ'ուզեն՝ պատուանգանէն կ'սկսին . երբ փայտահատները կաղնին յերկիր տապալել կ'ուզեն՝ արմատէն կ'սկսին կտրել : Փայտահատներ , փայտահատներ , առնենք տապարը , կաղնին արմատէն սկսինք կտրել , և հինաւորց կաղնին . երկնաբերձ կաղնին անմիջապէս աւազը պիտի համբուրէ :

— Եւ ինչպիսի ատեն թզուկներու պէս պիտի ճմլէ ձեզ , ողորմելի մարդիկ , գոչեց Պալսամօ որոտընդոստ ձայնով մը : Ա՛հ , անխնայ կը յարձակիս բանաստեղծներուն վրայ՝ և անոնցմէ աւելի բանաստեղծական և երեակայական այլաբանութեամբ կը խօսիս : Եղբայր , եղբայր , քեզի կ'ըսեմ թէ այս պարբերութիւններփոխ ես առեր վիպասանութենէ մը՝ զոր վերնայարկիդ մէջ կը գրես :

Մարա կարմրեցաւ :

— Գիտէք ինչ է յեղափոխութիւն մը , շարացարեց Պալսամօ : Ես երկու հարիւր յեղափոխութիւն տեսած եմ : Հին Եզիպտոսի , Յսոթեստանի , Յունաստանի , Հռովմի , Արեւելեան կայսրութեան յեղափոխութիւնները տեսած եմ՝ գաբու յեղափոխութիւնները տեսած եմ՝ յորում ժողովուրդները իրարու վրայ կը խուժէին , Արև-

եւք Արեւմտից վրայ, Արեւմուտք Արեւելից վրայ, և առանց իրարու խօսք հասկնալու զիրար կը ջարդէին: Հովիւ թագաւորներուն օրէն մինչև այսօր թերևս հարիւր յեղափոխութիւն տեղի ունեցաւ: Եւ քիչ մ'առաջ կը տրտնջայիք թէ գերի էք: Ուրեմն յեղափոխութիւնները բանի մը չեն ծառայեր: Ինչո՞ւ համար: Վասն զի յեղափոխութիւն հանողներուն ամենքն ալ միեւնոյն թալուկէն բռնուած էին, այն է՝ կ'աճապարէին:

«Միթէ Աստուած որ մարդկային յեղափոխութիւնները կը կառավարէ կ'աճապարէ»:

«Տապալեցէք, տապալեցէք կաղնին, կը դոչես, և չես հաշուեր թէ կաղնին՝ որ մէկ ըոպէի մէջ կ'իյնայ՝ ինկած ատեն այնչափ տեղ կը ծածկէ՝ որ սանձարձակ ձի մը երսուն ըոպէէն կ'առնէ: Արդ, անոնք որ կաղնին կը տապալէին՝ անոր յեղակարծ անկումէն խոյս տալու ատեն չունենալով՝ ահադին ոտներուն ներքև կը կորսուէին, կը ճմլուէին, կ'անէանային: Ուզածդ այս է, այնպէս չէ՞: Ես հաւանութիւն չունիմ ասոր: Աստուծոյ նման քսան, երսուն, քաղսուն մարդու տարիք կըցայ ապրիլ: Աստուծոյ նման անվերջ եմ: Աստուծոյ նման երկայնամիտ պիտի ըլլամ: Իմ ճակատագիրս, քուկդ, բոլոր աշխարհին ճակատագիրը սա ասիա մէջ բռնած եմ: Այս որտղնդոստ ճշմարտութիւններով լի ձեռքս ոչ ոք պիտի կարենայ բանալ տալ ինձ՝ եթէ չուզեմ բանալ: Գիտեմ որ շանթն է հոն կեցողը, ուստի շանթը հոն պիտի մնայ՝ ինչպէս Աստուծոյ ամենակարող աջին մէջ»:

«Պարտնայք, պարտնայք, թողունք այս խիստ վսեմ բարձունքը և երկրիս վրայ իջնենք»:

«Պարտնայք, պարզութեամբ և համոզմամբ կ'ըսեմ թէ դեռ ժամանակը չէ: Այժմ տիրող թագաւորը մեծ թագաւորին յետին մէկ ճառագայթն է, այն մեծ թագաւորին զոր ժողովուրդը տակաւին կը սպասուէ, և այս մարդը վեհափառութեան մէջ տակաւին կայ շլացուցիչ բան մը՝ որ ձեր գոյզն ատելութեանց փայլակներուն կրնայ հակակշիռ դալ: Նա թագաւոր մ'է, թագաւոր պիտի մեռնի. իւր ցեղը թէպէտ անարժան՝ սակայն պնասպակ է: Իւր ծագումը կրնաս կարդալ ճակատին վրայ, շարժուածքին մէջ, ձայնին մէջ: Նա

ժիշտ իբրև թագաւոր պիտի վարուի : Տապալենք զինքը , և Շարլ Ա. ի եղածը պիտի պատահի . իւր դահիճները երկրպագութիւն պիտի ընեն առջևը , և իւր թշուառութեան ատենի դրանիկները իրենց տիրոջը գլուխը կտրած տապարը պիտի համբուրեն լօրտ Գաբէլի նման :

«Սրդ , պարոնայք , ամենքնիդ ալ զիտէք որ Անգղիա աճապարեց : Ճշմարիտ է որ Շարլ Ա. թագաւորը կառափնասաին վրայ մեռաւ , սակայն Շարլ Բ. անոր տղան գահին վրայ մեռաւ :

«Սպասեցէք , պարոններ , սպասեցէք . վասն զի քիչ ատենէն յաջող պիտի ըլլան ժամանակները :

«Շուշանները խորտակել կ'ուզէք : Մեր ամենուն ալ նշանաբանն է , *Lilia pedibus destrue* . բայց միակ արմատ մը պէտք չէ որ Սուրբ Լուիի ծաղկին յոյս տայ վերստին ծաղկելու : Գուք թագաւորութիւնը կ'ուզէք ջնջել : Թագաւորութիւնն իսպառ ջնջուելու համար պէտք է որ փայլն ու հիւթը տկարանայ : Թագաւորութիւնը ջնջել կ'ուզէք : Սպասեցէք որ թագաւորութիւնը չէ թէ քահանայութիւն մը՝ այլ պաշտօն մ'ըլլայ . որ չէ թէ տաճարի մը այլ զրպակի մը մէջ գանուի : Սրդ , թագաւորութեան ամենէն նուիրական բանը , գահին օրինաւոր յաջորդութիւնը որ դարերէ 'ի վեր Աստուծմէ և ժողովուրդներէն իրաւունք ստացած է՝ յախտեան կորսուելու վրայ է : Մտիկ ըրէք , մտիկ ըրէք . այն աննկուն , այն անանց պատուարը՝ որ մեզի պէս չնչին մարդոց և այն կէս երկնային արարածոց մէջ դրուած էր , այն սահմանը որմէ բնաւ անցնելու համար ձակած չեն ժողովուրդները և որ օրինաւորութիւն կը կոչուի՝ այս փարոսի մը պէս փայլուն բառը որ մինչև այս օր թագաւորութիւնը նաւակոծութենէ զերծ պահած է՝ այս բառը խորհրդաւոր ձակատագրին շունչին ներքև քիչ ատենէն պիտի մարի :

«Տիկին արքայորդին որ Գաղղիա կոչուեցաւ կայսերազուն տրեան խառնուրդով թագաւորաց ցեղը մշանջենաւորելու համար , տիկին արքայորդին որ տարիէ մ'ի վեր ամուսնացաւ Գաղղիոյ գահուն ժառանգորդին հետ . . . Մօտեցէք , պարոններ , կը վախնամ որ ձայնս ձեր շրջանակէն դուրս կ'ելնէ :

— Ինչ է , հարցուցին վեց զլխաւորները անձկութեամբ :

Generated on 2016-09-08 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Տիկին արքայորդին գեռ կոյս է :

Քստմենելի մրմունջ մը՝ որ կրնար աշխարհիս բոլոր թաղաւորները փախցընել՝ այնքան անոր մէջ քինախնդիր ուրախութիւն և վրիժառու յալթանակ կար, մահաշունչ շողիի մը պէս ելաւ այն վեց գլուխներու նեղ շրջանակէն՝ որ գրեթէ իրարու կցուած էին՝ վրանին ալ Պալսամօի գլուխը՝ որ իւր աթոռին բարձրէն անոնց վրայ ծռած էր :

— Իրաց այս վիճակին մէջ, շարայարեց Պալսամօ, երկու հնթադրութիւն կայ՝ որոց երկուքէն ալ հաւասարապէս օգուտ կրնանք քաղել :

«Առաջինն այն է որ տիկին արքայորդին ամուլ մնայ, այն ատեն ցեղը կը վերջանայ, այն ատեն ապագային մէջ ոչ կուի, ոչ գժուարութիւն, ոչ շփոթութիւն կը մնայ մեր բարեկամներուն : Այս ջնջուելու նախասահմանեալ ցեղին նոյնը պիտի պատահի՝ ինչ որ պատահած է Կաղղիոյ մէջ ամեն անգամ՝ որ երեք թագաւոր իրարու յաջորդած են. ինչպէս որ պատահեցաւ Փիլիպ Գեղեցկին տղոց, Լուի Կոուասիրին, Փիլիպ Երկայնահասակին և Շարլ Գ.ին՝ որոնք խուանց զաւակ թողլու մեռան՝ երեքն ալ թագաւորելէն ետք. ինչպէս որ պատահեցաւ Անրի Բ.ի երեք տղոցը, Ֆրանսուա Բ.ին, Շարլ Բ.ին և Անրի Գ.ին՝ որոնք առանց զաւակ թողլու մեռան երեքն ալ թագաւորելէն ետք : Անոնց նման, Պ. արքայորդին, Պ. տը Բրովանս կոմսը, Պ. տ'Սրդուա կոմսը, երեքն ալ պիտի թագաւորեն և երեքն ալ անզաւակ պիտի մեռնին՝ ինչպէս որ միւսները մեռած են. ճակատագրին օրէնքն այս է :

«Յետոյ, ինչպէս որ Շարլ Գ.էն ետք որ Գաբէդեան ցեղէն էր՝ Փիլիպ Գ. տը Վալուան եկաւ, նախորդ թագաւորներուն հետաւոր ազգականը ինչպէս որ Անրի Գ.էն ետք որ Վալուայեան ցեղին յետինն էր՝ Անրի Գ. տը Պուրպօն եկաւ, նախորդ ցեղին հետաւոր ազգականը. տ'Սրդուա կոմսէն ետք որ ճակատագրին մատենին մէջ անդրանիկ ճիւղին իբրև յետին թագաւորը նշանակուած է՝ թերևս Գրօմվէլ մը կամ Կիւյլօմ տ'Օրանժ մը պիտի գայ, որ թէ ցեղէն դուրս և թէ յաջորդութեան բնական օրինաց ալ հակառակ է :

«Ահաւասիկ առաջին ենթադրութեան արդիւնքը :

Generated on 2016-09-08 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

« Երկրորդ ենթադրութիւնն ալ սա է որ տիկին արքայորդին ամուլ չմնայ : Ահաւասիկ թակարդ մը ուր մեր թշնամիները պիտի իյնան՝ կարծելով թէ մեզ հոն կրնե՞տեն : Ո՛հ , եթէ իշխանուհին ամուլ չմնայ , եթէ իշխանուհին մայր ըլլայ , այն ատեն որ արքունեաց մէջ ամենքը պիտի հրձուին և պիտի կարծեն թէ Գաղղիոյ մէջ թագաւորութիւնն ամրացաւ , մենք ալ պիտի հրձուինք , վասն զի ձեռքերնիս այնպիսի սոսկալի գաղտնիք մը պիտի ունենանք՝ որ ոչ յուռութ , ոչ զօրութիւն , ոչ ճիգ չպիտի կարենան գէմ դնել այն ոճիրներուն որ այս գաղտնիքը պիտի պարունակէ՝ այն աղէտից հետ զոր պիտի կրէ այն եռքէն արգասաւորեալ թագուհին , ինչու որ գահին տուած ժառանգորդը դիւրաւ կրնանք ապօրինաւոր ցոյց տալ , և այն արգասաւորութիւնը շնութիւն հրատարակել : Այնչափ որ այն կեղծ երջանկութեանը քով զոր Երկինք իրենց շնորհած պիտի կարծեն , ամուլութիւնը Աստուծոյ մէկ բարիքը պիտի համարուի : Ահա ասոր համար ետ կը կենամ , պարոնայք . ահա ասոր համար կ'սպասեմ , եղբարք իմ . ահա վերջապէս ասոր համար անօգուտ կը համարիմ հիմա ժողովրդեան կիցքը գրգռել՝ զոր ազգու կերպով պիտի գործածեմ երբ ժամանակը գայ :

« Արդ , պարոններ , այս տարուան աշխատութեանց արդիւնքը գիգէք . մեր որոգայթներուն յաջողութիւնը կը տեսնէք : Համոզուեցէք ուրեմն թէ միայն ոմանց հանձարովն ու արիութեամբը՝ որոնք աչք և ուղեղ կը համարուին , այլոց յարատեութեամբը և աշխատութեամբը՝ որ բազուկներ կը համարուին , ոմանց ալ հաւատքովն ու անձնուիրութեամբը՝ որ սիրտ կը համարուին , պիտի կարենանք յաջողիլ :

« Մանաւանդ մտքերնիդ դրէք թէ խիստ կարևոր է կոյր հնազանդութիւնը , այնպէս որ կանոնաց պահանջած ատեն , ձեր գլխաւորն իսկ ինքզինքը պիտի զոհէ ուխտիս կանոնաց կամքին :

« Ալ հիմա , պարոններ և ամենասիրելի եղբայրներ , ատեանը պիտի գոցէի՝ սակայն բարիք մը կայ գործելու , չարիք մը ցոյց տալու :

« Այն մեծ գրագէտը որ այս իրիկուն մեզի եկաւ և մեր մէջը պիտի մտնէր՝ եթէ մեր եղբայրներէն մին անդէպ եռանդեամբ չվա-

Generated on 2016-09-08 08:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ժողովրդի և այն երկչուտ հողին չվախցընէր, այն մեծ գրագէտը, ըսինք, իրաւունք ունեցաւ մեր ժողովին, և չարիք մը պատահածի պէս կը ցաւիմ որ օտար մը իրաւունք ունենայ եղբարց մեծամասնութեան մ'առջև՝ որ աղէկ չեն գիտեր մեր կանոնները և մերնպատակին բոլորովին անգէտ են:

«Ռուսօ իւր գրեանց իմաստակութիւններովը մեր ընկերութեան ճշմարտութեանցը յաղթելով կը ներկայացընէ հիմնական ախտ մը՝ զոր սրով և հրով կը ջնջէի՝ եթէ տակաւին յոյս չունենայի համովմամբ բժշկելու զայն: Մեր եղբայրներէն մին ձախորդ անձնասիրութիւն մ'ունեցաւ: Ախճաբանութեան մէջ մեզ պզտիկ ձգեցկը յուսամ որ այսպիսի դէպք մը անգամ մ'ալ տեղի չունենար, ապա թէ ոչ պատժոյ կը ձեռնարկեմ:

«Արդ, պարոններ, մեր գաղափարները քաղցրութեամբ և համոզելով տարածեցէք. բռնութեամբ մի մուծանէք այլ մեղմով, ըմբոստ հողիներուն մէջ կոփիչի և կացինի հարուածներով մի մխէք, ինչպէս հաւատաքննիչները դահճին երիթովը կ'ընեն: Մտքերնիդ պահեցէք որ բարի ճանչցուելով մեծ կրնանք ըլլալ, և բարի ճանչցուելու համար պէտք է որ շուրջն եղածներէն լաւագոյն երեւանք. յիշեցէք որ մեր մէջ բարիներն ու լաւագոյնները առանց գիտութեան, արհեստի և հաւատի ոչինչ կը համարուին. միով բանիւ ոչինչ անոնց քով զոր Աստուած մասնաւոր կնիքով մը նշանած է որպէս զի մարդիկը կառավարեն և տէրութիւն մը վարեն:

«Պարոնայք, ատեանը գոցուեցաւ:»

Այս խօսքին վրայ Պալսամօ գլխարկը գլուխը դրաւ և վերարկուն վրան առաւ:

Այն ատեն ընկերներէն իւրաքանչիւրը, կասկած չյարուցանելու համար, առանձին և լռին մեկնեցաւ ըստ կարգի:



ճԵ

ՄԱՐՄԻՆ ԵՒ ՀՈԳԻ

Ամենէն ետք գլխաւորին քով Մարա վիրաբոյժը մնաց :
Խոնարհութեամբ և տժգոյն մտեցաւ ահարկու ատենախօսին՝ ուրուն իշխանութիւնն անհուն էր :

— Տէր , իրօք յանցանք մը գործեցի , հարցուց :

— Մեծ յանցանք մը , պարոն , ըսաւ Պալսամօ . և զէջը սա է որ չես կարծեր թէ յանցանք մը գործած ես :

— Է՛հ , այո , կը խոստովանիմ այնպէս ըլլալը . ոչ միայն չեմ կարծեր թէ յանցանք մը գործած եմ՝ այլ և կը կարծեմ թէ վայելուչ կերպով խօսեցայ :

— Հպարտութիւն , հպարտութիւն , մրմուռաց Պալսամօ . հպարտութիւն , աւերիչ սատանայ : Մարդիկ կ'երթան հիւանդին երակներուն մէջ գտնուող տենդին հետ , օդին և ջրին մէջ եղած ժանտամահին հետ կը մաքաւին , բայց թոյլ կու տան որ հպարտութիւնը այնպիսի խոր արմատներ արձակէ իրենց սրտին մէջ՝ զորս բնաւ չեն յաջողիր բնաջինջ ընելու :

— Ա՛հ , տէր , ըսաւ Մարա , շատ աննպաստ դաղափար մ'ունիք վրաս : Ուրեմն իրօք իմ նմաններուս շնամներու չափ չնչին բան մը եմ : Արդեօք այնչափ զէջ քաղեցի իմ աշխատութեանցս պտուղը որ խօսք մը չկարենամ ընել առանց տղէտ համարուելու : Ուրեմն երկչոտ աշակերտ մ'եմ ես որ իմ համոզմանս վրայ կը կասկածին : Եթէ միայն համոզում ունենայի ալ՝ ժողովրդեան նուիրական դասին մէջ զէթ անձնուիրութեամբս տեղ ունիմ :

— Պարոն , պատասխանեց Պալսամօ , բարւոյ սկզբունքը չարի սկզբունքին հետ որ օր մը անոր պիտի յաղթէ կը թուի ինձ , քուներսդ մաքաւելուն համար է որ պիտի ջանամ քու այս պէկասութիւններդ ուղղելու : Եթէ պիտի յաջողիմ , եթէ հպարտութիւնը

քու ներսդ ուրիշ զղացումներու յաղթած չէ՝ մէկ ժամուան մէջ
կը յաջողիմ :

— Մէկ ժամուան մէջ, ըսաւ Մարա :

— Այո՛, կ'ուզես այս մէկ ժամն ինծի հետ անցընել :

— Անշուշտ :

— Ո՛ր տեսնեմ քեզ :

— Տէր, ինձ անկէ որ ձեր ծառային որոշած ժամագրութեան
տեղերնիդ գամ գտնուիմ :

— Լաւ, ըսաւ Պալսամօ, տունդ կու գամ :

— Ուշագրութիւն ըրէք ձեր տուած խոստումներ, տէր. Գօրտը-
լիէ փողոցը վերնայարկ մը կը բնակիմ : Աերնայարկ մը, կը հաս-
կընա՞ք, ըսաւ Մարա հսկարտ պարզութիւն մը կեղծելով, և իւր
թշուառութիւնը պարծենալու կերպով մը որ Պալսամօի ուշագրու-
թենէն չվրիպեցաւ, մինչդեռ դուք . . . :

— Մինչդեռ ես :

— Մինչդեռ դուք պալատ մը կը բնակիք, կ'ըսեն :

Պալսամօ ուսերը վեր ըրաւ նման հսկայի մը որ իւր հասակին
բարձրութենէն զաճաճի մը զայրոյթը կը չափէ :

— Լա՛ւ, այնպէս թող ըլլայ, պարոն, պատասխանեց, քու վեր-
նայարկդ կու գամ քեզ գտնելու :

— Ե՛րբ, պարոն :

— Վաղը :

— Ժամը քանիին :

— Առաւօտուն :

— Ինչու որ առտուն կանուխ դիակներու զննարանը կ'երթամ,
անկէ ալ հիւանդանոցը :

— Ճիշդ ինծի ալ պէտք եղածը այդ է՛ : Ես քենէ պիտի խըն-
դրէի որ զիս հոն տանիս՝ եթէ դու ինձ չառաջարկէիր :

— Կ'իմանա՞ք, կանուխ : Ես քիչ կը քնանամ, ըսաւ Մարա :

— Իսկ ես չեմ քնանար, պատասխանեց Պալսամօ : Ուրեմն լուս-
նալուն պէս :

— Չեզի պիտի սպասեմ :

Ասոր վրայ իրարմէ բաժնուեցան, վասն զի փողոցին բերանն հա-

աներ էին՝ որ այնչափ մութ և անմարդի էր գուրս ելած ատեննին՝ որչափ աղմկալի և բազմամարդ էր մտած ատեննին :

Պալսամօ ձախ կողմը դարձաւ և իսկոյն աներեղյթ եղաւ :

Մարտ ևս անոր պէս ըրաւ երկայն ու նիհար սրունքներովը աջ կողմը դառնալով :

Պալսամօ ճշգութիւն պահեց . հետեւեալ օրը առաւօտեան ժամը վեցին դրանդի մը դրանը կը զարնէր՝ որ վեց դռներով երկայն նրբանցքի մը կեդրոն՝ Գօրտըլիէ փողոցին հին մէկ տանը յետին յարկը կը կազմէր :

Ար տեսնուէր որ Մարտ ամեն բան պատրաստեր էր իւր ականաւոր հիւրը աւելի պատուով ընդունելու համար : Ընկուզինույ փայտէ բարակ դարզիձը , վրան փայտէ դարանը մաքրութենէ կը փայլէին օրէ ծառայող կնոջ մը բրդէ ջնջաններուն ներքե՝ որ այն որդնակեր կարասիներուն վրայ կը գործածէր :

Մարտ ևս բաւական կ'օգնէր այն կնոջ , և կապոյտ յախճապակէ ամանի մը տոպունած և թոռմած ծաղիկներու ջուր կը լեցընէր՝ որ վերնայարկին գլխաւոր մէկ զարդն էր :

Տակաւին թեյին տակն էր լաթի կտոր մը՝ որմէ կ'իմացուէր թէ կարասիները քիչ մը մաքրելէն ետք ծաղիկներուն նայեր էր :

Որովհետեւ բանալին դրանը վրայ էր և Պալսամօ առանց դրանը զարնելու ներս մտեր էր՝ Մարտի այն զբաղման վրայ եկաւ :

Մարտ գլխաւորը տեսնելուն պէս՝ ճշմարիտ ստոյիկեանի մը չվայլածէն աւելի կարմրեցաւ :

— Ար տեսնէք , պարոն , ըսաւ ծածկամտութեամբ վարագուրի մ'ետեւ նետելով մատնիչ լաթը , ես տանը սպասաւորութիւնն ալ կ'ընեմ և այս բարեմիտ կնոջ կ'օգնեմ : Օրինակի համար , ընելիքս կ'ընեմ՝ որ թէպէտ շատ ստորին մարդու գործ չէ՝ սակայն շատ մեծ մարդու գործ ալ չէ :

— Մաքրատէր աղքատ երիտասարդի մը գործն է , ըսաւ Պալսամօն պաղութեամբ : Շուտով կը պատրաստուիք , պարոն : Գիտէք որ իմ վայրկեաններս համրուած են :

— Թիկնոցս պիտի հագնիմ , պարոն . . . : Արիվէդ խաթուն , թիկնոցս . . . : Այս կինը դռնապանուհիս է , սենեկապանուհիս

է, խոհակերուհիս է, տնտեսուհիս է, պարոն, և ամիսը սկուտ մը կը վճարեմ իրեն :

— Խնայողութիւնը դովելի է, ըսաւ Պալսամօ. աղքատներուն հարստութիւնը, հարուստներուն իմաստութիւնն է այն :

— Գլխարկս՝ դաւազանս, ըսաւ Մարա :

— Ձեռքդ երկնցուր, ըսաւ Պալսամօ, ահա գլխարկդ, և այս գաւազանն ալ որ գլխարկիդ քոփն է՝ քուկդ ըլլալու է :

— Ո՛հ, ներեցէք, պարոն, բողբոջին շփոթեր եմ :

— Պատրաստ ես :

— Այո՛, պարոն : Ժամացոյցս, Արիվէդ խաթուն :

Արիվէդ խաթունը անդին դարձաւ, ասդին դարձաւ, բայց պատասխան չտուաւ :

— Ջննարանն ու հիւանդանոցը երթալու համար ժամացույցի պէտք չունիս, պարոն. թերևս մինչև որ գտնեն շատ ատեն կ'անցնի և մենք ալ ուշ կը մնանք :

— Սակայն, պարոն, այն ժամացոյցը շատ աչքս է. ընտիր ժամացոյց մ'է՛ զոր շատ խնայողութիւններով գնած եմ :

— Քու բացակայութեանդ ատեն՝ Արիվէդ խաթունը կը փնտռէ : պատասխանեց Պալսամօ ժպիտով մը. և եթէ աղէկ փնտռէ՝ վերադարձիդ կը գտնուի :

— Ո՛հ, անշուշտ, ըսաւ Արիվէդ խաթունը, եթէ պարոնը, այլուր ձգած չէ՛ կը գտնուի. հոս բան մը չկորսուիր :

— Տեսա՞ր մի, ըսաւ Պալսամօ : Երթանք, պարոն, երթանք :

Մարա պնդել չհամարձակեցաւ և մռմռալով Պալսամօի ետեւէն դնաց :

Երբ դուռն հասան :

— Ո՛ւր պիտի երթանք նախ, ըսաւ Պալսամօ :

— Եթէ կ'ուզէք՝ զննարանը, տէր. հոն Ենթակայ մը կայ՝ որուն համար ըսի թէ այս գիշեր պիտի մեռնի ուզեղային մաշկին գիւրազրդիւ բորբոքումովը, և չեմ ուզեր որ ընկերներս ձեռքէս առնեն զան :

— Արեմն զննարանը երթանք, պարոն Մարա :

— Մանաւանդ որ հոսկէ երկու քայլ անդին է, և զննարանը

Generated on 2016-09-08 08:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հիւանդանոցին կից է, ու մանեւնիս ելնեւնիս մէկ կ'ըլլայ. նաև կրնաք զուռն սպասել ինձ :

— Ընդհակառակը, հետդ գալ կ'ուզեմ. եւթակային վրայ ունեցած կարծիքդ կ'ըսես ինձ :

— Երբ մարմին մ'էր, պարոն :

— Ոչ, դիակ մ'ըլլալէ 'ի վեր :

— Հէ, զգուշացէք, ըսաւ Մարա ժպտելով. այս մասին ձեզի քար մը կրնամ հանել, ինչու որ արհեստիս այս կողմը դիտեմ, և կ'ըսեն թէ բաւական ճարտար անդամահատ մ'եմ,

— Հպարտութիւն, հպարտութիւն, միշտ հպարտութիւն, մրմնջեց Պալսամօ :

— Ինչ կ'ըսէք, հարցուց Մարա :

— Կ'ըսեմ թէ հիմա պիտի տեսնենք ասոնք, պարոն, պատասխանեց Պալսամօ : Մտնենք :

Նախ Մարա մտաւ այն նեղ անցքը՝ որ Հօդֆէօլ փողոցին ծայրը կառուցուած զննարանը կ'առաջնորդէր :

Պալսամօ առանց վարանելու անոր ետեւէն գնաց մինչև այն երկայն ու նեղ սրահը՝ ուր մարմարիոնէ սեղանի մը վրայ երկու դիակներ տարածուած էին, մին կնոջ միւսը մարդու :

Կինը դեռահաս մեռեր էր : Մարդը ծեր և ճաղատ էր. գարշելի պատան մը անոնց մարմինը կը ծածկէր՝ երեսնին կէօ մը բաց թողլով :

Երկուքն ալ քովէ քով պառկած այն սառուցեալ անկողնին վրայ, անոնք որ թերևս բնաւ իրար տեսած չէին այս աշխարհիս մէջ, և որոց հողիները յաւիտենութեան մէջ ուղեորելով՝ անշուշտ շատ պիտի զարմանային իրենց մահկանացու պատեաններուն այն դրացիութեանը վրայ :

Մարա մէկ շարժումով վերցուց և մէկդի նետեց այն հաստ լաթը որ երկու թշուառները կը ծածկէր զոր վիրահատին կտրոցին առջև հաւասար ըրեր էր մահը :

Երկու դիակները մերկ էին :

— Մեռելներու տեսքը զգուանք չ'պատճառեր ձեզի, ըսաւ Մարա իւր սովորական մեծաբանութեամբը :

— Զիս կը տխրեցնէ , պատասխանեց Պալսամօ :

— Սովորած չըլլալնուդ համար է , ըսաւ Մարա : Ես որ ամեն օր այս տեսարանը կը տեսնեմ՝ ոչ տխրութիւն կ'զգամ և ոչ զզուանք : Մեք գործական բժիշկքս , ինչպէս որ կը տեսնէք՝ մեռելներուն հետ կ'ապրինք և մեր կենաց սյաշտօններէն և ոչ մին չենք ընդհատեր անոնց համար :

— Ձեր արհեստին մէկ տխուր մենաշնորհն է այդ , պարոն :

— Ասկէ զատ , յարեց Մարա , ինչո՞ւ տրտմիմ , կամ ինչո՞ւ զզուիմ , Առաջին պարադային մէջ կը մտածեմ , երկրորդ պարադային մէջ կը սովորիմ :

— Բացատրէ գաղափարներդ , ըսաւ Պալսամօ , աղէկ չեմ հասկընար : Նախ՝ մտածածդ :

— Լաւ , ինչո՞ւ սոսկամ , ինչո՞ւ վախնամ անշարժ մարմինէ մը , արձանէ մը որ միս է՝ փոխանակ քարէ , ժամամարիոնէ կամ խստաքարէ ըլլալու :

— Իրաւ , դիակի մը մէջ բան մը չկայ , այնպէս չէ :

— Բնաւ բան մը չկայ :

— Այնպէս կը կարծէք :

— Ստոյգ եմ :

— Բայց կենդանի մարմնոյ մը մէջ :

— Շարժում կայ , ըսաւ Մարա մեծամտութեամբ :

— Իսկ հողին , անոր խօսքը չէք ըներ , պարոն :

— Կտրոցովս խառնած մարմիններուս մէջ բնաւ չտեսայ զայն :

— Ինչու որ միայն դիակներ խառնեցիր :

— Ա՛հ , կենդանի մարմիններու վրայ ու վիրահատութիւն ըրած եմ , պարոն :

— Եւ դիակներէն աւելի բան մը գտած չե՞ս անոնց մէջ :

— Ինչո՞ւ չէ , ցաւ գտած եմ , հողի անուանածնիդ այն ցաւն է :

— Ուրեմն չէք հաւատար անոր :

— Ինչի՞ :

— Հողւոյ :

— Կը հաւատամ , ինչու որ աղատ եմ շարժում անուանելիէ զայն եթէ ուզեմ :

— Այս շատ աղէկ է . հոգւոյ կը հաւատաք , ձեռնէ ուզածս միայն այս էր . անոր հաւատալդ ինձ օգտակար է :

— Կեցէք , տէր , իրարու խօսք հասկնանք , և մանաւանդ չափազանցութեան շտանինք , ըսաւ Մարա իժի մը ժպիտով : Մեք գործական բժիշկքս քիչ մը նիւթապաշտ ենք :

— Այս մարմինները շատ պաղած են , ըսաւ Պալսամօ մտախոհ , և այս կիներ շատ գեղեցիկ է եղեր :

— Այո :

— Անշուշտ այս գեղեցիկ մարմինը գեղեցիկ հոգի մ'ունէր :

— Ա՛հ , ստեղծողը այս մասին սխալեր է : Գեղեցիկ պատեան մը՝ սակայն մէջը անպիտան սուր մը : Այս մարմինը վատահամբաւ կնոջ մ'էր՝ որ Սէն-Լազարի հիւանդանոցէն ելնելով ուղղոյ բորբոքումով մը մեռաւ : Շատ պատմութիւնը երկայն և բաւական դայթակղեցուցիչ է : Եթէ հոգի կ'անուանէք այն շարժումը որ գործել կու տար այս արարածին՝ անիրաւութիւն կ'ընէք մեր հոգիներուն որ անշուշտ աղէկ տեսակէն ըլլալու են :

— Հոգի մը զոր պարտ էին բժշկել , ըսաւ Պալսամօ , և կորտուերէ՝ միայն ամենահարկաւոր եղած բժիշկը՝ հոգւոյ բժիշկ չգտնուելուն պատճառաւ :

— Բարէ , բարէ , տէր , այս ալ ձեր վարդապետութիւններէն մին է : Միայն մարմիններուն համար բժիշկ կայ , ըսաւ Մարա դառն ժպիտով մը : Կը նայի՞ք , տէր , այս միջոցին ձեր լեզուին ծայրը խօսք մը կայ՝ զոր Մօլիէր շատ անգամ իւր կատակերգութեանց մէջ դրած է , և ահա այն խօսքին համար կը ժպտիք :

— Ոչ , ըսաւ Պալսամօ , կը սխալիս . և ինչո՞ւ ժպտիլս չես կրնար գիտնալ : Առ այժմ , հանած հետեութիւննիս սա է որ այս դիակները պարապ են , այնպէս չէ :

— Նաև անզգայ , ըսաւ Մարա նորատի կնոջ գլուխը վերցընելով և դղրմամբ մարմարիոնին վրայ ձգելով , որմէ մարմինը բնաւ չշարժեցաւ և ոչ ալ սարսուեցաւ :

— Շատ աղէկ , ըսաւ Պալսամօ . հիւանդանոցն անցնինք հիմա :

— Պահիկ մը , տէր , կ'աղաչեմ , մինչև որ սա գլուխը կոճղէն զատեմ՝ որ փափաքս կը գրգռէ , և որ խիստ հետաքրքրաշարժ ախտի մը բնակարանն եղած է : Կը ներէք :

— Ի՞նչ ըսել է, ըսաւ Պալսամօ :

Մարա իւր գործիքներուն սուսփը բացաւ, հոնկէ կտրոց մը հանեց և անկիւնին մէկէն արիւնի բիծերով ծածկուած փայտէ մեծ կոփիչ մ'առաւ :

Այն ատեն կիրթ ձեռքով մը կլոր ճեղք մը բացաւ՝ որ պարանոցին բոլոր միսերը և դնդերները անջատեց . յետոյ ոսկորին հասած ատեն՝ կտրոցը ողնայարի սեան երկու կցուածքին մէջ սահեցուց և կոփիչով անգամ մ'ուժով զարկաւ :

Գլուխը սեզանին վրայ թաւալեցաւ, սեղանէն ալ գետինը : Մարա ստիպուեցաւ տամուկ ձեռներովը գետնէն վերցընելու :

Պալսամօ գլուխն անդին դարձուց՝ յաղթականը շատ չուրախացընելու համար :

— Օր մը, ըսաւ Մարա որ կը կարծէր թէ Պալսամօ տխրութեան մէջ է, օր մը մարդասէր մը մահուան պիտի զբաղի՝ ինչպէս որ ուրիշները կեանքին զբաղած են, պիտի գտնէ մեքենայ մը որ այսպէս մէկ հարուածով մը գլուխը պիտի կտրէ և անէութիւնը վայրկենական պիտի ընէ, մինչդեռ հիմա ուրիշ կերպ մահուան պատիժներն այսպէս չեն . պատժանիւր, բզբտելը, կախելը բարբարոս ժողովուրդներու յատկացող տանջանքներ են և ոչ թէ քաղաքակրթեալ ազգերու : Գաղղիացւոց պէս լուսաւորեալ ազգ մը պէտք է պատժէ և ոչ թէ վրէժ լուծէ, վասն զի այն ընկերութիւնը որ անուով կը պատժէ, կը կախէ, կը բզբտէ՝ յանցաւորը մահուամբ չպատժած՝ տանջանքով վրէժ կը լուծէ անորմէ, և այս ալ ըստ իս մեռնելուն կէսէն աւելին է :

— Նոյնպէս և ըստ իս, պարոն : Բայց ի՞նչ կերպ կը մտածես այդ գործիքը :

— Նոյն իսկ օրինաց պէս պաղ և անտարբեր մեքենայ մը . պատժելը յանձն առնող մագդը իւր նմանը տեսնելով կ'զգածուի, և երբեմն հարուածը պարապը կ'ելնէ՝ ինչպէս որ Շալէի և տը Մօնմութ դքսին պատահեցաւ : Այսպէս չպիտի ըլլար մեքենայի մը՝ որ օրինակի համար, մեծ դանակ մը շարժող կաղնիէ երկու թևեր ունենար :

— Եւ այն դանակը կայծակի մը արագութեամբ ծոծորակին խորս-

Generated on 2016-09-08 08:15 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

խին և ուսին լայն ու բարակ զնդերներուն մէջէն անցնելով, կը կարծես որ մահը վայրկենական և ցաւը կարճատե կ'ըլլայ :

— Անշուշտ մահը վայրկենական կ'ըլլայ քանի որ սուրը մէկ հարուածով մը ջիղերը պիտի կտրէ՝ որ շարժում կու տան : Ցաւը կարճատե կ'ըլլայ քանի որ սուրը պիտի զատէ ուղեղը՝ որ զգացումներուն դահն է, սրտէն՝ որ կենաց կեդրոնն է :

— Պարոն, ըսաւ Պալսամօ, Ալմանիոյ մէջ գլխատութեան պատիժը կայ :

— Այո՛, բայց սրով, և ըսի ձեզի թէ մարդուն ձեռքը կրնայ դողալ :

— Նմանօրինակ մեքենայ մը Իտալիոյ մէջ կայ. կաղնիէ կոճիղ մը զայն կը շարժէ, և անունը *marroaja** է :

— Լաւ, պարոն, դահճին ձեռքով գլխատուած ոճրագործներ տեսայ որոնք նստած տեղերուն ելնելով՝ թաւալդոր տասն քայլ անդին ինկան : Մաննայաին ստորոտը թաւալող զլուխներէն ձեռքս առի, ինչպէս որ սա մազերէն բռնած գլուխդ քիչ մ'առաջ մարմարինէ սեղանին ստորոտը թաւալեցաւ, և իւր մկրտուած անունը այն գլխուն ականջին հնչելով՝ տեսայ որ անոր աչերը բացուեցան և իրենց ակնակոպիճին մէջ դարձան՝ ջանալով տեսնել թէ ո՞վ է կանչողը երկրէս՝ յաւիտենութեան անցած ատեննին :

— Զղային շարժում, ուրիշ ոչինչ :

— Զիղերը զգայնութեան գործարանները չեն :

— Ադկէ քնչ կը հետեցընէք, պարոն :

— Ար հետեցընեմ թէ փոխանակ սպաննելով պատժելու՝ աւելի լաւ կ'ըլլար որ առանց սպաննելու պատժող միջոց մը գտնէին : Հաւատա ըսած իս, մարդկային ընկերութեան մէջ ամենէն ընտիր և լուսաւոր անձինքը պիտի նկատուին անոնք որ այս միջոցը գտնեն :

— Եր՛ագ, միշտ եր՛ագ, ըսաւ Մարա :

— Թերևս այս անգամ իրաւունք ունիս, ըսաւ Պալսամօ. Ժամանակը պիտի ցոյց տայ . . . : Հիւանդանոցին խօսքն ըրիր . . . : Հոն երթանք :

* Մաննայա :

— Երթանք :

Եւ նորատի կնոջ գլուխը իւր թաշկինակին մէջ գնելով՝ չորս ծայրէն խնամքով կապեց :

— Հիմա , ըսաւ Մարա դուրս ելնելով , գէթ հաւաստի եմ որ իմ ընկերներս ինէ աւելցածը միայն ձեռք պիտի անցընեն :

— Օդէլ-Տիէօ հիւանդանոցին ճամբան բռնեցին . խորհողն ու բժիշկը քովէ քով կ'երթային :

— Շատ անտարբերութեամբ և ճարտարութեամբ կտրեցիր այդ գլուխը , պարոն , ըսաւ Պալսամօ : Եթէ վրան վիրահատական գործողութիւններ կատարած անձդ մեռեալ չըլլայ և կենդանի ըլլայ աւելի քիչ կը յուզուիս : Ցաւը անշարժութենէ աւելի կը շարժէ՞ սիրտդ : Գիականերէն աւելի դու՞ ռնին մարմիններուն :

— Ոչ , այդ պակասութիւն մը պիտի ըլլար , ինչպէս որդահաճին համար պակասութիւն մ'է յուզուիլը : Մարդու մ'ազգորդ գէշ կտրելով ալ կ'սպաննուի , ինչպէս գլուխը գէշ կտրելով ալ : Լաւ վիրահատ մը ձեռքովը գործ տեսնելու է և ոչ թէ սրտովը , թէպէտ ինք մտքէն կ'անցընէ թէ այն ցաւը վայրկեան մը չկրելու համար իւր կենաց և առողջութեան քանի մը տարին կու տայ : Մեր արհեստին ազուր կողմը հոն է , տէր :

— Այո՛ , պարոն . սակայն ողջերուն վրայ հոգի կը տեսնէք , կարծեմ :

— Այո՛ , եթէ դուք ալ ինծի պէս կ'ընէք թէ հոգին շարժում մը կամ զգայնութիւնն է . այո , ստուգիւ կը պատահիմ անոր և շատ նեղութիւն կը կրեմ , ինչու որ հոգին իմ կտրոցէս աւելի մարդ կը մեռցնէ :

Օդէլ-Տիէօ հիւանդանոցին շէմն հասած էին : Ներս մտան : Պալսամօ Մարաէն առաջնորդուելով իսկոյն վիրահատական գործողութեան սրահը հասան ուր լեցուեր էին վիրաբուժապետը և աշակերտները :

Հիւանդապահները դեռ նոր երիտասարդ մը բերեր էին հոն՝ որ նախընթաց շաբթուն ծանր կառքի մը ներքև ինկեր և ոտքը ճմլուեր էր : Ցաւէն ընդարմացած անդամին վրայ առաջին վիրաբուժական գործողութիւն մը կատարեր էին՝ սակայն օգուտ չէր ըրեր . ցաւն իս-

կոյն տարածուելով՝ սրունքին կտրուիլը անհրաժեշտ եղեր էր :

Այն եղկելին ցաւոց մահճին վրայ ինկած՝ վազերն 'ի գութ շարժելու սոսկումով մը այն գիշախանձ խումբին կը նայէր՝ որտեք իւր մարտիրոսութեան , թերևս հոգեվարքի վայրկենին կ'սպասէին կենաց գիտութիւնն : ուսնելու համար . զարմանալի երեւոյթ օրուն ետեւ ծածկուած է մահաւան սևադէմ երեւոյթը :

Վիրաւորը կարծես թէ վիրահասաներուն , աշակերտներուն և հիւանդապահներուն իւրաքանչիւրէն միտթարութիւն մը , ժպիտ մը , գգուանք մը կ'սպասէր , բայց ամեն կողմ միայն անտարբերութիւն կը տեսնէր սրտովը և երկաթ՝ աչքովը :

Վրան մնացած քիչ մը քաջութենէն և հպարտութենէն համը կեցեր էր : Բոլոր ուժը կը պահէր այն աղաղակներուն համար՝ զոր ցաւին ատեն սիտի արձակէր :

Սակայն երբ հիւանդապահին հոգածաւ բայց ծանր ձեռքը ուսին վրայ զղաց , երբ օգնական վիրաբոյժներուն թեքըր Լաօզօնի* օձերուն նման իրեն պլլուիլը տեսաւ , երբ վիրահատին ձայնը լսեց որ կ'ըսէր «Սիրտաւ» ողորմելին ջանք մ'ընելով լուսութիւնը խղեց և աղիողորմ ձայնով մը հարցուց ,

— Շատ ցաւ սիտի զղամ ,

— Է՛հ , ոչ , անհոգ եղիր , պատասխանեց Մարա կեղծ ժպիտով

* Լաօզօն , ըստ դիւցարամութեան , որդի Պրիամուսի , քուրմ Սպրոզոնի եւ Պիսիդոնի՝ Տրոյացոց դէմ կեցաւ՝ երբ ուզեցին փայտեայ ձին քաղաքը մոցնել , եւ այն հսկայ արձանին կողք նիզակ մի միսեց ցոյց տալու համար որ ներսը պարսպ է եւ մէջը նեմգութիւն մը կայ . արդարեւ Յոյները մէջը պահուեր էին , սակայն իւր քաղաքակիցները յամառութեամբ մտիկ չըրին իրեն : Աթենաս անոր շանդգնութիւնը պատժեց : Օր մը որ Լաօզօն ցույ մը կը գոհէր Պիսիդոնի , ջրէն երկու օճ ելան , անոր տղոցը վրայ յարձակեցան , Լաօզօնի պլլուեցան երբ նա տղայքը ազատելու կուգար , եւ չարաչար ու երկարատեւ տանջանք պատճառեցին այն ողորմելիները :

Ծ. Թ.

մը՝ որ հիւանդին զգուելի՝ սակայն Պալսամօի հեղնական թուեցաւ :

Մարա տեսաւ որ Պալսամօ իւր ըսածը հասկցեր էր . անոր մօտեցաւ և ցած ձայնով ըսաւ ,

— Կատարուելիք գործողութիւնը սոսկալի է , ըսաւ . ոսկօրն ամեն կողմէն ճաթած է և մատս վրան որ դնեմ անհնարին ցաւ կ'ազդէ : Ձէ թէ վէրքէն՝ այլ ցաւէն պիտի մեռնի , ահա՛ այս ողջ մարդուն համար հոգիին ունեցած օգուտը :

— Ուրեմն ինչո՞ւ գործողութիւն կատարել կ'ուզէք անօր վրայ և չէք թողուր որ հանգիստ մեռնի :

— Ինչու որ վիրաբուժին պարտաւորութիւնն է բժշկելու փորձ փորձելը՝ մինչև անգամ եթէ բոյժն անհնարին թուի իրեն :

— Եւ կ'ըսես թէ շատ ցաւ պիտի զգայ :

— Սոսկալի կերպով :

— Յանցանքը հոգիինն է :

— Յանցանքը հոգիինն է որ չափազանց փափկութեամբ կը վարուի իւր մարմնոյն հետ :

— Ուրեմն ինչո՞ւ գործողութիւնը հոգւոյն վրայ չես կատարեր : Թերևս հոգւոյն հանդարտութեամբը մարմինը կը բժշկուի :

— Ես ալ հիմա այնպէս ըրի . . . , ըսաւ Մարա մինչդեռ վիրաւորը կը կապէին :

— Հոգին պատրաստեցիր :

— Այո՛ :

— Ի՞նչպէս :

— Ինչպէս որ կ'ընեն , խօսքերով : Խօսեցայ հոգւոյն , իմացականութեանը , զգայնութեանը , այն իրին որ յոյն փիլիսոփային ըսել տուաւ , «Ցաւ , դու չարիք մը չես» այն իրին յարմար լեզուն խօսեցայ : Անոր ըսի , «Ցաւ չպիտի զգաս :» Հիմա հոգիին կը մնայ ցաւ չզգալ , այս ալ անոր գիտնալու բանն է : Ահա մինչև հիմա դիտցուած դարմանը : Իսկ հոգւոյ խնդիրներուն գալով՝ անոնք միայն օտուութիւններ են : Ինչո՞ւ այն չարաճճի հոգին մարմնոյն այսչափ կապուած է : Քիչ մ'առաջ երբ սա գլուխը կտրեցի՝ մարմինը բան մը չըսաւ : Սակայն գործողութիւնը բաւական դժուարին էր : Բայց

այս այսպէս է , շարժումը դադրեր էր , զգայնութիւնը մարեր էր , հոգին թուեր էր՝ ինչպէս որ դուք հոգեպաշտօղ կ'ըսէք : Ահա այս պատճառաւ կտրած գլուխս բան մը չըսաւ , ահա այս պատճառաւ գլխատած մարմինս թոյլ տուաւ որ գլխատեմ . մինչդեռ այս մարմինը ուր հոգին կը բնակի տակաւին՝ քիչ մ'եսք ահարկու ազաղակներ պիտի արձակէ : Ականջնիդ լաւ զոցեցէք , տէր : Ականջնիդ զոցեցէք դուք որ կ'զգածուիք հոգիներուն և մարմիններուն այս միութենէն՝ որ միշտ ձեր վարդապետութիւնը պիտի ջնջէ՝ մինչև որ ձեր վարդապետութիւնը կարող ըլլայ հոգին մարմինէն դուրս հանել :

- Կը կարծէք որ երբէք կարելի չ'պիտի ըլլայ այդ :
- Փորձեցէք , ըսաւ Մարա , աղւոր առիթ մ'ունիք :
- Է՛հ , այո , իրաւունք ունիս , ըսաւ Պալսամօ , աղւոր առիթ մ'ունիմ , և պիտի փորձեմ :

- Պիտի փորձէ՞ք :
- Այո՛ :
- Ինչպէս :

— Ձեմ ուզեր որ այս երիտասարդը ցաւ զգայ , սիրտս սիրեց :
— Դուք մեծանուն գլխաւոր մ'էք , ըսաւ Մարա , բայց դուք ոչ Հայր Աստուած էք և ոչ Որդին Աստուած , և չպիտի կրնաք արգիլել որ երիտասարդը ցաւ չզգայ :

- Եւ եթէ ցաւ չզգայ , կը կարծես որ կը բժշկուի :
- Բժշկուիլն աւելի հաւանական կ'ըլլայ՝ բայց ոչ ստոյգ :

Պալսամօ Մարաի վրայ յազթական անբացատրելի ակնարկ մ'արձակեց , և երիտասարդ հիւանդին առջևը կենալով որուն ահաբեկ և սոսկումի տազնայներուն մէջ թաղուած աչերուն պատահեցաւ :

— Քնացիր , ըսաւ ոչ միայն բերնովը՝ այլ և նայուածքովը , կամքովը , իւր արեան բոլոր ջերմութեամբը , իւր մարմնոյն բոլոր հոսանուտովը :

Այս միջոցին վիրաբուժապետը կ'սկսէր վիրաւոր ազդրը շօշափել և վէրքին սաստկութիւնը ցոյց տալ :

Բայց Պալսամօի այս հրամանին վրայ , երիտասարդը որ նստած տեղը վեր ելեր էր՝ օգնականներուն բազկացը մէջ պահ մը տատանեցաւ , դուրսը ծռեցաւ , աչերը գոցուեցան :

Generated on 2016-09-08 08:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Գէշնալու վրայ է, ըսաւ Մարա :

— Ոչ, պարոն :

— Բայց չէք տեսներ որ զգայնութիւնը կը կորսնցընէ :

— Ոչ, կը քնանայ :

— Ի՞նչ, կը քնանայ :

— Այո՛ :

Ամենքն ալ գլուխնին այն տարօրինակ բժշկին կողմը դարձուցին
և զինքը յիմար կարծեցին :

Գժուարահաւան ժպիտ մ'անցաւ Մարաի շրթերէն :

— Միթէ սովորաբար կը խօսի մէկը երբ մարի, հարցուց Պալ-
սամօ :

— Ոչ :

— Լաւ ուրեմն, հարցուր և պիտի պատասխանէ :

— Է՛, երիտասարդ, գոչեց Մարա :

— Ո՛հ, այդչափ բարձր գոչելու պէտք չունիս, ըսաւ Պալսամօ :
սովորական ձայնովդ խօսէ :

— Ըսէ նայինք ի՞նչ ունիս :

— Քնանալ հրամայեցին ինձ և կը քնանամ, պատասխանեց վի-
րաւորը :

Չայնը լիովին հանդարտ էր և տարօրինակ հակասութիւն մը կը
կազմէր քիչ մ'առաջ լսուած ձայնին հետ :

Բոլոր ներկայ եղողները իրարու նայեցան :

— Հիմա, ըսաւ Պալսամօ, քակեցէք կապերը :

— Անկարելի է, ըսաւ վիրաբուժապետը, շարժում մ'որ ընէ
դորձողութիւնն 'ի դերև կ'ենէն :

— Չպիտի շարժի :

— Ո՛վ կը վստահացնէ զիս :

— Ես, և յետոյ նա : Իրեն հարցուցէք :

— Կրնանք քեզ ազատ թողուլ, բարեկամ :

— Կրնաք :

— Կը խոստանան որ չշարժիս :

— Կը խոստանամ եթէ ինձ հրամայէք :

— Կը հրամայեմ :

— Իրաւ որ , ըսաւ վիրաբուժապետը , այնպիսի ապահովութեամբ մը կը խօսիք որ փորձը պիտի ընեմ :

— Ըրէք և բանէ մը մի վախնաք :

— Քակեցէք , ըսաւ վիրաբուժապետը :

Օգնականները հնազանդեցան :

Պալսամօ վիրաւորին սնարն անցաւ :

— Այս վայրկենէս , ըսաւ , մինչև որ չհրամայեմ չըլլայ որ շարժիս :

Գերեզմանի մը վրայ պառկած արձան մը աւելի անշարժ չէր կրնար ըլլալ՝ ինչպէս որ վիրաւորն եղաւ այս պատուէրին վրայ :

— Հիմա գործողութիւնն սկսեցէք , պարոն . ըսաւ Պալսամօ , վիրաւորը լիովին տրամադիր է :

Վիրահատը իւր կտրոցը առաւ , բայց կտրելու ատեն վարանեցաւ :

— Կտրեցէք , պարոն , կտրեցէք , կ'ըսեմ ձեզի , ըսաւ Պալսամօ ներշնչեալ մարդարէի մը դէմքով :

Սա ևս Մարաի նման , վիրաւորին նման , ամենուն նման Պալսամօի ազդեցութեան ներքե՛լ պողպատը մսին մօտեցուց :

Միսը կռնչեց՝ բայց վիրաւորը հառաչ մը չհանեց , շարժում մը չըրաւ :

— Ո՛ր երկրէն ես , բարեկամ , հարցուց Պալսամօ :

— Բրիտանիացի եմ , պարոն , սյատասխանեց վիրաւորը ժպտելով :

— Ար սիրե՞ս երկիրդ :

— Ո՛հ , պարոն , որչափ դեղեցիկ է :

Այս միջոցին վիրահատը կ'սկսէր շուրջանակի կտրել միսերը , որով ոսկորը կ'սկսի երևան ելնել :

— Երկիրէդ բաժնուած ատենդ փոքր էիր , հարցուց Պալսամօ :

— Տասն տարու էի , պարոն :

Միսերը կտրուեցր էին . վիրահատը սղոցը ոսկորին կը մօտեցնէր :

— Բարեկամ , ըսաւ Պալսամօ , երգէ ինչ այն երգը՝ զոր Պածի աղագործները երեկոյին տուն դառնալու ատեննին կ'երգեն : Միայն մէկ տողը միտքս է ,

Փրփրադէզ իմ աղիս :

Սղոցը ոսկորը կը կրծէր :

Բայց Պալսամօի հրաւերին վրայ՝ վիրաւորը ժպտեցաւ և սկսաւ
երգել զեղգեղելով, ծանր, այլ յայլմէ եղած՝ սիրահարի մը կամ
բանաստեղծի մը պէս :

Փրփրադէզ իմ աղիս ,
Կապուտակ իմ լճիս ,
Ծխաշունչ իմ փուռիս ,
Մեղրոտ թուխ ցորենիս :

Կնոջս , ծեր հօրս ,
Սիրասուն տղոցս .
Ի ներքոյ մոշենեաց՝
Խեղճ մօրս դամբանին :

Ողջոյն , օրն իրիկուն ,
Եւ ես ահա ՚ի տուն .
Խինդ՝ աշխաասանքէ ետք ,
Սէր՝ վերադարձէ ետք :

Սրունքը անկողնին վրայ ինկաւ և վիրաւորը տակաւին կ'երգէր ձ

ՃՁ

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

Ամենքն ալ վարմանաւով վիրաւորին՝ և հիանաւով բժշկին կը
նայէին :

Անոնցմէ ոմանք ըսին թէ երկուքն ալ յիմար են :

Մարտ Պալսամօին ականջն 'ի վար այս կարծիքը հաղորդեց :

— Իսեղճ մարդը սոսկումէն խելքը կորուսած է , ահա այս պատճառաւ ցաւ չղար :

— Ձեմ կարծեր , ըսաւ Պալսամօ , և խելքը չկորսնցնելէն զատ՝ վտառահեմ որ եթէ իրեն հարցնեմ՝ մեզի պիտի ըսէ մեռնելու օրը՝ եթէ պիտի մեռնի , ապաքինութեան տեղութիւնը եթէ պիտի ապրի :

Գրեթէ Մարտ ալ ընդհանուրին կարծիքէն եղաւ , այսինքն կարծեց թէ Պալսամօ ևս վիրաւորին նման յիմար է :

Սակայն վիրաբոյժը շտապաւ կը կապէր շնչերակները՝ որոցմէ արիւն կը հոսէր ուղիսօրէն :

Պալսամօ գրպանէն շիշ մը հանեց , անոր մէջի ջրէն քանի մը կաթիլ կաթեցուց բարձի ձեռով շինուած պրօնին վրայ և վիրաբուժապետին աղաչեց որ այն պրօնը շնչերակներուն վրայ դնէ :

Սա տեսակ մը հետաքրքրութեամբ հնազանդեցաւ :

Այն ատենի ամենէն երեւելի գործական բժիշկներէն մին էր , գիտութեան ճշմարիտ սիրահար անձ մը՝ որ անոր գաղտնիքներէն և ոչ մին չէր ուրանար , և դիպուածը կասկածէն աւելի նախամեծար կը համարէր :

Պրօնէ բարձիկը շնչերակին վրայ գրաւ . շնչերակը սարսուեցաւ , եռաց և սկսաւ արիւնը կաթիլ կաթիլ դուրս տալ :

Այն ատեն վիրաբուժապետը շատ դիւրութեամբ կարող եղաւ շնչերակը կապելու :

Այս անգամ Պալսամօ ճշմարիտ յաղթանակ մը տարաւ , և ամենքն ալ հարցուցին թէ ո՞ր ուտեր էր և ո՞ր դպրոցէն էր :

— Կէօդիինկի դպրոցէն ելած Ալմանիացի բժիշկ մ'եմ , ըսաւ , և այս տեսած գիւտերնիդ ես ըրի : Սակայն , պարոններ և սիրելի պաշտօնակիցներ , ես կը բաղձամ որ այս գիւտը տակաւին գաղտնի մնայ՝ ինչու որ շատ կը վախնամ խարոյկէն , և Բարիզի խորհրդարանը թերևս կամի դատ մ'ալ մտիկ ընել՝ կախարդ մը հրոյ դատապարտելու զուարճութիւնն ունենալու համար :

Վիրաբուժապետը մտախոհ կեցեր էր :

Մտաբանով կ'երազէր :

Սակայն ամենէն առաջ ինք խզեց լուծիւնը :

— Բիշ մ'առաջ կը սնդէիք թէ, ըսաւ, եթէ այս մարդուն վրայ կատարուած վիրահատական գործողութեան արդիւնքն հարցընէք իրեն՝ ըլլալիքին պէս կը պատասխանէ՝ թէ և այն արդիւնքը ապագային մէջ ծածկուած ըլլայ :

— Նոյնը դարձեալ կը պնդեմ, ըսաւ Պալսամո :

— Ուրեմն տեսնենք :

— Ինչ է այս խեղճին անունը :

— Հավար է, պատասխանեց Մտա :

Պալսամո վիրաւորին կողմը դարձաւ որուն բերանը տակաւին կը մըմնջէր սրտաշարժ նադարաթին վերջին նուազները :

— Է՛, բարեկամ, ըսաւ անոր, այն խեղճ Հավարին վիճակին համար ինչ կը գուշակես :

— Իւր վիճակին համար ինչ կը գուշակեմ : Ահեղէք, պէտք է որ Բրիտանիան դառնամ՝ ուր կը գտնուի, և Օդէլ-Տիէօ հիւանդանոցը դամ՝ ուր նա կը գտնուի :

— Այնպէս է, ներս մտիր, նայէ անոր, և անոր ճշմարիտ վիճակը զիտցուր ինձ :

— Ո՛հ, հիւանդ է, շատ հիւանդ, սրունքը կտրեր են :

— Իրա՛ւ, ըսաւ Պալսամո :

— Այո՛ :

— Վիրահատական գործողութիւնը յաջողե՞ր է :

— Շատ աղէկ յաջողեր է, բայց . . .

Հիւանդին գէմքը տխրեցաւ :

— Բայց . . . կրկնեց Պալսամո :

— Բայց անհնարին փորձութիւն մը կայ յաղթելու, այն է տենդը :

— Ժամը քանիին պիտի պատահի :

— Այս իրիկուն ժամը եօթին :

Բոլոր ներկայ եղողները իրարու նայեցան :

— Եւ այս տե՛նդը, հարցուց Պալսամո :

— Ո՛հ, շատ հիւանդ պիտի ընէ զինքը. սակայն այս առաջին ճգնաժամին պիտի յաղթէ :

Generated on 2016-09-08 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

- Հաւաստի՛ ես :
- Ո՛հ , այո :
- Բայց այն առաջին ճգնաժամէն ետք պիտի ազատի՞ :
- Աւա՛ղ , ոչ , ըսաւ վիրաւորը հառաչելով :
- Տենդը վերստին պիտի գայ :
- Ո՛հ , այո , և անհնարին զօրութեամբ : Խեղճ Հավար , շնորայարեց , խեղճ Հավար , կին մը և երկու զաւակներ ունի : Եւ աչերը արտասուօք լեցուեցան :
- Կինը այրի՛ պիտի ըլլայ և տղայքը ո՞րք պիտի մնան , հարցուց Պալսամօ :
- Կեցէք , կեցէք :
- Ձեռներն իրար կցեց :
- Ոչ , ոչ , ըսաւ :
- Դէմքը վսեմ հաւատքով մը լուսաւորուեցաւ :
- Ոչ , կինը և տղայքը այնքան աղօթեցին անոր համար առ Աստուած՝ որ զան իրենց շնորհեց :
- Ուրեմն պիտի բժշկուի՞ :
- Այո՛ :
- Կը լսէք , պարոններ , ըսաւ Պալսամօ , պիտի բժշկուի :
- Հարցուցէք թէ քանի՞ օրէն , ըսաւ Մարա :
- Քանի՞ օրէն :
- Այո , դուք ըսիք որ նոյն իսկ ինքը պիտի իմացընէ իւր ապաքինութեան փոփոխութիւնները և տեղութիւնը :
- Ես ալ շատ կ'ուզեմ այդ հարցընել :
- Ուրեմն հարցուցէք :
- Եւ երբ կը կարծէք որ Հավար պիտի բժշկուի , հարցուց Պալսամօ :
- Ո՛հ , ապաքինութիւնը երկար պիտի տևէ , կեցէք . ամիս մը , վեց շաբաթ , երկու ամիս . հոս դալը հինգ օր է , հոս դալէն երկու ամիս և տասն և հինգ օր ետքը դուրս պիտի ելնէ :
- Բժշկուած դուրս պիտի ելնէ :
- Այո՛ :
- Սակայն , ըսաւ Մարա , աշխատելու և հետևաբար իւր կիներ և որդիքը սլահելու անկարող :

— Ո՛հ, Աստուած բարի է, և Աստուած պիտի հոգայ :

— Եւ Աստուած ինչպէս պիտի հոգայ, հարցուց Մարա : Քանի որ այսօր ունեւելու վրայ եմ՝ կ'ուզեմ այդ ալ գիտնալ :

— Աստուած անոր անկողնին քով ողորմած մարդ մը ուղարկեց որ իւր վրայ զթաց և մտքէն ըսաւ, «կ'ուզեմ որ խեղճ Հավարին բան մը պակաս չըլլայ :»

Բոլոր ներկայ եղողները իրարու նայեցան . Պալսամօ ժպտեցաւ :

— Յիրաւի եզական տեսարանի մը ներկայ կը գտնուինք, ըսաւ վիրաբուժապետը, և այս միջոցին հիւանդին ձեռքը կը բռնէր, կուրծքը մտիկ կ'ընէր և ճակատը կը շօշափէր . այս մարդը երազի մէջ է :

— Այնպէս կը կարծէք, ըսաւ Պալսամօ :

Եւ իշխող ու հաստատուն ակնարկ մ'արձակելով վիրաւորին՝

— Արթնցիւր, Հավար, ըսաւ անոր :

Երիտառարդը ճիգով աչքերը բացաւ և սաստիկ զարմանքով ներկայ եղողներուն նայեցաւ՝ որոնք թէև առաջ սպառնալից՝ օակայն այն ատեն անմնաս եղեր էին իրեն համար :

— Լաւ ուրեմն, ըսաւ ցաւադին, դեռ գործողութիւնը չե՛ն կատարեր, նորէն ցաւե՛ր պիտի զգամ :

Պալսամօ աշխուժիւ բերանը բացաւ : Հիւանդին յուզմունքէն կը վախնար : Շտապելու հարկ չկար :

Ոչ ոք անորմէ առաջ պիտի խօսէր . ներկայ եղողներուն զարմանքը չափազանց էր :

— Բարեկամ, ըսաւ անոր, հանդարտէ . Պ. վիրաբուժապետը քու սրունքիդ վրայ այնպիսի գործողութիւն մը կատարեց որ քու վիճակիդ բոլոր պահանջմանցը յարմար է : Բայց կ'երեւի թէ, խեղճ տղայ, քիչ մը դիմացկոտ չես, ինչու որ առաջին հարուածին մարեցար :

— Ո՛հ, աւելի աղէկ, ըսաւ Բրիտանիացին : Բան մը չզգացի . քունս ալ անուշ և կազդուրիչ եղաւ : Ի՛նչ երջանկութիւն . ոսրքս չպիտի կտրեն :

Բայց նոյն միջոցին ողորմելին աչքը իւր վրայ վարձուց . տեսաւ որ մահիճը արիւնով լի է և սրունքը կտրուած է :

Աղաղակ մ'արձակեց, և այս անգամ իրօք մարեցաւ :

— Հիմա հարցուր, պաղութեամբ ըսաւ Պալսամօ Մարաի, և տես թէ կը պատասխանէ՞ :

Յետոյ, վիրաբուժապետը սենեկին մէկ անկիւնը տանելով, մինչ-դեռ հիւանդապահները խեղճ երիտասարդը դարձեալ անկողին վրայ կը դնէին,

— Պարոն, ըսաւ Պալսամօ, խեղճ հիւանդին ըսածը լսեցի՞ք :

— Այո, պարոն, ըսաւ որ պիտի բժշկուի :

— Ուրիշ քան մ'ալ ըսաւ. ըսաւ թէ Սստուած իրեն պիտի ուղորմի, և իւր կնոջը ու տղոցը ապրուստ պիտի տայ :

— Այնպէս ըսաւ :

— Եւ ճշմարտութիւնն ըսաւ թէ այս կէտին և թէ միւս կէտին վրայ. ուստի դուք յանձն առէք ողորմածութեան միջնորդ մ'ըլլալ ձեր հիւանդին և Սստուծոյ մէջ տեղ. սա աղամանդը քսան հազար Ֆրանքի չափ կ'արժէ. երբ հիւանդը բժշկուի՝ աղամանդը կը ծախէք և դրամը անոր կու տաք. իսկ հիմա, որովհետև հոգին, ինչպէս որ Պ. Մարա ձեր աշակերտը շատ իմաստութեամբ կ'ըսէր, որովհետև հոգին մեծ ազդեցութիւն մ'ունի մարմնոյն վրայ՝ չմոռնաք ըսելու Հավարին՝ խելքը գլուխը գալուն պէս՝ թէ իւր և իւր զաւակաց ապագան ապահովեալ է :

— Բայց, պարոն, ըսաւ վիրաբոյժը Պալսամօի տուած մատնին առնելու վարանելով, եթէ չբժշկուի :

— Պիտի բժշկուի :

— Նաև պէտք է որ ստացագիր մը տամ ձեզի :

— Պարոն . . .

— Այս պայմանաւ միայն կրնամ ընդունիլ այդքան մեծագին գոհար մը :

— Ուզածնուդ պէս ըրէք, պարոն :

— Ար հաճի՞ք ինձ ըսելու անուննիդ :

— Տը Ֆէնիքս կոմս :

Վիրաբոյժը քովի սենեակը անցաւ, մինչդեռ Մարա չքացած, ամօթահար, բայց տակաւին յայտնի ճշմարտութեան դէմ մաքառելով Պալսամօի կը մօտենար :

Հինգ վայրկեան ետք, վիրաբոյժը ներս մտաւ ձեռքը թուղթ մը՝
զոր Պալսամօի տուաւ :

Ստացազիրն այսպէս գրուած էր :

« Պ. տը ֆէնիքս կոմսէն աղամանդ մ'ստացայ՝ իւր ըսածին նա-
յելով քսան հազար ֆրանքի արժողութեամբ, որպէս զի անոր
գինը Հավար անուն հիւանդին տրուի՝ Օդէլ-Տիէօ հիւանդանոցէն ե-
լած օրը : »

« ԿԻԼԼՕԴԷՆ, Տ. Մ. »

« 15 սեպտեմբեր 1771. »

Պալսամօ բժիշկը բարևեց, ստացազիրն առաւ դուրս ելաւ, Մա-
րա ալ ետևէն :

— Գլուխը կը մոռնաս, ըսաւ Պալսամօ՝ որուն համար յաղթա-
նակ մ'էր վիրաբուժութեան աշակերտին սոյն մոռացկոտութիւնը :

— Ա՛հ, ճշմարիտ է, ըսաւ Մարա :

Եւ իւր սգատեսիլ բեռը վերցուց :

Անգամ մ'որ փողոցը իջան՝ երկուքն ալ շատ շուտ քայլեցին ա-
ռանց իրարու խօսք մ'ընելու . յետոյ, Գօրտըլիէ փողոցը հասնե-
լով վերնայարկն առաջնորդող ցից սանդուխէն վեր ելան միասին :

Գունապանուհւոյն օթեակին առջև, եթէ արժանի է օթեակ ա-
նուանել անոր բնակած ծակը, Մարա որ իւր ժամացուցին անյայտ
ըլլալը չէր մոռցեր՝ կայ առաւ և Կրիվէդ խաթունը հարցուց :

Եօթնէն ցութ տարեկան նիհար, տկար և գունատ տղայ մը իւր սուր
ձայնովը պատասխանեց,

— Մայրիկս դուրս ելաւ . ըսաւ որ, եթէ պարոնը գայ՝ այս նա-
մակը իրեն տան :

— Զէ, տղաս, ըսաւ Մարա, իրեն ըսէ որ ինքը բերէ նամակը :

— Լաւ, պարոն :

Մարա և Պալսամօ ճամբանին շարունակեր էին :

— Ա՛հ, ըսաւ Մարա աթոռ մը ցոյց տալով Պալսամօի և ինքն
ալ աթոռակի մը վրայ իյնալով, կը տեսնեմ որ գեղեցիկ գաղտ-
նիքներ ունիք :

— Սա կայ որ թերևս ուրիշէ մ'առաջ խելամուտ եղեր եմ բնու-
թեան և Աստուծոյ գաղտնեաց, պատասխանեց Պալսամօ :

— Ո՛հ, գոչեց Մարա, ի՛նչպէս գիտութիւնը մարդուս ամենակարողութիւնը կ'ապացուցանէ, և մարդո մարդ եղած ըլլալուն վրայ ո՛րքան փքանալու է :

— Ճշմարիտ է . և բժիշկ, պարտ էիր յաւելուլ :

— Ուստի ձեզ ինձ պարծանք մը կը համարիմ, տէր :

— Եւ սակայն, պատասխանեց Պալսամօ ժպտելով, օղորմելի բժիշկ մ'եմ հոգւոց :

— Ո՛հ, ասոր վրայ չխօսինք, պարոն, քանի որ դուք նիւթական միջոցներով վիրաւորին արիւնը դադրեցուցիք :

— Ես կը կարծէի որ կատարած բժշկութեանս ամենէն աղւոր կողմը՝ անոր ցաւ չզգացընել էր . թէև դու հաւաստեցիր թէ յի մար է :

— Ստուգիւ պահ մը եղաւ :

— Ի՛նչ է յիմարութիւնը : Հոգւոյ մէկ անջատումը չէ՞ :

— Այամ մտաց, ըսաւ Մարա :

— Մեր վիճարանութիւնը անոր վրայ չէ . իմ փնտուած բանիս անունին հոգի կ'ըսեմ, Անգամ մ'որ փնտուածը գտնուի . փոյթս չէ, ինչպէս որ կ'ուզես այնպէս անուանէ զայն :

— Ահա մեր կարծիքը ուր կը տարբերի, պարոն . դուք կը պնդէք թէ իրը գտած էք և անոնը չէք փնտուեր, իսկ ես կ'ըսեմ թէ դուք թէ բաւր և թէ իրը միասին կը փնտուէք :

— Քիչ մը ետքը այդ խօսքը կ'ընենք : Դու կ'ըսէիր թէ յիմարութիւնը մտաց վայրկենական մէկ անջատումն է :

— Ստուգիւ :

— Ակամայ, այնպէս չէ՞ :

— Այո . . . : Պիսեղրի մէջ յիմար մը տեսայ որ երկաթէ ձողերը խածնելով կը գոչէր, «Խոհարար, փասխաններդ փափուկ են, բայց աղէկ համեմուած չեն» :

— Բայց դու կը կարծես որ այդ յիմարութիւնը ամպի մը պէս մտաց վրայէն կ'անցնի, և ամպը անցնելէն ետքը միտքը իւր առաջին յստակութիւնը կ'ստանայ :

— Այդ գրեթէ բնաւ չպատահիր :

— Սակայն դու շատ խելացի տեսար մեր վիրաւորը իւր յիմարի քունէն ետք :

— Տեսայ . բայց տեսածս բնաւ չհասկըցայ . բացառութիւն մ'է ,
այն տարօրինակ դէպքերէն մին զոր հրաշք կը կոչէին Եբրայեցիք :

— Ոչ , պարոն , ըսաւ Պալսամօ . միայն հոգւոյն անջատումն է ,
նիւթին և հոգիին բաժանումը . նիւթին՝ որ անշարժ իր մ'է , որ
փոշի պիտի դառնայ . հոգւոյն որ երկնային կայծ մ'է՝ պահ մը
փակուած այն մուայլ լրպտերին մէջ որ մարմին կը կոչուի , և
դուստր երկնից՝ մարմնոյ անկումէն ետք երկինք պիտի վերադառնայ :

— Ուրեմն գուք առժամանակեայ կերպով հոգին մարմինէն դուրս
հանեցիք :

— Այո , պարոն , անոր հրամայեցի որ գանուած այն ողորմելի
տեղը թողու . դուրս հանեցի զայն վշտերուն անդունդէն , ուր ցա-
ւը զայն բռնած կեցեր էր , որպէս զի աւելի ազատ և աւելի
մաքուր վերնագաւառներու մէջ ուղևորել տամ զայն : Ի՞նչ մնաց
վիրաբոյժին : Ոչ այլ ինչ , այլ միայն այն որ մնաց քու կտրոցիդ՝
մեռած կնկան գլուխը կտրած ատենդ որ ձեռքդ է , միայն անշարժ
միտ , նիւթ , կա :

— Եւ յանուն որո՞ւ ուզածնիդ ըրիք այն հոգւոյն :

— Յանուն երկնից որ մէկ շնչով մը բոլոր հոգիներն ստեղծած
է . աշխարհերու հոգիներ , մարդոց հոգիներ , յանուն Աստուծոյ :

— Ուրեմն , ըսաւ Մարա , դուք կ'ուրանա՞ք անձնիշխան կամքը :

— Ե՛ս , ըսաւ Պալսամօ : Ուրեմն ի՞նչ է ըրածս այս պահուս .
ընդհակառակը : Մէկ կողմէն ցոյց կու տամ քեզի անձնիշխան կամքը ,
միւս կողմէն անջատումը : Աչացդ տուչե դրի ցաւոց ներքով ճնշուող
հոգեվար մը . այն մարդը բոլորովին Ստոյիկեան հոգւով մը . վի-
րահատական գործողութիւնը փութացնել կ'ուզէ , կը խնդրէ որ
զայն կատարեն , կը հանդուրժէ՝ սակայն ցաւ կ'զգայ : Ահա այս
անձնիշխան կամքն է : Բայց ես հոգեվարին կը մօտենամ , ես Աս-
տուածառաք մարգարէս , առաքեալս , և մինչդեռ այն մարդուն վրայ
զթալով որ նման է , բարձրելոյն ինձ տուած իշխանութեամբ դուրս
կը հանեմ անոր հոգին մարմինէն որ ցաւ կ'զգայ , այս կոյր , ան-
շարժ , անզգայ մարմինը հոգւոյն համար տեսարան մը կ'ըլլայ՝ զոր
բարեպաշտութեամբ և զթութեամբ կը նկատէ հոգին իւր վճիտ գուն-
աին վերեւէն : Հավար , — Միթէ չլսեցիր — Հավար , իւր վրայ խօ-

սած ատեն կ'ըսէր : «Ինեղձ Հավար» : Ես չէր ըսեր : Ինչու որ այն հոգին իրօք գործ մը չունէր մարմնոյն հետ , այն հոգին որ երկնից կէս ճամբան կը գտնուէր :

— Բայց այդ հաշուով , ալ մարդս ոչինչ է , ըսաւ Մարա , և այլ ևս չեմ կրնար բռնակալներուն ըսել , «Դուք իմ մարմնոյս վրայ իշխանութիւն կրնաք բանեցընել՝ բայց հողոյս բան մը չէք կրնար ընել :»

— Ա՛հ , ահաւասիկ ճշմարտութենէ իմաստակութեան կ'անցնիս . պարոն , քեզի ըսած եմ որ քու պակասութիւնդ այս է : Ճշմարիտ որ Աստուած մարմնոյն հոգի կու տայ , սակայն նուազ ճշմարիտ է չէ նաև որ հողոյն այն մարմինը կրած բոլոր ատենը , անոնց մէջ միութիւն մը կայ . իրարու վրայ ներգործութիւն մը , իրարու վրայ գլխաւորութիւն մը , ալ ինչպէս որ Աստուած , մեզի անծանօթ նպատակներով , հրամայած է որ մարմինը թաղաւոր և հոգին թաղուհի ըլլայ : սակայն նուազ ճշմարիտ չէ նաև թէ մուրացկանին կենդանութիւն տուող շունչը թաղաւորին մահ տուող շունչին չափ անբիծ է : Ահա այն վարդապետութիւնը զոր պարտիս քարոզել , դու , հաւասարութեան առաքեալդ : Երկու հոգևոր էութեանց հաւասարութիւնը հաստատ է , ինչու որ այն հաւասարութիւնը կրնաս ապացուցանել աշխարհիս մէջ գտնուած ամենէն սրբազան բաներով , սուրբ գիրքով , աւանդութիւններով , զիտութեամբ , հաւատքով : Երկու նիւթերուն հաւասարութիւնը քեզի ինչ կը վերաբերի . մարմնոց հաւասարութեամբը Աստուծոյ առջև չես թուչիր : Քիչ մ'առաջ , այն խեղճ վիրաւորը , այն ժողովրդեան տգէտ զաւակը , իւր ցաւին նկատմամբ ձեզի այնպիսի բաներ ըսաւ զոր բժիշկներէն և ոչ մին չպիտի համարձակէր ըսելու : Ինչպէս ըսաւ նա : Որովհետև անոր հոգին , առժամանակեայ կերպով մարմնոյն կապերէն զատուելով՝ երկրիս վերևը սաւառնեցաւ և բարձրէն տեսաւ զաղտնիք մը՝ զոր մենէ կը ծածկէ մեր մտաց անհասութիւնը :

Մարա սեղանին վրայ ասոցին անդին կը դարձնէր մեռելի կտրած գլուխը՝ ի զուր փնտուելով պատասխան մը :

— Այո՛ , միմնջեց վերջապէս , այո , ասոր ներքև գերբնական բան մը կայ :

— Ընդհակառակը՝ քնական, պարոն, դադրեցէք զերբնական կոչելէ՝ ինչ որ հոգւոյ սահմանուած պաշտօններուն կը վերաբերի ։ Բնական են այն պաշտօնները, եթէ ծանօթ ըսուի՝ այն ուրիշ ։

— Տէր, այն պաշտօնները մեզի անծանօթ՝ ձեզի համար անշուշտ գաղտնիք չեն ։ Ձին՝ որ անծանօթ էր Բէրուցւոց, ընտանի էր Սպանիացւոց՝ որոնք զայն նուաճած էին ։

— Հպարտութիւն մ'ըրած կ'ըլլայի՝ եթէ ըսէի՝ «Գիտեմ» ։ Ես աւելի խոնարհ եմ, պարոն, և կ'ըսեմ՝ «Ար հաւատամ» ։

— Լաւ, ինչի կը հաւատաք ։

— Ար հաւատամ թէ աշխարհիս օրէնքը, առաջին, ամենէն զօրաւոր օրէնքը՝ յառաջադիմութեան օրէնքն է ։ Ար հաւատամ թէ Աստուած ամեն բան բարեկեցութեան կամ բարոյականութեան նպատակաւ մը ստեղծած է ։ Միայն թէ, որովհետև այս աշխարհիս տեղութիւնը անհաշիւ և անհաշուելի է՝ յառաջադիմութիւնը ծանր կը քայլէ ։ Մեր մոլորակը, ըստ Գրոց, վաթսուն դարէ ետք տպագրութիւն ունեցաւ՝ որ իբր մի մեծ փարոս եկաւ ցոլացընել անցեալը և լուսաւորել ապագան. քանի որ տպագրութիւն կայ՝ այլ ևս մութ և մոռացում չկայ. տպագրութիւնը բոլոր աշխարհին յիշողութիւնն է ։ Աիւզեմպէրկ տպագրութիւնն հնարեց և յոյսը վերածնաւ յիս ։

— Ա՛հ, ըսաւ Մարա հեղնօրէն, թերևս մինչև անգամ սրտերը պիտի կարդաք ։

— Ինչո՞ւ չէ ։

— Ուրեմն մարդուս կուրծքին վրայ այն փոքրիկ պատուհանը բանալ պիտի տաք՝ զոր նախնիք այնքան կ'ուզէին ։

— Անոր հարկ չկայ, պարոն. հոգին մարմինէն կ'անջատեմ, և հոգին, դուստր անրիծ, անարատ դուստր Աստուծոյ՝ ինձ պիտի ըսէ այն մահկանացու պատենին բոլոր զարշելի գործերը, որուն կեանք պարգևելու դատապարտուած է ։

— Նիւթական զաղսնիքներ ալ երևան պիտի հանէք ։

— Ինչո՞ւ չէ ։

— Ինձ պիտի կարենա՞ք ըսել, օրինակի համար, թէ ո՞վ է ժամացոյցս գողցողը ։

— Գիտութիւնը շատ ստորին տեղ մը կ'իջեցնես, պարոն : Բայց փոյթ չէ . Աստուծոյ մեծութիւնը աւագին հատով ալ, լեռնով ալ, մուկով ալ փիղով ալ կ'ապացուցուի : Այո, պիտի ըսեմ քեզ ժամացոյցդ գողցողը :

Նոյն միջոցին մէկը երկչոտ կերպով մը դրանը զարկաւ :

Մարայի սպասաւորող կինն որ վերադարձած ըլլալով նամակն ինք կը բերէր :



ՃԷ

ՄԱՐԻ ԳԻՆԱԳԱՆՈՒՀԻՆ

Գուռը բացուեցաւ և Արիվէգ խաթունը ներս մտաւ :

Այս կինը՝ զոր ստուերադրելու պատեհ առիթ մը չունեցանք, ինչու որ այն դէմքերէն մին կը կրէր՝ զոր պատկերահանը ամենէն ետքի կը թողու քանի որ պէտք չունի անոր, այս կինը այժմ յառաջ կու գայ սոյն պատմութեան շարժուն պատկերին մէջ, և կ'ուզէ որ իրեն տեղ տրուի այն անհուն համատեսարանին մէջ՝ զոր մեր ընթերցողներուն աչաց առջև պարզելու ձեռնարկեցինք . համատեսարան՝ որուն մէջ պիտի պատկերէինք, եթէ մեր հանձարը մեր կամաց հաւասարէր, մուրացկանէն սկսելով մինչև թագաւորը, Գալիպանէն* սկսելով մինչև Արիէլ†, Արիէլէն սկսելով մինչև Աստուած :

Ուստի պիտի ջանանք այժմ ծրագրել Արիվէգ խաթունը որ իւր անծանօթ վիճակը մերկանալով դէպ առ մեզ կը յառաջանայ :

* Էքսուիական վէպերուն մէջ տեսակ մը մուրացիկ :

† Արարիոյ մէջ չորքոտանի մը՝ վթի մը մեծութեամբ :

Ծ. Թ.

Երեսունէն երեսուներկու տարեկան երկայնահասակ և նիհար կին մ'էր, գեղնագոյն, սևածիր կապոյտ աչերով, ծիւրութեան սոսկալի տիպար մը որով կը տառապին քաղաքի մէջ, թշուառութեամբ, շնչազիրկ, և Ֆիզիոլոգիական ու բարոյական ապականութիւններով այն էակները զոր Աստուած գեղեցիկ ստեղծած է, և որոնք կարի հրաշագեղ պիտի ըլլային իրենց ամբողջ զարգացման մէջ, ինչպէս որ են այսպիսի պարագայի մը մէջ՝ օդին մէջ, երկնից մէջ և երկրիս վրայ գտնուող էակները՝ եթէ մարդս անոնց կեանքը երկարատև տանջանքի մը վերածած չէ, այսինքն եթէ անոնց ոտքը կապով մը և անոնց ստամոքսը քաղցով յոգնեցուցած չէ, կամ բնաւ սնունդ չտրուածին չափ փնասակար սնունդով մը :

Այսպէս ալ Մարտի դռնապանուհին գեղեցիկ կին մը պիտի ըլլար՝ եթէ տասնևհինգ տարեկան հասակէն օդէ և լոյսէ զուրկ խրճիթ մը չբնակէր, իւր բնական զգացմանց հուրը՝ հրոյն տաքութենէն կամ քամիէ մը արծարծուելով անդուլ և չափով վառէր : Երկայն և նիհար ձեռներ ունէր՝ որոնք ակօսուած էին կարած կարերուն թելէն կտրուելով, լուացարանի աճառօտ ջուրէն ճաթուտած և թուլցած էին, խոհանոցին կրակէն խորոված և կաշի կապած էին. բոլոր ասոնց չնայելով, այնպիսի ձեռներ ունէր, ձեռն կը տեսնուէր, այսինքն չքնաղ դնդերին անջինջ հետքէն՝ այնպիսի ձեռներ՝ զոր արքայական պիտի անուանէինք՝ եթէ ձեռքին ուռեցքը փոխանակ աւելին կոթէն եղած ըլլալու՝ արքունի դաւաղանէն ըլլար :

Շատ ճշմարիտ է որ մարդու այս խեղճ մարմինը մեր արհեստին մէկ ազդարարն է :

Այն կնոջ մէջ, միտքը, մարմինէն դերագոյն, և հետևաբար անկէ աւելի գիմացած ըլլալով, կանդեղի մը պէս կը հսկէր, դողցիս պայծառ ցոլացմամբ մը մարմինը կը լուսաւորէր, և մերթ անոր ապուշ և նուաղեալ աչերուն վրայ իմացականութեան, գեղեցիկութեան, երիտասարդութեան, սիրոյ, վերջապէս մարդկային բընութեան բոլոր պատուական բաներուն մէկ նշոյլը կ'երևէր :

Պալսամօ երկայն ատեն այն կնոջ նայեցաւ, և կամ լաւ ևս այն եզակի բնութեան՝ որ առաջին անգամ նայելուն իւր գիտող աչքին զարկեր էր :

Գունապանուհին նամակը ձեռքը ներս մտաւ , և մեղրածորան ձայնով մը , պառաւի մը ձայնով , ըստ որում թշուառութեան դատապարտեալ կանայք երեսուն տարեկան եղած ատեննին սլառա կ'ըլլան :

— Պարոն Մարա , ըսաւ , ահա ձեր ուզած նամակը :

— Նամակէն աւելի ձեզ կ'ուզէի տեսնել , ըսաւ Մարա :

— Ձեր աղախինն եմ , պարոն Մարա , ահա եկայ :

Կրիվէթ խաթունը խոնարհութիւն մ'ըրաւ :

— Ի՞նչ կը բաղձաք :

— Անշուշտ ձեր մտքէն կ'անցնի որ ժամացոյցէս լուր առնել կ'ուզեմ :

— Ա՛հ , հո՛գի , չեմ գիտեր ինչ ըլլալը : Երէկ մինչև իրիկուն կրակարանին վրայ իւր բեռէն կախուած էր :

— Կը սխալիք , մինչև իրիկուն գրպանս էր . միայն , երեկոյեան ժամը վեցին դուրս ելնելու ատենս , որովհետև բաղմութեան մէջ պիտի մտնէի , վախնալով որ կը գողնան՝ աշտանակին ներքե գրի :

— Եթէ աշտանակին ներքե գրիք՝ հոն ըլլալու է :

Եւ գունապանուհին կեղծ միամտութեամբ մը , որովաւելի մատնուիլը մտքէն չէր անցնէր , գնաց կրակարանը զարդարող երկու աշտանակներէն ձիշգ այն առաւ՝ որուն ներքե Մարա իւր ժամացոյցը պահեր էր :

— Այո աշտանակը հող է , ըսաւ երիտասարդը , բայց ժամացոյցը :

— Արդարեւ հոս չէ : Ձըլլայ որ հոս դրած չըլլաք , պարոն Մարա :

— Բայց ձեզի չեմ ըսեր որ . . .

— Յղէկ փնտռեցէք :

— Ո՛հ , փնտռեցի , ըսաւ Մարա զայրալիք նայուածքով մը :

— Աւրեմն կորուսեր էք :

— Բայց ձեզի չեմ ըսեր որ երէկ ես ձեռքովս հոն , սա աշտանակին ներքե գրի :

— Մէկը մտած ըլլալու է հոս , ըսաւ Կրիվէթ խաթունը , հրչափ մարդիկ կու գան ձեզի , ո՛րչափ անծանօթներ կու գան :

— Ասոնք սլատրուակ են , ասոնք սլատրուակ են , գոչեց Մարա հետզհետէ զայրահալով . շատ աղէկ գիտէք որ երէկէն ՚ի վեր մարդ չեկաւ հոս : Աչ , ոչ , ժամացոյցս գնաց ուր որ գնաց վերջին գաւառ-

զանիս արծաթէ գունտը , ուր որ գնաց արծաթէ փոքրիկ դրդալս
զոր գիտէք , ուր որ գնաց վեցսայրի դանակս : Գողցող կայ , Արի-
վէգ խաթուն , գողցող կայ : Շատ բաներու բերանս գոցեցի՝ բայց
ասոր չեմ կրնար համբերել , հասկցա՞ք :

— Բայց , պարոն , ըսաւ Արիվէգ խաթունը , միթէ զիս ամբաստանե-
լու ելեր էք :

— Պէտք է որ ինչքերուս հսկէք :

— Բանալին միայն իմ քովս չէ :

— Գունապանուհին դուք էք :

— Ամիսը սկուտ մը կու տաք ինձ , և կ'ուզէք որ տասն ծառայի
սպասաւորութիւն ըլլայ ձեզ :

— Ինձ լաւ սպասաւորութիւն չըլլալը հոգս չէ , այլ գողութիւնը :

— Պարոն , ես պարկեշտ կիւն մ'եմ :

— Պարկեշտ կիւն մը՝ զոր ոստիկանութեան գործակալին պիտի յանձ-
նեմ՝ եթէ ժամէ մը ժամացոյցս չգտնուի :

— Ոստիկանութեան գործակալին :

— Այո :

— Ոստիկանութեան գործակալին , ինծի պէս պարկեշտ կիւն մը :

— Պարկեշտ կիւն մը , պարկեշտ կիւն մը . . .

— Այո , և որուն համար ոչ ոք ըսելիք մ'ունի , կ'իմանա՞ք :

— Օ՛ն , բուական է , Արիվէգ խաթուն :

— Ա՛հ , արդէն միտքէս կ'անցնէր որ դուրս ելած ատեննիդ վրաս
կը կասկածէիք :

— Գաւազանիս գունտը անհետանալէն՝ ի վեր ձեր վրայ կը կաս-
կածիմ :

— Լաւ ուրեմն , ես ալ ըստ կարգի ձեզի բան մը պիտի ըսեմ ,
պարոն Մարա :

— Ի՛նչ :

— Այն թէ , ձեր 'բացակայութեան ատեն խորհուրդ հարցուցի .

. . . :

— Որո՞ն :

— Գրացիներուս :

— Ի՛նչ բանի համար :

- Իմ վրաս կասկածելուդ համար :
- Տակաւին բան մ'ըսած չէի ձեզ :
- Այնպէս ըլլալը լաւ կը տեսնէի :
- Ուրեմն ինչ ըսին դրացիները , շատ հետաքրքիր եմ իմանալու :
- Ըսին թէ եթէ վրաս կը կասկածիք և եթէ ձեր կասկածները մէկու մը հաղորդելու ձախորդութիւնը գործէք՝ պէտք է որ ամեն պէտք եղածը ընէք :

— Ետքը՝ :

— Այսինքն հաստատեցէք որ ժամացոյցը առնուեր է :

— Առնուած է , քանի որ հոն էր և հիմա հոն չէ :

— Այո , բայց իմ առած ըլլալս , կ'իմանա՞ք : Հա՛ , բայց , արդարու-
թեան առջև ապացոյց պէտք է . միայն խօսքի չեն հաւատար պարօն
Մարա . դուք ալ մեզի պէս մարդ էք , պարօն Մարա :

Պալսամօ , շարունակ հանգարտ , սոյն տեսարանը կը դիտէր , կը
տեսնէր որ թէև Մարաի համոզումը փոխուած չէր՝ սակայն եղանակը
փոխեր էր :

— Այնպէս որ , շարայարեց դռնապանուհին , եթէ ուղղասիրու-
թիւնս ճանչնալ չուզէք , կը հասկնա՞ք , եթէ ինձ հատուցում չընէք՝
ես պիտի երթամ ոստիկանութեան գործակալը կանչեմ՝ ինչպէս որ
մեր տան տէրը քիչ մ'առաջ ինձ կը խրատէր :

Մարա շրթերը խածաւ : Ար հասկնար որ ներքեւը իրօք վտանգ կայ :
Տան տէրը գործէ քաշուած ձեր հարուստ վաճառական մ'էր :
Տան երրորդ յարկը կը բնակէր , և նոյն թաղին մէջ զայլթակուելի
բաներ կը պատմէին անոր վրայ , այսինքն թէ , թէև տասն տարի
առաջ , շատ պաշտպաններ էր դռնապանուհին՝ որ ատենով խոհակե-
րուհի է եղեր կնոջը քով :

Արդ Մարա , գաղտնի այցելութիւններ ընելուն համար , Մարա շատ
կանոնաւոր մէկը չըլլալուն համար , Մարա ծածուկ կեանք մ'ան-
ջընելուն համար , Մարա ոստիկանութեան մարդոց քիչ մը կասկա-
ծելի ըլլալուն համար , քիչ հոգ չէր ըներ ոստիկանութեան գոր-
ծակալին հետ գործ ունենալը , որով կրնար Պ. սը Սարգիսի ձեռքն
իյնալ , Պինչդեռ սա շատ կը սիրէր Մարայի պէս երիտասարդներուն
թղթերը կարդալ , և այն գեղեցիկ գրութեանց հեղինակները այն

Generated on 2016-09-08 08:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

խորհրդածութեան տունները յղել՝ որ Վէնսան, Պասգիլ, Շարանդօն
և Պիսէդր կը կոչուին :

Մարա ձայնը ցածցուց . բայց քանի որ կը ցածցնէր դռնա-
պանուհին այնքան ձայնը կը բարձրացնէր : Մինչդեռ քիչ մ'ա-
ռաջ ամբաստանեալ էր՝ այժմ ամբաստանող կ'ըլլար . այնպէս
որ սոյն ջղային և արդանդի հիւանդութեամբ տառապող կիներ հով
տեսնող բոցի մը նման բռնկեցաւ :

Սպառնալիք , յիշոցք , աղաղակ , արտասուք , ամենքն ալ գոր-
ծածեց . ճշմարիտ փոթորիկ մ'եղաւ այն :

Այն ատեն Պալսամօ դատեց թէ միջամտելու ժամանակն հա-
տած է . քայլ մ'առաւ դէպ' այն կիներ՝ որ սենեկին մէջտեղը կան-
գուն և սպառնալից կեցեր էր , և , ահուելի նայուածքով մը եր-
կու մաւաները անոր կուրծքին երկնցնելով՝ ոչ միայն շրթերովը ,
այլ և աչերովը , մտքովը , իւր ամբողջ կամքովը , բառ մ'ար-
տասանեց՝ զոր Մարա չկրցաւ լսել :

Իսկոյն կրիվէդ խաթունը լռեց , դողգոջեց , և հաւասարակշու-
թիւնը կորսնցնելով՝ ետ ետ գնաց , աչերը սոսկալի կերպով բա-
ցուած , և մազնիսական հոսանուտին զօրութեան ներքեւ ընկճելով՝
անկողնին վրայ ինկաւ առանց բառ մ'արտասանելու :

Նոյն ատեն աչերը գոցուեցան և բացուեցան՝ բայց այս անգամ
առանց բիբերը տեսնուելու . լեզուն ջղաձիգ կերպով մը շարժեցաւ .
մարմինը չերերաց՝ սակայն ձեռները տենդէ ցնցուելու պէս դո-
ղացին :

— Օ՛ , օ՛ , ըսաւ Մարա , հիւանդանոցին վիրաւորին պէս :

— Այո՛ :

— Կը քնանայ ուրեմն :

— Լ՛իւր , ըսաւ Պալսամօ :

Յետոյ Մարաի դառնալով ,

— Պարոն , ըսաւ , ահա հասաւ այն վայրկեանը՝ յորում բոլոր
դժուարահաւանութիւնդ պիտի դադրի , բոլոր երկուանքդ պիտի
փարատին . վերցուր այս նամակը զոր սոյն կիներ քեզ կը բերէր
և ինկած ատենը գետինը ձգեց :

Մարա հնազանդեցաւ :

Generated on 2016-09-08 08:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ի՞նչ ընեմ, հարցուց :

— Սպասէ :

Եւ նամակը Մարտի ձեռքէն առնելով՝

— Գիտէ՞ք որմէ է այս նամակը, հարցուց Պալսամօ քնացող կնոջ երկնցնելով զայն :

— Ոչ, պարոն, պատասխանեց կինը :

Պալսամօ գոց նամակը այն կնոջ մօտեցուց :

— Կարդացէ՛ք զայն Պ. Մարտին տեղ որ կ'ուզէ մէջինը գիտնալ :

— Նէ չգիտէ, ըսաւ Մարա :

— Այո, բայց դու կարդալ գիտես :

— Անշուշտ :

— Կարդաւ ուրեմն, և նէ պիտի կարդա իւր կողմէն՝ քանի որ բառերը քու մտքիդ մէջ տպաւորուին :

Մարա նամակին կնիքը լուծեց և սկսաւ կարդալ, մինչդեռ Արիվէզ խաթուն կանգուն և Պալսամօի ամենակարող կամքէն դողալով՝ հետեւեալ բառերը կը կրկնէր քանի որ Մարա մտքէն կը կարդար,

«Սիրելիդ իմ Հիպօկրատ,

«Ապէլ իւր առաջին պատկերը շինեց լմնցուց. յիսուն ֆրանքի ծախեց զայն. Սէն-Ժաք փողոցին գինետունը երթալով՝ այս յիսուն ֆրանքը պիտի ուտենք այսօր : Գու ալ կու գաս :

«Տարակոյս չկայ որ մէկ մասն ալ պիտի խմենք :

«Բարեկամդ,

«Լ. ԳԱԻԻԹ : »

Գրուածը բառ առ բառ այս էր :

Նամակը Մարտի ձեռքէն ինկաւ :

— Լաւ ուրեմն, ըսաւ Պալսամօ, կը տեսնես որ Արիվէզ խաթունն ալ հոգի մ'ունի, և անոր քնացած ատեն հոգին կը հսկէ :

— Նաև տարօրինակ հոգի մը, ըսաւ Մարա, հոգի մը որ կարդալ գիտէ՝ մինչդեռ մարմինը չգիտէ :

— Վասն զի հողին ամեն բան գիտէ , վասն զի հողին ցոլացմամբ կրնայ միենոյն բանը ուրիշ հողուոյ մ'ալ ազդել : Արթնցած ատենը այս նամակը անոր կարդացընել փորձէ , այսինքն երբ մարմինը իւր ստուերովը հողին պատէ՝ այն ատեն պիտի տեսնես :

Մարա անխօս կեցեր էր . բոլոր իւր նիւթապաշտ փիլիսոփայութիւնը տակն ու վրայ կ'ըլլար իւր ներսը , բայց պատասխան չէր գտնէր :

— Հիմա , շարայարեց Պալսամօ , պիտի անցնինք քեզի աւելի կարևոր եղածին , այսինքն թէ ինչ է եղեր ժամացոյցդ :

— Կրիվէդ խաթուն , ըսաւ Պալսամօ , Պ. Մարաին ժամացոյցը ո՛վ է առեր :

Քնախօս կինը ուրացական շարժում մ'ընելով՝

— Չեմ գիտեր , ըսաւ :

— Շատ աղէկ գիտեք , պնդեց Պալսամօ , և պիտի ըսէք :

Յետոյ , աւելի խիստ կամքով մը ,

— Պարոն Մարաի ժամացոյցն ո՛վ առաւ , ըսէք :

— Կրիվէդ խաթունը Պ. Մարաի ժամացոյցը գողցած չէ : Ինչո՞ւ Պ. Մարա կը կարծէ թէ Կրիվէդ խաթունն է գողցողը :

— Եթէ նէ չէ գողցողը , ո՛վ է , ըսէք :

— Չեմ գիտէր :

— Կը տեսնէք , ըսաւ Մարա , խեղճը անթափանցելի ապաստանարան մ'է :

— Լաւ , քանի որ միայն այս յետին կասկածը կը մնայ քեզ , պարոն , ըսաւ Պալսամօ հիմա պիտի համոզուիս :

Յետոյ , դռնապանուհւոյն դառնալով՝

— Ո՛վ է , ըսէք , այնպէս կ'ուզեմ :

— Օ՛ն , օ՛ն , ըսաւ Մարա , անկարելին մի պահանջէք :

— Լսեցիք , ըսաւ Պալսամօ , կ'ուզեմ ըսի :

Այն ատեն , այն անդիմադրելի կամաց զօրութեան ներքև , թշուառ կիներն սկսաւ յիմարի մը նման ձեռները և բազուկները դալարել , լուսնոտութեան դողի պէս դող մը սկսաւ բոլոր մարմնէն անցնիլ , բերանն երկիւղի և տկարութեան ժանտ ձև մ'առաւ , թիկանցը վրայ ինկաւ , ցաւաղին ջղաձգութեան մը մէջ ըլլալու պէս ջիղերը քաշուեցան , և դնաց անկողնին վրայ մնաց :

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ, մեռնիլն աւելի լաւ ունիմ :

— Լաւ, գոչեց Պալսամօ այնպիսի զայրոյթով մը որ աչքերէն բոց հանեց, պիտի մեռնիս եթէ պէտք ըլլայ, սակայն պիտի խօսիս : Քու լուրթիւնդ և յամառութիւնդ բաւական ապացոյցներ են մեզի համար . բայց դժուարահաւան մէկու մը համար անհերքելի փաստ պէտք է : Ըսէք, այնպէս կ'ուզեմ . ո՛վ առաւ ժամացոյցը :

Ջղային գրգռումը յետին ծայրն հասեր էր . քնախօս կնոջ բաւոր զօրութիւնը և կարողութիւնը Պալսամօի կամաց դէմ կ'ելնէր . կիցկտուր աղաղակներ կ'ելնէին բերնէն, կարմրագոյն փրփուր մը շրթերէն սկսաւ վազել :

— Լուսնոտութիւն պիտի դայ վրան, ըսաւ Մարա :

— Բանէ մը մի վախնար, ստախօսութեան սատանան է՝ որ անոր ներսը մտած՝ դուրս ելնել չուզէր :

Ապա կնոջ կողմը դառնալով և ձեռքին մէջ առածին չափ հոսանուտ անոր երեսին նետելով

— Ըսէք, ըսաւ, ըսէք, ո՛վ առաւ ժամացոյցը :

— Կրիվէդ խաթունը, պատասխանեց քնախօս կինը, հազիւ լսելի ձայնով մը :

— Ե՛րբ առաւ :

— Երէկ իրիկուն :

— Ո՛ւր էր :

— Աշտանակին ներքեւ :

— Ի՞նչ ըրաւ զայն :

— Սէն-Ժաք փողոցը տարաւ :

— Սէն-Ժաք փողոցին ձր կողմը :

— Թիւ 29 :

— Ո՛ր յարկը :

— Հինգերորդ յարկը :

— Որո՞ն սենեակը :

— Կօշկակար տղու մը սենեակը :

— Ի՞նչ է անոր անունը :

— Սիմօն :

— Ո՛վ է :

Քնախօս կինը լռեց :

— Ո՞վ է այն մարդը , կրկնեց Պալսամօ :

Գարձեալ լռութիւն :

Պալսամօ հոսանուտով զեղուն ձեռքը դէպ 'ի կինը երկնցոյց , որ այս սոսկալի հարուածին ներքեւ ընկճուած՝ հազիւ կարողութիւն ունեցաւ մըմնջելու ,

— Իւր սիրահարն է :

Մարա զարմացական աղաղակ մ'արձակեց :

— Լճու , ըսաւ Պալսամօ . թող որ խիղճը խօսի :

Ապա , վերստին դողդոջուն և քրտնաթոր կնոջ կողմը դառնալով

— Այս գողութիւնը ո՞վ խրատեց Կրիվէդ խաթունին , հարցոյց :

— Ոչ ոք : Գիպուածաւ աշտանակը տեղէն վերցուց , ժամացոյցը տեսաւ . այն ատեն սատանան զինքը փորձեց :

— Արդեօք դրամի՞ պէտք ունէր :

— Ոչ , ինչու որ ժամացոյցը չծախեց :

— Մէկո՞ւ մը տուաւ :

— Այո :

— Սիմօնին :

— Քնախօս կինը ճիգ մ'ըրաւ :

— Սիմօնին :

Ապա երկու ձեռներովը երեսը գոցելով՝ սկսաւ յորդ արտասուք թափել :

Պալսամօ դարձաւ Մարաի որ բերանը բաց , մազերը տակնուվրայ , արտեանունքը անկած , այս սոսկալի տեսարանը կը դիտէր :

— Ահաւասիկ , պարոն , վերջապէս տեսար հոգւոյն մարմնոյ հետ ըրած կռիւր : Տեսա՞ր խիղճը որ գոզցես բերդի մը մէջ ապաստանած զայն անառիկ կը կարծէր : Միով բանիւ տեսա՞ր որ Աստուած պակաս բան մը ստեղծած չէ աշխարհիս վրայ , և թէ ամենայն յամենայնի է : Ուրեմն այլ ևս մի ուրանար խիղճը , այլ ևս մի ուրանար հոգին , այլ ևս մի ուրանար անգիտելին , երիտասարդ , մանաւանդ մի ուրանար հաւատքը որ գերապոյն զօրութիւն է , և որովհետեւ փառասիրութիւն ունիս՝ ուսիր , պարոն Մարա . քիչ խօ-

տէ, շատ խորհէ, և թեթևօրէն քու մեծերդ դատելու մի ելներ ։
Մնաս բարեաւ, իմ խօսքերովս ընդարձակ դաշտ մը բացուեցաւ առ-
ջևդ, փորէ այս դաշտը որ գանձեր կը պարունակէ ։ Մնաս բարեաւ ։
Երանի, և կրկին երանի՝ եթէ կարենաս ներսդ եղած թերահաւա-
տութեան սատանին յաղթել՝ ինչպէս որ ես սոյն կնոջ ներսը գըրա-
նուող ստախօսութեան սատանին յաղթեցի ։

Եւ այս խօսքին վրայ մեկնեցաւ երիտասարդն ամօթէն շառա-
փունած թողլով ։

Մարա երթաս բարեաւ ըսելու անգամ խելք չըրաւ ։

Բայց առաջին ապշութենէն ետք՝ տեսաւ որ Կրիվէդ խաթուն շա-
րունակ կը քնանար ։

Այս քունը զարհուրելի թուեցաւ իրեն ։ Մարա աւելի լաւ ու-
նէր որ իւր անկողնին վրայ դիակ մ'ըլլար՝ մինչև անգամ եթէ Պ.
տը Սարգին ուզած կերպովը մեկնէր այն մահը ։

Այն նուազեալ վիճակը, այն դարձած աչերը, այն երերումները
տեսնելով վախցաւ ։

Վախն աւելի սաստկացաւ երբ դիակը ոտք ելնելով իւր կողմը
եկաւ և ձէռքէն բռնելով ըսաւ ։

— Հետս եկու, պարոն Մարա ։

— Ո՛ւր ։

— Սէն-Ժաք փողոցը ։

— Ինչո՞ւ ։

— Եկու՞, եկու. ինձ կը հրամայէ որ քեզ հոն տանիմ ։

Մարա որ աթոռի մը վրայ ինկեր մնացեր էր՝ ոտք ելաւ ։

Այն ատեն, Կրիվէդ խաթուն միշտ 'ի քուն, դուռը բացաւ,
թուշունի մը կամ կատուի մը պէս սանդուխէն իջաւ, այսինքն հա-
զիւ ոտքը աստիճաններուն դպցնելով ։

Մարա անոր ետեէն գնաց վախնալով որ չիյնայ և գլուխը չը
պատուէ ։

Սանդուխին ստորոտն հասած ատեն կինը դրան շեմէն անցաւ,
փողոցը մտաւ, երիտասարդը միշտ ետեը՝ զոր այնպէս առաջնորդեց
մինչև տունը՝ ըսած շտեմարանը ։

Դրանք զարկաւ . Մարա զգաց որ սիրտն այնպէս ուժգին կը բաղխէ որ կարծեց թէ պիտի լսէին :

Հտեմարանին մէջ մարդ մը կար , դուռը բացաւ . Մարա նայեցաւ որ այն մարդը քսանուհինգ եռսուն տարեկան գործաւոր մ'էր՝ զոր երբեմն դռնապանուհւոյն օթեակին մէջ տեսեր էր :

Կրիվէդ խաթունին ետեւէն Մարան տեսնելով ետ քաշուեցաւ գործաւորը :

Բայց կինը ուղղակի անկողնին գնաց , և ձեռքը գլխու տափակ բարձին ներքեւէն անցընելով՝ ժամացոյցը հանեց հոնկէ , Մարաին տուաւ , մինչդեռ Սիմոն կօշկակարը սոսկումէն տժգունած՝ չէր համարձակէր խօսք մ'ընելու և մոլար աչքով մը այն կնոջ ամենափոքր շարժումները կը դիտէր՝ յիմար կարծելով զան :

Հազիւ թէ կինը Մարաին ձեռքին դպաւ ժամացոյցն անոր տալու ատենը՝ և ահա խորին հառաչանք մ'արձակեց և մումուաց :

— Կ'արթնցնէ զիս , կարթնցէ զիս :

Արդարեւ բոլոր ջիղերը ճախարակէն ելած պարանի մը նման թուլցան . աչերն իրենց կենսական կայծն վերստին ստացան . այսպէս Մարաին դէմը , ձեռքը անոր ձեռաց մէջ , ժամացոյցը գեռ ձեռքը , այսինքն գործած յանցանքին անհերքելի ապացոյցը , Կրիվէդ խաթուն գետինը փռուեցաւ մարած :

— Արդեօք իրօք խիղճը գոյութիւն ունի՞ , ըսաւ մտովի Մարա սենեկէն դուրս ելած ատեն , սրտին մէջ երկուանք և աչացը մէջ մտախոհութիւն երեւալով :



ՄԱՐԿՍ ԵՒ ԻԻԲ ԳՈՐԾԵՐԸ

Մինչդեռ Մարա ժամերն այնքան օգտակար կերպով կ'անցնէր ,
և խղճի ու կրկին կենաց վրայ կ'իմաստասիրէր , Բլադրիէր փողոցը
ուրիշ իմաստասէր մ'ալ նախընթաց օրուան անցուցած իրելուներ
մաս առ մաս աչքին առջև կը քերէր և ինքնիրեն կը հարցընէր
թէ մեծ յանցանք մը գործած էր թէ ոչ : Թուերը թոյլօրէն սեղա-
նին վրայ յեցած , գլուխը ձախ ուսին կողմը սաստիկ ծուած Ռու-
սօ կը մտածէր :

Առջևը բաց կեցեր էին իւր քաղաքական և իմաստասիրական գրքե-
րը , Էփէն ու Ընկերային Դաշինքը :

Մերթ ընդ մերթ , երբ միտքը պահանջեր , ծուելով կը թղթա-
տէր այս գրքերը զոր դոց գիտէր :

— Ա՛հ , աէր Աստուած , ըսաւ խղճի ազատութեան վրայ Էփէն
մէջ գրուած մէկ հասուածը կարդալով , կրակուբոց տողեր : Ի՛նչ
փիլիսոփայութիւն , Աստուած իմ : Արդեօք աշխարհիս մէջ ինծի
պէս հրձիգ մ'եղած է :

« Ի՛նչ , յարեց ձեռները գլխէն վեր բարձրացընելով , գահին ,
խորանին և մարդկային ընկերութեան դէմ այսպիսի զայթակղեցու-
ցիչ խօսքերը ես ըրեր եմ . . .

« Այլ ևս չեմ զարմանար թէ մոլթին մէջ գործող և կեդրոնա-
ցած ինչ ինչ կիրքեր իմ իմաստակութիւններէս օգուտ քաղել
ուզելով մոլորներ են այն շաւիղներուն մէջ՝ զոր հետտորական ծա-
ղիկներով ծածկած եմ : Ես մարդկային ընկերութեան աղմկարարն
եղայ . . . :

Ատք ելաւ կարի յուզուած և փոքրիկ սենեկին մէջ երեք շրջան
ըրաւ :

— Ես , ըսաւ , բամբասեցի մարդոց այն իշխանութիւնը , որով
մասենադիրներուն վրայ կը բռնանան : Քանի՛ յիմար , բարբարոս եմ
եղեր , այն մարդիկը շատ իրաւունք ունին :

«Ի՞նչ եմ ես, ոչ այլ ինչ՝ այլ Պետութեան վտանգաւոր մարդ մը : Խօսքս՝ որ ժողովուրդները պիտի լուսաւորէր, գէթ այս պատրուակն ունէի մտքիս մէջ, խօսքս, ըսի, ջահ մ'է որ համայն տիեզերք պիտի հրկիզէ :

«Կենաց պայմաններուն անհաւասարութեան վրայ ճառեր, տիեզերական եղբայրակցութեան, դաստիարակութեան ծրագիրներ գրելով սերմանեցի, և ահա հիմա այնպիսի վայրագ հպարտութիւններ կը քաղեմ՝ որ ընկերութեան իմաստը վեր 'ի վայր կը շրջեն, այնպիսի ներքին պատերազմներ՝ որ կրնան աշխարհ անպատ դարձրնել, և այնքան վայրենի բարքեր՝ որ քաղաքակրթութիւնը տասը դար ետ պիտի դարձրնեն . . . : Ո՛հ, ես կարի՛ մեծ յանցաւոր մ'եմ :

Իւր Սափաւայի Փօի-Ժողովրդապետը անուն գրքէն երես մ'ալ կարգաց :

— Այո՛, այսպէս է, «Միանանք մեր երջանկութիւնը մտածելու համար . . . » գրած եմ : Տանք մեր առաքինութեանց այն զօրութիւնը՝ զոր այլք իրենց մոլութեանց կու տան :» Այս ալ ես գրած եմ :

Եւ Ռուսօ խռովեցաւ յետին աստիճան յուսահատած :

— Ահա իմ սխալովս, ըսաւ, եղբայր եղբօր դէմ կ'ելնէ . օր մը ոստիկանութիւնը այն նկուղներէն մին պիտի կոխէ, և այն մարդոց ամենը միասին պիտի բռնէ՝ որ կ'երգնուն իրարու գլուխ ուտել զիրար մասնած ատեննին, և անոնցմէ ամենէն յանդուզն ընկերը զրպանէն իմ գրած գիրքս հանելով պիտի ըսէ,

«— Գանգատնիդ ի՞նչ է : Մենք Պ. Ռուսօին աշակերտներն ենք, փիլիսոփայութիւն կ'ունինք :

«Ո՛հ, որքան պիտի խնդայ Աօլդէր ասոր վրայ : Վախնալու բան մը չկայ թէ այն պալատականը այնպիսի մարդոց մէջ կը մտնէ :

Մտածելով որ Աօլդէր վրան պիտի խնդար՝ ժընձվացի փիլիսոփան սաստիկ զայրացաւ :

— Ես դաւաճան, մռմռաց . տղայ եմ . ի՞նչ աղւոր դաւաճան մ'եմ :

Մտածութեան այս կէտին Թէրէզ ներս մտաւ և Ռուսօ զինքը չտեսաւ : Նախաճաշը կը բերէր :

Generated on 2016-09-08 08:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տեսաւ որ Ռուսօ ուշադրութեամբ Անուրջէ մեաշքէն ուրու ա- նուն գրքին մէկ կտորը կը կարդար :

— Լաւ , ըսաւ տաքցած կաթը դրնդիւնով նոյն իսկ գրքին վրայ դնելով , նայեցէք սա մեծամիտին որ ինքզինքը իւր հայելոյն մէջ կը դիտէ : Պարտնը իւր գրքերը կը կարդայ : Պ. Ռուսօ իւր վրայ կը հիանայ :

— Օ՛ն , Թէրէզ , ըսաւ փիլիսոփան , հետս մ'իյնար , կատակ չէ ըրածս :

— Ո՛հ , այո , ի՛նչ աղւոր բան է , ըսաւ Թէրէզ զան ծաղրե- լով : Յափշտակուե՛ր էիք : Ի՛նչպէս կ'ըլլայ որ մատենագիրները այն- քան սնափառութիւն , այնքան թերութիւն ունին և մեզի , խեղճ կանանց այնքան քիչ աչք կը գոցեն : Ելնեմ անգամ մ'որ իմ պզտիկ հայելոյս մէջ նայիմ՝ պարտնը ինձ կը սրբողի և զիս պչրող կ'ա- նուանէ :

Այս կերպ խօսքերով Ռուսօն ամենաթշուառ մէկն ըրաւ , այն- պէս որ կարծես թէ արդէն բնութիւնը զինքը թշուառ ըրած չէր :
Կաթը խմեց առանց հաց թաթխելու :

Կ'որոճէր :
— Հա՛ , կը խորհիս , ըսաւ Թէրէզ . յո՞ր ի նիւթերով լի գիրք մը պիտի շինես դարձեալ . . .

Ռուսօ սառսուեցաւ :
— Քու մտացածին կանանցդ վրայ կը մտածես , և այնպիսի գրքեր պիտի գրես՝ զոր դեռահաս աղջկունք չպիտի համարձակին կարդա- լու , — կամ այնպիսի սրբապիղծ բաներ պիտի հրատարակես՝ որ դահճին ձեռքով պիտի այրուին :

Մարտիրոսը սարսափեցաւ : Թէրէզի ըսածը ճիշդ էր :
— Ոչ , պատասխանեց Ռուսօ , այլ ևս դայթակղեցուցիչ բաներ չպիտի գրեմ . . . : Այլ ընդհակառակը այնպիսի գիրք մը շինել կ'ուզեմ՝ որ բոլոր պարկեշտ մարդիկ մեծ գոհունակութեամբ կար- դան . . .

— Օ՛ , օ՛ , ըսաւ Թէրէզ գաւաթը վերցնելով , անկարելի է այդ- քու միտքդ միայն յայրատութեամբ խճողեալ է . . . : Տակաւին անցեալ օր չեմ գիտեր ի՛նչ կը կարդայիր , և պաշտած կանանցդ վրայ կը խօսէիր . . . : Դու իզամո՛ղ ես , մո՛գ ես :

Generated on 2016-09-08 08:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մօգ բառը Թէրէզի բառգրքին ամենասոսկալի թշնամանքներէն մին էր : Ռուսօ այս բառէն կը գողար :

— Կեցիր , կեցիր , սիրելիս , ապագային գոհ պիտի ըլլաս . . . : Պիտի գրեմ թէ աշխարհ վերանորոգելու միջոց մը դստած եմ , և առ այս ըլլալիք փոփոխութեանց մէջ մէկուն քիթը չպիտի արինի : Այո , այո , այս ծրագիրն յառաջ պիտի տանիմ : Յեղափոխութիւն պէտք չէ , տէր Աստուած , յեղափոխութիւն պէտք չէ , սիրելիդ իմ Թէրէզ :

— Օ՛ն , անսննք , ըսաւ Թէրէզ : Հա՛ , դուռն է :

Պահ մ'ետք Թէրէզ վերադարձաւ գեղեցիկ երիտասարդի մը հետ , որուն աղաչեց որ առաջին սենեակն սպասէ :

Յետոյ Ռուսօի սենեակը մտնելով տեսաւ որ նա արդէն մատիտով մը ծանօթութիւններ կը նշանակէր :

— Շուտ վերցուր , ըսաւ , սա թշնամալից գրութիւնները : Մէկը եկեր քեզ տեսնել կ'ուզէ :

— Ո՛վ է :

— Արքունիքէն դրանիկ մը :

— Անունը չըսա՛ :

— Այդ ալ խօսք է , առանց անունն իմանալու մարդ ներս կ'առնեմ :

— Աւրեմն ըսէ :

— Պ. տը Գուանեի :

— Պ. տը Գուանեի , գոչեց Ռուսօ . Պ. տը Գուանեի , բարձրապատիւ արքայորդւոյն ազատանիէն մին :

— Ան ըլլալու է . սիրուն տղայ մ'է , գեղեցիկ մէկն է :

— Հիմա կու գամ , Թէրէզ :

Ռուսօ արտորնօք անգամ մը հայելոյն մէջ նայեցաւ , զգեստին փոշիները վար տուաւ , հողաթափները սրբեց՝ որոնք ուրիշ բան չէին այլ մաշած մուճակներ , և ճաշարանը մտաւ՝ ուր ազատորդին իրեն կ'սպասէր :

Սա նստած չէր : Հետաքրքրութեամբ չոր տունկերուն կը նայէր զորս Ռուսօ թղթի վրայ փակցուցած և սև շրջանակներու մէջ առած էր :

Ապակե որ դրան գղորդը լսելով ետևը դարձաւ և կարի վայելչութեամբ բարեւելով ,

— Պ. Ռուսօին խօսելու պատիւ ունիմ , ըսաւ :

— Այո , պարոն , պատասխանեց փիլիսոփան նեխասաստ եղանակաւ մը՝ որ՝ իւր խօսակցին նշանաւոր գեղեցկութեանն ու անբռնազբօս վայելչութեանն համար տեսակ մը հիացում կը պարունակէր :

Արդարեւ , Պ. տը Գուանեի Գաղղիոյ ամենէն սիրուն և ամենէն գեղեցիկ մարդոցմէ մին էր : Տարակոյս չկայ որ այն ատենի զգեստին ձևն անոր համար հնարեր էին :

Անոր սրունքին անթերի բարեձևութիւնն աւելի երևան հանելու , լայն ուսերուն և երկայն կուրծքին սիրուն վայելչութիւնը ցոյց տալու , բարեձև գլխուն վեհափառ տեսք մ'ընծայելու , անըստգիւտ ձեռներուն փողոսկրանման սպիտակութիւնն աւելցնելու համար ըլլալու էր :

Ռուսօ գոհ եղաւ այն քննութենէն , նա որ իբր ճշմարիտ արուեստագէտ գեղեցկին վրայ կը հիանար ուր որ պատահէր :

— Պարոն , ըսաւ , ձեզի ծառայելու համար ի՞նչ ընելու է :

— Անշուշտ ձեզի ըսին , պարոն պատասխանեց ազատորդին , թէ տը Գուանեի կոմսն եմ : Ասոր վրայ ես ալ կ'աւելցնեմ թէ տիկին արքայորդոյն կողմէն եկած եմ :

Ռուսօ բարեւեց սաստիկ կարմրելով . Թէրէզ ճաշարանին մէկ անկիւնը , ձեռները զրպանը , Գաղղիոյ ամենէն մեծ իշխանուհւոյն գեղեցիկ պատդամաւորը կը նկատէր գոհունակ աչերով :

— Նորին արքայազն Բարձրութիւնն ինէ ի՞նչ . . . կ'ուզէ , ըսաւ Ռուսօ : Բայց շնորհ ըրէք , աթոռ մ'առէք , պարոն :

Եւ Ռուսօ նստաւ : Պ. տը Գուանեի ալ յարդէ աթոռ մ'առնելով անոր սէս նստաւ :

— Պարոն , ահա.ասիկ եղելութիւնը : Նորին Վեհափառութիւնն անցած օր Գրիանօն ճաշած ատեն համակրութիւն յայտնեց ձեր երաժշտութեան համար՝ որ սքանչելի է : Նորին Վեհափառութիւնը ձեր լաւագոյն եղանակները կ'երգէր : Տիկին արքայորդին որ ամեն ատեն Նորին Վեհափառութեան հաճոյ ըլլալու կը ջանայ՝ մտածեր է որ թագաւորը հաճոյք մը պիտի զգայ ձեր զուսաներգութիւններէն :

Միոյն ներկայացումը տեսնելով ՚ի Գրիանոն , թատրոնին մէջ . . .

Ռուսօ յարգանօք բարեկց :

— Ուստի , պարոն , տիկին արքայորդւոյն կողմէն եկած եմ խնդրելու . . .

— Ո՛հ , պարոն , ընդմիջեց Ռուսօ , իմ թոյլտուութեանս բնաւ հարկ չկայ : Իմ թատերախաղներս և անոնց կրթերը զանոնք ներկայացնող թատրոնին կը վերաբերին : Թատերապետներէն ուզելու է զանոնք , և այն մասին ալ բնաւ դժուարութիւն մը չպիտի կրէ Նորին արքայազն Բարձրութիւնը : Գերասանները կարի երջանիկ պիտի համարին ինքզինքնին՝ Նորին Վեհափառութեան և համայն արքունեաց առջև ներկայացում տալով և երգելով :

— Շիտակը ասոր համար եկած չեմ , պարոն , ըսաւ Պ . տը Գուանեի : Նորին արքայազն Բարձրութիւնը աւելի կատարեալ և հազուագիւտ զբօսանք մը կ'ուզէ հայթայթել թագաւորին : Տիկին արքայորդին ձեր բոլոր գուսաներգութիւնները զիսէ , պարոն . . .

Ռուսօ դարձեալ բարեկց :

— Եւ զանոնք շատ աղէկ կ'երգէ :

Ռուսօ շրթերը խածաւ :

— Այդ չափազանց պատիւ է , կակազեց :

— Արդ , շարայարեց Պ . տը Գուանեի , որովհետև արքունի տիկիններէն շատերը քաջ երաժեշտներ են և զմայլելի կերպով կ'երգեն , որովհետև ազատորդիներէն շատերը բաւական յաջողակ են երաժշտութեան մէջ , այն գուսաներգութիւնը զոր տիկին արքայորդին ձեր գուսաներգութիւններէն պիտի ընտրէ՝ պիտի ներկայացուի ազատորդիներու և տիկիններու խումբէ՝ որուն գլխաւոր անձինքը Նոցին արքայազն Բարձրութիւնքը պիտի ըլլան :

Ռուսօ նստած տեղը ոստեց :

— Աներկբայ եղէք , պարոն , ըսաւ Ռուսօ , թէ այդ ինծի համար կարի մեծ պատիւ մ'է , և կ'աղաչեմ զձեզ որ այս մասին իմ խորին շնորհակալութիւններս տիկին արքայորդւոյն մատուցանեք :

— Ո՛հ , ամենն այս չէ , պարոն , ըսաւ Պ . տը Գուանեի ժպիտով մը :

— Ա՛հ :

Generated on 2016-09-08 09:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Խուճըն այսպէս կազմուելով արդարեւ միւսէն աւելի ականաւոր՝ սակայն նուազ փորձաւու է : Աւարպետին դիտողութիւնն ու խրատներն անհրաժեշտ են . պէտք է որ ներկայացումը թէ՛ օգոստափառ հանդիսականին որ արքայական օթեակը պիտի բազմի , և թէ՛ մեծանուն հեղինակին արժանի ըլլայ :

Ռուսօ ոտք ելաւ բարեւելու համար . այս յետին խօսքը սիրտը շարժեց . վայելչութեամբ Պ. տը Գուանեին բարեւեց :

— Այս պատճառաւ , պարոն , ըսաւ ազատորդին , Նորին արքայազն Բարձրութիւնը կ'աղաչէ զձեզ որ հաճիք 'Գրիանօն գալ՝ թատրերգին վերջին փորձն ընել տալու համար :

— Ո՛հ . . . ըսաւ Ռուսօ , Նորին արքայազն Բարձրութիւնը չմտածէր . . . Ես , Գրիանօն գամ :

— Ինչո՞ւ չէ . . . ըսաւ Պ. տը Գուանեի կարի բնական կերպով մը :

— Ոհ , պարոն , դուք կիրթ ճաշակի տէր և կորովամիտ անձ մ'էք . ուրիշ շատերէն աւելի լաւ դատողութիւն ունիք . արդ , ձեռքերնիդ ձեր սրտին վրայ դրած՝ պատասխան տուէք , փիլիսոփայ Ռուսօն , տարագիր Ռուսօն , մարդատեաց Ռուսօն եթէ արքունիք երթայ , ուրիշ բանի կը ծառայէ՞ , եթէ ոչ ծաղրելու պատրաստուած բոլոր խուճըր խնդալէն մարեցընելու :

— Չեմ հասկընար , պարոն , պատասխանեց Պ. տը Գուանեի պաղութեամբ , թէ ձեզ հալածող անմիտ անձանց ծաղրն ու խօսքը ինչպէս մեծ անձի մը և մատենագրի մը քունը կրնան վրդովել՝ որ տէրութեան մէջ առաջինը կրնայ համարուիլ : Եթէ այդ վախն ունիք , պարոն Ռուսօ , նայեցէք որ մէկու մը չյայտնէք զայն , ինչու որ այն միայն շատ մարդոց ծիծաղը կրնայ շարժել : Իսկ ըսելիքնուն գալով , դուք ալ անշուշտ ինծի հետ համամիտ էք թէ բնաւ բանի տեղ դնելու չէ , երբ խնդիրը Նորին արքայազն Բարձրութեան տիկին արքայորդւոյն , Գաղղիոյ թագաւորութեան անմիջական ժառանգ անձի մը հաճոյք պատճառելու վրայ է :

— Ստոյգ է , ըսաւ Ռուսօ , ստոյգ է ,

— Չըլլայ որ կեղծ ամօթխածութիւն մ'ըլլայ այդ . . . ըսաւ Պ. տը Գուանեի ժպտելով : Թագաւորաց մասին անաչառ վարուել-

նուգ համար, արդեօք կը վախնաք թէ ձեր անաչառութիւնը կը թուլ-
նայ: Ա՛հ, պարոն Ռուսօ, դուք մարդկային ազգին շղթաներ տուած
էք, բայց կը յուսամ թէ չէք ատեր զայն . . . : Ասկէ զատ, ան-
շուշտ բացառութիւն կ'ընէք կայսերազուն տիկնանց համար:

— Պարոն, շատ ազնուութեամբ զիս կ'ստիպէք, բայց մտածեցէք
վիճակիս վրայ . . . ես անշուք, առանձին . . . թշուառ կ'ապ-
րիմ:

Թէրէզ դէմքը խոժոռեց:

— Սա թշուառականին նայեցէք . . . , ըսաւ Թէրէզ. երթալ
չուզէր:

— Ի՛նչ որ ալ ընեմ, երեսիս վրայ, ձեերուս մէջ անհաճոյ բան
մը պիտի երևի թագաւորին և իշխանահեաց՝ որոնք միայն զուար-
թութիւն և գոհունակութիւն կը փնտռեն: Հոն ի՛նչ ընեմ . . .
ի՛նչ ըսեմ . . .

— Կարծես թէ ձեր վրայ կը կասկածիք. Լ. Նո-վէլ Էլբիշք և
Խոստովանո-Վի-նչըր գրողը միթէ մեր ամենէն աւելի խելքով չկրնար
խօսիլ և գործել:

— Հաւաստի եղէք, պարոն, թէ անկարելի է ինձ . . .

— Պարոն, այդ բառն անծանօթ է իշխաններուն:

— Ահա այդ պատճառաւ տունս պիտի մնամ, պարոն:

— Պարոն, ինձ՝ որ յանդուգն պատգամաւոր՝ յանձնառի տիկին
արքայորդին գոհ ընել. չեմ յուսար որ դժնդակ վիշտ մը պատ-
ճառէք ստիպելով զիս Վէրսայլ դառնալ ամօթահար, նկուն. այս
այնպիսի վիշտ մ'է ինձ համար որ ալ չեմ կրնար մնալ հոս: Օ՛ն,
սիրելիդ իմ պարոն Ռուսօ, ինձ ձեր բոլոր հեղինակութեանցը
մեծ համակրութիւն ունեցող մարդու մը ըրէք՝ ինչ որ ձեր մեծա-
սրտութիւնը խնդրակ թագաւորներու պիտի մերժէր:

— Պարոն, ձեր անթերի ազնուութիւնը սիրտս կը զրաւէ. ձեր
պերճախօսութիւնն անթերի է, և այնպիսի ձայն մ'ունիք՝ որ սիրտս
սաստիկ կը շարժէ:

— Կը հաւանիք ուրեմն:

— Ոչ, ստուգիւ չեմ կրնար . . . ուղեորութիւնը կը փառէ ա-
ռողջութեանս:

— Ուղեորութիւն : Ո՛Տ , պարոն Ռուսօ , կը մտածէք ըսածնուդ վրայ : կառքով ժամ մը քառորդ մը :

— Ձեզի համար , ձեր արագընթաց ձիերուն համար :

— Բայց արքունեաց բոլոր ձիերը ձեր տրամադրութեան ներքե են , պարոն Ռուսօ : Տիկին արքայորդիէն պատուէր ունիմ ձեզի ըսելու թէ յատուկ ձեզի համար պատրաստուած բնակարան մը կայ 'ի Գրիանօն , վասն զի չեն ուզեր որ Բարիզ ուշ գաք : Նաև Պ. արքայորդին որ ձեր բոլոր հեղինակութիւնները գոց գիտէ՝ բոլոր արքունեաց առջև ըսաւ՝ թէ Պ. Ռուսօին բնակելիք սենեակը ինքը կ'ուզէ ընտրել :

Թէրէզ զարմացական ճիչ մ'արձակեց , չէ թէ Ռուսօին՝ այլ բարեսիրտ իշխանին համար :

Ռուսօ բարեսիրական սոյն յետին նշանին ալ չկրցաւ դէմ դնել :

— Ուրեմն անձնաստուր ըլլալու է , ըսաւ , ինչու որ երբէք այսպէս յարձակած չէին վրաս :

— Գուք սրտոգիւ կը յաղթուիք , պարոն , պատասխանեց Պ. տը Գուանեի՝ մտքով անառիկ էք :

— Ուրեմն , պարոն , Նորին արքայազն Բարձրութեան փափաքը պիտի կատարեմ :

— Ո՛Տ , պարոն , այս մասին իմ անձնական շնորհակալութիւնքս հաճեցէք ընդունիլ : Տիկին արքայորդուոյն գալով , ներեցէք որ ես մէկդի կենամ . ետքէն ինձ կը սրբողի եթէ իւր բերնովը ձեզի մատուցանելիք շնորհակալութիւնները կանխաւ ես մատուցանեմ : Ասկէ զատ , գիտէք որ մարդը շնորհակալ ըլլալու է դեռահաս և պաշտելի կնոջ մը՝ որ կը հաճի շնորհակալութեան կանխավճարներ ընել իրեն :

— Ճշմարիտ է , պարոն , պատասխանեց Ռուսօ ժպտելով . բայց ծերերը գեղանի կանանց մենաշնորհն ունին , մարդիկ կ'աղաչեն ծերերուն :

— Պարոն Ռուսօ , հաճեցէք ձեր ժամանակն որոշել . կառքս ձեզի կը դրկեմ . կամ լաւ ևս ես կու գամ և զձեզ կը տանիմ :

— Ոչ այդպէս , պարոն , ըսաւ Ռուսօ : Գրիանօն պիտի երթամ , լաւ . բայց թողէք որ ուզածիս պէս երթամ . այլ ևս այս վայրկե-

նէն մի մտածէք իմ վրաս : Պիտի երթամ, պէտք եղածն այս է .
դուք որոշեցէք ժամանակը :

— Ի՛նչ, պարոն, չէք ուզեր որ ձեր մուծիչն ըլլամ, թէև ի-
րօք արժանի չեմ, և ձերինին նման անուն մը ինքնին կը ծանուցուի :

— Պարոն, գիտեմ որ բոլոր աշխարհի մէջ իմ ունեցած գիր-
քէս շատ բարձր գիրք մ'ունիք դուք արքունիքը . . . : Ձեր ը-
րած պատիւը չեմ մերժեր, սակայն սովորութեանցս հետևիլ կ'ու-
զեմ. շրջագայութեան երթալու պէս պիտի երթամ հոն, միով
բանիւ . . . յետին պայմանս այս է :

— Կը հնազանդիմ, պարոն, և բնաւ չեմ ուզեր որ և է պատ-
ճառաւ ձեզի անհաճոյ ըլլալ : Երեկոյեան ժամը վեցին պիտի սկսի
փորձը :

— Շատ աղէկ, ժամը վեցին քառորդ մնալով Գրիանօն պիտի
գտնուիմ :

— Բայց վերջապէս, ի՛նչ միջոցաւ :

— Այդ իմ գիտնալու բանս է . իմ կառքերս ահա ասոնք են :
Սրունքը ցոյց տուաւ որ տակաւին կորովի էր :

— Հինգ փարսախ, ըսաւ Պ. տը Գուանեի ապշած . բայց չա-
րաչար պիտի յոգնիք, երեկոյթը խոնջութիւն պիտի պատճառէ ձեզ,
զգուշացէք :

— Ռեիմն ես ալ կառք և ձի ունիմ, եղբայրական կառք, ժո-
ղովրդային քառանիւ՝ որ թէ՛ գրացիինն և թէ՛ իմն է՝ օգին, արևին
և ջուրին նման, քառանիւ՝ որուն համար տասնեւհինգ սու կը վճա-
րեն :

— Ա՛հ տէր Աստուած, հանրակա՛ռք պիտի նստիք, կը զարհու-
րեցնէք զիս :

— Ձեզի այնքան կարծր թուած նստարանները ինծի համար ցան-
կասիրի մը անկողնին նման կակուղ են : Անոնք փետրալից բազմոց-
ներ են ինծի համար : Իրիկունը կը տեսնուինք, պարոն, իրիկունը :

Պ. տը Գուանեի տեսնելով որ Ռուսօ զինքը ճամբայ կը դնէ՝
ոտք ելաւ, և խել մը շնորհակալութիւններէ, ճիշտ կամ ծուռ
տեղեկութիւններ տալէ և իւր ծառայութիւնն ընդունել սալու հա-
մար հնարներ գործածելէ ետք՝ մութ սանդուխէն իջաւ, մինչև

դրանդը Ռուսոյն՝ և մինչև յարթին մէջ տեղը Թէրէզէն առաջնորդուելով :

Պ. տը Գուանեի կառքը մտաւ՝ որ փողոցն իրեն կ'սպասէր , և Վէրսայլ դարձաւ լռելեայն ժպտելով :

Թէրէզ վերադարձաւ , մրրկալից սրտնեղութեամբ մը դուռը գոցեց , որմէ Ռուսո գուշակեց թէ փոթորիկ պիտի ելնէ :



ՃԹ

ՌՈՒՍՈՒ ԶԱՐԳԱՐՆԵՔԸ

Երբ Պ. տը Գուանեի մեկնեցաւ , Ռուսո , որուն գաղափարները փոխուեր էին այն այցելութեան վրայ , երկայն հառաչ մը հանելով փոքր թիկնաթուին վրայ նստաւ և թոյլ կերպով մ'ըսաւ ,

— Ա՛հ , որքան տաղտկացայ : Ի՞նչու այսչափ ետեւէս կ'իյնան և զիս կը յոգնեցնեն :

Թէրէզ որ ներս կը մտնէր՝ լսեց այս խօսքը և Ռուսոյին դէմք նստելով ,

— Ի՞նչ հպարտ ես , ըսաւ անոր :

— Ե՛ս , ըսաւ Ռուսո զարմանօք :

— Այո , դու սնապարծ ես , կեղծաւոր ես :

— Ե՛ս :

— Գու . . . : Խելքդ զլիսէգ զացած է որ արքունիք պիտի երթաս , և ուրախութիւնդ կեղծ անտարբերութեան մը ներքե կը ծածկես :

— Ա՛հ , տէր Աստուած , պատասխանեց ուսերը վեր ընելով Ռուսո մտքէն անցածը երևան ելնելուն համար պզտիկ ինկած :

— Միթէ ինձ հաւտացնել կ'ուզես թէ մեծ երջանկութիւն մը չէ

այդ քեզի համար, քու եղանակներդ թագաւորին լսել տալ՝ զորս հոս տաւղիդ վրայ դատարկապորտի մը պէս կը քերես :

Ռուսօ զայրալիր աչքով մը կնկանը նայեցաւ :

— Գու անմիտ ին մ'ես, ըսաւ, ինծի պէս մարդու մը համար թագաւորի մ'առջև ելնելը պատիւ չէ : Ինչ միջոցաւ՝ գահին վրայ կը գտնուի նա : Բնութեան մէկ քամիին հաճոյքով, որով թագուհիէ մը ծներ է . բայց ես արժանի եմ թագաւորին առջև կանչուելու զինքը զբօսեցնելու համար . սոյն արժանիքս աշխատութեամբ ստացած եմ, և տաղանդովս՝ զոր աշխատութիւնն ինձ պարգևած է :

Թէրէզ այսչափով մը յաղթուող կիներէն չէր :

— Շատ կ'ուզէի որ, ըսաւ, Պ. տը Սարգին այս խօսքերդ լսէ : Պիսէրի մէջ հիւղիկ մը կամ Շարանդօնի մէջ օթեակ մը կու տային քեզի :

— Վասն զի, ըսաւ Ռուսօ, Պ. տը Սարգին բռնաւոր մ'է ուրիշ բռնաւորէ մը վարձուած, և մարդս միայն իւր հանճարովը չկրնար ինքզինքը պաշտպանել բռնաւորներուն դէմ . սակայն, եթէ Պ. տը Սարգին ետեւէս իյնար . . .

— Լա՛ւ, ինչ կ'ըլլար, ըսաւ Թէրէզ :

— Ա՛հ, այո, հառաչեց Ռուսօ, գիտեմ որ կ'ուրախանան թըշնամիքս, այո . . .

— Ինչ պատճառաւ թշնամի ունիս, ըսաւ Թէրէզ : Անոր համար որ չար ես և բոլոր աշխարհ կը հարուածես : Ա՛հ, Պ. տը Վօլգէրն է որ բարեկամ ունի, տեսա՞ր մի մարդը :

— Ճշմարիտ է, պատասխանեց Ռուսօ հրեշտակային ժպիտով մը :

— Հոգի՛, Պ. տը Վօլգէր ազատորդի է . Բրուսիոյ թագաւորը իւր մտերիմ բարեկամն է . ձիեր ունի, հարուստ է, Ֆէրնէյի դղեակն իւրն է . . . : Եւ այս ամենը իւր արժանեօքն ստացած է . . . : Ուստի երբ արքունիք կ'երթայ՝ արհամարհանք չտեսնուիր անոր երեսը, իւր տանը պէս է հոն :

— Միթէ կը կարծես թէ ես ալ իմ տանս պէս չ'սլիտի վարուիմ հոն, ըսաւ Ռուսօ . միթէ կը կարծես թէ հոն վասնուած բոլոր դրամը ուստի պալը չեմ գիտեր, և տան տիրոջ ընծայուած յարգանքէն կը խաբուիմ : Է՛հ, պարզամիտ կին, դու որ ամեն բան ա-

ուանց ողջմտութեան կը դատես, գիտցիր որ արհամարհանք ցոյց տալուս պատճառն այն է որ կ'արհամարհեմ, գիտցիր որ այն պալատականաց պերճանքն արհամարհելուս պատճառն այն է որ գողութեամբ կ'ընեն :

— Գողութեամբ, ըսաւ Թէրէզ անբացատրելի զայրոյթով մը :

— Այո, քենէ, ինէ, բոլոր աշխարհէն գողնալով : Իրենց զգեստներուն վրայ ունեցած բոլոր ոսկին պէտք էր որ հաց չունեցող թշուառներուն տրուէր : Ահա այս պատճառաւ դժկամակութեամբ արքունիք կ'երթամ՝ քանի որ բոլոր այս ըսածներուս վրայ կը մտածեմ :

— Ձեմ ըսեր թէ ժողովուրդը երջանիկ է՝ սակայն թագաւորն ալ թագաւոր է :

— Լաւ ուրեմն, ես ալ իրեն կը հնազանդիմ, ուրիշ ի՞նչ կ'ուզէ :

— Ա՛հ, վախնալուդ համար է որ կը հնազանդիս : Պէտք չէ որ ըսես թէ ակամայ կ'երթաս տեղ մը և արիասիրտ մէկն էս, ապա թէ ոչ ես ալ կ'ըսեմ թէ կեղծաւոր մարդ մ'ես և դու ալ շատ կը հանիս ըսածիս :

— Ես բանէ մը չեմ վախնար ըսաւ Ռուսօ զոռոզութեամբ :

— Ուրեմն բոլոր ինձ յսածներուդ քառորդը գնա թագաւորին ըսէ նայիմ :

— Անտարակոյս կ'ըսէի՝ եթէ զգացումն հրամայէր :

— Դո՛ւ :

— Այո, ես. երբէք ընկրկամ եմ :

— Բա՛, կատուին ձեռքէն կրծած ոսկորը չես կրնար առնել վախնալով որ ձեռքդ կը ճանկէ . . . : Ուր մնաց որ երբ պահպան զինուորներ և զինեալ մարդիկ շուրջդ առնեն . . . : Կը տեսնե՞ս, մօրդ պէս քեզ կը ճանչնամ . . . : Գու քիչ մ'ետք պիտի ածիլուիս, իւղեր պիտի քսես, պիտի աղւորնաս, աւելորդ զարդարանքներ պիտի տաս, պիտի սկսիս աչերդ քթթել, ինչու որ աչերդ խիստ փոքր և կլոր են, ուստի բացած ատենդ բնականաբար կը տեսնուիս, մինչդեռ քթթելով կարծել կու տաս՝ թէ աչերդ տան մը գրան չափ մեծ են, մետաքսեայ գուլպաներդ պիտի ուզես

ինէ, պողպատէ կոճակներով չոքոլատի գոյն զգեստդ պիտի հագնիս, նոր կեղծամդ պիտի դնես, և կառք մ'ալ նստելուն պէս՝ վիլիսոփաս պիտի երթայ գեղանի կիներէն պաշտուելու . . . և վաղը, ա՛հ վաղը, մտաւոր յափշտակութիւն մը, թուլութիւն մը պիտի գայ վրագ, սիրահար պիտի վերադառնաս, հառաչելով կարճ տողեր պիտի գրես, և սուրճդ արցունքովդ պիտի թրջես : Ո՛հ, ինչ տղէկ գիտեմ քեզ . . .

— Կը սխալիս, սիրելիս, ըսաւ Ռուսօ : Ձե՛ս տեսներ որ զիս կ'ըստիպեն արքունիք երթալ : Պիտի երթամ, ինչու որ ամեն բանէ զատ գայթակղութենէ խոյս կուտամ՝ ինչպէս որ ամեն պատուաւոր քաղաքացի պարտի խոյս տալ անկէ : Նաև ես անոնցմէ չեմ որ հասարակապետութեան մը մէջ քաղաքացիի մը գլխաւորութիւնը ճանչնալ չեն ուզեր . բայց թէ որ կը կարծես թէ պալատականի ձևեր պիտի անեն, այն նախասենեակն սպասող պարոններուն զգեստներուն վրայի ոսկիի կտորտուքներուն գէ՛մ իմ նոր զգեստս պիտի փայլեցընեմ : ոչ, ճչ, բնաւ այնպիսի բան մը չպիտի ընեմ, և եթէ այնպիսի բան մ'ընելս տեսնես՝ ուզածիդ չափ վրաս խնդա :

— Ուրեմն չ'պիտի հագուիս, ըսաւ Թէրէզ հեգնօրէն :

— Ոչ :

— Նոր կեղծամդ չ'պիտի դնես :

— Ոչ :

— Փոքրիկ աչերդ չ'պիտի թարթես :

— Քեզի կ'ըսեմ թէ ազատ մարդու մը պէս պիտի երթամ հոն, առանց սովորականէս շեղելու, առանց վախի . թատրոն երթալու պէս պիտի երթամ արքունիք, և ինչպէս որ ալ երևիմ՝ դերասաններուն աչացը բնաւ փոյթս չէ :

— Ո՛հ գոնէ պիտի ամիլուիս, ըսաւ Թէրէզ . մօրուքդ կէս ոտք երկնցեր է :

— Քեզի չեմ ըսեր որ բնաւ փոփոխութիւն մը չ'պիտի ընեմ վրաս :

Թէրէզ այնքան դրնդիւնով խնդաց՝ որ Ռուսօի գլուխը ցաւելով միւս սենեակն անցաւ :

Թէրէզի ձանձրացուցիչ խօսքերուն վերջը չէր եկեր տակաւին, ամեն տեսակէն կար անոր քովը :

Generated on 2016-09-08 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մանրակրկիտ խնամքով մը պահարանէն հանեց հանդիսի զգեստները , մաքուր ճերմակեղէնը և հաւկթով փայլեցուցած կօշիկները : Բոլոր այս գեղեցիկ բաներն առնելով Ռուսօի անկողնին և աթոռներուն վրայ տարածեց :

Բայց Ռուսօ բնաւ ուշադրութիւն ցոյց չտուաւ :

Այն ատեն Թէրէզ իրեն ըսաւ ,

— Է՛ , հագուելու ժամանակդ եկած է . . . : Արքունի զարդարանքը երկայն կը տեէ . . . : Արոշեալ ժամուն Աւերսայլ չպիտի կարենաս հասնիլ :

— Թէրէզ , քեզի չըսի՞ թէ այսպէս աղէկ եմ , պատասխանեց Ռուսօ : Ամեն օր այս զգեստով կը ներկայանամ իմ քաղաքակիցներու առջև : Թագաւորն ալ ինծի պէս քաղաքացի մ'է :

— Օ՛ն , զ՛ն , ըսաւ Թէրէզ զան փորձելու և ողորանօք իւր կամքը կատարել տալու համար , պինդ գլուխ մի՛ ըլլար , ծաք , և ախմարութիւն մը մի՛ գործեր . . . : Ձգեստներդ հոս են . . . ածելիդ քովդ է . սափրիչին լուր տուի , եթէ այսօր ջիղերդ . . . :

— Հնորհակալ եմ , սիրելիս , պատասխանեց Ռուսօ , միայն անգամ մը խողանակաւ վրաս պիտի մաքրեմ , և կօշիկներս պիտի հագնիմ , ինչու որ հողաթափներով դուրս չեն ելներ :

— Չըլլայ՞ որ դիտաւորութեանը վրայ հաստատ մնայ , ըսաւ Թէրէզ մտովի :

Եւ սկսաւ զան զրգուել մերթ պչրանօք , մերթ ողորանօք , մերթ կծու հեգնութիւններով : Բայց Ռուսօ լաւ կը ճանչնար Թէրէզը . թակարթը կը տեսնէր , կ'զգար որ թուլնալուն պէս՝ Թէրէզ զինքը պիտի նշաւակէր և ծաղրէր : Ուստի անսասան մնաց իւր դիտաւորութեան մէջ և բնաւ չնայեցաւ այն գեղեցիկ զգեստներուն՝ որ իւր ըսածին նայելով իւր բարեբարոյ կերպարանքը երևան կը հանէին :

Թէրէզ զինքը կը դիտէր : Միայն յոյս մը մնացեր էր Թէրէզի , այն թէ՛ Ռուսօ դուրս ելնելու ատեն երբէք չէր մոռնար անգամ մը հայելինայելու , ինչու որ փիլիսոփան ծայրայեղ մաքրասէր մ'էր՝ եթէ մաքրասիրութեան մէջ ծայրայեղութիւն կրնայ ըլլալ :

Սակայն Ռուսօ միշտ զգոյշ կեցաւ , և որովհետեւ Թէրէզի սիրտը հատնելով նայիլը աչքին զարկեր էր՝ կռնակը հայելոյն դարձուց

Ժամն հասաւ , փիլիսոփան զլուխը լեցուցեր էր թագաւորին ըսելու անհաճոյ խօսքերով :

Կօշիկին ճարմանդները կապելու ատեն այն խօսքերէն մէկ քանին բերնով ըսաւ , գլխարկը թեին տակն առաւ , նոյնպէս գաւազանը , և մէկ միջոցի մը որ Թէրէզ զինքը չէր կրնար տեսնել՝ իւր զգեստը և բաճկոնակը երկու ձեռքովը քաշեց՝ անոնց ծալքերը շտկելու համար :

Թէրէզ վերադարձաւ և թաշկինակ մը տուաւ՝ զոր Ռուսօ իւր լայն գրպանին մինչև յատակը մտեց , և Թէրէզ զինքը մինչև դրանդն առաջնորդեց ըսելով ,

— Է՛ , Ժաք , անշորհ բաներ մի ըններ , երեսդ նայողը կը վախնայ , դրամանեղի մը կերպարանքն առերես :

— Մնաս բարեաւ , ըսաւ Ռուսօ :

— Անպիտան մէկու մը նմաներես , պարոն , ըսաւ Թէրէզ , աղէկ նայէ քեզի :

— Աղէկ նայէ կրակին , պատասխանեց Ռուսօ , թղթերուս չդպչիս :

— Հաւաստի եղի որ լրտեսի մը կը նմանիս , ըսաւ Թէրէզ համբերութիւնը հատնելով :

Ռուսօ պատասխան չտուաւ , երգելով սանդուխէն իջաւ , և մութէն օգուտ քաղելով թեզանիքովը գլխարկը խողանակեց , շապիկին պարանոցին վրայ փոշին վար տուաւ ձախ ձեռքովը և որպէս արագ բայց հնարագիւտ զարդարանք մ՝ ունեցաւ :

Վար իջած ատեն՝ Բլադրիէր փողոցին ցիւր բանի տեղ չգրաւ , բայց կօշիկներուն ծայրովը կոխելով՝ Շան-զէլիզէն հասաւ՝ ուր կը կենային , այն համեստ կառքերը՝ զոր մենք սեթեթով հանրակառք կ'անուանենք , և որոնք տակաւին տասն երկու տարի առաջ , ինայողութեան ստիպուած ուղեւորները Բարիզէն Վէրսայլ կը կրէին , կամ լաւ ևս է ըսել՝ կը չարչարէին :



Generated on 2016-09-08 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՃԺ

ԳՐԻՆՆՈՒՆԻ ԹՄՏՐՈՒՆԵՐ

Ուղևորութեան պարագաները կարևոր չեն : Տարակոյս չկայ որ Ռուսո Զուիցերայի մը , օգնական գրագրի մը , քաղաքաւորին մը և աբբայի մը հետ ճամբորդութիւն ըրաւ :

Ժամը հինգ ու կէսին ատենները հասաւ : Երբունականները Գրիանոն հաւաքուեր էին մինչև թագաւորին գալը փորձ կ'ընէին , ինչու որ հեղինակին բնաւ խօսքը ընող չկար :

Քանի մ'անձինք գիտէին թէ Ժընէվացի Պ. Ռուսոն փորձին պիտի նայէր . բայց Պ. Ռուսոն ալ տեսնելը Պ. Ռամօն , կամ Պ. Մարմօնդէլը տեսնելէ աւելի կարևոր բան մը չէր , ասոնց պէս հետաքրքրաշարժ անասունները իրենց սրահակներուն կամ տներուն մէջ կրնային տեսնել պալատականները՝ պէտք եղած ծախքն ընելով :

Նոյն միջոցին սյաշտօն ունեցող սպան դէմը ելաւ՝ որուն պատուիրած էր Պ. տը Գուանիի որ Ժընէվացին գալուն պէս իրեն իմաց տայ :

Ազատորդին վազեց և իւր սովորական քաղցրութեամբը յարգանք զիմաւորեց Ռուսօն : Բայց հազիւ թէ աչքը վրան դարձուց որ զարմացաւ և կրկին ու կրկին անգամ նայեցաւ :

Ռուսօի վրան գլուխը փոշիով ծածկուած էր , լաթերը հին և ինքը գունասա . դեղնած դէմքին վրայ ճգնաւորի մօրուք մը կը տեսնուէր՝ որուն նմանը Վէրօայլի հայելիներուն մէջ բնաւ արարողապետ մը տեսած չէր :

Ռուսօ Պ. տը Գուանիի նայուածքէն շատ նեղուեցաւ , մանաւանդ այն ատեն՝ երբ թասրոնին սրահին մօտենալով՝ զեղեցիկ զգեստներուն , ուռուցիկ տանդէլաներուն , աղամանդներուն և կապոյտ ժապաւէններուն առատութիւնը տեսաւ՝ որոնք ահագին զամբիւղի մը մէջ ծաղկանց փունջի մը կը նմանէին :

Ռուսո նեղութիւն զգաց երբ այն նուրբ՝ և յամպարի հոտ բուրող օդը շնչեց՝ որ իւր կոշտ զգայարանքները կը թուլցընէր :

Սակայն պէտք էր քայլել և յանդգնութեամբ վարուել : Շատ աչքեր անոր վրայ յառեցան՝ որ կեղտ մ'էր այն ակումբին մէջ :

Պ. տը Գուանեի միշտ առջևէն երթալով՝ զինքը նուազաբեմն առաջնորդեց՝ ուր նուագածուք իրեն կ'սպասէին :

Հոն քիչ մը սփոփանք գտաւ , և մինչդեռ իւր եղանակը կ'երդէին լրջօրէն մտածեց թէ վտանդին ամենէն սաստիկ կետին հասած է , թէ բանը բուսած է , և թէ բոլոր պատճառաբանութիւններն անօգուտ են :

Արդէն տիկին արքայորդին տեսարան ելած էր Գօլէզի հագուստովը , իւր Գօլէնին կ'սպասէր :

Պ. տը Գուանեի իւր օթեակին մէջ հագուստը կը փոխէր :
Յանկարծ թագաւորը եկաւ՝ խոնարհած գլուխներու շրջանակի մը մէջ :

Լուի Ժե կը ժպտէր և կարի զուարթ կ'երևէր :
Արքայորդին աջ կոմը նստաւ , Պ. տը Բրօվանս կոմսն ալ գալով ձախ կողմը նստաւ :

Ակումբը կազմող յիսուն անձինք , որուն պէս մտերիմ ակումբ մը բնաւ տեսնուած չէր , թագաւորին նշան տալուն վրայ նստան :

- Է՛ , չե՛ն սկսիր , ըսաւ Լուի Ժե :
- Վեհափառ տէր , ըսաւ տիկին արքայորդին , հովիւներն ու հովուհիները տակաւին չե՛ն հագուիր , անոնց կ'սպասենք :
- Քաղաքի հագուստով ալ կրնար ըլլալ , ըսաւ թագաւորը :
- Ոչ , վեհափառ տէր , պատասխանեց տիկին արքայորդին թատրոնին մէջէն , ինչու որ լոյսին կ'ուզենք փորձել զզեստները՝ անոնց աներկբայելի արդիւնքը գիտնալու համար :
- Շատ ճիշդ է , տիկին , ըսաւ թագաւորը . ուրեմն շրջագայեմ :

Եւ Լուի Ժե նրբանցքը և թատերաբեմը պտտելու գնաց : Նաև տիկին Տիւսարի մինչև այն ատեն չգալուն համար սիրտը կը հատնէր :

Երբ թագաւորը իւր օթեակէն մեկնեցաւ՝ Ռուսօ մեղամաղձութեամբ

Generated on 2016-09-08 09:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և սրտնեղութեամբ պիտեց թատրոնին թափուր վիճակը և իւր միայնութիւնը :

Այս վիճակը զարմանալի հակապատկեր մը կը կազմէր այն ընդունելութեան հետ՝ զոր կը վախնար թէ իրեն պիտի ընէին :

Ինքը ենթագրեր էր թէ իւր առջև բոլոր խումբերը իրեն ճամբայ պիտի բանային , թէ պալատականք Բարիզցիներէն աւելի հետաքրքրութեամբ զինքն անհանդիստ պիտի ընէին , վախցեր էր որ իրեն շատ հարցումներ կ'ընեն , շատ մարդոց կը ներկայացնեն՝ մինչդեռ բնաւ ուշադրութիւն ընող չկար հիմա իրեն :

Մտածեց թէ իւր երկայն մօրուքը պէտք եղածին չափ երկայն չէր , թէ պատառատուն հանդերձներ ալ հագած ըլլար՝ իւր հին զգեսաներէն աւելի ուշադրութիւն չպիտի գրաւէր : Շատգոհ եղաւ իրմէ՝ ծիծաղելի պերճասիրութիւն չունենալուն համար :

Բայց այսու ամենայնիւ , բաւական նուաստացած կը տեսնէր ինքզինքը՝ նուազապետի աստիճանին իջած ըլլալով :

Նոյն միջոցին սպայ մը մօտեցաւ իրեն և հարցուց թէ Պ. Ռուսօ ինքն է :

— Այո , պարոն , պատասխանեց :

— Տիկին արքայորդին կը բաղձայ ձեզի խօսիլ , պարոն , ըսաւ սպայն :

Ռուսօ սիրտը թունդ ոտք ելաւ :

Տիկին արքայորդին իրեն կ'սպասէր : Գօլէզի մասը ձեռքն էր .

Երջանկութիւնս կորուսի .

Ռուսօն տեսնելուն պէս դէմն եկաւ :

Փիլիսոփան կարի խոնարհարար բարեւեց՝ մտքէն ըսելով թէ կին մը կը բարեւէր և ոչ թէ իշխանուհի մը :

Տիկին արքայորդին ալ կարի սիրուն կերպով վարուեցաւ վայրենի փիլիսոփային հետ . Եւրոպիոյ ամենէն կատարեալ մէկ ազատորդին հետ ալ այնպէս պիտի վարուէր :

Խրատ ուզեց իրմէ թէ ինչպէս գեղգեղելու էր երրորդ տողը ,

Գօլէն զիս կը լքէ . . .

Ռուսօ հնչման և երգահանութեան կանոններուն վրայ երկայն-
վարդապետութիւն մը սկսաւ, որ, որչափ բարձր ալ էր՝ թապաւո-
րին և քանի մը պալատականներուն աղմկալի պալատեամբը ընդմի-
ջեցաւ :

Թագաւորը դերասանաց սենեակը մտաւ՝ ուր տիկին արքայորդին
այնպէս դաս կ'առնէր փիլիսոփայէն :

Այն թափթփած մարդը տեսնելով՝ թագաւորին առաջին շարժու-
մը, առաջին զգացումը ճիշդ Պ. տը Գուանեիինին նմանեցաւ . մի-
այն թէ Պ. տը Գուանեի կը ճանչէր Ռուսօն, մինչդեռ թագաւորը
չէր ճանչեր :

Իշխանուհւոյն շնորհաւորութիւնները և շնորհակալութիւնները
լսելու ատեն երկար ատեն մեր ազատ մարդը դիտեց :

Արքայական իշխանութեան դրոշմը կրող սոյն նայուածքը՝ որ
ուրիշ և ոչ մէկ նայուածքի առջև խոնարհելու վարժուած չէր՝
անպատում տպաւորութիւն մ'ըրաւ Ռուսօի վրայ՝ որուն փայլուն
աչքը անստոյգ և երկչոտ էր :

Իշխանուհին սպասեց որ թագաւորը իւր զննութիւնն աւարտէ,
և այն ատեն Ռուսօի կողմը երթալով ըսաւ,

— Ձեր Աւեհափառութիւնը հրաման կու տայ որ մեր մատենա-
գիրը իրեն ներկայացնեմ :

— Ձեր մատենագիրը, ըսաւ թագաւորը մտքին մէջ փնտռել
կեղծելով :

Ռուսօ այն խօսակցութեան միջոցին ներսէն կ'առնէր կու տար .
Թագաւորին աչքը յաջորդարար տեսաւ և՛ զոգցես մանրացոյցի մը
մէջ կեդրոնացած արևուն ճառագայթին նման՝ իւր տէրութեան ա-
մենէն մեծ մատենագրին այն երկայն մօրուքը, շապիկին ծումուկած
պարանոցը, վրայի փոշին, անկանոն կեղծամը այրեց :

Իշխանուհին մեղքեցաւ այս վերջինը :

— Պ. Ժան-Ժաք Ռուսօ, Աւեհափառ տէր, ըսաւ, հեղինակ այն
գուսաներգութեան՝ զոր քիչ մ'հտք Ձեր Աւեհափառութեան առջև
պիտի մուցնենք :

Թագաւորը Կլուխը վեր առաւ այն ատեն :

— Ա՛հ , ըսաւ պաղ կերպով մը , կը բարեւո՛մ զձեզ , պարոն Ռուսօ :

Եւ վերստին անոր կը նայէր՝ հանդերձին բոլոր անկատարելութիւնները իրեն զգացնելու կերպով մը :

Ռուսօ ինքնիրեն հարցոյց թէ ինչպէս կը բարեւեն Գաղղիոյ թագաւորը , առանց պաշտական մ'ըլլալու՝ սակայն նաև առանց անքաղաքավարութիւն մը գործելու՝ ըստ որում իբօք այն իշխանին տունն էր :

Բայց , մինչդեռ Ռուսօ այսպէս կը պատճառաբանէր մտքէն՝ թագաւորն իրեն կը խօսէր իշխանաց յատուկ այն զիւրութեամբը՝ որոնք ամեն բան ըսած կը համարուին՝ երբ իրենց խօսակցին հաճոյ կամ անհաճոյ բան մ'ըսեն :

Ռուսօ չխօսելով կեցած տեղը քար դարձեր էր : Բռնակալին համար պատրաստած բոլոր պարբերութիւնները մտցեր էր :

— Պարոն Ռուսօ , ըսաւ թագաւորը միշտ անոր զգեստին և կեղծամին նայելով , աղօր եղանակ մը յօրիներ էք , անով զուարճալի վայրկեաններ կ'անցնեմ :

Եւ թագաւորն սկսաւ ձայնի և երգի սահմաններէ դուրս ձայնով մը երգել ,

Քաղքին սիրապաշտներուն

Թէ լսէի խօսքերուն ,

Ա՛հ , ինձ ո՛րչափ զիւրին էր

Նոր սիրահարներ գտնել :

— Աղւնր է , ըսաւ թագաւորը երբ վերջացուց :

Ռուսօ բարեկց :

— Չգիտեմ թէ լաւ պիտի երգեմ , ըսաւ իշխանուհին :—

Ռուսօ իշխանուհւոյն կողմը դարձաւ այն մասին պէտք եղած իրաւոյ տալու համար :

Թագաւորը վերստին սկսաւ Գօլէնի մասը երգել ,

Խաւարամած հիւղիս մէջ ,

Նորանոր հոգեր անվերջ .

Փուք, արեգակ կամ մսիլ,
Միշտ նեղութեամբ տառապիլ:

Նորին Վեհափառութիւնը իբրև երածիշտ շատ գէշ կ'երգեր:
Ռուսո թագաւորին յիշողութենէն կէս մը գոհ, սակայն անոր յո-
ւրի կերպով երգելէն կէս մը վիրաւորուած՝ դէմքը կը նմանէր այն
կապիկին՝ որ սոխ մը կը կրծէ մէկ կողմէն ժպտելով և միւս կողմէն
լալով:

Իշխանուհին լուրջ կեցեր էր այն անխուով անտարբերութեամբ
որ միայն արքունիքը կը դանուի:

Թագաւորն առանց բան մը հոգ ընելու շարունակեց,

Ո՛հ Գօլէդ, իմ հովուուհիս,
Թէ գաս հիւզս բնակիս,
Ա՛լ անկէ ետք Գօլէնի,
Հոն ոչինչ պիտի պակսի:

Ռուսո կաս կարմիր եղաւ:

— Ըսէ նայիմ, պարոն Ռուսո, ըսաւ թագաւորը, ստոյգ է թէ
երբեմն Հայու պէս կը հագուիք:

Ռուսո աւելի կարմրեցաւ, և լեզուն բերնին մէջ կապուեցաւ,
այնպէս որ նոյն միջոցին թագաւոր անգամ ընէին Ռուսոն՝ բառ մը
չպիտի կրնար արտասանել:

Թագաւորն առանց պատասխանին սպասելու սկսաւ վերստին եր-
գել:

Ա՛հ, սովորաբար
Չգիտէ սէրը
Թոյլ առածը, արգիլածը:

— Կարծեմ, Բլադրիէր փողօցը կը բնակիք, պարոն Ռուսո, ը-
սաւ թագաւորը:

Ռուսո գլխովը հաստատական նշան մ'ըրաւ, ալ վրան կարո-
ղութիւն չէր մնացեր . . . :

Երբէք այնչափ դիմացած չէր :
Թագաւորը քթին տակէն երգեց ,

Տղայ մ'է սա ,
Տղայ մ'է սա . . .

— Կ'ըսեն թէ Վօլդէրի հետ շատ աւրուած էք , պարոն Ռուսօ :
Ա՛լ այս անգամ Ռուսօի գլխուն մէջ մնացած կտոր մը խելքն
ալ գնաց . ծունգերը կ'ընտեցան : Թագաւորը գրեթէ շմռքեցաւ զան ,
և իւր անզուսպ նուագամոլութիւնը շարունակելով հեռացաւ եր-
գելով :

Երթանք պարել կնձնեաց ներքև ,
Թև թիւ սուէք , փոքր աղջկունք :

Ապողոնը մեռցնելու չափ գէշ կերպով նուագածուած ձայնակ-
ցութեամբը , ինչպէս որ Ապողոն մեռցուցեր էր Մարտիասը :

Ռուսօ առանձին էր դերասանաց սենեկին մէջ : Իշխանուհին գա-
ցեր էր զարդարանքը վերջին անգամ աչքէ անցընելու :

Ռուսօ իյնալով լինելով , խարխափելով նրբանցքն հասաւ . բայց
ճիշդ մէջսեղը՝ աղամանդներով , ծաղիկներով և տանդէլաներով
շողշողուն երկու անձանց զարնուեցաւ . որոնք բոլոր ճամբան գոցեր
էին , թէև երիտասարդը խանդակաթ կը սեղմէր նորատի կնոջ թևը :

Նորատի կինը թրթուուն տանդէլաներովը , մեծ գլխադիրովը ,
հողմահարովը և անուշ հոտերովը ասաղի մը պէս կը փայլէր :
Ռուսօ անոր զարնուեր էր :

Երիտասարդը նիհար , փափուկ , սիրուն՝ իւր կապոյտ ժապաւէնը
անգղիական շապկին վրայ ճմլելով հրապուրիչ համարձակութեամբ
բարձրաձայն քրքիչներ կ'արձակէր , յետոյ յանկարծ կ'ընդփշէր
լուծիւններով կամ հծծիւններով որ ըստ կարգի նորատի կնոջ ծի-
ծաղը կը շարժէին և երիտասարդին հետ ունեցած մաերմութիւնը
ցոյց կու տային :

Ռուսօ տեսաւ որ այն գեղանի կինը , այն հրապուրիչ էակը
Յիւպարի կոմսուհին է , և զան տեսնելուն պէս՝ իւր սովորականին

համեմատ՝ սկսաւ միմիայն մէկ առարկայի մը պիշ պիշ նայել՝ և
ալ անոր ընկերը չտեսաւ :

Կապոյտ ժապաւէնով երիտասարդը տ'Նրդուա կոմնն էր՝ որ իւր
պապին սիրուհւոյն հետ զուարթ կատակներ կ'ընէր :

Տիկին Տիւպարի Ռուսօի գէմքը տեսնելով մութին մէջ՝ գոչեց ,
— Ա՛հ , տէր Աստուած :

— Ի՛նչ կայ , ըսաւ տ'Նրդուա կոմսը ըստ կարգի փիլիսոփային
նայելով :

Եւ արդէն ձեռքը կ'երկնցընէր իւր ընկերուհւոյն մեղմովին ճամ-
բայ բանալու համար :

— Պ. Ռ՛ուսօ , գոչեց տիկին Տիւպարի :

— Ժընէվացի՛ Ռուսօն , ըսաւ տ'Նրդուա կոմսը , պարապորդ ու-
նեցող դպրոցականի մը պէս :

— Այո , տէր իմ , պատասխանեց կոմսուհին :

— Ա՛հ , բարե , պարոն Ռուսօ , ըսաւ արթուն կոմսը՝ տեսնելով
որ Ռուսօ յուսահատ քայլ մը կ'առնէ ճամբայ բանալու համար .
բարե . . . : Հիմա ձեր եղանակը մտիկ պիտի ընենք :

— Վեհագուն տէր . . . , կակազեց Ռուսօ՝ որ կապոյտ ժա-
պաւէնը նշմարեց :

— Ա՛հ , շատ աղւոր եղանակ , ըսաւ կոմսուհին , հեղինակին
մտքին և հոգւոյն շատ յարմար :

Ռուսօ գլուխը վեր առաւ և աչքը կոմսուհւոյն հրաբորբոք նա-
յուածքէն այրեցաւ :

— Տիկին . . . , ըսաւ սրտնեղութեամբ :

— Ես Գօլէնի դերը պիտի կատարեմ , տիկին , գոչեց տ'Նր-
դուա կոմսը , և կ'աղաչեմ ձեզ , տիկին կոմսուհի , որ դուք ալ Գօ-
լէդի դերը կատարէք :

— Սիրով , տէր իմ , սակայն երբէք դեր կատարած չըլլալով
չեմ համարձակիր վարպետին եղանակը պղծելու :

Ռուսօ հոգին կու տար վերստին նայելու համար , բայց ձայնը
եղանակը , ողորանքը , գեղեցկութիւնը մէն մի սլաք եղեր էին իւր
սրտին :

Ուզեց խոյս տալ :

— Պարոն Ռուսօ , ըսաւ իշխանը անոր ճամբան կտրելով , կ'ուզեմ որ Գօլէնի դերն ինձ սովորեցնէք :

— Չեմ համարձակիր խնդրել պարոնէն որ Գօլէնի դերին համար ինձ խրատ տայ , ըսաւ կոմսուհին երկչոտութիւն կեղծելով , որով բոլորովին տիրեց Ռուսօի սրտին ,

— Սակայն Ռուսօ , ինչո՞ւ , հարցուց աչքովը :

— Պարոնը զիս կ'առէ , ըսաւ իշխանին իւր գիւթիչ ձայնովը :

— Ինչէ՞ր ալ կ'ըսէք , գոչեց տ'Արդուա կոմսը , ձե՞զ , ո՞վ կրնայ ձեզ ատել , աիկին :

— Չէք տեսներ , ըսաւ կոմսուհին :

— Պ. Ռուսօն շատ պատուաւոր ճարդ մ'ըլլալով և շատ աղւոր բաներ յօրինելուն համար , ձեզի պէս սիրուն կնոջմէ մը կարելի չէ որ խոյս տայ , ըսաւ տ'Արդուա կոմսը :

Ռուսօ մեծ հառաչ մը հանեց՝ այնպէս որ կարծեօ թէ հոգին աւանդելու վրայ էր , և խոյս առաւ այն նեղ անցքէն՝ զոր տ'Արդուա կոմսը անխահեմութեամբ իւր և պատին մէջ թողեր էր :

Բայց Ռուսօ բազմ չունէր այն գիշերը . չորս քայլ չառած գնաց ուրիշ խումբի մը զարնուեցաւ :

Այս անգամ խումբը երկու մարդէ կը բազկանար . մին ծեր , միւսը գեռահաս . մին կապոյտ ժապաւէն կը կրէր , դեռահասն էր սա . միւսը որ յիսունէ հինգ տարեկան կար՝ կարմիր զգեստներ հագեր էր և խստակրօնութենէն դեղնած էր :

Այս երկու մարդիկը զուարթասէր տ'Արդուա կոմսին ձայնն առին՝ որ բոլոր ուժովը կը խնդար և կը գոչէր՝

— Ա՛ , պարոն Ռուսօ , պարոն Ռուսօ , որին ըսեմ որ տիկին կոմսուհին ձեզ փախցուց՝ չպիտի հաւտայ :

— Ռուսօ՞ , մրմնջեցին երկու մարդիկ :

— Բռնեցէք , եղբայր , ըսաւ իշխանը միշտ խնդալով , բռնեցէք , պարոն տը լա Վօկիւյօն :

Ռուսօ հասկցաւ թէ իւր յոռի աստղը որ խութը տարաւ զինքը :

Պ. տը Բրօվանս կոմսը և Գաղղիոյ արքայազուներուն գաստիարակն էին այն երկու անձինք :

Պ. տը Բրօվանս կոմսն ալ Ռուսօի ճամբան կտրեց :

Generated on 2016-09-08 10:12 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

- Բարև , պարոն , ըսաւ կարճ և թափանցիկ ձայնովը :
- Ռուսո խռոված խոնարհեցաւ մոմուալով :
- Ելնելիք շունիմ , հոս պիտի մնամ :
- Ա՛հ , աղէկ որ ձեզ տեսայ , պարոն , ըսաւ արքայազուներ վարժապետի մը կերպով որ սխալ ընող աշակերտ մը փնտուելով կը գտնէ :
- Գարձեալ անդէպ շնորհաւորութիւններ , ըսաւ Ռուսո մտքէն : Ի՛նչ ծանծաղամիտ են այս մեծերը :
- Չեր Գասիդի թարգմանութիւնը կարդացի , պարոն :
- Ա՛հ , ըսաւ Ռուսո մտովի , իրաւ աս գիտուն է , իմաստակ է :
- Գիտէք որ Գասիդի թարգմանութիւնը խիստ դժուար է :
- Վեհազուն տէր , այնպէս ըլլալը գրած եմ փոքրիկ յառաջարանի մը մէջ :
- Այո , գիտեմ , գիտեմ . հոն ըսեր էք թէ Լատիններէն քիչ գիտէք :
- Շատ ստոյգ է ըսածս , վեհազուն տէր :
- Ուրեմն ինչո՞ւ թարգմանեցիք Գասիդը , պարոն Ռուսո :
- Ոճի վարժութեան համար , վեհազուն տէր :
- Ա՛հ , պարոն Ռուսո , սխալ ըրած էք imperatoria brevitates լատիշ և հարճարճոք հարմար ճշ թարգմանելով :
- Ռուսո գող ելած մաքին մէջ փնտուեց :
- Այո , ըսաւ դեռուհասս իշխանը՝ Սօմզի գրութիւններէն սխալ մը գտնող ծեր գիտնականի մը վստահութեամբ . այո՛ , այսպէս թարգմաններ էք : Այո այն մասին մէջն է՝ ուր Գասիդ կը պատմէ թէ Պիզոն իւր զինուորներուն ճառ խօսեցաւ . . .
- Լաւ , վեհազուն տէր :
- Լաւ , պարոն Ռուսո , imperatoria brevitatem կը նշանակէ զօրադիպի մը կորիւն-նեւոթ . . . կամ հրամայելու վարժ մէկու մը : Հրամանատարութեան կտրկութիւնը . . . ահա այս կը նշանակէ , այնպէս չէ , պարոն ար լա Վօկիւյօն :
- Այո , տէր իմ , պատասխանեց դաստիարակը :
- Ռուսո պատասխան չտուաւ : Յետոյ իշխանը յարեց ,

Generated on 2016-09-08 10:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Այո շատ մեծ սխալ մ'է, պարոն Ռուսօ . . . Ո՛Տ ուրիշ
ալ կայ :

Ռուսօ գունատեցաւ :

— Չէջինայի վերաբերեալ մասին մէջն է, պարոն Ռուսօ : Այս-
պէս կ'սկսի՝ At in superiore Germania . . . Գիտե՞ք որ Չէջինայի
նկարագրութիւնն է, Cito sermone :

— Լինովին կը յիշեմ, վեհագուն տէր :

— Գուք թարգմաններ էք այս՝ Գալ խօսելով . . .

— Անշուշտ, վեհագուն տէր, և կը կարծէք . . .

— Cito sermone կը նշանակէ՝ որ շուտ կը խօսի, այսինքն գիւ-
րաւ :

— Գալ խօսելով, ըսի ես :

— Այն աստե՛ն պէտք էր որ decoro կամ ornato կամ eleganti
sermone ըլլար. cito ազդու վերադիր մ'է, պարոն Ռուսօ : Այս
ալ Ոթոնի վարուց փոփոխութեան նկարագրին մէջ Գասիդի ըսածին
պէս է. Delata voluptas, dissimulata luxuria cunctaque, ad im-
perii decorem composita.

— Պերճոս-Նիւնն ու հելլոս-Նիւնն ուրիշ ասե՛նի Ռուսով, և իելիը
ժողովը կայսրոս-Նիւնն փառաց վերահասարակական գալով Քուսը աշխարհի զար-
ման և պարճարեց, թարգմանեցի այդ :

— Սխալ, պարոն Ռուսօ, սխալ. նախ՝ մէկ պարբերութիւնը ե-
րեք փոքր պարբերութիւններ ըրեր էք, որով ստիպուեր էք զէշ
թարգմանել dissimulata luxuria . . . յետոյ, նոյն պարբերու-
թեան վերջին մասին մէջ սխալ մ'ըրեր էք : Գասիդ ըսել ուզած
չէ թէ Ոթոն կայսրը խելքը միտքը կայսրութեան փառաց վերա-
հաստատման տուած էր. այլ ըսել ուզեր է թէ՛ այլ ևս իւր կիր-
քերը չյագեցնելով, և իւր պերճասիրութիւնը ծածկելով՝ Ոթոն
կայսրութեան փառք բերելու կերպով ամեն բան կը պատրաստէր,
ամեն բան կը յարմարցնէր, ամեն բան կը դարձնէր . . . ամեն
բան, կ'իմանա՞ք, պարոն Ռուսօ, այսինքն նոյն իսկ իւր կիրքերն ու
մոլութիւններն ալ : Ահա իմաստը, բազմաձիւղ է. ձերը քաշքշուք
է. այնպէս չէ՞, պարոն տը լա Վօկիւյօն :

— Այո տէր իմ :

Ռուսօ այս անողորմ ճնշման ներքև քրտինք կը թափէր :
 Արքայազունը թոյլ աուաւ որ պահ մը շունչ առնէ յետոյ՝
 — Փիլիսոփայութեան մէջ շատ յառաջ գացած էք, ըսաւ :
 Ռուսօ խոնարհութիւն ըրաւ :

— Միայն թէ ձեր էփլը վտանգաւոր գիրք մ'է :

— Վտանգաւոր, վեհազուն տէր :

— Այո, պզտիկ եկամուտ ունեցող քաղաքաւորներուն ծուռ պա-
 ղափարներ տալով :

— Վեհազուն տէր, մարդ մը հայր եղած ատեն իմ գրքիս պայ-
 մաններուն մէջ կը մտնէ, կ'ուզէ տէրութեան ամենէն մեծը ըլլայ,
 կ'ուզէ ամենէն յետինն ըլլայ . . . : Հայր ըլլալը . . . :

— Պարոն Ռուսօ, ըսաւ յանկարծ չարամիտ իշխանը, ձեր Խոս-
 քովան-Նիւնիւր ի՞նչ զուարճալի գիրք է . . . : Իրաւ ըսէ նայինք
 քանի՞ զաւակ ունեցած էք :

Ռուսօ գունատեցաւ, դողդոջեց, և զայրալից ու հիացական աչ-
 քով մը նայեցաւ այն դեռահաս դահճին՝ որուն չարասրտութիւնն
 աւելի սաստկացաւ այն արտայայտութեամբ :

Եւ իրօք ալ այնպէս էր, ինչու որ առանց պատասխանին սպա-
 սելու՝ արքայազունը հեռացաւ դաստիարակը թէն առած, և այն-
 պէս անողորմ կերպով ճնշած մարդուն գործերը քննադատելը շա-
 րունակելով :

Ռուսօ առանձին մնալով տակաւ առ տակաւ սթափեցաւ՝ երբ
 լսեց որ նուագածուք իւր եղանակին սկզբնաւորութիւնը կ'ընեն :

Տատանելով դէպ 'ի նուագաբեմը գնաց և իւր աթոռն ելած
 ատեն՝ մտովի ըսաւ ,

Խենդ, տխմար, վնու եմ ես . այն անողորմ իմաստակին տալու
 պատասխանս հիմա գտայ : «Վեհազուն տէր, պէտք էի ըսել, խեղճ
 ծեր մը չարչարելը անգթութիւն է երիտասարդի մը համար :

Այս կետին հասած էր և իւր գտած խօսքէն դո՛հ՝ երբ տիկին
 արքայորդին և Պ. տը Գուանեի իրենց երկնուագն սկսան : Փիլիսո-
 փային մտմտութիւնը երաժշտի ցաւին փոխուեցաւ . սրտէն ետք ականջը
 կը կրէր իւր պատիժը :

Մ

ՆԵՐԿԱՅՈՒՄԸ

Ներկայացումը սկսելուն պէս՝ ամենուն ուշադրութիւնը թատերաբեմը գրաւուելով՝ Ռուսօի նայող չկար :

Ռուսօ սկսաւ իւր շուրջը նայիլ : Տեսաւ որ պալատականներ գիւղացիի հագուստներ հագած սխալ կ'երգէին և կիներ՝ որոնք արքունական հանդերձներ հագած՝ հովուուհիներու նման կը քծնէին :

Տիկին արքայորդին ճիշդ կ'երգէր՝ սակայն անկատար դերասան մ'էր . նաև ձայնն այնքան քիչ կ'ելնէր՝ որ հազիւ կը լսուէր : Թագաւորը , ուրիշներն անհանգիստ չընելու համար , խաւարած օթեակ մը մտեր էր և տիկիններուն հետ կը խօսէր :

Պ. արքայորդին յուշարար եղեր էր այն գուսաներգութեան՝ զոր աղէկ չէին կատարեր :

Ռուսօ սկսաւ մտիկ չընել , սակայն անկարելի էր չլսել : Միայն թէ միթիթարանք մ'ունէր . այն ականաւոր երգիչներուն մէջ անուշ դէմք մը տեսեր էր , և այն զեղջկուհին՝ որուն Երկինք այն գեղեցկութիւնը պարզեցեր էր՝ բոլոր խումբին մէջ չզանուած աղւոր ձայնով մը կ'երգէր :

Ռուսօ ինքզինքը ժողովելով իւր դրակալին վրայէն սկսաւ պշուցեալ նայիլ այն սիրուն դէմքին , և երկու ականջը մէկէն բացաւ անոր ձայնին բոլոր քաղցրութիւնը կուլ տալու համար :

Տիկին արքայորդին հեղինակին այն ուշադրութիւնը տեսնելով և անոր ժպիտն ու նուազուն աչերը նկատելով՝ կարծեց թէ հեղինակը գոհ կ'ըլլար որ լաւ կտորները աղէկ կ'երգուին , և շնորհաւորութիւն մը ստանալու մասք՝ ըստ որում կին էր՝ դէպ 'ի գրակալը ծռելով ըսաւ .

— Այսպէս գէշ է , պարոն Ռուսօ :

Ռուսօ բերանը բաց մնացած և թմրած՝ պատասխան չտուաւ :

— Ա՛, խարուեր եմ, ըսաւ տիկին արքայորդին, և պարոն Ռուսօ այնպէս ըլլալը ըսել չուզէր: Ա՛ողաչեմ, պարոն Ռուսօ:

Ա՛լ Ռուսօի աչքը բնաւ չէր զատուեր այն աղւոր էակէն, սակայն նէ չէր նշմարեր իրեն եղած այն ուշադրութիւնը:

— Ա՛հ, ըսաւ տիկին արքայորդին մեր փիլիսոփային աչաց ուղղութեանն հետեւելով, օրիորդ տը Գավէրնէյը սխալ ըրաւ . . .

Անտրէ կարմրեցաւ, տեսաւ որ ամենքն իրեն դարձան:

— Ա՛չ, ո՛չ, գոչեց Ռուսօ, օրիորդը չէ, վասն զի օրիորդը հրեշտակի մը պէս կ'երգէ:

Տիկին Տիւպարի սլաքէ մ'աւելի սուր նայուածք մ'արձակեց փիլիսոփային:

Ընդհակառակը, տը Գավէրնէյ սեպուհը ուրախութենէն պիտի մարէր. ամինասիրուն ժպիտ մ'ուղղեց Ռուսօի:

— Այն դեռահաս աղջիկը աղէկ կ'երգէ, հարցուց տիկին Տիւպարի թագաւորին՝ որուն վրայ Ռուսօի խօսքը յայտնի կերպով տպաւորութիւն ըրեր էր:

— Չեմ լսեր . . ., ըսաւ Լուի Ժե. շատ ձայներու մէջ . . . երածիչտ ըլլալու է հասկնալու համար:

Սակայն Ռուսօ իւր աթոռին վրայէն շարժումներ կ'ընէր պարը (chœur) երգել տալու համար,

Գօլէն գարձաւ իւր հովուուհւոյն,

Օ՛ն տօնենք այս գեղեցիկ դարձ:

Առաջին փորձէն ետք ետեւը գառնալով Պ. տը Ժիւսիէօն տեսաւ որ քաղցրութեամբ զինքը կը բարեկէր:

Ժընէվացին քիչ չուրախացաւ տեսնելով որ իւր մեծութեամբը քիչ մ'իրեն գպած արքունի անձ մը կը դիտէ որ ինքը նոյն միջոցին արքունիքը կը կառավարէ:

Հանդիսաւոր կերպով բարեն առաւ և սկսաւ վերստին նայիլ Անտրէի՝ որ գովեստին վրայ աւելի աղւորցեր էր:

Երգը շարունակեց, և տիկին Տիւպարիի սիրտը կատաղութեամբ լեցուեցաւ. երկու անգամ նշմարեց որ Լուի Ժե տեսարանով զբա-

դամ՝ ուշադրութիւն չէր ընել իւր ըրած զուարճալի խօսքերուն :

Տեսարանը նախանձոտ կնոջ համար Անտրէն էր . այսու հանդերձ տիկին արքայորդին շատ շնորհաւորութիւններ ընդունեց և սիրուն զուարթութիւն մը ցոյց տուաւ :

Պ. տը Ռիշլիէօ դուքսը երիտասարդի մը աշխուժութեամբ թի-
թեւնիկի մը նման անոր շուրջը կը վազվզէր , և յաջողեր էր թատ-
րոնին խորը խնդացողներու խումբ մը կազմել՝ որուն կեդրոնը տի-
կին արքայորդին էր , և որ մեծ նեղութիւն կը պատճառէր Տիւ-
պարիի կողմին :

— Կ'երեւի թէ , ըսաւ Ռիշլիէօ բարձրաձայն , օրիորդը աղւոր
ձայն ունի :

— Շատ աղւոր , ըսաւ իշխանուհին , և եթէ անձնասիրութեանս
չանսայի՝ Գօլէդի դերն անոր կօւ տայի . բայց որովհետեւ զուար-
ճանալու համար այս դերն առի՝ մէկու մը չեմ տար :

— Ա՛հ , օրիորդ տը Գալէրնէյ Ձեր արքայազն Բարձրութենէ
աղէկ չպիտի երգէր այն դերը , և . . .

— Օրիորդը ընտիր երաժիշտ է , ըսաւ Ռուսօ սաստիկ զգածուե-
լով :

— Շատ ընտիր , ըսաւ իշխանուհին . և , շիտակն ըսելու համար՝
անորմէ կը սովորիմ դերս . ասկէ զատ-սքանչելի կերպով կը պարէ ,
քանի որ ես խիստ դէշ կը պարեմ :

Գիւրին է դատել թէ ինչ տպաւորութիւն ըրաւ այս խօսքը թա-
գաւորին , տիկին Տիւպարիի , և այն խել մը հետաքրքիրներուն ,
լրատուններուն , խարդաւանողներուն և նախանձոտներուն . իւրաքան-
չիւրը հաճոյք մը կ'զգար վէրք մը տալով , կամ ամօթապարտ և
վշտագին հարուածը կ'ընդունէր : Հոն չէր ոք անձ չկար , թերևս Ան-
տրէէ զատ :

Իշխանուհին Ռիշլիէօի խօսքերէն զրդուելով վերջապէս Անտրէի
երգել տուաւ :

Սպասաւորս կորուսի ,
Գօլէն զիս կը լքէ :

Թաղաւորը մեծ հաճոյք զգալով գլուխը կամաց կամաց ծռեցաւ , և

տիկին Տիւպարիի երեւոյն կարմիր ներկը սկսաւ կտոր կտոր թափիլ՝
ինչպէս որ պատկերի մը կ'ըլլայ խոնաւութենէն :

Ռիշլիէօ կինէ մ'ալ աւելի չար՝ իւր վրէժը վայելեց : Գավէր-
նէյի հօրը մօտեցեր էր , և այս երկու ծերերը կը նմանէին երկու
արձաններու՝ զորս կարելի է անուանել Աեղծաւորութիւն և Ապա-
կանութիւն , և որոնք իրարու աչք կ'ընէին միութեան դաշինք մը
կուելու :

Իրենց ուրախութիւնն աւելի սաստկացաւ՝ երբ տեսան որ տիկին
Տիւպարի հետզհետէ կը տխրէր : Այս վերջինն անոնց ուրախութիւնը
լրացուց՝ կերպ մը զայրոյթով ոտք ելնելով՝ որ կանոնի բոլորովին
հակառակ էր՝ քանի որ թապաւորը տակաւին նստած էր ,

Պալատականները միջիւններու նման մրրիկը գուշակեցին , և փու-
թացին զօրաւորագոյններուն քով ապաստանարան փնտտել : Ուստի
իշխանուհւոյն բարեկամները իւր շուրջը շարուեցան , տիկին Տիւ-
պարիի բարեկամներն ալ փաղաքշանքն աւելցուցին :

Հետզհետէ ներկայացման կարեւորութիւնը իւր բնական զծէն կը
շեղէր և ուրիշ կարգ մը գաղափարներու մէջ կը մտնէր : Ա'լ Գօ-
լէդը կամ Գօլէնը մտքէն անցընող չկար , և հանդիսականներէն
շատերը կը մտածէին թէ կարող տիկին Տիւպարիի պիտի գար քիչ
մ'ետք երգելու՝

Սպասաւորս կորուսի ,
Գօլէն զիս կը լքէ :

Ար տեսնե՞ս , ըսաւ Ռիշլիէօ ցած ձայնով Գավէրնէյի , կը տես-
նե՞ս աղջկանդ ունեցած սքանչելի յաջողութիւնը :

Եւ թե՛ն քաշելով նրբանցքը տարաւ ապակեւոր դուռ մը բանա-
լով . նոյն դրան վրայէն հետաքրքիր մ'ինկաւ վար որ դրանը պլլուած՝
թատրոնին մէջ կը նայէր :

— Շուտիկը տանի անգղամը , մ.մ.աջ Ռիշլիէօ թեզանիքը մաք-
րելով որ դրան ընդհարու ձն ճմլուեք էր , մանաւանդ տեսնելով
որ այն հետաքրքիրը գլեկին գործաւորներուն պէս հագուեք էր :

Արդարև գլեկին գործաւորներէն մին էր՝ որ թե՛ն ներքև ծաղիկ-
ներով լի զամբիւղ մ'առած՝ յաջողեր էր ապակիին ետևը կախ-

ու՛նելով թասարոնին մէջը նայելու՝ ուրկէ բոլոր տեսարանը դիտեր էր :

Նորբանցքին մէջ հրուեցաւ, ուր քիչ մնաց կռնակի վրայ պիտի իյնար. թէև չինկաւ՝ բայց զամբիւղը տակնուվրայ եղաւ :

— Ա՛հ, բայց ես կը ճանչնամ այս անօրէնը, ըսաւ Գավէրնէյ զայրալից աչքով մը :

— Ո՛վ է, հարցուց դուքսը :

— Հոն ի՛նչ կընես, անզգամ, ըսաւ Գավէրնէյ :

Ժիլպէր՝ ըստ որում նա էր, և ընթերցողն ալ արդէն ճանչցաւ զինքը՝ գոռոզութեամբ պատասխանեց,

— Ձէք տեսներ, կը նայիմ :

— Փոխանակ գործիդ նայելու, ըսաւ Ռիշլիէօ :

— Գործս լմնցաւ, ըսաւ Ժիլպէր դքսին խոնարհաբար, առանց Գավէրնէյի երեսը նայելու :

— Ո՛ւր որ երթամ այս դատարկատունին պիտի հանդիպիմ :

— Կեցէք, կեցէք, պարոն, ընդմիջեց ձայն մը մեղմովին : Ժիլպէրիկս աշխատասէր մէկն է, և տնկագիտութեան մէջ խիստ փութաջան է :

Գավէրնէյ ետևը դառնալով Պ. տը Ժիւսիէօն տեսաւ՝ որ Ժիլպէրի երեսը կը շոյէր :

Բարկութենէն կրակ կտրելով հեռացաւ :

— Ծառաներն հոս, մումուաց :

— Լ՛իւռ, ըսաւ Ռիշլիէօ, Նիգօլ ալ հոս է . . . նայէ . . . անդին, դրանն անկիւնը . . . : Ի՛նչ չարաճճի է, բնաւ ակնարկ մը աչքէ չփախցնէր :

Արդարև, Նիգօլ Գրիանօնի սպասաւորաց քսանին հետևը կեցած՝ փրոն գլուխը վեր ղերցուցեր էր, և աչքը արմանքէն զարմանքէն մեծ մեծ քացած՝ կարծես թէ ամեն բան երկուք կը տեսներ :

Ժիլպէր զան տեսնելով երեսն անդին դարձուց :

— Եկու՛ր, եկու՛ր, ըսաւ դուքսը Գավէրնէյի, ինձ այնպէս կը թուի որ թագաւորը քեզի խօսիլ կ'ուզէ . . . կը փնտռէ :

Եւ երկու բարեկամները թագաւորին օթեկին կողմն սկսան երթալ :

Տիկին Տիւպարի ոտքի վրայ կեցած՝ Պ. տ'Էկիւլլօնի հետ կը բա-

Generated on 2016-09-08 10:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նակցեր՝ որ ինքն ալ ոտքի վրայ էր : Այս վերջինը բնաւ աչքէ չէր փակցնէր իւր մօրեղբօրը և ոչ մէկ շարժումը :

Ռուսօ առանձին մնացած՝ Անտրէին վրայ կը հիանար . խելքը միտքը աւոր սիրահարելու տուած էր՝ եթէ կը ներուի մեզ խօսքին այսպէսի՞ձե և՛ մը տալ :

Ականաւոր դերասանները կ'երթային իրենց օթեակներուն մէջ հանուելու՝ ուր ծաղիկները փոխեր էր ծիլպէր :

Պ. տը Ռիշլիէօ՝ թագաւորը տեսնելու երթալէն 'ի վեր՝ Գավէրնէյ առանձին մնացած՝ սպասելով սիրտը տագնապի մէջ էր և կ'եփէր : Հուսկ ուրեմն դուքսն եկաւ մատը շրթանցը վրայ դնելով :

Գավէրնէյի գոյնը նետեց ուրախութենէն , և բարեկամին դէմն ելաւ՝ որ զինքը թագաւորին օթեկին ներքե տարաւ քաշելով :

Հոն լսեցին ինչ որ քիչ մարդիկ կրնային լսել :

Տիկին Տիւպարի՝ Նորին Աւհափառութեան կ'ըսէր .

— Այս իրիկուն ընթրիքի սպասեմ՝ Ձեր Աւհափառութիւնը :

Եւ թագաւորը կը պատասխանէր .

— Խոնջած եմ , կոմսուհի , մի դպչիր ինձ :

Ճիշտ նոյն միջոցին արքայորդին եկաւ , և գրեթէ կոմսուհոյն ոտներուն վրայ կոխելով առանց զան տեսնել ցոյց տալու :

— Աւհափառ տէր , ըսաւ Ձեր Աւհափառութիւնը պատիւ պիտի ընէ՞ մեզ Գրիանօն ընթրելու :

— Ոչ , տղաս . հիմա տիկնոջ ալ կ'ըսէի , խոնջած եմ . ձեր դրօսանքը ինձ նեղութիւն պիտի պատճառէ . . . : Առանձին պիտի ընթրեմ :

Արքայորդին խոնարհութիւն ըրաւ և մեկնեցաւ : Տիկին Տիւպարի մինչև մէջքը խոնարհելով մեկնեցաւ՝ բարկութենէն դողալով :

Թագաւորն այն ստեն նշան մ'ըրաւ Ռիշլիէօի :

Գուքս , ըսաւ , ձեզի վերաբերեալ գործի մը վրայ խօսելիք ունիմ՝ ձեզի :

— Աւհափառ տէր . . .

— Գոհ չեղայ . . . : Ա՛ռազեմ որ ինձ բացատրէք . . . : Անցէք . . . : Առանձին պիտի ընթրեմ , ինձ ընկեր կ'ըլլաք :

Եւ թագաւորը Գավէրնէյի կը նայէր :

- Կարծեմ այս ազատորդին կը ճանչնաք, դուքս :
- Պ. տը Գավէրնէյը, այո, վեհափառ տէր :
- Ա՛հ, սիրուն երգչուհւոյն հայրն է :
- Այո, վեհափառ տէր :
- Իս մտիկ ըրէ, դուքս :
- Թագաւորը ծռելով Ռիշլիէօի ականջն 'ի վար խօսեցաւ :
- Գավէրնէյ ինքզինքը կերաւ որ յուզմունքը չյայտնէ :
- Քիչ մ'ետք Ռիշլիէօ Գավէրնէյի առջևէն անցնելով ըսաւ,
- Ետեէս եկուր առանց սովորական ձեերէդ դուրս բան մ'ը-
նելու :
- Ո՛ւր, ըսաւ Գավէրնէյ նոյն կերպով :
- Ինչո՞ւ պէտք, եկուր :
- Գուքսը մեկնեցաւ : Քսան քայլ հեռուէն Գավէրնէյ անոր ետե-
ւէն գնաց մինչև Թագաւորին բնակարանը :
- Գուքսը սենեակը մտաւ. Գավէրնէյ նախասենեակը մնաց :

ՃԺՌ

ԱԳԱՐԱՆԻ ՏՐԻՓԸ

Պ. տը Գավէրնէյ շատ չսպասեց : Ռիշլիէօ նորին վեհափառու-
թեան սենեկապանին հարցուց թէ Թագաւորը ի՞նչ ձգեր էր իւր
զարդարանին վրայ, և շուտով դուրս ելաւ ձեռքը բան մը բռնած՝
զոր սեպուհը առաջին անգամ չկրցաւ որոշել՝ զայն ծածկող մետաք-
սեայ քողին պատճառաւ :

Գայց մարաջախտը մտմտու քէն ազատեց իւր բարեկամը. սրահին
կողմէն ասորաւ զան :

— Սեպուհ, ըսաւ՝ անոր հետ առանձին մնալուն պէս, ինձ կը
թոյն թէ երբեմն տարակուսեցար իմ բարեկամութեանս վրայ :

— Հաշտուելնուս 'ի վեր ոչ, պատասխանեց Գավէրնէյ:

— Ուրեմն քու և տղոցդ հարստութեանը վրայ:

— Ո՛հ, այդ մասին, այո:

— Այդ մասին սխալած ես: Քու և տղոցդ հարստութիւնը այնպիսի արագութեամբ մը գալու վրայ է՝ որ խելքդ գլխէդ պիտի առնէ:

— Բա՛, ըսաւ Գավէրնէյ՝ որ ճշմարտութեան մէկ մասը կը նշմարէր, բայց ինքզինքը Աստուծոյ չյանձնելուն համար սատանայէն ալ կ'զգուշանար. ինչպէս տղոցս հարստութիւնն այսպէս շուտ կու գայ:

— Բայց արդէն Պ. Փիլիպ հարիւրապետ եղաւ՝ թագաւորէն վճարուած ջոկատով մը:

— Ո՛հ, ճշմարիտ է . . . և ձեզի պարտաւոր եմ:

— Ոչինչ: Յետոյ օրիորդ տը Գավէրնէյն ալ թերևս մաքքիզուհի պիտի ըլլայ:

— Ինչեր ալ կ'ըսէք, գոչեց Գավէրնէյ, ինչ, աղջիկս . . .

— Մտիկ ըրէ, Գավէրնէյ, թագաւորը ընտիր ճաշակ ունի. գեղեցկութիւնը, վայելչութիւնը և առաքինութիւնը երբ իրենց հետ տաղանդ ալ ունին՝ Նորին Աւհափառութիւնը կը դիւթեն . . . : Արդ, օրիորդ տը Գավէրնէյ բոլոր այս յատկութիւններուն վերջին ծայրն հասած է . . . : Այս պատճառաւ թագաւորը օրիորդ տը Գավէրնէյի շատ հաւաներ է:

— Դուքս, պատասխանեց Գավէրնէյ ծանր կերպարանք մ'առնելով որ դքսին նկատմամբ խիստ բիրտ կրնար համարուիլ, դուքս, ինչպէս կը բացատրես այդ հաւաներ բառը:

Ռիշլիէօ պնդեւ չէր սիրեր. ցամաք կերպով պատասխան տուաւ իւր բարեկամին,

— Սեպուհ, ես լեզուագէտ չեմ, ուղղապարտութիւն անդամ քիչ գիտեմ: Հաւաներ բառը ըստ իս կը նշանակէ չափէն աւելի գոհ, ահա այսչափ . . . : Եթէ դու չափէն աւելի դժգոհ ես որ թագաւորը տղոցդ գեղեցկութեանը, տաղանդին, արժանեսոց հաւաներ է կրնաս ըսել ես ալ Նորին Աւհափառութեան քով կը դառնամ վերստին:

Եւ Ռիշլիէօ երիտասարդի մը աշխուժութեամբ կրնկանցը վրայ դարձաւ :

— Դուքս, ըսածս աղէկ չհասկցար, զոչեց սեպուհը զան կեցընելով: Նզովից արմատ, ինչ շուտ կը տաքնաս :

— Ինչո՞ւ կ'ըսես թէ գոհ չես :

— Ես այդպէս խօսք ըրի :

— Թագաւորին հաճոյից վրայ պատմութիւններ կ'ուզես ինէ . . . :

Շուտիկը տանի այս անմիտ մարդը :

— Գարձեալ կ'ըսեմ, դուքս, այդպիսի խօսք մը բնաւ բերնէս չելաւ : Շիտակը ես գոհ եմ :

— Ա՛հ, դու . . . : Ե՛ր գոգոհ՞ը ո՞վ է . . . : Աղջիկդ :

— Ե՛հ :

— Սիրելիս, աղջիկդ քեզի պէս վայրենի մեծցուցիր :

— Սիրելիս, իմ աղջիկս առանձին մեծցաւ. այդ մասին բնաւ սիրտ չհատցուցի : Դավէրնէյի ծակիս մէջ ապրիլը բաւական կը համարէի . . . : Անոր առաքինութիւնը ինքնիրեն եղած է :

— Եւ կ'եւնեն կ'ըսեն թէ գիւղացիք գէշ խտտերը խլելը աղէկ գիտեն : Խօսքին կարճը՝ աղջիկդ մեծամիտ մէկն է :

— Կը սխալիս, աղանի մ'է :

Ռիշլիէօ դէմքը խոժոռեց :

— Ուրեմն խեղճ՝ աղջիկը աղէկ ամուսին մը գտնելու է, ինչու որ այս պակսութեամբ բաղդ շինելու առիթ չպիտի ունենայ ամեն ատեն :

Դավէրնէյ դքսին նայեցաւ դող ելնելով :

— Սակայն բաղդը բանելով՝ շարայարեց Ռիշլիէօ, թագաւորն այնպէս կաթողին կը սիրէ Տիւպարին՝ որ երբեք այլոց շատ ուշադրութիւն չպիտի ընէ :

Դավէրնէյի դողն անձկութեան փոխուեցաւ :

— Ուստի, շարայարեց Ռիշլիէօ, աղջիկդ քուկդ է, անհոգ եղիր : Կ'երթամ պէտք եղած առարկութիւնները կ'ընեմ Նորին Վեհափառութեան, և թագաւորը սլ մտքէն անգամ չանցընէր բնաւ :

— Բայց ինչը, տէր Աստուած, զոչեց Դավէրնէյ դեփ դեղին կարած՝ իւր բարեկամին թեւը ցնցելով :

— Օրիորդ Անարէի պղտիկ նուէր մ'ընելը, սիրելի սեպուհս :

— Պղտիկ նուէր մը . . . : Ինչ նուէր է այն, ըսաւ Գավէր-
նէյ ծակաչք կերպով և յուսալից :

— Ո՛հ, գրեթէ ոչինչ, ըսաւ Ռիշլիէօ անփութօրէն. սա է . . .
նայէ :

Եւ մետաքսեայ ծածկոյթին մէջէն ադամանդի տուփ մը հանեց :

— Ադամանդի տուփ մը :

— Չնչին բան մը . . . քանի մը հազար Ֆրանքի մանեակ մը՝
զոր նորին Աեհափառութիւնը երգչուհւոյն նուիրել կ'ուզէր՝ իւր
սիրական երգը երգած ըլլալուն համար. այս սովորական բան մ'է :
Բայց, քանի որ աղջիկդ ադէկէ կը վախնայ՝ ալ ասոր խօսքը չը-
նենք :

— Դուքս, չե՛ս մտածեր որ թագաւորը կը սրբողի :

— Անշուշտ կը սրբողի. բայց առաքինութեան յատկութիւնը մէ-
կու մը կամ բանի մը փաստել չէ՞ միշտ :

— Միով բանիւ, դուքս, մտածէ, ըսաւ Գավէրնէյ, աղջիկն
այնչափ անխելք չէ :

— Այսինքն դու ես խօսողը և ոչ աղջիկդ :

— Ո՛հ, ես շատ աղէկ գիտեմ ըսելիքը կամ ընելիքը :

— Չինացիք շատ երջանիկ են, ըսաւ Ռիշլիէօ :

— Ինչու, ըսաւ Գավէրնէյ յայտուշ կրթած :

— Ինչու որ շատ ջրանցքներ և գետակներ ունին իրենց երկրին
մէջ :

— Դուքս, խօսքը կը փոխես, համբերութիւնս մի հատցնէր.
խօսէ :

— Կը խօսիմ, սեպուհ, և բնաւ խօսքը չեմ փոխեր :

— Չինացւոց խօսքն ընելու ինչ հարկ կայ. ինչ յարաբերու-
թիւն ունին անոնց գետակները իմ աղջկանս հետ :

— Շատ մեծ յարաբերութիւն մը . . . : Չինացիք երջանիկ են
իրենց չափէն աւելի առաքինի աղջիկները ջրամոյն ընել, և մէկը
բան մը չկրնար ըսել :

— Ե՛հ, ըսէ նայիմ, դուքս, ըսաւ Գավէրնէյ, արդարութեամբ
վարուելու է : Ենթադրէ որ աղջիկ մ'ունենաս :

— Միթէ չունիմ . . . և եթէ մէկը գայ ըսէ թէ չափէն աւելի առաքինի է՝ . . . ըսողը շատ չար ըլլալու է :

— Վերջապէս կ'ուզէիր որ ուրիշ կերպ ըլլար , այնպէս չէ՞ :

— Ո՛հ , ես տղոցս չեմ խառնուիր ութ տարուն անցընելուն պէ՛ս :

— Գոնէ , մտիկ ըրէ իս : Եթէ թագաւորն ինձ մանեակ մը յանձնէր աղջկանդ տալու համար , և աղջիկդ գանգատէր քեզի :

— Ո՛հ , բարեկամ , համեմատութիւն չկայ . . . : Ես միշտ արքունիքն ապրեցայ . զու՛ Հուրօնի * մը պէս կեանք վարեցիր , այս իրարու չնմանիր : Ինչ որ քեզի համար առաքինութիւն է՝ ինծի համար անմտութիւն է , ասկէ աւելի տհաճելի բան մը չկրնար ըլլալ և այս ալ պէտք է որ դու գիտնաս , այն է երթալ մէկու մը ըսել՝ « Ինչ կ'ընէիր դու այսպիսի պարագայի մը մէջ : » Ասկէ զատ , համեմատութիւն ընելով ալ կը սխալիս , սիրելիս : Բնաւ խօսք չկայ որ երթամ աղջկանդ մանեակ մը տամ :

— Դու ըսիր . . .

— Ես բնաւ այդպիսի խօսք մը չըրի : Ես իմաց տուի թէ թագաւորը ինձ հրամայեց որ օրիորդ տը Դավէրնէյի համար աղամանդի տուփ մը կար իւր սենեակը , առնեմ զայն , ինչու որ անոր ձայնին հաւնեմ էր , բայց չըսի թէ Նորին Վեհափառութիւնն պատուիրեց որ ես տամ զայն օրիորդին :

— Ճշմարիտ , ըսաւ սեպուհը համբերութիւնը հատնելով , չպիտեմ ինչ պիտի ըլլամ : Ըրած խօսքէդ մէկը չեմ հասկնար , հանելուկներով կը խօսիս ինձ : Ինչո՛ւ տան այս մանեակը եթէ տրուելու համար չէ , ինչո՛ւ այս յանձնարարութիւնը քեզի ընեն , եթէ ձեռքովդ չպիտի տաս :

— Ա՛հ , ըրաւ , բ՛ւհ , բ՛ւհ , սա Հուրօնին նայեցէք սա տղեզ անասունին նայեցէք :

* Անուն մը որ Յակոբութեան խոռվարար անդամակցաց կը տրուէր :

Յակոբութիւնը ապստամբ գիւղացիներու ընկերութիւն մ'էր՝ որ Ժամ Թագաւորին բանտարկուած միջոցին՝ Բիզարտիոյ մէջ (Պաղդիս) կազմուեցաւ 1358ին , ազնուականները սպաննելու նպատակաւ : Ծ. Թ.

— Ո՞վ է այդ :

— Դու, միամիտ բարեկամս. դու, իմ հաւատարիմ. . . : Լուսինէն կու գաս, հւրկէ կուգաս, խեղճ սեպուհս :

— Ես ալ չեմ գիտեր :

— Ոչ, բան մը չես գիտեր : Սիրելիս, երբ թագաւոր մը նուէր մը կ'ընէ կնոջ մը, և Պ. տը Ռիշլիէօ կ'ընէ սոյն յանձնարարութիւնը՝ նուէրը վսեմ է և յանձնարարութիւնը լաւ կատարուած, այս միտքդ պահէ . . . : Ես չեմ տար սուփը, սիրելիս, Պ. Լըպէլի պաշտօնն էր այս : Կը ճանչնաս Պ. Լըպէլը :

— Ուրեմն որու կ'ընես այս յանձնարարութիւնը :

— Բարեկամ, ըսաւ Ռիշլիէօ Դավէրնէյի ուսին զարնելով և այս մտերմական շարժման սատանայական ժպիտ մը կցելով, երբ օրիորդ Անտրէի պէս հիանալի առաքինութեամբ անձի մը հետ է գործս՝ ինծի նման բարոյապէս վարուող մէկը չկայ, երբ աղանիի մը կը մօտենամ, ինչպէս որ դու կ'ըսես, ներսս բնաւ ազուաւի հոտ չկայ, երբ պատգամաւորութիւն մ'ունիմ օրիորդի մը համար՝ հօրը կը խօսիմ . . . : Քեզի կը խօսիմ, Դավէրնէյ, և անդամանդի տուփը քեզի կը յանձնեմ որ աղջկանդ տաս . . . : Հիմա, կ'ուզես մի . . .

Տուփը երկնցուց :

— Չես ուզեր մի :

Չեռքը ետ քաշեց :

— Ո՛հ, բայց, բայց, գոչեց սեպուհը չըսես որ սոյն նուէրը տեղը տալու յանձնարարութիւնը ինձ կ'ընէ Նորին Աւհափառութիւնը, խիստ օրինաւոր է այս նուէրը և հօրմէ մը կը համարուի, կը սրբագործուի . . .

— Ապա թէ ոչ պիտի կասկածիս թէ Նորին Աւհափառութիւնը յոռի դիտաւորութիւններ ունի, ըսաւ Ռիշլիէօ լրջօրէն : Ասոր չպիտի համարձակիս, այնպէս չէ :

— Աստուած չընէ : Բայց աշխարհ . . . այսինքն աղջիկս . . .

Ռիշլիէօ ուսերը վեր ըրաւ :

— Կ'առնես, թէ ոչ, ըսաւ :

Դավէրնէյ արագօրէն ձեռքն երկնցուց :

— Ո՛րքան բարոյապէս կը վարուիս , ըսաւ դ. քսին ժպիտով մը՝ որ քիչ մ'առաջ Ռիշլիէօի իրեն ուղղածին յար և նմանն էր :

— Միթէ կատարեալ բարոյականութիւն չէ՞ , սեպուհ , ըսաւ մարաշխատը , թագաւորին սրտին և աղջկանդ հրապոյրին մէջ տեղը մտցնել հայրը . . . : Ժրնէվացի Պ. Ժան-Ժաք Ռուսօն որ քիչ մ'առաջ հոս կը պատէր՝ թող ան դատէ մեզ . քեզի պիտի ըսէ որ հանդուցեալ Ժօզէֆը ինծի նայելով անբարոյական կը համարուի :

Ռիշլիէօ այս քիչ մը խօսքը այսպիսի անտարբերութեամբ մը , կցկցուն ազնուականութեամբ մը , կեղծիքով մ'ըսաւ՝ որ Գավէրնէյ ստիպուեցաւ դիտողութիւն չընելու և կարծեց թէ պէտք է համոզուիլ :

Ուստի իւր մեծանուն բարեկամին ձեռքը բռնելով և սեղմելով ,

— Նորբամտութեանդ շնորհիւ աղջիկս այս նուէրը պիտի ընդունի , ըսաւ :

— Այս նուէրը աղբիւր և սկիզբ է այն հարստութեան՝ որուն վրայ քեզի կը խօսէի՝ առաքինութեան վրայ մեր ըրած այժ տաղտկալի վիճաբանութենէն առաջ :

— Հնորհակալ եմ , սիրելիդ իմ դուքս , 'ի բոլոր սրտէ շնորհակալ եմ :

— Խօսք մ'ալ ունիմ . չըլլայ որ այս եղած շնորհը Տիւպարեանց բարեկամներուն յայտնես : Արնայ ըլլալ որ տիկին Տիւպարի թագաւորը կը թողու և կը փախչի :

— Թագաւորը կը սբդողի մեզի այն ատեն :

— Չեմ գիտեր , բայց կոմսուհին ըրածնուս չպիտի հաւնի : Ես ալ ապուրը կուտեմ . . . չըլլայ որ բերնէդ հանես :

— Բնաւ հոգ մի ընե՛ր : Բայց իմ խոնարհ շնորհակալութիւններս թագաւորին հաղորդէ :

— Նաև աղջկանդ շնորհակալութիւնները , չեմ մոռնար . . . : Բայց քեզի եղած շնորհը միայն այսչափ չէ . . . : Գու անձամբ շնորհակալ պիտի ըլլաս թագաւորին , սիրելիս . Նորին Աւետիաւորութիւնը քեզ ընթրիքի կը հրաւիրէ :

— Զիս :

— Քեզ , Գավէրնէյը . մէք մեզի ենք : Նորին Աւետիաւորութիւնը ,

Generated on 2016-09-08 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դու, ես, աղջկանդ առաքինութեան վրայ կը խօսինք : Մնաս բարեալ, Գավէրնէյ, Տիւպարին Պ. տ'էկիւլօնի հետ կը տեսնեմ. պէտք չէ որ մեզ միասին տեսնեն :

Այս ըսաւ, և մանկլաւիկի մը նման՝ թեթեաշարժ՝ օրահին ծայրէն անհետ եղաւ, Գավէրնէյը ադամանդի տուփին հետ առանձին թողլով, Սաքսօնիացի տղունը նման՝ որ արթննալուն կը տեսնէ թէ քնացած ատենը Ծնունդը խաղալիքներ բերիւր դեր է ձեռքը :

ՃԺԴ

ԼՈՒԻ ԺԵ ԹԱՐԵԻՈՐԻՆ ԱՆՊԱՏՈՅՄ ԸՆԹՐԻՔԸ

Մարաշախար փոքր սրահակը գտաւ Նորին Աւհափառութիւնը, ուր գացեր էին անոր ետեւէն քանի մը պալատականներ՝ որոնք աւելի լաւ ունէին արքայորդոյն տուած ընթրիքէն ետ մնալ՝ քան թէ իրենց վեհապետին նայուածքը իրենցմէ զատ ուրիշին վրայ դարձնել :

Բայց այն իրիկունը կ'երևէր թէ Լուի Ժե այն պարոններուն նայելէ ուրիշ ընելու բան մ'ունէր : Բոլորն ալ ճամբեց ըսելով թէ չպիտի ընթրէ, կամ եթէ ընթրէ՝ առանձին պիտի ընթրէ : Այն ատեն բոլոր հիւրերը այս հրամանն առնելուն պէս՝ վախնալով որ անհաճոյ չ'ըլլան արքայորդոյն՝ ներկայացումէն ետք անոր տուած հանդիսին եթէ ներկայ չ'զսնուին, հացկատակ աղանիներու երամբ մը պէս իսկոյն թռան, և սկսան երթալ անոր կողմը՝ զոր տեսնելու թոյլատուութիւն կար, և պատրաստ էին անոր հաստատելու թէ իրեն զալու համար Նորին Աւհափառութեան պալատէն խոյս տուեր էին :

Լուի Ժե զոր այնքան շուտ թողեր էին՝ բնաւ մտքէն չէր ան-

ցըներ զանոնք : Այս խաղնաղանճ պալատականներուն փոքրորութիւնը ուրիշ պարագայի մը մէջ անոր ծիծաղը պիտի շարժէր . բայց այս անգամ բնաւ ներգործութիւն մը չըրաւ անոր վրայ , այն ծաղրասէր իշխանին վրայ՝ որ իւր բարեկամին մտաւոր կամ մարմնաւոր մէկ թերութեանը բնաւ չէր խնայէր՝ ենթադրելով որ Լուի ԺԵ բարեկամ մ'ունեցած ըլլար :

Ոչ , նոյն միջոցին , Լուի ԺԵ բոլոր ուշադրութիւնը տուեր էր Գրիանօնի կառանոցին դրանն առջև կեցող կառքի մը՝ որուն կառավարը ձիերը ձաղկելու համար կ'սպասէր որ իւր տէրը կառքին ոսկեզօծ բազմարանը մտնէ :

Տիկին Տիւպարիի կառքն էր այն՝ ջահերով լուսաւորուած : Զամօր կառավարին քովը նստած ոտքերը կ'երերցնէր՝ յակըջւոյ մը տախտակին նման :

Վերջապէս տիկին Տիւպարի որ անշուշտ նրբանցքին մէջ ուշացեր էր՝ թագաւորէն լուր մ'առնելու յուսով , այն ատեն տիկին Տիւպարի Պ. տ'էկիւլյօնի թեք տեսնուեցաւ : Անոր արագաձեմ գնացքէն զայրոյթը կամ գէթ սրտնեղութիւնը կ'երևէր : Առանց երեսէն ցոյց տալու՝ միտքն այնքան բան դրած էր՝ որ գլուխը խելք չկար :

Ժան , կարի տխուր՝ գլխարկը թեկն ներքև ճմլած՝ քրոջն ետեւէն կ'երթար . այն տեսարանին ներկայ դտնուած չէր , Պ. արքայորդին մոռցեր էր զինքը հրաւիրելու . բայց պայիկի մը պէս նախասենեակը մտեր էր , Իպպոլիդոսին նման մտախոհ՝ վարպագոյն ծաղիկներով արծաթաթելով բանուած բաճկոնակին վրայ կախուեր էր շապիկին եզերքը . թեզանիքներն ալ պատուաւ էին՝ որոնք կարծես թէ շատ աղէկ կը յարմարէին անոր տխուր մտածմանցը :

Ժան իւր քոյրը դեղնած և սարսափած տեսեր էր , որմէ հետեցուցեր էր թէ վտանգը մեծ ըլլալու էր : Ժան հնարագիտութեան մէջ միայն մարմիններուն դէմ քաջութիւն ունէր , իսկ ուրուականներուն դէմ երբէք :

Թագաւորը վարպուրին ետեւը պահուած՝ պատուհանէն տեսեր էր այն սգայից թափօրին անցնիլը՝ որ թղթէ կտրուած գարուչիւններու նման կոմսուհոյն կառքին մէջ սուղեցաւ . յետոյ , կառքին

Generated on 2016-09-08 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դուռը գոցուելով, պայիկը կառքին ետեը ելնելով՝ կառավարը երասանակները ցնցեց, և ձիերը սրարշաւ մեկնեցան :

— Օ՛, օ՛, ըսաւ թագաւորը, առանց զիս տեսնել ուզելու առանց ինձ խօսել ուզելու : Կոմսուհին շատ կատղեր է :

Եւ բարձրաձայն կրկնեց,

— Այո, կոմսուհին շատ կատղեր է :

Ռիշլիէօ որ սպասուած մարդու մը պէս նոյն միջոցին յուշիկ ներս մտեր էր սենեկէն՝ այս խօսքը լսեց :

— Կատղեր է, վեհափառ տէր, ինչո՞ւ համար. անոր համար որ Ձեր վեհափառութիւնը պահ մը կ'զբօսնո՞ւ : Կոմսուհւոյն ըրածը աղէկ բան չէ :

— Դուքս, պատասխանեց Լուի Ժե, չեմ զբօսնուր. ընդհակառակը՝ խոնջեր եմ և կ'ուզեմ հանդիշիլ : Երած շտու թիւնը զիս կը գրգռէ. եթէ կոմսուհւոյն մտիկ լնէի՝ Լիւսիէն երթալու ընթրեյու էր, ուտելու՝ մանաւանդ խմելու էր. կոմսուհւոյն զինիները խիստ յուրի են, չեմ գիտեր թէ ինչ խաղողով շինուած են, մարյը անհանգիստ կ'ընեն. շիտակը հոս հանգիստ նստիլ կ'ուզեմ :

— Եւ Ձեր վեհափառութիւնը շատ իրաւունք ունի, ըսաւ դուքսը :

— Ասկէ զատ կոմսուհին պիտի զբօսնու : Միթէ այնքան սիրուն ընկեր մ'եմ : Ինք այնպէս կ'ըսէ՝ բայց ես չեմ հաւատար :

— Ս'հ, այս մասին իրաւունք չունի Ձեր վեհափառութիւնը, ըսաւ մարաջախտը :

— Ո՛չ, դուքս, յիրաւի ոչ. օրերս կը համրեմ, և կը մտածեմ :

— Վեհափառ տէր, աիկին կոմսուհին կը հասկնայ թէ ինչ որ ալ ըլլայ՝ լաւագոյն ընկեր մը չկրնար գտնել : Ահա ասոր համար կը կատղի :

— Յիրաւի դուքս, չեմ գիտեր ինչպէս կ'ընէք. դուք միշտ կիները կը վարէք, այնպէս որ կարծես թէ քսան տարու էք : Այս տարիքին մէջ մարդն է ընտրողը՝ բայց իմ տարիքիս մէջ, դուքս

...

— Ետքը՛, վեհափառ տէր :

— Կինն է որ իւր հաշիւը կ'ընէ :

Generated on 2016-09-08 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մարաջախտն սկսաւ խնդալ :

— Օ՛ն, վեհափառ տէր, աւելի աղէկ, և եթէ Ձեր Վեհափառութիւնը կը կարծէ թէ կոմսուհին կ'զբօսնու՝ միտիթարուինք :

— Չեմ ըսեր թէ կ'զբօսնու, դուքս, կ'ըսեմ թէ վերջապէս զբօսանք պիտի փնտռէ :

— Ա՛հ, չեմ համարձակիր Ձեր Վեհափառութեան ըսելու թէ այդ շտեմնուած բան մը չէ :

Թագաւորը սաստիկ յուզուած ոտք ելաւ :

— Տակաւին ո՞վ կայ դուրսը, հարցուց :

— Ձեր ծառաները, վեհափառ տէր :

Թագաւորը պահ մը մտածեց :

— Բայց դուք մէկը ունի՞ք հետերնիդ :

— Ռաֆղէն ունիմ :

— Լսի :

— Ի՛նչ պիտի ընէ, վեհափառ տէր :

— Դուքս, պէտք է տեղեկանայ թէ տիկին Տիւպարի իրօք Լիւսիէն կը դառնայ :

— Կոմսուհին մեկնեցաւ, կարծեմ :

— Երևութապէս, այո :

— Բայց Ձեր Վահագափառութիւնը ո՞ր կը կարծէ որ կոմսուհին կ'երթայ :

— Ո՞վ գիտէ: Նախանձը խելքը գլխէն կ'առնէ, դուքս :

— Մանաւանդ չ'ըլլայ որ Ձեր Վեհափառութիւնը :

— Ի՛նչպէս, Բ՛նչ :

— Նախանձէն :

— Դո՞ւքս :

— Շիտակը ամենքնուս ալ պզտիկութիւն կ'ըլլար Վեհափառ տէր :

— Ես նախանձիմ, գոչեց Լուի ԺԵ բռնազբօս խնդումով մը. իրօք լրջօրէն կը խօսիք, դուքս :

Արդարև Ռիշլիէօ ինքն ալ չէր հաւատար : Պէտք է խոստովանիլ թէ ճշմարտութեան շատ մօտեցեր էր մտածելով, ընդ հակառակը, թէ Թագաւորը տիկին Տիւպարին իրօք Լիւսիէն ըլլալը գիտնալ ու զելուն պատճառը՝ ապահով ըլլալու համար էր որ կոմսուհին Գրիանօն չպիտի վերադառնար :

Generated on 2016-09-08 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ուրեմն , ըսաւ ձայն հանելով , որոշուեցաւ , Վեհափառ տէր , Ռաֆղէն յղեմ որ եղածն հասկնայ :

— Յղեցէք , դուքս :

— Հիմա , Ձեր Վեհափառութիւնը ինչ պիտի ընէ ընթրելէ առաջ :

— Ոչինչ . անմիջապէս կ'ընթրինք : Իմաց տուիք այն անձին :

— Այո , Ձեր Վեհափառութեան նախասենեակն է :

— Ինչ ըսաւ :

— Շատ շնորհակալ եղաւ :

— Հապա աղջիկը :

— Տակաւին անոր խօսք չըրին :

— Դուքս , տիկին Տիւպարին կը նախանձի , կրնայ ըլլալ որ ետ դառնայ :

— Ա՛հ Վեհափառ տէր , այդ շատ անշնորհ բան մը կ'ըլլար , և կարծեմ թէ կոմսուհին այնպիսի անհեթեթ բան մը չընէր :

— Դուքս , այսպիսի պարագաներու մէջ ամեն բան կ'ընէ , մանաւանդ եբք ատելութեան հետ նախանձ ալ ունի : Ձեզ սաստիկ կ'ատէ . չդիտեմ թէ դիտէք :

Ռիշլիէօ խոնարհութիւն ըրաւ :

— Գիտեմ թէ այդ պատիւն ինձ կ'ընէ , Վեհափառ տէր :

— Պ . տը Դավէրնէյն ալ շատ կ'ատէ :

— Եթէ Ձեր Վեհափառութիւնը հաճեր համրել՝ աներկբայ եմ որ երրորդ անձ մ'ալ պիտի գտնէր՝ զոր ինէ և սեպուհէն աւելի կ'ատէ :

— Ո՛վ է ան :

— Օրիորդ Անտրէ :

— Ա՛հ , ըրաւ թագաւորը , այդ շատ բնական կը թուի ինձ :

— Ուրեմն . . .

— Այո , բայց այս արգելք մը չկրնար ըլլալ , դուքս , որ հսկենք տիկին Տիւպարին վրայ՝ որպէս զի այս դիշեր չելնէ տհաճելի բան մը ընէ :

— Ընդհակառակը՝ ըլլալիք տնօրէնութեան կարևորութիւնը կը հաստատէ :

— Սեղանայարգարն եկաւ , լռութիւն . պէտք եղած պատուէր-

ները տուէք Ռաֆղէի և եկէք ճաշարանն իս գտէք հետերնիդ առնելով զոր գիտէք :

Լուի Ժե ոտք ելաւ և ճաշարանն անցաւ՝ մինչդեռ Ռիշլիէօ դիմացի դռնէն դուրս կ'ելնէր :

Հինգ վայրկեան ետք զնաց թագաւորը գտաւ՝ սեպուհը հետն առած :

Թագաւորը վայելուչ կերպով Գավէլնէյը բարևեց :

Սեպուհը հանձարեղ մէկն էր . ոմանց յատուկ այնպիսի մասնաւոր կերպով մը պատասխանեց՝ որմէ թաղաւորները և իշխանները շուտով կը հասկնան թէ իրենցմէ ես , և անմիջապէս կը կապուին հետդ :

Սեղան նստան և ընթրեցին :

Լուի Ժե յուրի թագաւոր մ'էր՝ սակայն սիրուն մարդ մ'էր աւոր ընկերակցութիւնը՝ երբ ուզէր՝ խոնդներու , խօսակցողներու և հեշտասէրներու համար կարի հրապուրիչ էր :

Միով բանիւ թագաւորը կենաց հաճոյական կողմերը լաւ ուսած էր :

Սխորժակով կերաւ , հրամայեց որ կոչնականներուն ըմպելի տան և խօսքը երաժշտութեան վրայ բերաւ :

Ռիշլիէօ խօսքը բերնէն առաւ :

— Վեհափառ տէր , ըսաւ Ռիշլիէօ , եթէ երաժշտութիւնը զմարդիկ համամիտ կ'ընէ , ինչպէս որ մեր պարի դասատուն կ'ընէ և ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնը կը մտածէ կարծեմ , նոյնը պիտի ըսէք կանանց մասին ալ :

— Ո՛հ , դուքս , ըսաւ թագաւորը , կանանց խօսքը մի ընէք : Տրոյիոյ պատերազմէն մինչև մեր օրերը կանայք միշտ երաժշտութեան հակառակ տպաւորութիւն ըրած են . դուք մանաւանդ կանանց հետ շատ մեծ հաշիւներ ունենալով կարգադրելու՝ այսպիսի խօսակցութենէ մը անշուշտ չպիտի ախորժիք , անոնց մէջ հատ մը կայ՝ որ միւսներէն քիչ վտանգաւոր չէ և որուն հետ թշնամի էք :

— Կոմսուհին , Վեհափառ տէր . յանցանքը իմն է :

— Անշուշտ :

— Ա՛հ , իրա՛ւ . Ձեր Վեհափառութիւնը պիտի բաղատէ , կը յուսամ . . .

— Երկու խօսքով և մեծ հաճութեամբ , ըսաւ թաղաւորը ծիծաղելով :

— Մտիկ կ'ընեմ , Վեհափառ տէր :

— Ինչպէս կ'ըլլայ որ չեմ գիտեր որ գաւառին կուռակալութիւն ձեզի կու տայ և դուք կը մերժէք՝ կոմսուհին բացարձակ ժողովրդային չըլլալուն համար , ըսելով :

— Ե՛ս , ըսաւ Ռիշլիէօ խօսակցութեան դարձուածէն բաւական շփոթեցով :

— Հասարակութեան դրոյցն է , ըսաւ թաղաւորը կեղծ միամտութեամբ մը որ իրեն յատուկ էր : Միտքս չլար ըսողը . . . : Լրագիրն անշուշտ :

— Լաւ ուրեմն , Վեհափառ տէր , ըսաւ Ռիշլիէօ օգուտ քաղելով այն ազատութենէն՝ զոր իւր կոչեականներուն կուտար օգոստափառ ասպնջականին անսովոր զուարթութիւնը , կը խոստովանիմ թէ այս անգամ հասարակութիւնը և լրագիրները սովորականէն նուազ անհեթեթ զրոյց մ'ըրեր են :

— Ի՛նչ , գոչեց Լուի Ժե , իրօք պաշտօնէութիւն մը մերժեցիք , սիրելիդ իմ դուքս :

Ինչպէս որ դիւրին է մակաբերել՝ Ռիշլիէօ փափուկ գիրքի մը մէջ կը գտնուէր : Թագաւորը ամենէն շատ աղէկ գիտէր որ Ռիշլիէօ բան մը մերժած չէր : Բայց պէտք էր որ Դավէրնէյ Ռիշլիէօի ըսածին միշտ հաւատար , ուստի խնդիրն այն էր թէ դուքսը այնպիսի ճարտարութեամբ վարուի՝ որ մէկ կողմէն թաղաւորին ծաղրէն ազատի և միւս կողմէն չենթարկի սեպուհին կշտամբանքին՝ որ անոր լեզուին և ժպտին մէջ արդէն կ'երևէր՝ Ռիշլիէօի սուտը յայտնուելուն համար :

— Վեհափառ տէր , ըսաւ Ռիշլիէօ , կ'աղաչեմ , արդիւնքը չքննենք՝ այլ պատճառը : Պաշտօնէութիւնը մերժեցի՞ թէ ոչ՝ Պետութեան գաղտնիք մ'է այս՝ զոր Ձեր Վեհափառութիւնը երևան չպիտի հանէ անշուշտ խմած ատեննիս . բայց պաշտօնէութիւնը չընդունելուս պատճառը , եթէ պաշտօնէութիւն տրուեցաւ ինձ , այն է էական կէտը :

Ո՛հ , դուքս , այդ պատճառն Պետութեան գաղտնիք մը չէ , կարծեմ , ըսաւ թաղաւորը ինդալով :

Generated on 2016-09-08 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ոչ, Աւհափառ տէր, մանաւանդ Ձեր Աւհափառութեան համար՝ որ ինծի և իմ բարեկամ տը Գավէրնէյ սեպուհին համար, այս միջոցին, թող ներէ Աստուած՝ աշխարհիս ամենասիրուն մահականացու կոչնատէրն է. ուստի թագաւորիս համար պաղտնիք չունիմ: Բոլոր սիրտս իրեն կը յանձնեմ, վասն զի չեմ ուզեր որ ըսեն թէ Գաղղիոյ թագաւորը ճշմարտութիւնն ամբողջ իրեն ըսող ծառայ մը չունի:

— Ըսէք նայինք, ըսաւ թագաւորը մինչդեռ Գավէրնէյ բաւական վրդոված, վախնալով որ Ռիշլիէօ չափէն աւելին չըսէ, շրթերը կը կրծէր և դէմքը բոլորովին թագաւորին դէմքին կը յարմարցնէր, ըսէք նայինք ճշմարտութիւնը, դուքս:

— Աւհափառ տէր, ձեր Պետութեան մէջ երկու իշխանութիւններ կան՝ որոց պաշտօնեայ մը պարտի հնազանդիլ, առաջինը ձեր կամքն է. երկրորդը՝ Ձեր Աւհափառութեան ընտրած մտերիմ բարեկամներուն կամքն է: Առաջին իշխանութիւնն անդիմադրելի է, ոչ ոք կրնայ անկէ պրծիլ. երկրորդն աւելի նուիրական է՝ վասն զի սրտի պարտաւորութիւններ կը դնէ ձեզի ծառայողին վրայ: Այս ձեր վստահութիւնն է. ասոր հնազանդելու համար՝ պաշտօնեայ մը պէտք է որ իւր թագաւորին սիրական մարդը կամ կինը սիրէ:

Լուի Թե սկսաւ խնդալ:

— Գուքս, ըսաւ, այդ շատ գեղեցիկ առած մ'է, և ախորժելի է ինձ ձեր բերնէն լսելը. բայց չեմ յուսար որ կը համարձակիք երթալ Բօն-նէօֆի վրայ երկու փողերով հռչակել զայն:

— Ո՛հ, քաջ գիտեմ, Աւհափառ տէր, ըսաւ Ռիշլիէօ, թէ փիլիսոփաները զէնք կ'առնէին ասոր համար. սակայն չեմ կարծեր որ անոնց գող ու գոչումները կարևորութիւն մ'ունենան Ձեր Աւհափառութեան և ինծի համար: Գլխաւոր կէտը սա է որ տէրութեան սոյն երկու հզօրագոյն կամքերը կատարուին: Լաւ ուրեմն՝ Աւհափառ տէր, անձի մը կամքէն, քաջութեամբ պիտի ըսեմ Ձեր Աւհափառութեան՝ մինչ իսկ եթէ աչքէ իյնամ՝ այն է մեռնիմ, միով բանիւ տիկին Տիւպարիի կամքէն չպիտի կարենայի ինքզինքս ազատել:

Լուի Թե լռեց:

— Միտքս բան մ'եկաւ, շարայարեց Ռիշլիէօ, անցեալ օր Ձեր

Generated on 2016-09-08 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վեհափառութեան պալատը շուրջս կը նայէի, շիտակը այնքան գեղեցիկ ազնուական աղջիկներ, այնքան ընտիր ձիրքերով կիներ տեսայ՝ որ, եթէ Գաղղիոյ թագաւոր ըլլայի, գրեթէ անկարելի կը թուէր ինձ ընտրութիւն ընել:

Լուի Ժե Դավէրնէյի կողմը դարձաւ՝ որ կամաց կամաց ինքը խնդրոյն մէջ մտնելը տեսնելով՝ վախէն և յոյսէն սիրար կը նետէր, և աչքովն ու շնչովը մարաջախտին պերճախօսութեանը կ'օգնէր, այնպէս որ կարծես թէ իւր հարստութիւնը բեռնաւորած նաւը դէպ 'ի նաւահանգիստը կը մղէր:

— Ըսէք նայինք, ձեր կարծիքն ալ այս է, սեպուհ, հարցուց թագաւորը:

— Վեհափառ տէր, պատասխանեց Դավէրնէյ ուրախութենէն սիրան ուռած, ինձ կը թուի թէ քանի մը վայրկենէ 'ի վեր դուքսը շատ աղւոր խօսքեր կ'ընէ Ձեր Վեհափառութեան:

— Գեղեցիկ աղջիկներու մասին ըսածին վրայ համամիտ էք:

— Բայց, վեհափառ տէր, կարծեմ թէ Գաղղիոյ արքունիքը իրօք շատ գեղեցիկ աղջիկներ կան:

— Միով բանիւ համամիտ էք, սեպուհ:

— Այո, վեհափառ տէր:

— Դուք ալ անոր պէս գիտ կը խրատէք որ արքունեաց գեղեցիկներուն մէջ մին ընտրեմ:

— Ար համարձակէի խոստովանիլ թէ մարաջախտին կարծիքէն եմ, վեհափառ տէր. եթէ համարձակէի կարծել թէ Ձեր Վեհափառութեան կարծիքն ալ նոյնն է:

Պահ մը լռութիւն տիրեց, և այն միջոցին թագաւորը գոհունակութեամբ Դավէրնէյի կը նայէր:

— Պարոնայք, ըսաւ, տարակոյս չկայ թէ ձեր կարծեաց պիտի հետևէի՝ եթէ երեսուն տարեկան ըլլայի: Այն ատեն դիւրաւ պիտի համոզուէի, բայց հիմա քիչ մը ծերացած ըլլալուս համար չեմ կրնար դիւրահաւան ըլլալ:

— Դիւրահաւան, կ'աղաչեմ, բացատրեցէք այդ բառը, վեհափառ տէր:

— Դիւրահաւան ըլլալ կը նշանակէ հաւատալ, սիրելիդ իմ

դուքս : Արդ , կան այնպիսի բաներ որոց բնաւ չեմ կրնար հաստատալ :

— Արո՞նք են :

— Այսինքն թէ իմ տարիքս մէկը սէր կարենայ ազգել :

— Ա՛հ , վեհափառ տէր , դուչեց Ռիշլիէօ , մինչև հիմա կը կարծէի թէ Ձեր Վեհափառութիւնը իւր տէրութեան ամենէն աւելի քաղաքավար ազատորդին է , բայց սաստիկ ցաւելով կը տեսնեմ թէ իսբուեր եմ :

— Ա՞ր մասին , հարցուց թագաւորը խնդալով :

— Այն մասին որ Մաթուսաղեմին շափ ծեր եմ , ես որ 94ին ծնած եմ : Լաւ մտածեցէք , վեհափառ տէր , Ձեր Վեհափառութեան տասնևվեց տարեկան աւելի մեծ եմ :

Գրքին ըրածը ճարտար մարդահաճութիւն մ'էր : Լուի Ժե միշտ կը զարմանար այս մարդուն ծերութեանը վրայ՝ որուն ծառայող շատ երիտասարդներ մեռած էին . թագաւորն այս օրինակը աչքին առջև ունենալով՝ կրնար յուսալ որ մինչև անոր տարիքը հասնի :

— Այնպէս թող ըլլայ , ըսաւ Լուի Ժե . բայց կը յուսամ թէ ալ ասկէ ետք չպիտի պնդէք թէ ձեր անձին համար կը սիրեն ձեզ :

— Եթէ այնպէս կարծէի , վեհափառ տէր , անմիջապէս պիտի աւրուէի երկու կնոջ հետ՝ որ տակաւին այս առտու հակառակն ըսին ինձ :

— Լաւ , դուքս , կը տեսնենք , կը տեսնենք , Պ . տը Գավէրնէյ , մատաղութիւնը երիտասարդ կ'ընէ մարդս , ճշմարիտ է . . .

— Այո , վեհափառ տէր , և ազնուական արիւնը փրկաւէտ դեղաջուր մ'է , առանց հաշուելու նաև թէ Ձեր Վեհափառութեան ճոխ մտքին պէս միտք մը փոփոխութեան մէջ միշտ կը շահի և երբէք վրայ չտար :

— Բայց և այնպէս , դիտողութիւն ըրաւ Լուի Ժե , կը յիշեմ թէ հաւս ծերացած ատեն այնքան քաջութեամբ հետամուտ չեղաւ կանանց հաճելի ըլլալու :

— Օ՛ն , օ՛ն , վեհափառ տէր , ըսաւ Ռիշլիէօ , Ձեր Վեհափառութիւնը դիտէ թէ որքան կը յարգեմ հանդուցեալ թագաւորը

որ երկու անդամ զիս Պատրիկ դրաւ . բայց այս արգելք մը չկրնար
ըլլալ որ ծածկեմ՝ թէ Լուի ԺԴ-ին և Լուի ԺԵ-ին հասուն հասակ-
ները բնաւ իրարու հետ չեն համեմատուիր : Ինչ ըսել է , Ձեր Ամե-
նաքրիստոնեայ Աեհափառութիւնը , իրեն տրուած Եկեղեցւոյ անդրա-
նիկ Որդի տիաղոսը յարցելով , իւր մարդկութիւնը մոռնալու չափ
յառաջ դացած չ'ըլլար ճգնաւորութեան մէջ :

— Յիրաւի ոչ , ըսաւ Լուի ԺԵ . շիտակը կ'ըսեմ , վասն զի ոչ
բժիշկս հոս է և ոչ խոստովանահայրս :

— Լաւ ուրեմն , վեհափառ տէր , ձեր թաղաւոր հաւը չափա-
զանց ջերմեռանդովը և անհամար խստամբերութիւններովը զարմանք
կը պատճառէր տիկին տը Մէնդրնօնի որ իրմէ տարեց էր : Աերս-
տին կ'ըսեմ , վեհափառ տէր , կարելի՞ է բաղդատել երկու մարդ-
երբ խնդիրը ձեր երկու Աեհափառութեանց վրայ է :

Թաղաւորն այն իրիկունը լաւ տրամադրութեան մէջ էր . Ռիշ-
լիէօի խօսքերը Յուվանցաի* աղբիւրէն վազած կաթիլներ էին :

Ռիշլիէօ մտածեց թէ ժամանակն եկած էր . ծունդովը Գավէր-
նէյի ծունդը մշտեց :

— Աեհափառ տէր , ըսաւ Գավէրնէյ , Ձեր Աեհափառութիւնը
կը հաճի՞ ընդունիլ շնորհակալութիւններս աղջկանս ըրած փառա-
ւոր նուէրին համար :

— Ասոր համար ինձ շնորհակալ ըլլալու չէ , սեպուհ , ըսաւ
Թաղաւորը . օրիորդ տը Գավէրնէյ իւր համեստ վայելչութեամբն
ինձ հաճելի է : Ա՛ռ զէի որ աղջիկներս տակաւին մարդու պէտք
ունենային . ստուգիւ , օրիորդ Անտրէն . . . այս է անունը , այն-
պէս չէ՛ :

— Այո , վեհափառ տէր , ըսաւ Գավէրնէյ կարի ուրախ՝ տես-
նելով որ Թաղաւորը իւր աղջկանը մկրտութեան անունը գիտէ :

— Գեղեցի՛կ անուն : Ստուգիւ , օրիորդ Անտրէն ամենէն առաջ
պիտի ընդունուէր , բայց տանս մէջ տեղ մնացած չէ : Իսկ հիմա ,

* Ըստ առասպելաց՝ Յուվանցա այն շաւերժահարսին ա-
նունն էր՝ զոր Աքամագո աղբիւրի վոխեց : Սոյն աղբիւրէն
չուացուողները կ'երիտասարդանային : Ծ . Թ .

Generated on 2016-09-08 10:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սեպուհ , խօսքս խօսք է՝ այսնորատի աղջիկը իմ կատարեալ պաշտ-
պանութիւնս պիտի վայելէ . կարծեմ , շատ սժիտ չունի :

— Աւաղ , ոչ , վեհափառ տէր :

— Ուրեմն ամուսնութեանը հոգ պիտի տանեմ :

Գավէրնէյ սաստիկ ծռելով բարեկեց :

— Ուրեմն Ձեր վեհափառութիւնը ամուսին գանելու բարերա-
րութիւնն ալ պիտի ընէ , ինչու որ շիտակը ըսելով , մեր չքառո-
րութեան մէջ որ գրեթէ թշուառութիւն է . . .

— Այո , այո , անհոգ եղիք այդ մասին ըսաւ Լուի Ժե . բայց
կարծեմ թէ տակաւին շատ պզտիկ է , և աճապարելու հարկ չկայ :

— Ոչ , վեհափառ տէր , աճապարելու հարկ չկայ , վասն զի ձեր
պաշտպանած աղջիկը ամուսնութենէ կը ստակայ :

— Կը տեսնէք , ըսաւ Լուի Ժե ձեռները շփելով և Ռիշլիէօի
նայելով : Ի՞նչ որ ալ ըլլայ , պարոն տը Գավէրնէյ եթէ շուա-
րիկ՝ եկէք զիս գտէք :

Այս ըսելով՝ Լուի Ժե ոտք ելաւ , յետոյ գլխին գառնալով՝

— Մարաջախտ , ըսաւ :

Գուքորը թագաւորին մօտեցաւ :

— Աղջիկը գոհ է եղաւ :

— Ի՞նչ բանէ , վեհափառ տէր :

— Գոհարէն :

— Թող ներէ ինձ Ձեր վեհափառութիւնը ցած խօսելուս հա-
մար , սակայն հայրը մտիկ կ'ընէ , և պէտք չէ որ ձեզի ըսելիքս լսէ :

— Բն :

— Ոչ :

— Ըսէք ուրեմն :

— վեհափառ տէր , աղջիկը ամուսնութենէ կը ստակայ , այս իբրաւ
է . սակայն բան մը կայ որուն վրայ ես աներկբայ եմ , այն է թէ
աղջիկը Ձեր վեհափառութենէն չստակար :

Մարաջախտն այս խօսքն այնպիսի մտերմութեամբ մ'ըրաւ որ թա-
գաւորը հաւնեցաւ . չափազանց համարձակութեամբ ըսուած ըլլալուն
համար ալ , և իւր կարճ կարճ քայլերովը վազեց ու միացաւ Գա-
վէրնէյի՝ որ , առ յարգանաց , սրահին շեմին վրայ քաշուեր էր :

Երկուքն ալ պարտէզներէն մեկնեցան :

Երեկոյթն սքանչելի էր : Երկու պայիկ անոնց առջևէն կ'երթային՝ մէկ ձեռքով ջահեր բռնելով և միւս ձեռքով ծաղկած ճիւղեր քաշելով, իշխանուհւոյն յիսուն կոշնականներուն գինովութենէն կրակ առած ապակիներուն քրտինքին մէջէն բոցավառ Գրիանօսի պատուհանները կ'երևէին :

Նորին Վեհափառութեան նուագարանները պարը կը տաքցնէին . ինչու որ, ընթրիքէն ետք պարեր էին և տակաւին կը պարէին :

Շեփորուկներու և ձիւնագունտերու թանձր թաւուտի մը մէջ՝ ժիլպէր գետինը ծունգի վրայ եկած՝ թափանցիկ վարպոյրներուն ետևը շուքերուն շարժումները կը գիտէր :

Երկին գետին մէկ ըլլար՝ չափտի օթափէր սոյն դիտողը, յափշտակուած ըլլալուն համար այն գեղեցկութենէն՝ որուն միայն տուած աչքը պարին ամեն շրջանին :

Սակայն, երբ Ռիշլիէօ և Գավէրնէյ անցան քուտելով այն թաւուտին՝ որուն մէջ պահուեր էր այն գիշերային թուշունը, անոնց ձայնին հնչումը և խօսք մը սթափեցին ժիլպէրը :

Ինչու որ այն խօսքը, մանաւանդ ժիլպէրին համար, խիստ կարեւոր և նշանակական էր :

Մարաջախտը իւր բարեկամին թեկին յեցած և ականջին ծռած կ'ըսէր ,

— Յմեն բան լաւ նկատելով, ամեն բան լաւ կշռելով, սեպուհ, թէև խիստ է ինձ քեզ ըսելը՝ սակայն պէտք է որ շուտով մենաստան մ'ուղարկես աղջիկդ :

— Բայց ինչո՞ւ, հարցուց սեպուհը :

— Վասն զի, պատասխանեց մարաջախտը, զրաւ կը դնեմ որ թաղաւորը օրիորդ տը Գավէրնէյի սիրահարած է :

Ժիլպէր այս խօսքը լսած ատեն՝ ուսն ու ճակատը ծածկող ձիւնագունտներէն աւելի գեղնեցաւ :



Generated on 2016-09-08 10:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՃԺԴ

ՆԱԽԱԶԳԻՆՅԱԻՄՆԵՐ

Հետևեալ օրը , երբ Գրիանձնի ժամացոյցը կէսօր նոր զարկեր էր՝ Նիզօլ զնաց ձայն տուաւ Անտրէի որ տակաւին սենեկէն չէր ելեր :

— Օրիորդ , օրիորդ , Պ. Փիլիպը եկաւ :

Այս ձայնը սանդուխին վարէն կուգար :

Անտրէ թէև զարմացած՝ բայց նաև կարի ուրախ՝ շղարշէ պարե-
զօտը վրայ բերաւ և վազեց երիտասարդին դէմը՝ որ իրօք Գրիա-
նձնի բակը իջեր էր ձիէն և քանի մը ծառաներու կը հարցնէր թէ
ժամը քանիին կրնար իւր քոյրը տեսնել :

Անտրէ ինք բացաւ դուռը և իսկոյն Փիլիպի դէմը գտնուեցաւ՝
զոր աշխատասէր Նիզօլ բակէն առնելով սանդուխէն վեր կը հանէր :

Անտրէ իւր եղբօրը պարանոցը նետուեցաւ , և անոր հետ միասին
իւր սենեակը մտան՝ Նիզօլն ալ ետևնուն :

Այն ատեն միայն Անտրէ նշմարեց թէ Փիլիպ սովորականէն աւելի
լուրջ էր , թէ ժպտելուն մէջ անգամ տխրութիւն կար , թէ իւր
չքեղ համազգեստն հագեր էր յետին ճշդութեամբ մը , և թէ ճամ-
բորդի վերարկու մը կար ձախ թևին ներքև :

— Բայց ի՞նչ կայ , Փիլիպ , հարցոյ իսկոյն այն զորովազին
սրտերուն բնազդովը՝ որոյ համարնայուածք մը բաւական յայտնու-
թիւն մ'է :

— Քոյր իմ , ըսաւ Փիլիպ , այս առտու հրաման ստացայ որ
երթամ գնդիս միանամ :

— Կը մեկնին ուրեմն :

— Այո կը մեկնիմ :

— Ո՛հ , ըրաւ Անտրէ , և այս ցաւազին աղաղակովը իւր քաջու-
թիւնը և զօրութեան մէկ մասը կորսնցուց :

Թէև խիստ բնական էր այս չուն, և օրին մէկը անշուշտ տեղի պիտի ունենար՝ սակայն Անտրէ այս լուրն առնելով այնքան ցաւ զգաց որ ստիպուեցաւ եղբօրը թնին կրթնելու :

— Տէր Ասաուած, ըսաւ Փիլիպ զարմացած, երթալս քեզի այս աստիճան վիշտ կը պատճառէ, Անտրէ : Գիտես որ զինուորի մը անցուցած կեանքին ձ ջ խիստ սովորական բան մ'է այս :

— Այո, այո, անշուշտ, միմիջեց նորատի աղջիկը. բայց ո՞ր է զացած տեղդ եղբայր իմ :

— Պահակապանս Ռէյմոն է. տէս հեռու տեղ չեմ երթար : Թէև շատ հաւանական է որ դունդը հոնկէ Սդրասպուրկ վերադառնայ :

— Բարէ, ըսաւ Անտրէ. երբ կը մեկնիս :

— Հրամանագիրն ինձ կը պատուիրէ անմիջապէս ճամբայ ելնել :

— Ուրիմն մնաս բարեալ ըսելու եկեր ես :

— Այո, քոյր իմ :

— Մնաս բարեալ ըսելու :

— Ինձ ըսելու մասնաւոր բան մ'ունիս, Անտրէ, հարցուց Փիլիպ թունդ ելնելով Անտրէի այն ախրութենէն՝ որ կարի չափազանց ըլլալով Փիլիպի չուէն աւելի ուրիշ պատճառ մ'ունենալու էր :

Անտրէ հասկցաւ թէ այս խօսքը Նիգօլին համար էր՝ որ Անտրէի զգացած սաստիկ ցաւին վրայ զարմացած սոյն տեսարանը կը դիտէր :

Արդարև Փիլիպի չուն, այսինքն օպայի մը իւր պահակապանը երթալը այնքան արցունք թափելու աղէտ մը չէր :

Անտրէ անմիջապէս հասկցաւ թէ Փիլիպի զգացածը թէ Նիգօլի զարմանքը. մեկնոցակ մ'առաւ, ուսերուն վրայ ձգեց, և եղբայրը դէպ 'ի սանդուխը տանելով՝

— Եկուր, Փիլիպ, ըսաւ, դարաստանին մինչև վանդակապատը երթանք. կամարակապ ծառուղիէն կը տանիմ քեզ : Արդարև շատ ըսելիքներ ունիմ քեզի, եղբայր իմ :

— Այս խօսքերը Նիգօլի գնա՛ ըսելու պէս էր, ուստի պատին

քսուելով դուրս ելաւ և տիրուհոյն սենեակը մտաւ՝ մինչդեռ այս վերջինը Փիլիպի հետ սանդուխէն վար կ'իջնէր :

Անտրէ մատուռին երկայնութեանը գտնուած սանդուխէն իջաւ և դուրս ելաւ այն անցքէն՝ որ այսօր իսկ պարտէզը կը տանի . թէև Փիլիպ թուեց աչքով անդադար Անտրէի կը հարցընէր ինչ ըլլալը՝ սակայն Անտրէ երկար ատեն կախուած մնաց անոր թեէն , գլուխն անոր ուսին յեցած և առանց բառ մը հանելու բերնէն :

Յետոյ յանկարծ սիրտն ելաւ , գէմքը մահատիպ դեղնութիւն մ'առաւ , երկայն հառաչ մը մինչև շրթունքն ելաւ , և արտասուաց հեղեղներ աչերը մթազնեցին :

— Սիրելի քոյր իմ , ազնիւ Անտրէս , գոչեց Փիլիպ , յանուն Աստուծոյ ըսէ , ինչ ունիս :

— Բարեկամս , իմ միակ բարեկամս , ըսաւ Անտրէ , զիս առանձին կը թողուս այն մարդոց մէջ ուր առանց փորձառութեան կը մտնեմ , և տակաւին կը հարցընես թէ ինչո՞ւ կու լամ : Ա՛հ , Փիլիպ , միտքդ բեր անդամ մը , մայրս զիս ծնած ատեն մեռեր է . ըսելիքս սոսկալի բան մ'է՛՝ բայց հայրս ինձ երբէք հայր եղած չէ : Զգացած փոքր վշտերս , ունեցած դոյզն գաղտնիքս , քեզի՛ միայն քեզի վստահացած եմ : Ո՞վ ժպտեցաւ ինձ , ո՞վ գգուեց զիս , ո՞վ օրեց զիս տղայ եղած ատենս : Գու : Ո՞վ պաշտպանեց զիս մեծնալէս 'ի վեր : Գու : Ո՞վ ինձ հաւտացուց թէ Աստուծոյ արարածները միայն վիշտ կրելու համար աշխարհ եկած չեն : Գու , Փիլիպ , միշտ դու : Վասն զի միով բանիւ , աշխարհ գալէս 'ի վեր , ոչ բան մը սիրեցի և ոչ մէկը , բաց 'ի քենէ և քենէ ուրիշ մէկն ալ զիս չսիրեց : Ո՛հ , Փիլիպ , շարայարեց Անտրէ մեղամաղձութեամբ , գլուխդ անդին կը դարձընես և ես մտքէդ անցածը կը տեսնեմ : Մտքէդ կ'ըսես ինձի համար թէ գեղեցիկ եմ , դեռահաս եմ , և անիրաւ եմ ապագային և սիրոյ չվստահելով : Աւա՛ղ , սակայն դու ևս քաջ կը տեսնես , Փիլիպ , գեղեցիկ և դեռահաս ըլլալը բաւական չէ , վասն զի ոչ ոք զիս մտքէն կ'անցընէ :

« Բարեկամս , ոչիտի ըսես թէ տիկին արքայորդին բարեսիրտ անձ մ'է : Անտարակոյս . գէթ ինձի համար անթերի մէկն է , և իբրև դիցուհի կը նկատեմ զինքը : Բայց այն գերմարդկային վերնագա-

առնենք գասելու համար է մանաւանդ որ զինքը կը յարգեմ՝ բայց չեմ սիրեր: Արդ, Փիլիպ, դորովն իմ սրտիս համար այն անհրաժեշտ զգացումն է՝ որ միշտ սրտիս մէջ խեղդուելով զայն կը խորտակէ: — Հայրս . . . : Տէր Աստուած, հայրս, ըսելիքսնոր բան մը չէ, Փիլիպ, ոչ միայն հայրս ինծի համար պաշտպան կամ բարեկամ չէ՝ այլ և, երբ երեսս կը նայի՝ ինձ սոսկում կը պատճառէ: Այո, այո, կը սոսկամ, Փիլիպ, կը սոսկամ անորմէ՝ երբ մանաւանդ քու մեկնիլդ կը ատենեմ: Ի՞նչ բանէ կը սոսկամ. ես ալ չգիտեմ: Է՛հ, Աստուած իմ, խուսող թռչունները, բառաչող կովերը անոնք ալ չեն սոսկար մրրիկէն՝ երբ քիչ մ'ետք մրրիկը պիտի հասնի:

«Այն բնազդում է, պիտի ըսես. բայց ինչո՞ւ մեր անմահ հողին ալ բնազդում չունենայ գալիք չարիքին համար: Ատենէ մ'ի վեր ամեն բան յաջող է մեր ընտանեաց: Շատ աղէկ գիտեմ այս: Ծհաւասիկ գու հարիւրապետ եղար. ես գրեթէ իշխանուհոյն մը տերիմը. հայրս, կ'ըսեն, երէկ գրեթէ առանձին ընթրեց թագաւորին հետ: Լաւ ուրեմն, Փիլիպ, ըսածս կը կրկնեմ, մինչև անգամ եթէ անմիտ երեւիմ քու աչքիդ, բոլոր այս յաջողուածները մեր քաղցր չքաւորութենէն և Գավէրնէյի մեր անշուք վիճակէն աւելի զիս կը զարհուրեցնեն:

— Եւ սակայն հոն ալ, սիրելի քոյրս, ըսաւ Փիլիպ տիրագին, հոն ալ առանձին էիր. հոն ալ ես քովդ չէի որ զքեզ մխիթարէի:

— Այո, բայց գէթ առանձին էի, առանձին իմ տղայութեան յիշատակներուս հետ. ինձ կը թուէր թէ այն սուներ յորում ապրեիր, շնչեր ու մեռեր էր մայրս՝ ինձ հայրենի պաշտպանութիւն կը պարտէր, եթէ այսպէս կրնայ ըսուիլ. հոն ամեն բան ինձ քաղցր, զգուշ և բարեկամ էր: Հանդարտ մեկնիլդ և ուրախ դառնալդ կը տեսնէի: Բայց մեկնէիր կամ վերադառնայիր՝ սիրոս բոլորովին քեզի չէր, այլ նաև այն սիրուն տանը, պարտէզներուս, ծաղիկներուս, ամեն այն բոլորին էր՝ որուն մէկ մասն էիր երբեմն. այսօր դու բոլորն ես, Փիլիպ, և երբ զիս կը թողուս՝ ամեն բան զիս կը թողու:

— Սակայն , Անտրէ , ըսաւ Փիլիպ , ինէ շատ աւելի զօրաւոր պաշտպան մ'ունիս հիմա :

— Ճշմարիտ է :

— Աղւոր ապաղայ մը :

— Ո՞վ գիտէ . . . :

— Ինչո՞ւ կ'երկբայիս :

— Ես ալ չեմ գիտեր :

— Աստուծոյ ապերախտ ըլլալ է այդ , քոյր իմ :

— Ո՛հ , ոչ , փառք Աստուծոյ , ես ապերախտ չեմ Տիրոջը , և առաու իրիկուն շնորհակալ կ'ըլլամ իրեն . բայց փոխանակիմ շնորհակալութիւններս ընդունելու՝ ինձ կը թուի թէ ամեն անգամ որ ծունր կը զնեմ՝ վերէն ձայն մ'ինձ կ'ըսէ , « Զգոյշ կեցիր , կոյս , զգոյշ կեցիր : »

— Բայց ի՞նչ բանի զգոյշ պիտի կենաս : Պատասխան աուր : Ես ալ քեզի հետ կ'ենթադրեմ թէ աղէտ մը քեզ կ'սպառնայ : Նախազգացում մ'ունիս այն աղէտին համար : Գիտես թէ ի՞նչ ընելու է արհամարհանօք անոր դէմն ելնելու կամ անորմէ խոյս տալու համար :

— Բան մը չգիտեմ , Փիլիպ , միայն ինձ կը թուի թէ կեանքս միայն թելէ մը կախուած է , քու մեկնելու վայրկենէզ ետք ալ ինձի համար բան մը չփայլիր : Միով բանիւ ինձ կը թուի թէ քունիս մէջ անդունդի մը զառիվայրին վրայ գլորեցին զիս , այնպիսի ցից զառիվայր մը՝ ուր սնորգ չկրնար կասիլ արթննալու ատենն իսկ . ինձ կը թուի թէ արթնցայ , անդունդը կը օտնեմ , և սակայն մէջը կ'իյնամ . դու քովս չըլլալով . որ զիս բռնես՝ մէջն աներևոյթ պիտի ըլլամ , ջախջախիմ :

— Սիրելի քոյր , բարեսիրտ Անտրէ , ըսաւ Փիլիպ Անտրէի ճշմարիտ սոսկումն ակամայ սիրտն ելնելով , չափազանց է դորովդ՝ որուն համար շնորհակալ եմ : Այո , բարեկամ մը կը կորսնցնես՝ բայց առժամանակեայ կերպով . շատ հեռուն չըլլալով պէտք եղած ատեն կրնաս զիս կանչել . ասկէ զատ մտածէ թէ քու եղջերուաքաղ-ներդ զատ քեզի սպառնացող բան մը չկայ :

Անտրէ եղբօրն առջև կեցաւ :

— Ուրեմն, Փիլիպ, ըսաւ, դու որ այր ես, դու որ ինէ աւելի զօրաւոր ես, ինչէն է որ այս միջոցիս ինծի չափ տխուր ես : Ըսէ նայիմ, եղբայր իմ, ասոր ինչ կ'ըսես :

— Դիւրին է, քոյր իմ, ըսաւ Փիլիպ Անտրէն կեցընելով, վասն զի խօսքն աւարտած ատեն քայլելու սկսեր էր : Մենք ոչ միայն հոգւով և արեամբ եղբայր ենք՝ այլ նաև հոգւով և զգացումներով, այս պատճառաւ այնպիսի մտերմութեան մը մէջ կ'ապրինք որ, մանաւանդ ինծի համար, Բարիզ գալերնուս ՚ի վեր կարի քաղցր սովորութիւն մ'եղաւ : Այս կապը կը խզեմ, սիրելի քոյր իմ, կամ մանաւանդ կը խզեն, և հարուածը մինչև սիրտս կ'ազդէ : Տխուր եմ՝ բայց առ ժամ մի : Ես, Անտրէ, ես մեր բաժանումէն անդին կը նայիմ, աղէտ չանցնիր իմ մտքէս միայն եթէ աղէտ մը կայ՝ այն է թէ քանի մ'ամիս, թերևս տարի մը զիրար չպիտի տեսնենք, ես կը համակերպիմ և մնաս բարեաւ չեմ ըսեր քեզի, այլ կրկին տեսութիւն :

Այս մտիթարական խօսքերուն հակառակ Անտրէի պատասխանն հեծեծանք և արտասուք եղաւ :

— Սիրելի քոյր իմ, գոչեց Փիլիպ տեսնելով այն տխրութեան արտայայտութիւնն որ անհասկանալի կը թուէր իրեն, սիրելի քոյր իմ, ամեն բան չըսիր ինձ, ինձմէ բան մը կը պահես, յանուն Աստուծոյ, խօսէ, խօսէ :

Եւ Փիլիպ բազկացը մէջն առաւ զան իրեն մօտեցնելով և սեղմնելով որպէս զի անոր աչացը մէջ կարգայ :

— Ե՛ս, ըսաւ : Ոչ, ոչ, Փիլիպ, կ'երդնում թէ ամեն բան ըսած եմ և բոլոր սիրտս քու ձեռքի է :

— Ուրեմն, ինայէ, Անտրէ, սիրտ առ, այսպէս ցաւ մի պատճառէր ինձ :

— Իրաւունք ունիս, ըսաւ Անտրէ, և ես յիմար եմ : Մտիկ ըրէ՛ իմ սիրտս երբէք ամուր չէ, դու ուրիշներէն աղէկ գիտես, Փիլիպ միշտ վախցած եմ, միշտ անուրջներ ունեցած եմ, միշտ հառաչած եմ, բայց իրաւունք չունիմ գորովպիսի սիրուած եղբայր մը իմ վշտալից եղջերուաքաղներուս մասնակից ընելու՝ երբ նա զիս կը վստահացնէ և կը հաստատէ թէ իրաւունք չունիմ խռովելու : — Իրաւունք ունիս, Փիլիպ, ճշմարիտ է, շատ ճշմարիտ է, հոս ամեն

բան անթերի է ինձի համար: Ներէ ինձ ուրեմն, Փիլիպ կը տեսնես որ աչերս կը սրբեմ, ալ չեմ լար, կը ժպտիմ: Փիլիպ, մնաս բարեալ չպիտի ըսեմ՝ այլ կրկին տեսութիւն:

Եւ նորաօր աղջիկը եղբայրն համբուրեց գորովագին՝ անորմէ ծածկելով յետին արցունք մը որ տակաւին անոր արտեանունքը կ'սքողեր և որ մարդարտի մը նման գլորելով գնաց երիտասարդ սպային ոսկի ծոպին վրայ ինկաւ:

Փիլիպ անոր նայեցաւ այն անսահման գորովով՝ որ թէ եղբօր մը և թէ հօր մը գորովը կրնայ համարուիլ:

— Անտրէ, ըսաւ, այսպէս կ'ուզեմ որ ըլլաս: Սիրագ աժուր բռնէ: Ես կը մեկնիմ՝ բայց թղթաբերն ամեն շաբաթ քեզի նամակ մը պիտի բերէ ինէ: Զանա որ ես ալ ամեն շաբաթ նամակ մ'առնեմ քենէ:

— Այո, Փիլիպ, ըսաւ Անտրէ, և այս իմ միակերջանկութիւնս պիտի ըլլայ: Բայց հօրս իմացուցիր, այնպէս չէ:

— Ինչը:

— Մեկնիլդ:

— Սիրելի քոյր, ընդհակառակը՝ այս առտու սեպուհն ինձ բերաւ անձամբ պաշտօնէին հրամանագիրը: Պ. տը Գալէրնէյ քեզի պէս չէ, Անտրէ, և կ'երևի թէ ինէ զատուիլը հոգը չըններ. երթալուս համար շատ գոհ էր, և իրաւունք ալ ունէր, հոս չեմ կրնար յառաջ երթալ, մինչդեռ հոն պատեհութիւններ կրնայ ներկայանալ:

— Հայրս շատ գոհ է երթալդ տեսնելով, մըմնջեց Անտրէ: Չըլլայ որ սխալիս, Փիլիպ:

— Քեզ ունի, պատասխանեց Փիլիպ հարցումէն խոյս տալով, և այս ալ միտիթարութիւն մ'է, քոյր իմ:

— Այնպէս կը կարծես, Փիլիպ: Բնաւ զիս չտեսներ:

— Քոյր իմ, ինձ պատուիրեց քեզի ըսելու թէ այսօր իսկ Գրիանօն պիտի գայ իմ մեկնելէս ետք: Քեզ կը սիրէ, հաւատա ըսածիս, միայն թէ իւր կերպովը կը սիրէ:

— Ուրիշ ի՞նչ ունիս, Փիլիպ: Արագ շփոթութիւն մը կը տեսնեմ:

Generated on 2016-09-08 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Սիրելի Անտրէ , ժամը զարկաւ : Արդեօք ժամը քանին է :

— Կէսօրը երեք քառորդ կ'անցնի :

— Լաւ ուրեմն , քոյր իմ , շփոթութեանս պատճառն այն է որ ժամէ մ'ի վեր ճամբան գտնուելու էի , և ահա հասանք վանդակապատը ուր ձիս բռնած են : Ուրեմն . . .

Անտրէ դէմքը հանդարտ բռնեց , և եղբօրը ձեռքը բռնելով ,

— Ուրեմն , ըսաւ ամուր հնչումով մը որպէս զի ձայնին մէջ այս լայլութիւն չերևի , ուրեմն , երթաւ բարեալ , եղբայր իմ . . .

Փիլիպ վերջին անգամ մ'ալ համբուրեց զԱնտրէ :

— Կրկին տեսութիւն , ըսաւ , խոստումդ յիշէ :

— Ո՛ր խոստումն :

— Շաբաթը պո՛նէ նամակ մը պիտի գրես :

— Ո՛հ , կ'ուզե՞ս :

Եւ այս խօսքը արտասանելու համար յետին ճիգ մ'ըրաւ . խեղճ աղջկանը ձայնը չէր մնացեր :

Փիլիպ վերստին բարևեց զան շարժումով և հեռացաւ :

Անտրէ անոր ետեէն նայեցաւ շունչը բռնելով որպէս զի հառաչանքը զսպէ :

Փիլիպ ձի հեծաւ , վանդակապատին միւս կողմէն անգամ մ'ալ մնաս բարեալ ըսաւ և մեկնեցաւ :

Անտրէ սրչափ որ Փիլիպը կրցաւ տեսնել՝ կանգուն և անարժ մնաց :

Յետոյ երբ աներևոյթ եղաւ՝ սագին դարձաւ և վիրաւոր եզնիկի մը նման ծառերուն ներքե վազեց , նստարան մը տեսաւ , հաղիւ զօրութիւն ունեցաւ մինչև հոն երթալու և վրան իյնալու անշունչ , անզօր , առանց տեսնելու :

Յետոյ , սրտին խորէն երկայն և սրտաճմլիկ հեծեծանք մը հանելով .

— Աստուած իմ , Աստուած իմ , գոչեց , ինչո՞ւ համար զիս առանձին կը թողուս աշխարհիս վրայ :

Եւ երեսը ձեռացը մէջ պահեց թոյլ տալով որ սոյիտակ մատներուն մէջէն անցնին խոշոր արցունքները՝ որոնք բռնելու ալ ճիգ չէր ընէր :

նոյն միջոցին թեթև շրշիւն մը լսուեցաւ հովանոցին ետեւը :
Անորէ կարծեց թէ հառաչանք մը լսեց : Չարհուրած ետեւ դար-
ձաւ , տխուր դէմք մը անոր առջև տնկուեցաւ :
Թիլլպէրն էր :

ՃԺԵ

ԹԻԼԳԵՐԻ ՎԵՊԸ

Թիլլպէրն էր , ըսինք , Անորէի չափ գունատ , վշտալից և տխուր :
Անորէ մարդ մը տեսնելով , օտարական մը տեսնելով Անորէ
արտորնօք աչերը սրբեց , այնպէս որ կարծես թէ գոռոզ աղջիկը
կ'ամչնար լալու : Կերպարանքը փոխեց և անշարժութիւն տուաւ մար-
մարանման այտերուն՝ որոնք տակաւին քիչ մ'առաջ յուսահատու-
թենէն կը ցնցուէին :

Թիլլպէր անորմէ աւելի ժամանակի պէտք ունեցաւ հանդարտու-
թիւնը գտնելու համար , և դէմքին վրայ մնաց այն կակիծը՝ զոր օ-
րիորդ ար Գալէրնէյ անոր կերպարանքին և նայուածքին մէջ տե-
սաւ՝ աչքը վեր առած և զան ճանչցած ատեն :

— Ա՛հ , դարձեալ Պ. Թիլլպէրն է , ըսաւ Անորէ այն կերպով
զոր 'ի գործ կը դնէր ամէն անգամ որ , իւր կարծածին նայելով ,
դիպուածը զինքը նոյն երիտասարդին դէմը կը հանէր :

Թիլլպէր պատասխան չտուաւ , տակաւին սիրտը մեծ յուզման մէջ
էր :

Անորէի մարմնոյն սարսուռ առող այն կակիծը սաստիկ ցնցեր էր
իւր մարմինը :

Ուստի Անորէ շարունակեց խօսքը՝ այն երևոյթը իմանալու մտօք :

— Բայց ինչ ունիք , պարոն Թիլլպէր , հարցուց , ինչ կայ որ
այդպէս տրտում դէմքով մ'ինձ կը նայիք : Կ'երևի թէ տրամելլա-
րան մ'ունիք , ինչ է արդեօք ձեր տիրութեան պատճառը :

— Գիտնալ կ'ուզէք, մեղամաղձով հարցուց ժիլպէր՝ որ անոր ցոյց տուած հոգասիրութեան ներքե հեզնութիւն ծածկուած ըլլալը կը տեսնէր :

— Այո :

— Լաւ ուրեմն, օրիորդ, պատասխանեց ժիլպէր, ձեր վիշտն ինձ տխրութիւն կը պատճառէ :

— Ո՞վ ըսաւ թէ վիշտ ունիմ :

— Ես կը տեսնեմ :

— Կը սխալիք, վիշտ չունիմ, պարտն, ըսաւ Անտրէ երկրորդ անգամ մ'ալ թաշկինակովը երեսը սրբելով :

Ժիլպէր զգաց թէ մորիկն հասնելու վրայ է. միտքը դրաւ հեզութեամբ անոր առաջքն առնուլ :

— Ներեցէք, օրիորդ, ըսաւ, անոր համար կ'ըսեմ որ ձեր արտունջը լսեցի :

— Ա՛հ, մտիկ կ'ընէիք : Հատ աղէկ, ուրեմն . . . :

— Օրիորդ, դիպուածաւ լսեցի, կակազեց ժիլպէր, ինչու որ կ'զգար թէ ըսածը սուտ էր :

— Դիպուածա՛ւ : Հատ կը ցաւիմ, պարտն ժիլպէր, դիպուածը քեզ իմ մօտս առաջնորդելուն համար. բայց դիցուք թէ այսպէս ըլլայ, ինչ պատճառաւ իմ արտունջս ձեզի տխրութիւն պատճառեց : Ըսէք, կ'աղաչեմ :

— Բնաւ սիրտս չըիմանար երբ լացող կին մը կը տեսնեմ, ըսաւ ժիլպէր այնպիսի եզանակաւ մը որ սաստիկ ահաճութիւն պատճառեց Անտրէի :

— Ի՛նչ, Պ. Ժիլպէրին համար կին մը կը համարուիմ ես, պատասխանեց գոռոզ աղջիկը : Ես մէկու մը հոգածութիւնը չեմ մուրար, մանաւանդ Պ. Ժիլպէրինը բնաւ :

— Օրիորդ, ըսաւ ժիլպէր գլուխը տատանելով, իրաւունք չունիք այսպէս հետս խիստ վարուելու. ձեզ տխուր սեսայ՝ ես ալ տրտմեցայ. լսեցի որ կ'ըսէք թէ Պ. Փիլիպը մեկնած ատեն՝ առանձին կը մնաք այս աշխարհիս մէջ. լաւ ուրեմն, ո՛չ, ո՛չ, օրիորդ, ինչու որ ես կեցած եմ, և երբէք իմինէս աւելի անձնուէր սիրտ մը ձեզի համար բաղխած չէ : Գարձեալ կ'ըսեմ, ո՛չ, եր-

բէք օրիորդ տը Գավէրնէյ առանձին չափտի ըլլայ աշխարհիս վրայ՝ քանի որ գլուխս խորհի, սիրտս բաղխէ և ձեռքս շարժի :

Ժիլպէր այս խօսքերն ըրած ատեն՝ իւր կորովը, ազնուութիւնը և անձնուիրութիւնը գեղեցկութիւն մը սփռեր էին անոր վրայ, — թէ և յարգանօք վարուելու համար պէտք եղած բոլոր պարզութիւնն ՚ի գործ գրաւ :

Բայց կարծես թէ խեղճ պատանիին ամեն ըրածները անհաճոյ թուելու էին Անտրէի, զան վիրաւորելու և կծու պատասխաններ տալու գրգռելու էին, այնպէս որ կարծես թէ Ժիլպէրի մատուցած իւրաքանչիւր յարգանքը թշնամանք մը՝ և իւրաքանչիւր աղաչանքը գրգռ մ'ըլլար : Նախ՝ ուղեց ոտք ելնել աւելի խիստ շարժում մը և աւելի ազատ խօսք մը գտնելու համար, բայց ջղաշին սարսուռ մը նստարանին վրայէն չթողուց զան : Ասկէ զատ, մտածեց թէ ոտքի վրայ եղած ատեն հեռուէն կը անսնուի : Նոյնպէս Ժիլպէրի հետ խօսիլը : Ուստի նստարանին վրայ մնաց, ինչու որ տաղտկութիւն պատճառող սոյն միջատը կ'ուզէր միանգամ քնդ միշտ ոտքին ներքև ճգմել :

Ուստի պատասխանեց,

— Կարծեմ արդէն ձեզի ըսած եմ, պարոն Ժիլպէր, թէ բնաւ չեմ ախորժիր ձենէ, թէ ձեր ձայնն ինձ զայրոյթ կը պատճառէ, և թէ ձեր փիլիսոփայական կերպերէն կը զզուիմ : Ասոնք ձեզի ըսելէս ետք ինչպէս կը յամառիք ինձ խօսելու :

— Օրիորդ, ըսաւ Ժիլպէր գունատ բայց ինքզինքը զսպելով, պատուաւոր կնոջ մը զայրոյթ չպատճառէր մէկը համակրութիւն յայտնելով անոր : Պարկեշտ մարդ մը որ և է մարդկային արարածի մը հաւասարն է, և դուք որ զիս այսպէս կը խոշտանգէք՝ թերևս ուրիշ մ'աւելի արժանի եմ այն համակրութեան՝ զոր ինձի համար չզգալնիդ անսնելով կը ցաւիմ :

Սյս համակրութիւն բառը երկու անգամ լսելով՝ Անտրէ աչերը մեծ մեծ բացաւ և համարձակութեամբ Ժիլպէրին վրայ սեւեռեց :

— Համակրութիւն, ըսաւ, համակրութիւն ձենէ ինձ, պարոն Ժիլպէր : Յիրաւի, կը սխալիմ եղեր : Ես ձեզ լիրբ կը կարծէի՝ բայց այնպէս չէ. դուք յիմար էք :

— Ես ոչ լիրք եմ ոչ յիմար, պատասխանեց ժիլպէր յայտնի հանդարտութեամբ մը՝ որ շատ դժուարին էր անոր գոռոզութեանն համար: Ոչ, օրիորդ, ինչու որ բնութիւնը զիս ձեր հաւասարն ըրած է, և դիպուածը ձեզ ինձ շնորհապարտ:

— Գարնալ դիպուածը, ըսաւ Անտրէ հեղնօրեն:

— Թերևս Նախախնամութիւնը, պէտք էի ըսել: Բնաւ ասոր խօսքը չպիտի ընէի ձեզ, բայց ձեր թշնամանքը զիս կ'ստիպէ:

— Ձեզի շնորհապարտ, ձեզի շնորհապարտ ըսիք կարծեմ: Ինչպէս ըսիք, պարոն ժիլպէր:

— Ես կ'ամշնամ եթէ ապերախտութիւն ընէք, օրիորդ, և Աստուած որ այսչափ գեղեցկութիւն տուած է ձեզ՝ սոյն գեղեցկութեան փոխարէն բաւական պակասութիւններ տուած է ձեզ՝ բաց ՚ի սոյն պակասութենէն:

Այս անգամ Անտրէ ոտք ելաւ:

— Ա՛հ, ներեցէք ինձ, ըսաւ ժիլպէր. դուք ալ զիս չափէն աւելի կը զայրացնէք երբեմն, և այն ատեն կը մոռնամ ձեր ինձ ազդած աղապատանքը:

Անտրէ սկսաւ այնպիսի քրքիջ մ'արձակել՝ որմէ ժիլպէր պէտք էր որ վերստին զայրանար. բայց շատ զարմացաւ տեսնելով որ ժիլպէր չբռնկեցաւ. այլ թեւերը կուրծքին վրայ կապեց, իւր հրացայտ նայուածքին թշնամական ու յամառ արտայայտութիւնը պահեց և սոյն թշնամալից ծիծաղին վերջն սպասեց համբերութեամբ:

— Օրիորդ, պաղութեամբ ըսաւ ժիլպէր Անտրէի, հաճեցէք միայն հարցման մը պատասխանել: Ար՝ յարդէք ձեր հայրը:

— Կարծեմ թէ զիս կը հարցափորձէք, պարոն ժիլպէր, գոչեց նորատի աղջիկը յետին աստիճանի գոռոզութեամբ մը:

— Այո, կը յարգէք ձեր հայրը, շարայարեց ժիլպէր, և այս ալ իւր ձրից, իւր առաքինութեանց համար չէ, այլ միայն անոր համար է որ ձեզի կեանք տուեր է: Հայր մը, դժբաղդաբար գիտնալու էք ըսելիքս, օրիորդ, հայր մը միայն մէկ իրաւունքով յարգելի է, բայց վերջապէս իրաւունք մ'է: Աւելին կայ, միայն կեանք տուած ըլլալու բարերարութեան համար, — և ժիլպէր ըստ կարգի բռնկեցաւ արհամարհոտ կարեկցութեամբ մը, — միայն այս բարերարութեան համար, շարայարեց, պարտաւոր էք բարերարը սի-

րելու : Լաւ ուրեմն , օրիորդ , այս մեզի սկզբունք բունելէն ետք , ինչո՞ւ զիս կը խոշտանգէք , կը մերժէք , կ'ատէք , քանի որ ես , յիրաւի ք ձեզի կեանք չտուի՝ սակայն ձեր կեանքը ազատեցի :

— Գ՛նէք , գոչեց Անտրէ . դուք , դուք իմ կեանքս ազատեցիք :

— Ա՛՛հ , մտքերնուդ անգամ չանցաւ , ըսաւ Ժիլպէր , կամ մա- նաւանդ մոռցաք . շատ բնական է , անկէ 'ի վեր տարի մ'եղաւ : Լաւ ուրեմն , օրիորդ , պէտք է որ ձեզի գիտցնեմ , կամ մտքեր- նիդ բերեմ : Այո , ես ձեր կեանքն ազատեցի՝ իմն զոհելով :

— Գէթ , պարոն Ժիլպէր , ըսաւ Անտրէ մեռելատիպ դեղնութեամբ մը , շնորհ պիտի ընէք ըսելու թէ ո՞ւր և ե՞րբ :

— Այն օրն , օրիորդ , յորում հարիւր հազար անձինք իրար կոխ- կուտելով , կատղած ձիերէն և բազմութիւնն հնձող թուրերէն խոյս տալով Լուի Ժե հրապարակին վրայ դիակներու և վիրաւորներու ա- հագին կոյտ մը թողուցին :

— Ա՛՛հ , մայիսի ՅԱին :

— Այո , օրիորդ :

Անտրէ ինքզինքը ժողովեց և հեգնական ժպիտն սկսաւ վերստին :

— Է՛ , կ'ըսէք՝ թէ այն օրը ձեր կեանքը զոհեցիք իմն ազատելու համար , պարոն Ժիլպէր :

— Արդէն պատիւ ունեցայ ձեզի ըսելու :

— Գուք Պ . տը Պալսամօ սեպուհն էք տւրեմն : Ար ներէք , չէի գիտեր :

— Ոչ , Պ . տը Պալսամօ սեպուհը չեմ , ըսաւ Ժիլպէր որուն ա- չերէն կրակ կը ցատկէր և շրթունքը կը կարկամէր . ժողովրդեան խեղճ զաւակ այն Ժիլպէրն եմ՝ որ զքեզ սիրելու յիմարութիւնը , անմտու- թիւնը , անբաղդութիւնն ունիմ . որովհետեւ խելագարի մը , յի- մարի մը , այսահարի մը պէս կը սիրէի զքեզ՝ բազմութեան մէջ ետե-ւէդ եկայ . ես այն Ժիլպէրն եմ որ թէև պահ մը քենէ զատուե-ցայ՝ բայց զքեզ ճանչցայ այն ճիչէն՝ զոր արձակեցիք ոտքերնիդ գետնէն կտրած ատեն . ես այն Ժիլպէրն եմ որ ձեր քոֆէ ինկայ և թեւերովս ձեզ պատեցի մինչև որ քսան հազար թևեր իմ թևե-րուս վրայ ծանրանալով ոյժս կտրեցին , ես այն Ժիլպէրն եմ որ նետուե-ցայ քարին դէմ ուր պիտի ջախջախէիք , որպէս զի աւելի կակուզ

Generated on 2016-09-08 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

յենարան մ'ըլլայ ձեզի իմ դիակս , ես այն ժիլպէրն եմ որ բազմութեան մէջ նշմարելով այն եզական մարդը որ զոգցես միւս մարդոց կը հրամայէր , և որուն անունը տուիք հիմա , բոլոք ոյժս , բոլոր արիւնս , բոլոր հոգիս ժողվեցի և զձեզ իմ հոգեվար թեւորուս մէջ առնելով վեր վերցուցի՝ որպէս զի այն մարդը ձեզ նշմարէ , առնէ , ազատէ . միով բանիւ ես այն ժիլպէրն եմ որ զձեզ ինէ աւելի երջանիկ ազատարարի մը թողած ատենս՝ ձենէ միայն ձեր զգեստին մէկ կտորը պահեցի , զոր շրթանցս կ'սպասեցի . ալ ժամանակն էր , ինչու որ արիւնս իսկոյն սիրտս , քունքս , ուղեղս յորդեց . դահիճներու և զոհերու թաւալուն զանգուածը ալիքի մը նման զիս ծածկեց և ներքեր թաղեց , մինչդեռ դուք յարութեան հրեշտակին նման իմ անդունդէս երկինք կը վերանայիք :

Ժիլպէր բոլորովին ինքզինքը ցոյց տուեր էր , այսինքն վայրենի , միամիտ , վսեմ , իւր որոշման մէջ՝ ինչպէս իւր սիրոյն մէջ :

Ուստի Անտրէ զան արհամարհելով հանդերձ՝ չէր կրնար առանց զարմանքի անոր նայելու : Ուստի ժիլպէր պահ մը յուսաց թէ իւր ըրած պատմութիւնը ճշմարտութեան չափ , սիրոյ չափ անդիմադրելի եղած էր : Բայց ժիլպէր հաշիւ չէր ըներ անվստահութիւնը , ատելութեան սոյն թերահաւատութիւնը : Արդ , Անտրէ որ ժիլպէրը կ'ատէր՝ այն արհամարհեալ սիրահարին անդիմադրելի փաստերուն և ոչ միայն չէր հաւտացեր :

Առջի բերան պտտասփան չտուաւ . ժիլպէրին կը նայէր , և մտքին մէջ կռիւի պէս բան մը կը կատարուէր :

Ուստի պատանին այս սառ լռութեան չկարենալով դիմանալ՝ ստիպուեցաւ վերջաբանի ձևով յաւելուլ ,

— Հիմա , օրիորդ , առաջուան չափ զիս մի արհամարհէք , ինչու որ ոչ միայն անիրաւութիւն մը՝ այլ և ապերախտութիւն մը գործած կ'ըլլաք , ինչպէս որ քիչ մ'առաջ ձեզի կ'ըսէի և դարձեալ կ'ըսեմ :

Բայց այս խօսքին վրայ իւր ամբարտաւան գլուխը վեր առաւ , և վերջին աստիճանի անյուրթ անտարբերութեամբ մը ,

— Պարոն ժիլպէր , ըսաւ , շնորհ ըրէք ըսելու թէ որքան ատեն աշակերտութիւն ըրիք Պ. Ռուսօին քով :

Generated on 2016-09-08 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Օրիորդ , ըսաւ ժիլպէր միամտութեամբ , կարծեմ երեք ամիս՝ առանց հաշուելու հիւանդութեան օրերս որ մայիս ՅԱԻ հեղձման հետեանքը եղաւ :

— Ար սխալիք , ըսաւ , ձեզի չեմ հարցնէր թէ հիւանդ եղանք թէ ոչ . . . հեղձումներ . . . թերեւս շատ աղւոր կը զարդարէ այս ձեր պատմութիւնը . . . բայց այդ ինձ վերաբերեալ բան մը չէ : Միայն պիտի ըսէի ձեզի՝ թէ միայն երեք ամիս այն նշանաւոր մատենագրին քովը մնալով շատ օղուտ . քաղեր էք անորմէ , և աշակերտը վարպետին հրատարակածին չափ վէպեր կը շինէ առաջին անգամ ըլլալով :

Ժիլպէր հանդարտօրէն մտիկ ըրեր էր կարծելով թէ իւր սիրատարի խօսքերուն լուրջ պատասխաններ պիտի տար Անտրէ , սակայն այն կծու երգիծանութեան վրայ՝ ժիլպէր իւր միամտութեան բարձունքէն ինկաւ :

— Վէպ , մումուաց զայրալիք , ձեզի ըսածս վէպ կը կարծէք :

— Այո , պարոն , ըսաւ Անտրէ , վէպ , դարձեալ կ'ըսեմ . միայն թէ զիս չստիպեցիք որ զայն կարդամ և ասոր համար շնորհակալ եմ . բայց դժբաղդարար , կը ցաւիմ որ չեմ կրնար անոր արժածը վճարել , ինչու որ 'ի զուր պիտի ջանայի՝ վէպն անվճար ըլլալով :

— Ուրեմն այս պատասխանը կու տաք ինձ , կակազեց ժիլպէր սիրտը սեղմուած , աչերը մարած :

— Պատասխան անգամ չեմ տար , պարոն , ըսաւ Անտրէ զանհրելով որպէս զի առջեւէն անցնի :

Արդարեւ 'սիգօլ կու գար՝ իւր տիրուհին ծառուղւոյն ծայրէն կանչելով որպէս զի յանկարծ չընդմիջէ այն խօսակցութիւնը՝ զոր ընողը չէր գիտեր , ինչու որ տերեւներուն մէջ չէր ճանչեր ժիլպէրը :

Բայց մօտենալով պատանին տեսաւ , ճանչցաւ և կեցած տեղը քար կտրեցաւ : Այն ատեն զղջաց որ միւս կողմէն չգարձաւ՝ որպէս զի ժիլպէրին օրիորդ ար Գավէրնէյի ըսածը մտիկ ընէր :

Անտրէ խօսքը 'սիգօլի ուղղելով մեղմ ձայնով , գողցես աւելի լաւ հասկցնելու համար ժիլպէրի թէ որքան զուղուութեամբ խօսեր էր հետը ,

— Ինչ կայ, սիրելիս, հարցուց Նիզովին :

— Պ. տը Գավէրնէյ սեպուհը և Պ. տը Ռիշլիէօ զուքսը օրիորդը տեսնելու եկեր են, պատասխանեց Նիզով :

— Ո՛ր են :

— Օրիորդին բնակարանը :

— Եկուր :

Անտրէ հեռացաւ :

Նիզով անոր հետևեցաւ, բայց երթալու ատեն երգիծական նաշուածք մ'արձակեց ծիլպէրի, սա աւելի կաս կապոյտ՝ քան թէ դեղնած, աւելի յիմար՝ քան թէ թունդ ելած, աւելի դիւահար՝ քան թէ բարկացած՝ բունն երկնցուց այն ծառուղոյն երկայնութեանը՝ ուրիշ իւր թշնամին կը հեռանար, և ակունքը կը ճատելով մումուաց,

— Ո՛վ անսիրտ արարած, անհոգի մարմին, քու կեանքդ ազատեցի, սէրս կեդրոնեցի, խեղդեցի ներսս այն ամեն զգացում որ կրնար քնասել որուն անբժութիւնդ անունը կուտամ, ինու որ զառանցանացս մէջ, դու ինծի համար սուրբ կոյս մ'էիր, նման այն կուսին՝ որ երկինքն է . . . : Հիմա քեզ մօտէն անտայ, ալ դու ուրիշ բան մը չես՝ այլ կին մը, և ես այր մ'եմ . . . : Ո՛հ օրին մէկը վրէժս պիտի լուծեմ քենէ, Անտրէ տը Գավէրնէյ, դու երկու անգամ ձեռքս ինկար՝ երկու անգամ քեզ յարգեցի, Անտրէ տը Գավէրնէյ, երրորդ անգամին զգուշացիւր . . . : Նորէն կը տեսնուինք, Անտրէ :

Այս ըսելով, հեռացաւ, թաւառներուն մէջէն ոստոսաւելով, նման վիրաւոր մատաղ գայլի մը՝ որ ետէր կը դառնայ սուր ակունքը և արիւնաթաթաւ բիբը ցոյց տալով :



Generated on 2016-09-08 11:04 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԺԺԶ

ՀԱՅՐԵՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ

Արդարեւ ծառուղւոյն ծայրը Անտրէ մարաշախտն ու իւր հայրը տեսաւ՝ որ գաւիթին առջև կը շրջադայէին իրեն սպասելով :

Երկու բարեկամները շատ ուրախ կ'երևէին , թէ թեի առեր էին . արքունեաց մէջ տակաւին այնքան ճիշդ ներկայացուած տեսած չէին Ուրեստէսն ու Պիղադէսը :

Անտրէն տեսած ատեննին երկու ծէրերն աւելի զուարթացան և իրարու նշմարել տուին անոր լուսափայլ գեղեցկութիւնը՝ որ զայրոյթէն և քաղաւածքին արագութենէն աւելի ևս կը փայլէր :

Մարաշախտը Անտրէն բարեկց այնպէս ինչպէս որ պիտի ընէր տիկին տը Բօնրատուրը եկած ատեն : Այն ձևը չվրիպեցաւ Գաւլէրնէյի աչքէն և շատ հաւնեցաւ , սակայն զարմանք պատճառեց Անտրէի՝ յարգանք և միանգամայն ազնուութիւն պարունակելուն համար . ինչու որ ճարպիկ պալատակտնը այնքան մանրամասնութիւններ կը գործածէր բարեի մը մէջ՝ որքան Գօվիէլ Գաղղիերէն պարբերութիւններ կը գործածէր Թուրքերէն մէկ բառի փոխարէն :

Անտրէ այնպիսի վայելուչ յարգանօք բարեն առաւ՝ որ թէ իւր հօրը , թէ մարաշախտին համար հանդիսաւոր եղաւ , յետոյ սիրուն վայելչութեամբ զանոնք երկուքն ալ հրաւիրեց որ իւր սենեակն ելնեն :

Մարաշախտն հոն տիրող մաքրութեան վրայ հիացաւ՝ որ նոյն յարկին կարասեաց և ճարտարապետութեան միակ պերճանքն էր : Ծաղիկներով , քիչ մ'ալ ճերմակ բեհեզով , Անտրէ իւր տխրատեսիլ սենեակը չէ թէ պալատի մը՝ այլ տաճարի մը փոխեր էր :

Աւրան մեծ ծաղիկներով Պարսկական կանաչ կտաւով պատած թիկնաթու մը նստաւ Զինական եղջիւրաձև մեծ ամանի մը ներքև՝ որմէ հիրիկներով և Պէնկալեան վարդերով խառն ազասիաի և հացիի անուշաբոյր ողկոյզներ կախուեր էին :

Գավէրնէյ ալ այնպիսի թիկնաթառի մը վրայ նստաւ . Անտրէ ծալածոյի մը վրայ բազմեցաւ արմուկը դաշնակի մը յեցած՝ որ նոյնպէս զարդարուած էր Սաքսօնական մեծ ամանի մը մէջ դրոցած ծաղիկներով :

— Օրիորդ , ըսաւ մարաջախտը , Նորին Աւետարանութեան կողմէն գալով ձեզ կը բերեմ այն ամեն շնորհատրութիւնները՝ զոր ձեր սիրուն ձայնը , ձեր փորձ երաժշտի տաղանդը երեկի ներկայացման բոլոր ունկնդիրներէն խլեցին : Նորին Աւետարանութիւնը վախցաւ որ ձեզ գովելու համար ձայնը շատ հանած ատեն նախանձոտներ և նախանձորդուհիներ երեան կ'ելնեն : Ուստի հաճեցաւ ինձ յանձնել որպէս զի ձեզ յայտնեմ թէ որքան հաճոյք պատճառեցիք իրեն :

Անտրէ կաս կարմիր կտրած՝ այնքան աղւորցեր էր որ մարաջախտը խօսքը շարունակեց , այնպէս որ կարծես թէ իւր հաշուոյն կը խօսէր :

— Թագաւորն ինձ հաստատեց , ըսաւ , թէ իւր արքունեաց մէջ տեսած չէ անձ մը՝ որ ձեզի չափ մտքի և դիմաց ձիրքերն ունենայ , օրիորդ :

— Սրտի ձիրքերը կը մոռնաք , ըսաւ Գավէրնէյ տարապայման զուարթութեամբ . Անտրէ ընտիր աղջիկ մ'է :

Մարաջախտը պահ մը կարծեց թէ իւր բարեկամը պիտի լար : Հայրենական գորով մը ցոյց տալու համար անոր ըրած ճիզը տեսնելով հիացաւ և գոչեց ,

— Սիրտը : Աւա՛ղ , սիրելիս , գուք միայն գիտէք այն գորովը զոր օրիորդին սիրտը կը պարունակէ : Ինչո՞ւ համար քսանեհինգ տարեկան չեմ , կեանքս ու ինչքս անոր ոտից ներքե կը դնէի :

Անտրէ տակաւին չէր կրնար պալատականի մը մատուցած յարգանքը թեթեօրէն ընդունիլ : Ռիշլիէօ առանց նշանակութեան մըրմունջ մ'իմացաւ անորմէ :

— Օրիորդ , ըսաւ , թագաւորը հաճեցաւ ձեզ աղաչել որ իւր գոհունակութեան հաւաստին ընդունիք , և Պ. սեպուհին՝ ձեր հօրն յանձնեց զայն ձեզ տալը : Ի՞նչ պատասխան տամ Նորին Աւետարանութեան ձեր կողմէն :

Generated on 2016-09-08 11:05 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

— Պարոն, ըսաւ Անտրէ, որ իւր ընթացքին մէջ ուրիշ բան չտեսաւ՝ այլ հպատակուհւոյ մը առ իւր թաղաւորն ունեցած յարգանաց մէկ հետեանքը, շնորհ ըրէք Նորին Աւհափառութեան իմ երախտադիտութիւնս մատուցանելու: Հաճեցէք Նորին Աւհափառութեան ըսելու թէ գիտ բարեօք կը լնու իմ վրայ մտածելով, և այնպիսի մեծազօր իշխանի մը ուշադրութեանն արժանի չեմ ես:

Ռիշլիէօ այլ յայլմէ եղաւ այս պատասխանը լսելով՝ զոր նորատի աղջիկը հաստատուն ձայնով մը և առանց վարանելու արտասանեց:

Անտրէին ձեռքը բռնեց, յարգանք պահաւ, և խանդաղատանօք անոր նայելով:

— Արքայական ձեռք մը, ըսաւ, պայի ոտք մը . . . խելք, կամք, անբժութիւն . . . : Ա՛հ, սեպուհ, ի՛նչ գանձ . . . : Գուք աղջիկ չունիք, թագուհի մ՛է սա . . . :

Այս խօսքին վրայ՝ մեկնելու հրաման խնդրեց Անտրէի քով առանձին թողլով Գաւէրնէյը՝ որ հպարտութենէն և յոյսէն կը փրանար:

Ո՛վ որ զան տեսնէր, այն հին վարդապետութիւններու փիլիսոփան, այն սկեպտիկեանը, այն արհամարհոտը որ լայնօրէն կը ծրծէր շնորհի օգը ճահճի մը մէջ որ նուազ շնչելի տեղ մ՛է՛ ինքնիրեն պիտի ըսէր թէ Աստուած Պ, տը Գաւէրնէյի միտքն ու սիրտը միևնոյն մրուրով զանգեր էր:

Գաւէրնէյ միայն այս փոփոխութեան համար պիտի ըսէր,

— Ես չփոխուեցայ՝ այլ ժամանակը:

Ուստի Անտրէի քով մնաց, նստած, քիչ մը շփոթած. ինչու որ նորատի աղջիկը իւր անսպառ պայծառութեամբը՝ ծովուն ամենախորին անդունդները թափանցելու պէս անոր ներսը կը թափանցէր խորին նայուածքով մը:

— Պ, տը Ռիշլիէօ չըսաւ, պարոն, թէ Նորին Աւհափառութիւնը իւր գոհունակութեան մէկ հաւաստին ձեզ յանձնած է: Ա՛ղաչեմ ըսէք, ի՛նչ է այն:

— Ա՛հ, ըրաւ Գաւէրնէյ, կարևորութիւն կու տայ . . . : Տէս, ես չէի կարծեր: Աւելի աղէկ, Սատանայ, աւելի աղէկ:

Մարաշախտին նախընթաց օրուան տուած ադամանդի տուփը ծանր կերպով մը գրպանէն հանեց, գրեթէ ճիշդ այնպէս՝ ինչպէս որ բարի հայրեր պարկ մը շաքարեղէն կամ խաղալիկ մը կը հանեն գրպաննուն, որոց անհամբեր կը նային սղայք:

- Ահաւասիկ, ըսաւ:
- Ա՛հ, գոհարներ . . . , ըսաւ Անտրէ:
- Հաւնեցար:

Մարգարիաներով զարդարուած մեծագին գոհար մ'էր: Տասներկու խոշոր ադամանդներ այն մարգարիտներուն շարքը իրենց մէջ կը կապէին. ադամանդէ փական մը, ականջի օղեր, և մազի համար շարք մը ադամանդ՝ առ նուազն երեսուն հազար սկուտի արժէք մը կու տային սոյն նուէրին:

- Տէր Աստուած, հայր իմ, գոչեց Անտրէ:
- Ի՛նչ կայ:

— Խիստ շատ աղւոր է այս . . . թագաւորը սխալեր է: Ես կ'աւհնամ այս գործածելու . . . : Ուրեմն այս գոհարներուն ճութեանը յարմարող զարդարանքներ ալ պիտի ունենամ:

- Տրանջացիր նայիմ, ըսաւ Գավէրնէյ հեզնօրէն:

— Պարոն, չէք հասկընար ըսածս . . . : Ար ցաւիմ՝ որ չեմ կրնար այս գոհարները գործածել՝ շատ պեղեցիկ ըլլալնուն համար:

— Թագաւորը որ գոհարը տուաւ, օրիորդ, զգեստն ալ տալու չափ առատաձեռն իշխան մ'է . . . :

- Բայց պարոն . . . , թագաւորին այս բարերարութիւնը . . . :

— Միթէ իմ մատուցած ծառայութիւններովս արժանի չեմ, ըսաւ Գավէրնէյ:

— Ա՛հ, ներեցէք, պարոն, ճշմարիտ է, պատասխանեց Անտրէ գլուխը ծռելով բայց առանց լիովին համոզուելու:

Անտրէ պահ մը մտածելէ ետք՝ գոհարեղէնին տուփը գոցեց:

- Այս գոհարները չպիտի գործածեմ, ըսաւ:

- Ինչո՞ւ, գոչեց Գավէրնէյ գող ելնելով:

— Ինչու որ, հայր իմ, գուք և եղբայրս շատ հարկաւոր բաներու պէտք ունիք, և այս աւելորդն իմ աչքս կը վիրաւորէ՝ երբ ձեր նեղութիւնը կը մտածեմ:

Դավէրնէյ անոր ձեռքը սեղմեց ժպտելով :

— Ո՛հ, այդ հոգ մի ընե՛ր, աղջիկս : Թագաւորը քե՛նէ աւելի զիս մտածեց : Յաջողութեան մէջ ենք, սիրելի աղջիկս : Ո՛չ ակնածու հպատակուհւոյ մը և ոչ երախտագէտ կնոջ մը գործ է թագաւորին առջևն ելնել առանց այն զարդին՝ զոր Նորին Աւհափառութիւնն հաճեցաւ քեզ տալ :

— Կը հնազանդիմ, պարոն :

— Այո, բայց պէտք է որ ուզելով հնազանդիս . . . : Այս զարդին չհաւնեցար :

— Սղամանդէ չեմ հասկնար, պարոն :

— Ուրեմն գիտցիր թէ միայն այս մարդարիտները յիսուն հազար ֆրանք կ'արժեն :

Անտրէ ձեռներն իրար կցեց :

— Պարոն, ըսաւ, տարօրինակ բան մ'է Նորին Աւհափառութեան ինծի այսպիսի նուէր մ'ընելը . մտածեցէք ասոր վրայ :

— Ըսածդ չեմ հասկնար, օրիորդ, ըսաւ Դավէրնէյ ցամաք կերպով մը :

— Եթէ սոյն գոհարը գործածեմ՝ աներկբայ եղիք, պարոն, թէ աշխարհ պիտի զարմանայ :

— Ինչո՞ւ, ըսաւ Դավէրնէյ միևնոյն եղանակաւ և հրամայական ու պաղ նայուածքով մը՝ որ աղջկանը աչերը խոնարհեցուց :

— Խղճի խայթ մը :

— Օրիորդ, ըսաւ, տարօրինակ բան մ'է խղճի խայթ ունենալդ այնպիսի պարագայի մը մէջ՝ ուր ես բնաւ պատճառ մը չեմ տեսներ : Տեսէք սա դեռահաս և ամբիծ աղջիկները որոնք չարիքը գիտեն և կը նշմարեն՝ որքան ծածուկ ալ ըլլայ, մինչդեռ ուրիշ ոչ մէկու մը աչքին կը զարնէ : Տեսէք սա միամիտ և կոյս աղջիկը որ ինծի պէս ծեր ումրաձիգ զինուոր մը կ'ամչցնէ :

Անտրէ շփոթը չյայտնելու համար՝ երեսը ծածկեց մարդարաաղոյն գեղեցիկ ձեռներովը :

— Ո՛հ, եղբայր իմ, մըմջեց, ինչո՞ւ արդէն շատ հեռուն կը գտնուիս :

— Արդեօք Դավէրնէյ լսեց այս խօսքը, թէ գուշակեց իւր այն

զարմանալի սրամտութեամբը զոր գիտենք : Այս յայտնի չէ . բայց իսկոյն եղանակը փոխեց , և Անտրէի երկու ձեռքը բռնելով ,

— Է՛ , աղջիկս , ըսաւ , միթէ քու հայրդ քիչ մը բարեկամ չէ՞ քեզի :

Անտրէի գեղեցիկ ճակատը ծածկող սաւերններուն մէջէն քաղցր ժպիտ մը տեսնուեցաւ :

— Միթէ ես հոն չեմ քեզ սիրելու և քեզի խրատ տալու համար . միթէ պարծանք չե՞ս համարիւր քեզ եղբորդ և իմ բարեբաստութեանս նպաստելով :

— Ա՛հ , ինչո՞ւ չէ , ըսաւ Անտրէ :

Սեպուհն սկսաւ գորովալից խանդաղատանօք աղջկանը նայիլ :

— Լաւ ուրեմն , ըսաւ , քիչ մ'առաջ Պ. տը Ռիշլիէօի ըսածին պէս՝ աը Գամէրնէյ թագուհին պիտի ըլլաս դու . . . : Նոյնպէս տիկին արքայորդին , ըսաւ աշխուժիւ . սոյն երկու օգոստափառ անձանց հետ մտերիմ ըլլալով՝ մեր ապագան պիտի շինես՝ անոնց կեանքը երջանիկ ընելով . . . : Տիկին արքայորդւոյն բարեկամուհի , թագաւորին . . . բարեկամուհի , ի՛նչ փառք . . . : Գերազանց տաղանդներ և անզուգական գեղեցկութիւն մ'ունիս . ազահութենէ և փառասիրութենէ ազատ ողջմտութիւն մ'ունիս . . . : Ա՛հ , աղջիկս , ի՛նչ դերեր կրնաս խաղալ : — Եր յիշե՞ս այն փոքր աղջիկը որ Շարլ Զ.ի վերջին վայրկեանները մեղմեց . . . : Անոր անունը Գաղղիոյ մէջ օրհնեցին . . . : Միտքդ կու գայ՝ Ագնէս Սօրէլը՝ որ Գաղղիոյ թագին պատիւը տեղը դարձուց : Բոլոր բարի Գաղղիացիներն անոր յիշատակը կը պատուեն . . . : Անտրէ , դու մեր օգոստափառ իշխանին ծերութեան գաւազանը պիտի ըլլաս . . . : Քեզ իւր աղջկանը պէս պիտի սիրէ , և դու պիտի թագաւորես Գաղղիոյ մէջ՝ գեղեցկութեանդ , արիւթեանդ և հաւատարմութեանդ իրաւամբ . . . :

Անտրէ զարմանքով աչերը բացաւ : Սեպուհը խօսքը շարունակեց՝ մտածելու ժամանակ չթողլով ,

— Այն մոլորեալ կիները որ գահը կ'անպատուեն՝ մէկ նայուածքով կը վանես զանոնք . քու ներկայութիւնդ արքունիքը պիտի սրբացործէ : Տէրութեան ազնուականները քու ազդեցութեանդ պիտի

պարտին բաբի վարուց, քաղաքավարութեան, զուտ ազնուականութեան վերադարձը: Աղջիկս, դու մեր երկրին համար վերանորոգիչ անող մը, մեր անուան համար փառաց պսակ մը կրնաս ըլլալ, և պէտք է որ ըլլաս:

— Բայց, ըսաւ Անտրէ ապուշ դարձած, ինչ ընելու է ուրեմն ասոր համար:

— Անտրէ, կրկնեց սեպուհը, շատ անգամ քեզի ըսի թէ այս աշխարհիս մէջ մարդիկը բռնի առաքինի ընելու է՝ առաքինութիւնը սիրել տալով անոնց: Խոժտու, տխուր, վճիռներ տուող առաքինութիւնը իւր քովէն կը փախցընէ զանոնք իսկ որոնք կը փափաքին անոր մօտենալ: Պշտանաց, նոյն իսկ մոլութեան հրապոյրներով զարդարէ քու առաքինութիւնը: Քեզի պէս խելացի և հաստատամիտ աղջկան մը համար շատ դիւրին է այս: Այնքան գեղեցիկ եղիր՝ որ արքունիքը միայն քու վրագ խօսի. այնքան հաճոյ եղիր թագաւորին աչացը՝ որ առանց քեզի չկարենայ ըլլալ. այնքան ծածուկ մնացիր, այնքան զգոյշ կեցիր, բաց ՚ի Նորին Վեհափառութենէն, որ շուտով քեզի վերադրեն այն բոլոր զօրութիւնը զոր անշուշտ պիտի ձեռք ձգես:

— Այս վերջին խրատնիդ աղէկ չեմ հասկնար, ըսաւ Անտրէ:

— Թող որ ես քեզի առաջնորդեմ, դու առանց հասկնալու կը կատարես, քեզի պէս խելացի և ազնիւ աղջկան մը համար աւելի աղէկ է այս կերպը: Աղէկ միտքս ինկաւ, աղջիկս, առաջին կէտը կատարելու համար պէտք է որ քսակդ լեցնեմ: Առ այս հարիւր ոսկին, և զարգարանքդ պատրաստէ այն աստիճանիդ համեմատ՝ որուն կոչուեցար թագաւորը մեզ բարձրացնելու հաճելէն ՚ի վեր:

Գավէրնէյ աղջկանը հարիւր ոսկի տուաւ, ձեռքն համբուրեց և գուրս ելաւ:

Մտաւ այն ծառուղին ուստի եկեր էր, և Սիրոյ անտառակին խորը չնշմարեց Նիզօլը: Սա խօսակցութեան մը մէջ թաղուած էր պարոնի մը հետ՝ որ անոր ականջն ՚ի վար հծծելով կը խօսէր:

Վ Ե Ր Զ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Հ Ա Տ Ո Ր Ո Յ

Generated on 2016-09-08 11:06 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՎՐԻՊԱԿ

Երև.	Տող	Սխալ	Ուղղ.
6	26	Իմ	Իմ
25	1	մանեւում	մանեւում
36	19	պատույն	պատույն
42	11	Ֆլամո	()
»	34	ի վեր	ի վար
45	21	Ֆլամօեան	Ֆլամօեանք
49	4	գլխադիրերը	գլխադիրը
»	29	կը վազէին	կը վազեն
58	6	անտանի	անտաի
59	26	կը հասնէիր	կը հասնէին
71	19	աղայութիւն	աղայութիւն
72	11	չգացած	չգացած
75	16	կը ջերուցանէ	կը ջերուցանէ
84	25	իրաւունքէ	իրաւունքը
85	1	մաքառի	պիտի մաքառի
88	32	դարու	միջին դարու
102	19	ակնակոպիճին	ակնակոպիճին
119	9	Ճշմարիտ	Ճշմարիտ է
»	10	Ճշմարիտ է	Ճշմարիտ
»	19	հաստատ է	հաստատէ
120	3	մուկով	մուկով
»	6	կինն	կինն էր
121	32	է	()
124	9	հաստատեցէք	հաստատէք
127	21	խեղճը	խիղճը
147	21	որպէս	այսպէս
158	9	կը կարծէք	կը կարծէի
160	1	Մ	ՃԺԱ
169	29	են	են ինչու որ
»	30	ընել	կ'ընեն
171	6	Ռիշլիէօ	Ռիշլիէօէ
172	16	այժ	այն

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ



ԳԼՈՒԽ	ԵՐԷ
ՂԵ. Ի՛նչպէս ոմանց ուրախութիւնը այլոց յուսահատութիւն կը պատճառէ	3
ՂԶ. Ժողովները	13
ՂԷ. Պաշտօնէին ճամբուն վրայ վարդեր սփռուած չեն	22
ՂԸ. Պ. ա՛հկկիւյլօն վրէժը կ'առնէ	28
ՂԹ. Ընթերցողը վերստին պիտի գտնէ իւր վաղեմի ծանօթ- ներէն մին՝ զոր կորսուած կը կարծէր, և թերևս ա- նոր վրայ չէր ցաւեր	35
Ճ. Թէ ո՛ր կը խառնակին գործերը հետզհետէ	46
ՃԱ. Արդարութեան դահլը	54
ՃԲ. Անծանօթին խօսքերուն Ժ. Ժ. Ռուսօի վրայ ըրած ազ- դեցութիւնը	62
ՃԳ. Բլադրիէր փողոցին օթեակը	70
ՃԴ. Համարատութիւն	78
ՃԵ. Մարմին և հոգի	94
ՃԶ. Հոգի և մարմին	109
ՃԷ. Մարտի դոնապանուհին	120
ՃԸ. Մարդս և իւր գործերը	132
ՃԹ. Ռուսօի զարդարանքը	142
ՃԺ. Դրիանօնի թատրոնը	147
ՃԺԱ. Ներկայացումը	160
ՃԺԲ. Ազամանդի տուփը	166
ՃԺԳ. Լուի Ժե. թագաւորին անպաճոյճ ընթրիքը	173
ՃԺԴ. Նախազգացումներ	186
ՃԺԵ. Ժիլպէրի վէպը	194
ՃԺԶ. Հայրն ու աղջիկը	202

Generated on 2016-09-08 11:06 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY



AA 000 938 747 3



